

«Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոն

«Zoravar Sepouh» historical-political analytical center

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ԹԻՎ 4(9)

HISTORY AND POLITICS

ACADEMIC JOURNAL

№4(9)

ԵՐԵՎԱՆ 2020

Հանդեսը տպագրվում է «Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Խմբագրական խորհուրդ

Աշոտ Ենգոյան, Արմեն Ճուղուրյան, Արմեն Սահակյան, Բագրատ Էսդուգյան (Թուրքիա, Ստամբուլ), Գարիկ Քեռյան,
Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյան, Էդիկ Մինասյան,
Ժիրայր Լիպարիտյան (ԱՄՆ, Բոստոն), Հովսեփ Աղաջանյան,
Մարտին Գիլավյան, Վալերի Միրզոյան, Վալերի Թունյան,
Ռաֆիկ Նահապետյան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Արտաշես Ղազարյան

Պատասխանատու քարտուղար՝ Թամարա Սարգսյան

ՀԽՍՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941-1945 թթ.)

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

Բանալի բառեր - հայ կանայք, հայրենական պատերազմ, կոլտնտեսային գյուղացիություն, պաշտպանական ֆոնդ, թիկունք, սոցիալիստական աշխատանքի հերոս, անասնաբուծություն, կաթնատվություն, հարվածային կոլտնտեսական, ԽՍՀՄ ԳԽ պատգամավոր:

Պատերազմը մեծ փորձությունների առաջ կանգնեցրեց նաև կոլտնտեսային գյուղացիությանը: Ինչպես բանվոր դասակարգը, այնպես էլ աշխատավոր գյուղացիությունը մեր հայրենիքի համար ծանր օրերին ցուցաբերեցին նվիրյալ հայրենասիրություն և հաղթահարելով պատերազմի ժամանակաշրջանի դժվարությունները՝ Կարմիր բանակի համար դարձան ամուր հենարան:

Պատերազմի տարիներին պետությունը լուրջ խնդիրներ դրեց գյուղատնտեսության աշխատավորների առջև, որոնք անձնվեր աշխատանքով ապահովեցին ռազմաճակատին անհրաժեշտ սննդամթերքներով, իսկ գործարանները՝ հումքով:

Հայրենական պատերազմի ժամանակ Խորհրդային Հայաստանը թիկունքային շրջան էր: Չնայած դրան՝ պատերազմը ծանր հետևանքներ թողեց նաև մեր հանրապետության վրա: Խորհրդային կոլտնտեսային գյուղացիությունը խորապես գիտակցեց մեր հայրենիքի վրա կախված վտանգի լրջությունը, թշնամուն հաղթելու գործում թիկունքի կարևոր նշանակությունը: Ուստի չխնայելով իր ուժերն ու կարողությունները՝ նա ամեն կերպ ձգտում էր ընդարձակել ցանքատարածությունները, բարձրացնել գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը և անասնաբուծության մթերատվությունը:

Կուսակցական, կոմերիտական և հասարակական կազմակերպությունների քաղաքական-մասսայական լուրջ աշխատանքի շնորհիվ հան-

րային տնտեսության մեջ ներգրավվեց գյուղի ամբողջ բնակչությունը, որի գերակշռող մասը կազմում էին կանայք, ծերերը և անչափահասները:

Գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման գործում հատկապես մեծ էր կանանց դերը: Առանց չափազանցության կարելի է նշել, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին հիմնականում կանայք են տարել գյուղատնտեսական աշխատանքների ոչ դյուրին բեռը: 1941 թվականի 36 %-ից կանանց տեսակարար կշիռը 1944 թվականին բարձրացավ 47 %-ով[1]:

1941 թվականի հունիսին Ախտայի (այժմ՝ Հրազդան) շրջանում տեղի է ունեցել երիտասարդ կանանց և աղջիկների հավաք: Հավաքի շուրջ 500 մասնակիցներ հանդես են եկել հանրապետության երիտասարդությանն ուղղված բաց նամակով: Նրանք գրել են. «…Մենք, ինչպես միշտ, այնպես էլ այժմ, առանց խուճապի մատնվելու, պատրաստ ենք ամեն կերպ օգնել մեր հարազատ ու հերոսական Կարմիր բանակին՝ թշնամուն կործանիչ և ոչնչացնող հարված հասցնելու համար»[2]: Նրանք բոլոր կանանց և աղջիկներին կոչ են արել փոխարինել բանակ մեկնած իրենց եղբայրներին ու մյուս հարազատներին, ավելի մեծ եռանդով մասնակցել գյուղատնտեսական աշխատանքներին, դրանք կատարել սահմանված ժամկետում, սովորել ռազմական գործը: Հավաքից հետո 100 երիտասարդ կին ու աղջիկ ընդգրկվել են գյուղատնտեսությունն ուսումնասիրող խմբակներում: Նրանց օրինակին հետևել են հազարավոր կանայք Սիսիանի, Ղամարլուի, Սպիտակի, Ստեփանավանի, Վաղարշապատի, Աշտարակի և մյուս շրջաններում[3]:

Ախտայի շրջանի Ներքին Ախտա գյուղում 72 կին, փոխարինելով ռազմաճակատ մեկնած իրենց հարազատներին, կազմել են 8 օղակ: Նրանք գերազանցորեն կատարել են խոտհունձը: 1941 թվականի հունիսին Վաղարշապատի շրջանում հազարավոր կանայք դուրս են եկել դաշտ՝ գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցելու համար: Պատերազմի սկզբում Կիրովականի շրջանում կոլտնտեսային արտադրության մեջ ընդգրկված երիտասարդ կանանց ու աղջիկների թիվը հասել է 5000-ի[4]:

Պատերազմի առաջին օրերին Ստեփանավանի շրջանի Կուրթան գյուղում դաշտ են եկել ավելի քան 500 կանայք: Նրանց անձնվեր աշխա-

---

[1] Советская Армения в годы Великой отечественной войны (1941-19465), сборник документов и материалов, Ереван, 1975, с. 38-40.

[2] «Սովետական Հայաստան», 28 հունիսի, Երևան, 1941:

[3] **Մարտիրոսյան Լ.**, Սովետական Հայաստանի կանայք Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945), Երևան, 1968, էջ 59:

[4] «Սովետական Հայաստան», 24 սեպտեմբերի, Երևան, 1941:

տանքի շնորհիվ կոլտնտեսությունը ժամանակից շուտ ավարտել է 700 տոննա սիլոսի պատրաստումը:

Կուրթանցիներից ետ չեն մնացել Սպիտակի շրջանի Համամլու գյուղի 600 կանայք և աղջիկներ, որոնք աշխատել են բերքահավաքը կազմակերպել անկորուստ: Սևանի շրջանի Օրդաքլու (Լճաշեն) գյուղի կոլտնտեսության 520 կանայք և աղջիկներ ժամանակին կատարել են բերքահավաքի աշխատանքները: «Ավելի շատ հաց Կարմիր բանակին», «Անխոցելի դարձնենք Կարմիր բանակի թիկունքը», «Եթե հարկ լինի, հրացանները ձեռքներիս՝ կկանգնենք Կարմիր բանակի շարքերում՝ թշնամուն հաղթելու համար». սրանք էին Օրդաքլուի կոլտնտեսուհիների աշխատանքային նշանաբանները:

Ռազմաճակատ ուղարկելով իրենց ամուսիններին, եղբայրներին, որդիներին՝ Վարդաշենի կոլտնտեսուհիները կրկնապատկված եռանդով են սկսել աշխատել կոլտնտեսային դաշտերում: Վ. Մելիքյանի բրիգադում աշխատող կանանց թիվը պատերազմի առաջին ամիսներին հասել է 35-40-ի այն դեպքում, երբ մինչև պատերազմը բրիգադի կին անդամների թիվը 20-25-ից չէր անցնում: «Ես սիրով կփոխարինեմ բանակ մեկնած եղբորս,– ասում էր կոլտնտեսուհի Շողիկ Հարությունյանը,– և պարտավորվում եմ ժամանակին և բարձրորակ կատարել հացահատիկի, ծխախոտի բերքահավաքի աշխատանքները»[1]:

Հանրապետության աշխատավորուհիների ներգրավումը կոլտնտեսությունների աշխատանքներին ավելի ուժեղացել է Սովետական Միության կանանց համապատասխան կոչի հրապարակումից հետո: «-Բանվորուհինե՛ր, կոլտնտեսուհինե՛ր և ծառայողնե՛ր, է՛լ ավելի վստահորեն տիրապետեցեք տղամարդու պրոֆեսիաներին, դազգահներին, տրակտորներին մոտ, կուլտուրայի և արվեստի տեղամասերում ավելի վճռականորեն փոխարինեք նրանց, ովքեր մեկնել են առաջավոր դիրքերը: …Հայրենիքի նկատմամբ ձեր ամբողջ սիրով, թշնամու նկատմամբ ամբողջ ատելությամբ ամրապնդեցեք հաղթական թիկունքը»,– ասված է հիշյալ կոչում[2]:

Հանրապետության կոլտնտեսուհիները միահամուռ կերպով են միացել այդ կոչին: Իջևանի շրջանի կոլտնտեսային առաջավորների ցույցը կոչ է արել հանրապետության կանանց փոխարինել իրենց ամուսիններին, եղբայրներին ու որդիներին, աշխատել նոր եռանդով, կրկնապատկված ուժով, առանց քուն ու դադարի, հարկ եղած դեպքում հրացան վերցնել և կրծքով պաշտպանել խորհրդային հայրենիքը:

Հայրենական պատերազմի ծանր օրերին լուրջ ուշադրություն է դարձվել տրակտորիստների, կոմբայնավարների, օղակավարների, բրի-

[1] «Կոլխոզ ուղի», N 57, Մարտունի, 1941:

[2] «Правда», 18 июля, Москва, 1941.

գադավարների, ֆերմաների վարիչների և կոլտնտեսության նախագահների որակյալ կադրեր պատրաստելու վրա: Հայկական ԽՍՀՄ-ում կանայք մեծ թիվ են կազմել հիշյալ մասնագետների շարքում:

1941 թվականի հունիսին հանրապետությունում կանանց և աղջիկների շրջանում կազմակերպվել են գյուղատնտեսական տարբեր մասնագիտությունների կարճատև դասընթացներ, որոնք տևել են մինչև 1942 թվականի փետրվարը: Այդ դասընթացների շրջանավարտներից կոլտնտեսության նախագահներ են ընտրվել 21 մարդ, գյուղխորհրդի նախագահներ՝ 169, բրիգադավարներ դարձել 455, ֆերմայի վարիչներ՝ 166 մարդ[1]:

Դասընթացներ են կազմակերպվել նաև հետագա տարիներին: Դասընթացներում սովորողների զգալի մասը կազմել են կանայք:

1941-1944 թվականներին հանրապետության կոլտնտեսություններում ղեկավար աշխատանքի առաջ են քաշվել 700 կոլտնտեսուհիներ[2]: Կանանց տեսակարար կշիռը բարձրացել է ղեկավար կադրերի համալրման տեսակետից: Այսպես, եթե կոլտնտեսությունների նախագահների մեջ 1940 թվականին կին նախագահները կազմել են 0.5 %, ապա 1945 թվականին այդ ցուցանիշը բարձրացել է՝ հասնելով 0.7 %-ի: Կանանց թվաքանակն աճ է ունեցել հաշվապահների ու բրիգադավորների կազմում: Անասնապահական ֆերմաների վարիչների շարքում կանանց թվաքանակն ավելացել է մինչև 1944 թվականը և նվազել 1945 թվականին, երբ ռազմաճակատից տղամարդիկ սկսել են վերադառնալ[3]:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հանրապետության բոլոր 1035 կոլտնտեսություններում կանայք ակտիվ մասնակցություն են ունեցել գյուղատնտեսական աշխատանքներին: Եթե 1940 թվականին 146 հազար աշխատունակ կանանցից հանրային աշխատանքներին մասնակցել են 133 հազարը, ապա 1942 թվականին՝ 150 հազար աշխատունակ կանանցից 147 հազարը[4]:

1944 թվականին հանրապետության կոլտնտեսային աշխատավորների թվում կանայք կազմել են 68.3 %-ը: Նրանք վաստակել են կոլտնտեսականների բոլոր աշխօրերի 49.7 %-ը[5]:

Եթե 1940 թվականին հանրապետության կոլտնտեսուհիներից 200-300 աշխօր են վաստակել 5880-ը, 300-400 աշխօր՝ 1040-ը և 400-ից ավելի աշխօր՝ 261 մարդ, ապա 1944 թվականին 19 հազար կոլտնտեսուհիներ վաստակել են 200-300 աշխօր, 4800-ը՝ 300-400 աշխօր, 1000-ը՝ 400-ից ա-

[1] Մինասյան Է., Հայ հերոսուհի կանայք, Երևան, 2016, էջ 462:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 587:
[4] Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920-1960 թթ., Երևան, 1960, էջ 260:
[5] ՀԱԱ, ֆ. 1, ց. 33, գ. 176, թ. 27:

վելի աշխօր[1]: Այս թվերը վկայում են Հայրենական պատերազմի տարիներին կոլտնտեսությունների հանրային աշխատանքներում կանանց մասսայական մասնակցության մասին:

Ընդգրկվելով համաժողովրդական մրցության մեջ՝ կանայք պայքարել են գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության և անասնապահության մթերատվության բարձրացման համար:

Հայկական ՍՍՀ կոլտնտեսություններում կազմակերպվել են բարձր բերքի համար պայքարող ճակատային երիտասարդական-կոմերիտական օղակներ: 1943 թվականին այդպիսի օղակների թիվը հասել է 775-ի, իսկ 1945 թվականին՝ 1648-ի[2]:

Բարձր բերք ստանալու համար օղակավարուհիներից «Աշխատանքային կարմիր դրոշ» շքանշանով պարգևատրվել են Սրմա Աստոյանը (Սպիտակ շրջանի Չկալովի անվան կոլտնտեսություն), Մագթաղ Հակոբյանը (Ալավերդու շրջանի Շնողի կոլտնտեսություն), Մարգարիտա Սուքիասյանը (Մարտունու շրջանի «Հոկտեմբեր» կոլտնտեսություն) և Եպրաքսյա Կոդայանը (Ախոյանի շրջան)[3]:

«Պատվո նշան» շքանշանի արժանացել են երեք օղակավարուհի, իսկ «Աշխատանքային արիության» և «Աշխատանքային գերազանցության համար» մեդալների՝ 23 օղակավարուհի: Բարձր բերքի համար պայքարող օղակներում ընդգրկված կանայք և աղջիկները բարեխիղճ աշխատանքով հասել են մեծ հաջողությունների:

Պատերազմի առաջին իսկ օրերին տրակտորների պակասը զգալի է դարձել: Հազարավոր մեխանիզատորներ մեկնել են գործող բանակ: Հանրապետության կանայք մեծ խանդավառությամբ են նվիրվել գյուղատնտեսական տեխնիկային տիրապետելու գործին: Կանայք ձեռք են բերել նոր մասնագիտություններ: Նրանք դարձել են տրակորիստներ, կոմբայնավորներ, վարորդներ և այլ մասնագետներ: Բացված կարճատև դասընթացներում միայն 1943 թվականին պատրաստվել են 7925 մեխանիզատորներ, որոնցից 858-ը կանայք էին, իսկ 1944 թվականի պատրաստվել են 441 կին տրակտորիստներ և 60 կին կոմբայնավարներ[4]:

Հոկտեմբերյանի մեքենատրակտորային կայանը պատերազմի տարիներին տարբեր մասնագիտություններ է սովորեցրել 300 կոլտնտեսուհիների[5]:

---

[1] **Մարտիրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 63

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 64:

[3] «Коммунист», 11 февраля, Баку, 1944.

[4] ՀԱԱ, ֆ. 163, ց. 15, գ. 242, թ. 35:

[5] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 31, գ. 103, թ. 13:

Ալագյազի շրջանում ՄՏ կայանների գծով կազմակերպվել է երեքամսյա դասընթաց, որտեղ տրակտորի տեխնիկան յուրացնելու համար սովորել են 22 երիտասարդ աղջիկներ, իսկ տրակտորիստի որակավորում ստացած 15 մարդ՝ Երևանի մեխանիզատորների կարճատև դասընթացներում: Նման դասընթացներ կազմակերպվել են նաև Մարտունու ՄՏ կայանին կից, որտեղ սովորել է 29 կին, իսկ Կալինինոյի ՄՏ կայանը պատրաստել 36 աղջիկ-մեխանիզատորներ:

Դասընթացներն ավարտողների մեծ մասը բարեխղճորեն աշխատել է գյուղատնտեսության մեջ: Տրակտորիստուհիները ջանացել են խնայել վառելանյութը, պահեստամասերը և վարը կատարել ժամանակին: **Ուստիան Հովակիմյանը** 1937 թվականից աշխատել է Աշտարակի ՄՏ կայանում, սիստեմատիկորեն գերակատարել է առաջադրանքները: 1941 թվականի օգոստոս ամսին 13 աշխատանքային օրվա պլանը գերակատարել է կրկնակի՝ տնտեսելով 140 կիլոգրամ վառելանյութ:

Ղուկասյանի շրջանի Ղազանչի գյուղի տրակտորիստուհիներ **Օֆիկ Գրիգորյանը, Պայծառ Ղազարյանը, Եպրաքսյա Քերոբյանը և Եվգինե Գրիգորյանը** գերակատարել են իրենց աշխատանքային պլանները[1]:

Մեղա Հովհաննիսյանը, Ծաղիկ Խաչատրյանը և Ծաղիկ Պողոսյանը (-Քանաքեռ), ստանձնելով բանակ մեկնած իրենց ամուսինների գործը, երդվել են մինչև պատերազմի հաղթական ավարտը բարձր պահել ռազմաճակատ մեկնած տրակտորիստների աշխատանքային ավանդները: 1941 թվականի աշնանը նրանք օրվա առաջադրանքները կատարել են 130-150 %-ով: Նույնպիսի ցուցանիշներ է տվել Ախտայի ՄՏ կայանի տրակտորիստուհի **Ս. Գրիգորյանը**[2]:

Հոկտեմբերյանի շրջանի Շահրիարի ՄՏ կայանում աշխատել են 37 կին տրակտորիստներ, որոնք ամեն կերպ ձգտել են աշնանացանը և ցրտահերկը կատարել ժամանակին և որակով: Նույն շրջանից **Հրանուշ Սուքիասյանը**, երբ հայրը մեկնել է ռազմաճակատ, ընդունվել է տրակտորիստների դասընթացը, ավարտելուց հետո սկսել է ինքնուրույն վարել մեքենան, իսկ 1943 թվականին արժանացել է «Սոցիալիստական գյուղատնտեսության գերազանցիկ» կրծքանշանի[3]:

1942 թվականին հանրապետության տրակտորիստներն ու տրակտորիստուհիները, արձագանքելով երկրի առաջավոր տրակտորիստուհիների դիմումին, վերցրել են նոր պարտավորություններ:

1942 թվականին բերքահավաքը կազմակերպված անցկացնելու համար կոմերիտական կազմակերպությունները կարճ ժամանակամիջոցում

[1] **Մինասյան Է.,** նշվ. աշխ., էջ 465:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:

հավաքել են 214 հազար ռուբլու արժողությամբ տրակտորի և գյուղատնտեսական այլ մեքենաների պահեստամասեր: Կազմակերպվել են կին տրակտորիստների 28 տրակտորային բրիգադներ, որոնք բերքահավաքը անցկացրել են սեղմ ժամկետում[1]:

Կիրովականի (Վանաձորի) շրջանի ՄՏ կայանի կոլեկտիվը, մտնելով համաժողովրդական սոցմրցման մեջ, ստանձնել է բարձր պարտավորություններ: Տրակտորիստուհի **Նատաշա Ավետիսյանը** խնդիր է դրել կատարել 300 հեկտար բարձրորակ վար և տնտեսել 600 կիլոգրամ վառելանյութ, վերանորոգման ծախսերը կրճատել 10 %-ով, գարնանացանի ընթացքում պատրաստել երկու տրակտորիստ: Իր պարտավորությունը նա կատարել է պատվով:

Տրակտորիստուհի **Թագուհի Դարբինյանը** պարտավորվել է 2.2 հեկտարի փոխարեն մեկ հերթափոխում կատարել 3 հեկտար վար՝ յուրաքանչյուր հեկտարում տնտեսելով երկու կիլոգրամ վառելանյութ: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թվականի փետրվարի 8-ի հրամանագրով Թ. Դարբինյանը պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով[2]:

Մտնելով համամիութենական սոցիալիստական մրցման մեջ՝ իրենց հայրենանվեր գործերով լավագույն արդյունքների են հասել Բասարգեչարի և Իջևանի շրջանների ՄՏ կայանների աշխատողները: Իջևանի ՄՏ կայանի 5-րդ տրակտորային բրիգադը, որի ղեկավարն էր **Անահիտ Գյուզալյանը**, 1942 թվականի գարնանացանի պլանը կատարել է 166 %-ով՝ տնտեսելով 1342 կիլոգրամ վառելանյութ, իսկ Բասարգեչարի կոլտնտեսության կանանց 7-րդ բրիգադը 350 հեկտար վարի փոխարեն կատարել է 571 հեկտար՝ տնտեսելով 3620 կիլոգրամ վառելանյութ[3]:

Հոկտեմբերյանի շրջանի Մեծ Շահրիարի (այժմ՝ գյուղ Նալբանդյան) ՄՏ կայանի տրակտորիստուհիներ **Նազանի Մարտիրոսյանը, Վերգուշ Գրիգորյանը, Հռիփսիմե Ազարյանը և Էմմա Հարությունյանը** 1942 թվականի գարնանը հերկել են 1014 հեկտար հողամաս՝ տնտեսելով 1115 կիլոգրամ վառելանյութ: Նրանց աշխատանքային սխրանքների մասին պատմել է «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթը[4]: Թերթը կարդալուց հետո N ավիազորամասից սերժանտ Ժորժ Գունկը և Վիկտոր Բորյուժեն տրակտորիստուհիներին ուղարկել են նամակ, որտեղ ասված է. «Ձեր աշխատանքը մեզ ոգեշնչում է է՛լ ավելի լավ յուրացնել ավիացիոն վարպետությունը: Մենք պատրաստ ենք ամեն րոպե հակահարված տալու թշնամուն: Ցանկանում

[1] ՀԱԱ, ֆ. 575, ց. 1, գ. 118, թ. 28:

[2] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 69:

[3] «Սովետական Հայաստան», 6 սեպտեմբերի, Երևան, 1942:

[4] «Комсомольская правда», 29 апреля, Москва, 1942.

ենք Ձեզ ավելի լավ աշխատանք, դրանով իսկ ամուր կլինի ձեր հարվածը թշնամուն»[1]:

Հանրապետության մի շարք ՄՏ կայաններ գերազանց են կատարել գարնանացանի և աշնանացանի աշխատանքները, համամիութենական սոցիալիստական մրցության մեջ դուրս են եկել որպես հաղթողներ և արժանացել փոխանցիկ կարմիր դրոշի:

Երկրորդ կարգի մրցանակի է արժանացել Հոկտեմբերյանի ՄՏ կայանը, որի աշխատողների զգալի մասը կանայք էին:

1942 թվականին արտադրական պլանները գերակատարելու, ինչպես նաև ինքնարժեքի իջեցման ու վառելանյութի տնտեսման համար ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով պարգևատրված մեքենատրակտորային արհեստանոցների 90 լավագույն աշխատողներից 8-ը կանայք էին: Նրանց թվում էին Իջևանի ՄՏԿ-ի տրակտորային բրիգադի բրիգադավար **Արաքսյա Իսկանդարյանը,** Շամշադինի ՄՏԿ-ից՝ **Հրանուշ Հովակիմյանը**, Գորիսի ՄՏԿ-ից՝ **Հասմիկ Սևիկյանը**, Շահրիարի ՄՏԿ-ից՝ **Անահիտ Թորոսյանը**, Կիրովականի ՄՏԿ-ից՝ **Աննա Գրիգորյանը**[2]:

Ամփոփելով կանանց տրակտորային բրիգադների համամիութենական սոցիալիստական մրցության 1943 թվականի արդյունքները՝ ՀամԼԿԵՄ կենտկոմը որոշել է գյուղատնտեսական աշխատանքներին ակտիվորեն մասնակցելու համար Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշը հանձնել Իջևանի շրջանի կին տրակտորիստների բրիգադին, որի բրիգադավարն էր Արաքսյա Իսկանդարյանը: ՀամԼԿԵՄ կենտկոմի պատվոգրով պարգևատրվել են Բասարգեչարի և Հոկտեմբերյանի ՄՏԿ-ների տրակտորիստուհիները[3]:

Համամիութենական սոցիալիստական մրցության հրավերը ընդունած Մկոյանի շրջանի Շատին գյուղի կոլտնտեսականները պարտավորվել են աշնանացան ցորենի յուրաքանչյուր հեկտարից պլանով նախատեսված 11 ցենտների փոխարեն ստանալ 15 ցենտներ, իսկ գարնանացան ցորենի յուրաքանչյուր հեկտարից՝ 9 ցենտների փոխարեն 11 ցենտներ:

1942 թվականին հացահատիկային կուլտուրաների ցանքի պլանը շատինցիները կատարել են 106 %-ով, կտավատինը 140, կարտոֆիլինը՝ 130, բրինձինը՝ 135, կորեկինը՝ 550 %-ով[4]:

Սոցիալիստական մրցություն է ծավալվել տարբեր շրջանների կոլտնտեսությունների միջև:

---

[1] «Սովետական Հայաստան», 3 հունիսի, Երևան, 1942:

[2] «Սովետական Հայաստան», 5 մայիսի, Երևան, 1943:

[3] **Մարտիրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 70:

[4] «Սովետական Հայաստան», 5 օգոստոսի, Երևան, 1942:

Ազիզբեկովի շրջանի կոլտնտեսականները մրցման են հրավիրել Միկոյանի շրջանի կոլտնտեսականներին: Մինչև 1942 թվականի հուլիսի 20-ը երկու շրջաններում միմյանց հետ պայմանագիր են ստորագրել 30 կոլտնտեսություն, 86 բրիգադ, 3130 կոլտնտեսականներ, այդ թվում՝ ավելի քան 1700 կին[1]:

Վաղարշապատի շրջանի կոլտնտեսուհիները դիմել են շրջանի գյուղատնտեսության կին աշխատողներին՝ առաջարկելով մասնակցել կոլտնտեսային աշխատանքներին, 1942 թվականին վաստակել են ոչ պակաս 250-300 աշխօր (յուրաքանչյուրի համար): «Փոխարինելով բանակ մեկնած մեր հայրերին, ամուսիններին, եղբայրներին, հարազատներին,– գրել են Վաղարշապատի շրջանի առաջավոր կոլտնտեսուհիների հավաքի մասնակիցները,– կաշխատենք այնպես, ինչպես նրանք կռվում են գերմանական ֆաշիստների դեմ»[2]:

Համամիութենական մրցության մեջ են մտել նաև Նոր Բայազետ շրջանի Նորադուզ գյուղի կոլտնտեսության 100 աղջիկներ: Նրանք դաշտից տուն են վերադարձել միայն հացահատիկի վերջին հասկը հավաքելուց հետո:

Հացահատիկի արտադրությունն ավելացնելու գործում զգալի հաջողությունների են հասել Իջևանի շրջանի կոլտնտեսությունները:

Հացահատիկի հնձի օրվա առաջադրանքները 150-200 %-ով են կատարել Նոյեմբերյանի շրջանի Լամբալուի կոլտնտեսության դաշտավարական 4-րդ բրիգադի անդամները: Օրինակելի և նվիրված աշխատանքով աչքի են ընկել կոլտնտեսուհիներ Ֆաթմա Հաշտա կզին, Խեյթանոս Ալի կզին, Սաֆորա Օսմա կզին և ուրիշներ[3]:

Ռինդ գյուղի (Միկոյանի շրջան) կոլտնտեսության գրեթե բոլոր կանայք մասնակցել են հացահատիկի բերքահավաքին: Կոլտնտեսուհիներ Աստղիկ Ստեփանյանը, Նունե Ասատրյանը, Նունուֆար Կարլենյանը պլանով նախատեսված 1000 քառակուսի մետրի փոխարեն օրեկան հնձել են 1800 քառակուսի մետր[4]:

Պատերազմի առաջին օրերին Թալինի շրջանի Չիթհանքով գյուղի Բուդյոննու անվան կոլտնտեսության նորեկ կոլտնտեսուհիներից էր 16-ամյա **Մարիամ Մարտիրոսյանը**: Նա մեծ ցանկությամբ փոխարինել է ռազմաճակատ մեկնած տրակտորիստ եղբորը: Մարիամը գործուղվել է Երևանի գյուղատնտեսական դպրոց: Ավարտելով 4-ամսյա դասընթացը՝ նա՝ որպես տրակտորիստ, սկսել է աշխատել կոլտնտեսային դաշտերում:

---

[1] **Մինասյան Է.,** նշվ. աշխ., էջ 469:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս նույն տեղում:

Շուտով կոլտնտեսության վարչությունը նպատակահարմար է գտել ե-ռանդուն կոմերիտուհուն նշանակել դաշտավարական օղակի օղակա-վար: Օղակին հատկացվել է 10 հեկտար հողամաս: Հմտորեն կազմակեր-պելով գործը՝ Մ. Մարտիրոսյանի օղակը նվաճել է ռեկորդային բերք: Օղա-կի անդամները խնամքով են մշակել հողամասը, ցանել տեսակավոր սերմ: Օղակը տարեցտարի բարձրացրել է հացահատիկի բերքատվությունը: Հաղթանակի տարվա աշնանը օղակը ցանել է աշնանացան ցորեն, որի ար-դյունքը հրաշալի էր. 1946 թվականին պլանով նախատեսված 16 ցենտների փոխարեն յուրաքանչյուր հեկտարից ստացվել է 39.5 ցենտներ ցորեն[1]:

Պատերազմի տարիներին կոլտնտեսությունը ղեկավարելու ան-սպառ եռանդ, մեծ հմտություն է ցուցաբերել Աղինի շրջանի Քյալալի (Նո-րաբեր) գյուղի կոլտնտեսության նախագահ, կուսակցության անդամ **Փա-ռանձեմ Աբգարյանը**: Նա կոլտնտեսության աշխատանքները ղեկավարել է հմտորեն: Կոլտնտեսությունը 1943 թվականին ստացել է հարուստ բերք՝ հեկտարից 20 ցենտներ հացահատիկ: 230 հեկտար հացահատիկի հունձը նախատեսված 20 օրվա փոխարեն կոլտնտեսականները կատարել են 12 օրում: Փ. Աբգարյանը կարողացել է հնձի դուրս բերել գյուղի բոլոր կա-նանց: Կոլտնտեսությունը ժամկետից շուտ է կատարել 1943 թվականի պետական մթերումների պլանը[2]:

Հայրենական պատերազմի տարիներին հանրապետությունում ա-վելացել են նաև կարտոֆիլի ցանքատարածությունները:

1940 թվականի համեմատությամբ 1945 թվականին կարտոֆիլի ցանքատարածությունը կրկնապատկվել է, բարձրացել է բերքատվությու-նը, իսկ համախառն բերքը հասել մեկ ու կես միլիոն ցենտների[3]:

Կարտոֆիլի բերքատվության բարձրացման գործում մեծ դեր են խաղացել գյուղատնտեսության երկուհարյուրականիները, որոնց շարքե-րը համալրել են բազմաթիվ անվանի կոլտնտեսուհիներ:

Ալավերդու շրջանի Ծաթեր գյուղի կոլտնտեսության օղակավարու-հի **Հայկանուշ Գալստյանը** փոխարինել է ռազմաճակատ մեկնած ամուս-նուն և անձնվիրաբար պայքարել է կարտոֆիլի առատ բերք աճեցնելու համար: Հայկանուշը մեծ խնամքով մշակել է իրեն հատկացված չորս հեկ-տար հողամասը: Դրա շնորհիվ 1944 թվականին հեկտարից պլանով նա-խատեսված 90 ցենտների փոխարեն նա ստացել է 280 ցենտներ կարտո-

[1] **Սահակյան Վ., Գևորգյան Վ.,** Հայաստանի սոցիալիստական աշխատանքի հերոսները, Երևան, 1960, էջ 44:

[2] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 74:

[3] **Մինասյան Է.,** նշվ. աշխ., էջ 471:

ֆիլ: Դա ռեկորդային բերք էր, որի համար Հ. Գասպարյանը արժանացել է կառավարական բարձր պարգևի՝ «Լենինի» շքանշանի[1]:

Ստեփանավանի շրջանի Կուրթան գյուղի Միկոյանի անվան կոլտնտեսությունում կարտոֆիլի բարձր բերքի վարպետներ են դարձել **Արուսյակ Դարբինյանը, Աստղիկ Գալոյանը, Հասմիկ Խանամյանը և Հայկանուշ Մազդալյանը**:

Արուսյակ Դարբինյանի օղակը 1944 թվականին պլանով նախատեսված 95 ցենտների դիմաց յուրաքանչյուր հեկտարից ստացել է 164 ցենտներ կարտոֆիլի բերք[2]:

Հայրենական պատերազմի տարիներին բամբակի նշանակությունը ավելի է բարձրացել: Բամբակն անհրաժեշտ էր արդյունաբերության, ռազմաճակատի կարիքները, առավելապես հոսպիտալների պահանջները բավարարելու համար: Կուսակցության և կառավարության պահանջով բամբակացան շրջանների կուսակցական կազմակերպությունները, կոլտնտեսությունների ղեկավարները և կոլտնտեսականները լարված աշխատանք են տարել բամբակե առատ բերք աճեցնելու և այն անկորուստ հավաքելու համար:

1942 թվականի սեպտեմբերին՝ բամբակի բերքահավաքի առաջին օրը, Փոքր Շահրիար գյուղի կոլտնտեսությունը գործարանին է հանձնել 2.5 տոննա բամբակ: Կոլտնտեսուհի **Աննա Ավչյանը** մեկ օրվա ընթացքում հավաքել է 100 կիլոգրամ բամբակ[3]: Բամբակաշատ գյուղի կոլտնտեսուհի **Ասանեթ Սիմոնյանը** պլանով նախատեսված 45 կիլոգրամի փոխարեն օրական հավաքել է 220-230 կիլոգրամ բարձրորակ բամբակ:

Հոկտեմբերյանի շրջանի Ջաֆարաբադի կոլտնտեսության օղակավարուհի **Թամարա Շահբազյանը** աշխատել է 1934 թվականից՝ բազմիցս արժանանալով համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունքին: Թ. Շահբազյանը պլանով նախատեսված 13 ցենտների դիմաց հեկտարից ստացել է 30 ցենտներ բամբակ և 75-80 ցենտներ խաղող: Մտնելով սոցմրցման մեջ՝ նա պարտավորություն է ստանձնել հավաքել 250 կիլոգրամ բամբակ, այսինքն՝ օրական կատարել 6 նորմա[4]:

Ղամարլուի (Արտաշատ) շրջանի Վերին Աղբաշ գյուղի կոլտնտեսության օղակավարուհի **Նազիկ Ստեփանյանը** 1941 թվականին յուրաքանչյուր հեկտարից ստացել է 50 ցենտներ բամբակ, իսկ հաջորդ տարն՝ 60 ցենտներ: Նույն շրջանի Ներքին Աղբաշ գյուղի կոլտնտեսության բամբակի բարձր բերքի վարպետ **Եսթեր Հովհաննիսյանը** պատերազմի տարի-

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] «Սովետական Հայաստան», 8 սեպտեմբերի, Երևան, 1942:

[4] **Մարտիրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 79:

ներին իր օղակի անդամների հետ միասին հանրապետությունում ստացել է բամբակի ռեկորդային բերք[1]:

Բրիգադավոր **Միրանուշ Դավթյանի** բամբակագործական բրիգադը պլանով նախատեսված 1400 կիլոգրամի փոխարեն օրական հավաքել է 1800-2100 կիլոգրամ առաջին տեսակի բամբակ[2]:

Իր կատարած աշխատանքով, ինչպես նաև հասարակական գործունեությամբ աչքի է ընկել **Արփիկ Բադալյանը**: Նա ծնվել է 1927 թվականին Հոկտեմբերյանի շրջանի Սովետական (այժմ՝ Ալաշկերտ) գյուղում: Դպրոցն ավարտելուց հետո՝ 1945 թվականից, Ա. Բադալյանը աշխատել է հայրենի գյուղի կոլտնտեսությունում որպես բամբակագործական բրիգադի օղակավարուհի: Նրա ղեկավարած օղակը, կիրառելով երկրի առաջավոր բամբակագործների փորձը, աճեցրել է բամբակի ռեկորդային բերք՝ յուրաքանչյուր հեկտարից ստանալով 73 ցենտներ բարձրորակ հումք: Այդ նվաճումների համար Ա. Բադալյանը 1947 թվականին պարգևատրվել է «Աշխատանքային գերազանցության» մեդալով, իսկ 1950 թվականին արժանացել է նաև «Սոցիալիստական աշխատանքի հերոսի» կոչման: Ա. Բադալյանը 1955-1965 թվականներին ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր[3]:

Ա. Բադալյանի նման անձնուրաց և աշխատասեր հայուհիների թիվը քիչ չէր հանրապետությունում: Բրիգադավարներից հիշատակության արժանի են՝ «Աշխատանքային արիության համար» մեդալակիր **Միրանուշ Մկրտչյանը** (Հոկտեմբերյանի շրջանի Լենինի անվան կոլտնտեսություն), **Սիրան Բալայանը** (Գորիսի շրջանի Կիրովի անվան կոլտնտեսություն), «Աշխատանքային գերազանցության համար» մեդալակիրներ **Դուխիկ Կարապետյանը** (Հոկտեմբերյանի շրջանի «Սոցիալիզմ» կոլտնտեսություն), *Նուբար Մուրադյանը* (Աշտարակի շրջանի Օրջոնիկիձեի անվան կոլտնտեսություն), ինչպես նաև **Սանամ Շիմալյանը** (Ալավերդու շրջանի Շամուտ գյուղ), կոմունիստ **Երջանիկ Մելքոնյանը** (Նոր Բայազետի շրջանի Փաշաքյանդ գյուղ) և ուրիշներ[4]:

Պատերազմի տարիներին մեծ ուշադրություն է դարձվել նաև ծխախոտի ցանքերի ընդարձակմանը: Ծխախոտի պլանտացիաները 1940 թվականին գրավել են 5029 հեկտար, իսկ 1945 թվականին՝ 7803 հեկտար տարածություն: Անհրաժեշտ է նշել, որ ծխախոտի ցանքերի տարածության ընդարձակումը զուգակցվել է բերքատվության բարձրացման հետ: Ծխախոտագործությունը տարածվել է նաև նոր շրջաններում: Պատերազ-

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] «Կոմունիզմի ուղիով», N 28, Էջմիածին, 1941:

[3] **Կարապետյան Փ., Ամիրխանյան Ա.,** Արմավիրի մարզի անվանի մարդիկ, Երևան, 2013, էջ 16:

[4] **Մինասյան Է.,** նշվ. աշխ., էջ 474:

մի տարիներին ծխախոտի կուլտուրան մշակվել է Հայաստանի շուրջ քսան շրջաններում[1]:

Հանրապետության ծխախոտագործության գլխավոր կենտրոններն են Շամշադինի և Իջևանի շրջանները: Ծխախոտագործների ավանգարդում էր Շամշադինի շրջանի Նորաշեն գյուղի կոլտնտեսությունը: Այստեղ մեծ խանդավառությամբ են աշխատել ծխախոտագործուհիներ **Սանամյանը** և **Փայտյանը**: Ռազմաճակատում գտնվող իրենց հարազատներին նրանք գրել են. «Մեր ամուսինների ղեկավարած օղակները այժմ մենք ենք ղեկավարում: Մենք պատվով կկատարենք մեզ վրա դրված պարտավորությունները և կապահովենք սոցիալիստական դաշտերի բարձր բերքատվությունը: Մենք պարտավորվում ենք մեր պոստում աշխատել ազնվորեն և բարեխղճորեն: Թող մեր թշնամիներն իմանան, որ սոցիալիզմի երկրի կանայք ընդունակ են ամեն ինչի, նույնիսկ զենք կրելու: Մենք կանգնած ենք մեր ամուսինների և եղբայրների թիկունքում: Նրանք՝ ռազմաճակատում, մենք սոցիալիստական դաշտերում անընդհատ պայքարով կապահովենք հաղթանակը»: Նրանք կատարել են իրենց խոստումը և օրինակ ծառայել շատ կոլտնտեսուհիների համար[2]:

Բերդ գյուղի «Նոր կյանք» (Շամշադինի շրջան) կոլտնտեսության առաջավորներ Անիչկա և Նագրաֆին Մելքոնյանները, Ներքին Կարմիրաղբյուր գյուղի օղակավարուհի **Սաթենիկ Գալոյանը** և շատ ուրիշներ իրենց ամուսիններին բանակ ճանապարհելուց հետո աշխատանքի են լծվել նոր եռանդով:

Հայրենական պատերազմի տարիներին իրենց քրտնաջան աշխատանքով լավագույն արդյունքի են հասել Իջևանի շրջանի Սարիգյուղի Շահումյանի անվան կոլտնտեսության ծխախոտագործուհիներ **Միրան Մկրտումյանը, Հռիփսիմե Մադաթյանը** և **Լիլիֆար Գալըստյանը**, որոնք արժանացել են «Սոցիալիստական աշխատանքի հերոսի» կոչման[3]:

Նոր Բայազետի Նորադուղ գյուղում աչքի են ընկել օղակավարուհի **Պարզիկ Ասոյանը** և ***Միրան Ասատրյանը***: Փաստորեն՝ Հանրապետության ծխախոտագործության բնագավառում աշխատողների մեծամասնությունը կազմել են կանայք: Նրանք ավանգարդային դերում էին նաև գյուղատնտեսության տվյալ ճյուղի զարգացման պայքարում:

Հայրենական պատերազմի տարիներին գյուղատնտեսական մի շարք կուլտուրաների թվում որոշակի զարգացում են ունեցել նաև խաղո-

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 82:

ղագործությունը և պտղաբուծությունը, որոնց համախառն արտադրանքը, 1940 թվականի համեմատությամբ, 1945 թվականին աճել է 18 %-ով[1]:

Պատերազմի պայմաններում խաղողագործությունը, ինչպես նաև պտղաբուծությունը, չէին կարող բուռն զարգացում ապրել: Դրա համար պահանջվում էին մեծ ներդրումներ, զգալի չափով բուժանյութեր և հանքային պարարտանյութեր, իսկ դրանց քանակը սահմանափակ էր: Չնայած այս բոլորին՝ պահպանվել են խաղողի այգիների բոլոր տարածությունները: Մինչև պատերազմը խաղողի և պտղատու այգիների մշակման ծանր աշխատանքները կատարել են գրեթե միայն տղամարդիկ, իսկ Հայրենական պատերազմի տարիներին դրանց մեծ մասը կատարել են կանայք:

Լավագույն խաղողագործի անուն է վաստակել Վաղարշապատի շրջանի Քաղցրաշեն գյուղի Շահումյանի անվան կոլտնտեսության օղակավարուհի, հետագայում Սոցիալիստական աշխատանքի հերոս **Նոյեմզար Եղիազարյանը**: Նրա անդուլ աշխատանքի լավագույն ապացույցն է այդ տարիներին վաստակած աշխօրերի քանակը, որը գերազանցել է պարտադիր մինիմումը[2]:

Մարինոս Բարամյանի կենսագրությունը հարուստ է նաև հեղափոխական անցյալով: Նա եղել է Հայաստանում խորհրդային կարգերի համար մղվող պայքարի մասնակից հայ կանանց շարքում: Ծառայել է երկրորդ գնդի ութերորդ պարտիզանական վաշտի չորրորդ դասակում, որը գործում էր Վեդու շրջանում: Խիզախ պարտիզանուհին շարունակ եղել է կրակի առաջին գծում, իր ընկերներին օգնել է ռազմամթերքով և պարենամթերքով:

Հեղափոխական պայքարում կոփված Մ. Բարամյանը ակտիվորեն մասնակցել է խորհրդային շինարարությանը: Նա առաջիններից մեկն էր, ով մտավ Գետաշենի կոլտնտեսության մեջ: Օղակավարուհի Մ. Բարամյանը անդուլ աշխատանք է տարել խաղողի բերքատվության բարձրացման և նոր այգիների ստեղծման համար: Նա աշխատանքային մեծ եռանդ է ցուցաբերել նաև պատերազմի տարիներին: Իսկ պատերազմի հաղթական ավարտից հետո՝ 1948 թվականին, 10 հեկտար այգիների յուրաքանչյուր հեկտարից 160 ցենտներ խաղող ստանալու համար արժանացել է «Սոցիալիստական աշխատանքի հերոսի» կոչման[3]:

Էջմիածնի շրջանի Միկոյանի անվան կոլտնտեսության առաջավոր բրիգադավարներից էր **Հայաստան Ամիրյանը**: 1930 թվականից աշխատելով կոլտնտեսությունում՝ ջանասեր աշխատանքով նա արժանացել է մեծ պատվի: Հ. Ամիրյանի աշխատանքային սխրանքները բազմիցս նշվել են

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 87:

[2] **Մինասյան Է.,** նշվ. աշխ., էջ 476:

[3] Տե՛ս նույն տեղում:

հանրապետության կուսակցական համագումարներում և շրջանային կուսակցական կոնֆերանսներում:

Հայաստան Ամիրյանը ծնվել է 1911 թվականին Վանի նահանգի Խերխան գյուղում՝ տնայնագործի ընտանիքում: Կյանքի դառնությունը ճաշակել է մանուկ հասակից: Երբ թուրքական ենիչէրիների հալածանքներից փրկվելու համար 1915 թվականին Վանի աշխատավորները բռնել են գաղթի ճանապարհը, Ամիրյանների ընտանիքը օթևան է գտել Էջմիածնում: Սովետական կարգերի շնորհիվ ոտքի է կանգնել նաև նրանց ընտանիքը: Հայաստանը ավարտել է յոթնամյա դպրոցը, առաջինն է մտել կոլտնտեսության մեջ և համալրել «Կոմունիստական կուսակցության» շարքերը: Հայրենական պատերազմի հենց առաջին օրերից Հ. Ամիրյանը նշանակվել է դաշտավարական բրիգադի բրիգադավար: 1941 թվականին բրիգադի լավ աշխատանքի շնորհիվ ամեն մի հեկտարից ստացվել է 28 ցենտներ, և ընդամենը պետությանն հանձնվել է 945 ցենտներ բամբակ: 1942 թվականին նույնքան տարածությունից բրիգադը ստացել է 903 ցենտներ բամբակ: 1943-1944 թվականներին բրիգադը մշակել է 40 հեկտար հողամաս՝ պետությանը հանձնելով համապատասխանաբար 820 և 840 ցենտեր, իսկ 1945 թվականին՝ 35 հեկտարից 770 ցենտներ բամբակ[1]: Պատերազմի դժվարին պայմաններում բրիգադը հմտորեն ղեկավարելու, աշխատանքները կազմակերպչական բարձր մակարդակով անցկացնելու համար կոմունիստ բրիգադավար Հ. Ամիրյանը 1943 թվականին արժանացել է ՀԿ(բ)Ը կենտկոմի շնորհակալությանը, իսկ 1944 թվականին՝ Հայկական ԽՍՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրին:

Կոլտնտեսության կին ղեկավարների մեջ աչքի է ընկել Վաղարշապատի շրջանի վերին Խաթունարխ գյուղի կոլտնտեսության նախագահ **Ռեբեկա Ղարիբյանը:**

Հայրենական պատերազմի առաջին օրը, երբ Ռ. Ղարիբյանի ամուսինը՝ կոլտնտեսության նախագահ Երվանդ Ղազարյանը, մեկնել է ռազմաճակատ, կոլտնտեսականները միաձայն նախագահ են ընտրել կուսակցական Ռ. Ղարիբյանին: 1942 թվականին կոլտնտեսությունը դարձել է միլիոնատեր: Կոլտնտեսականները տանկային շարասյուն կառուցելու ֆոնդ են մուծել մեկ միլիոն ռուբլի, իսկ կոլտնտեսության նախագահ Ղարիբյանը, արձագանքելով Սարատովի մարզի Պոկրովսկի շրջանի կոլտնտեսական Ֆերապոնտ Գոլովատիի հայրենասիրական նախաձեռնությանը, իր անձնական խնայողություններից նույն ֆոնդին հատկացրել է 50 հազար ռուբլի[2]:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 477:

[2] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 90:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Ռ. Ղարիբյանը 1945 թվականին պարգևատրվել է «Լենինի» շքանշանով, իսկ 1946 թվականին առաջավոր կոլտնտեսության նախագահը ընտրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Այսպիսով՝ մեր հանրապետության առաջավոր կանայք, չխնայելով իրենց ուժերը և հաղթահարելով մեծ դժվարություններ, ապահովել են խաղողի, պտղի և գյուղատնտեսական մյուս մթերքների անխափան արտադրությունը:

Չնայած պատերազմի տարիներին առաջացած լուրջ դժվարություններին՝ Հայաստանի կոլտնտեսականները, այնուամենայնիվ, պայքարել են անասունների գլխաքանակի ավելացման և անասնաբուծության մթերատվության բարձրացման համար: 1941 թվականի հետ համեմատած՝ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1944 թվականին աճել է 5.9 %-ով: Նույն ժամանակաշրջանում ոչխարների և այծերի գլխաքանակը ավելացել է 23.1 %-ով, իսկ խոզերինը՝ 9.7 %-ով[1]:

Անասունների գլխաքանակի աճման հետ մեկտեղ բարձրացել է նաև նրանց մթերատվությունը: Մեկ կովի միջին կաթնատվությունը նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ բարձրացել է 11 %-ով, ոչխարներինը և այծերինը՝ 7 %-ով:

1944 թվականի առաջին կիսամյակում անասնաբուծության բնագավառում ձեռք բերած հաջողությունների համար հանրապետությունը նվաճել է Պաշտպանության պետական կոմիտեի փոխանցիկ կարմիր դրոշը: Այդ դրոշով պարգևատրվել է նաև Ստեփանավանի շրջանը[2]:

Կանանց դերը մեծացավ նաև անասնապահության ոլորտում:

Ապարանի շրջանի Բլխեր (Շենավան) գյուղի կոլտնտեսության կթվորուհի **Վարդուշ Գևորգյանը** 45 ոչխարից ստացել է 50 գառ, իսկ **Օսաննա Հովհաննիսյանը**՝ 45 ոչխարից 53 գառ: Կթվորուհիներ Ս. Գասպարյանը, **Կ. Դավթյանը** և **Վ. Պետրոսյանը** շարունակ գերակատարել են իրենց արտադրական նորմաները[3]:

Պատերազմի ծանր օրերին աշխատանքի վերադարձած 60-ամյա անասնապահ Շողեր Սաքանյանը, դիմելով կոլտնտեսականներին, ասում էր. «Ես խնամում եմ 15 կով և խոստանում եմ աշխատել ազնվորեն, գիշեր և ցերեկ, որպեսզի ավելի շատ կաթ տամ հայրենիքին, կպատրաստեմ ընտիր տեսակի կարագ ու պանիր ռազմաճակատի համար, որ մեր ասլան

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 33, գ. 4, թ. 4:

[2] **Մինասյան Է.,** նշվ. աշխ., էջ 479:

[3] Տե՛ս նույն տեղում:

բալեքը լավ սնվեն ու ավելի ուժեղ հարվածով շուտ ոչնչացնեն Հիտլերին ու նրա բանակին»[1]:

Ստեփանավանի շրջանի Լեջան գյուղի Կամոյի անվան կոլտնտեսության անասնաբուծական ֆերմայի կթվորուհիներ **Արուսյակ Գրիգորյանը** և **Անիչկա Աղաջանյանը**, օրինակելիորեն կազմակերպելով կովերի խնամքը, ձեռք են բերել զգալի հաջողություններ:

Սոցմրցման արդյունքները ամփոփելուց հետո հանրապետության առաջավոր յոթ կթվորուհիներ 1943 թվականին արժանացել են Հայկական ԽՍՍ Գերագույն սովետի պատվոգրին:

1944 թվականին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով հանրապետության անասնաբուծության բնագավառում աշխատող առաջավոր կանայք արժանացել են կառավարական պարգևներին: «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով պարգևատրվել են Սիսիանի շրջանի Չկալովի անվան կոլտնտեսության կթվորուհի **Օվսաննա Թորոսյանը**, «Պատվո նշան» շքանշանով՝ Ստեփանավանի շրջանից կթվորուհի **Վարսենիկ Պապյանը**, Ապարանի շրջանի «Հարվածային» կոլտնտեսության ֆերմայի վարիչ **Վերգինե Սաղոյանը**: «Աշխատանքային արիության համար» մեդալով պարգևատրվել են յոթ և «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով՝ ութ կթվորուհիներ[2]:

Ախտայի շրջանի Արզաքյանդի կոլտնտեսության կթվորուհիները 1945 թվականին յուրաքանչյուր կովից ստացել են 1380 կիլոգրամ կաթ: Կալինինոյի շրջանի Կաթնաղբյուր գյուղի 17-րդ կուսհամագումարի անվան կոլտնտեսության կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները հպարտանում էին **Մարիամ Ջանոյանով**: Վերջինս իր ամբողջ կյանքն ու եռանդը նվիրաբերել է հանրային հոտի աճեցման, նրա մթերատվության բարձրացման գործին:

1941 թվականի աշնանը Շահումյանի շրջանի Շահումյանի անվան կոլտնտեսության նախագահ է ընտրվել կոմունիստ **Նազանի Գալըստյանը:** Նա լուրջ ուշադրություն է դարձրել անասնաբուծության զարգացմանը: Ընդարձակվել են խոտհարքները, ստեղծվել է անասունների կերի կայուն բազա, բարձրացել է կաթնատվությունը: 1942 թվականին կոլտնտեսությունը յուրաքանչյուր կովից ստացել է 1470 կիլոգրամ կաթ, իսկ մեկ ոչխարից՝ 1.2 կիլոգրամ բուրդ[3]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1960 թվականին կոլտնտեսության նախագահ **Նազանի Գալստյանին** շնորհել է «Սոցիալիստական աշխատանքի հերոսի» կոչում:

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] «Коммунист», 11 февраля, Баку, 1944:

[3] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 93:

1945 թվականին կոլտնտեսությունը յուրաքանչյուր ֆուրաժային կովից ստացել է 33.5 ցենտներ կաթ 1942 թվականի 24.2 ցենտների դիմաց, որը նույնպես բարձր ցուցանիշ էր:

Պատերազմի տարիներին Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղի կոլտնտեսությունը ղեկավարել է ճակատային կին **Աղավնի Դիլանյանը:**

Կոլտնտեսության աշխատանքները լավ ղեկավարելու և պետական պարտավորությունները ժամանակին կատարելու համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով 1944 թվականին կոմունիստ Ա. Դիլանյանը պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով[1]:

1942-1943 թվականներին Մարգարայի 26 կոմիսարների անվան կոլտնտեսության նախագահի պաստում էր բազմավաստակ կոլտնտեսուհի, կուսակցության անդամ **Սաթիկ Մաթևոսյանը:** Զանգիբասարի շրջանի կոմերիտմիության անվան կոլտնտեսությունը ղեկավարել է «Աշխատանքային արիության համար» մեդալակիր **Հայկանուշ Մարջանյանը**, Սևանի շրջանի «Ավանգարդ» կոլտնտեսությունը՝ **Սիրանուշ Ալավերդյանը**, Զանգիբասարի շրջանի Գյոյգմբեթ գյուղի «Ինտերնացիոնալ» կոլտնտեսությունը՝ **Մանյա Օհանյանը**, Վաղարշապատի շրջրջանի Լուսագյուղի կոլտնտեսությունը՝ **Գոհար Դարբինյանը** և այլն[2]:

Գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման և պետական պարտավորությունների կատարման բնագավառում հանրապետության կին աշխատավորները կատարել են պատվավոր գործ:

Այսպիսով՝ Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը իր ուժերը նվիրաբերել է ֆաշիստական զավթիչներին ոչնչացնելու գործին:

Պատերազմի ծանր ժամանակաշրջանում «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը» համախմբել էր հանրապետության կանանց ուժերը՝ գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպված անցկացնելու, պետական պլանները կատարելու համար: Կանայք դարձել էին կարևոր ուժ գյուղատնտեսության բնագավառում:

Հայաստանի գյուղատնտեսության կին աշխատողները երբեք իրենց եռանդն ու ուժերը, աշխատանքային արիությունը չեն դրսևորել այնպիսի ուժով, ինչպես Հայրենական պատերազմի տարիներին: Իրենց վրա վերցնելով գյուղատնտեսական աշխատանքների գլխավոր ծանրությունը՝ նրանք ցույց տվեցին աշխատանքային բացառիկ եռանդ: Աշխատավոր հայ գեղջկուհին կրեց բազում դժվարություններ ու զրկանքներ, բայց երբեք չընկճվեց: Հայրենիքի սիրով համակված կանայք թշնամուն հաղթելու գործում ներդրեցին իրենց մեծ լուման:

---

[1] **Մինասյան Է.,** նշվ. աշխ., էջ 481:

[2] Տե՛ս նույն տեղում:

Эдик Минасян, Деятельность сельскохозяйственных рабочих ССРА в тылу во время Великой Отечественной войны (в период 1941-1945) - Великая Отечественная война вынудила перестроить сельскую работу в тылу в соответствии с потребностями фронта. Женщины и дети, которые заменили мужчин в тылу, работали целый день, чтобы заботиться о потребностях фронта. От начала Великой Отечественной войны до ее победного конца они оказали неоценимую услугу победе своим верным, преданным патриотизмом, потной и неустойчивой работой. Они с честью выполняли свой священный долг перед Родиной.

Edik Minasyan, The activity of SSRA agricultural workers in the rear during the Great Patriotic War (in the period 1941-1945) - The Great Patriotic war forced to rebuild the rural work in rear according the needs of front. The women and children who replaced the men in the rear, worked whole day to take care of the needs of the front. From the start of the Great Patriotic war to its victorious end, they provided invaluable service to the victory with their beliefe, devoted patriotism, sweaty and unstobable work.They fulfilled their sacred duty to the Motherland with honor.

ЭЧМИАДЗИН И ИСТОРИЧЕСКИЙ ПРОЦЕСС

ВАЛЕРИЙ ТУНЯН

Ключевые слова - Эчмиадзин, мифотворчество, духовная резиденция, армянская государственность, перемещение, возвращение.

Возвращение духовной резиденции в исторический центр св. Эчмиадзин является предметом внимания ангажированных историков. Ими предпринимаются попытки обосновать положение о том, что духовный центра Армянской церкви всегда находился вне Кавказа и лишь затем был перенесен на территорию Агванка.[1]

Историческое местонахождение духовной резиденции глав Армянской церкви имеет тесную связь с состоянием развития армянской государственности и расположением политических центров управления. По этому поводу католикос Симеон Ереванци (1763-1780) в работе "Джамбр" выделяет два фактора - ослабление светской власти от внешней угрозы и отсутствие безопасности для глав армянской церкви: "Когда усилились враги и стали чаще набеги их полчищ, ослабла светская власть нашего народа. Поэтому наши цари и князья, а вместе с ними и патриархи, если того требовала обстановка, укрывались в удобных для защиты укрепленных местностях".[2]

В заголовке первой главы книги "Состояние св. Эчмиадзинского престола со времени его учреждения до его опустения и восстановления" указывается суть содержания исторического явления, а именно происходит изменение состояния Эчмиадзинского престола. Оно представлено из двух фаз: 1) возникает время "запустения" Эчмиадзина; 2) время "восстановления".

Исторический процесс развития Армянской апостольской церкви и Эчмиадзина можно представить в виде следующих определенных периодов: 1) апостольский - св. Фадей 43-66 и св. Варфоломей 60-68, когда в 68 г. создается апостольская кафедра в Аштишате; 2) Эчмиадзинский - 301-484; 3) "запустения" Эчмиадзина" после гибели Аршакидского царства в 428 г.; 4) двинский - с 485 г., 5) царских центров – Ахта-марский 929-947

[1] **Мамедова Ф.** Причинно-следственная связь карабахской проблемы. - http://udi.az/articles /0030.html; **Нифталиев И.** Как Учкилисе стал Эчмиадзином.- http://news.day.az/politics /8585.htm; **Мехтиев Р.** Мифотворчество армян в контексте первого в истории христианского государства.- https://azertag.az/sites/default/ files/ Bolmeler/resmi xroni¬ka/ 1411475348.pdf

[2] **Симеон Ереванци.** Джамбр. Глава I "Состояние св. Эчмиадзинского престола со времени его учреждения до его опустения и восстановления".- http://www.vostlit.info/Texts/rus14 /Erevanci/frametext1.htm

(Васпураканское царство Арцрунидов), Аргина 947-1001, Ани 1001-1051(Анийское царство Багратуни); Киликийская Армения (княжество 1080-1198 и царство 1198-1375) - Красный монастырь (Кесун), Цовк, Ромокла и Сис; 5) восстановления в "исконном престоле" - Вагаршапат.[1]

Епископскую кафедру возглавляли: Закарий - 68-72, Зементос - 68-72, Атирнерсэ - 77-92, Муше - 92-123, Шаэн - 124-154, Шаварш - 151-171, Гевондиос- 172-190, Меружан- -240-270 гг. Первопрестол в Эчмиадзине возглавил св. Гр. Просветитель (302-325), а уже в Сисе (1293-1441) католикос церкви становится верховным католикосом всех армян, учитывая историческое развитие нации.[2]

Падение армянского царства Киликии в 1375 г., опустошительное завоевания Тамерлана, деятельность туркменских племен ак-коюнлу и кара-коюнлу, миграция армянского населения, необходимость нахождения в гуще национальной и традиционной среде обусловило проблему перенесения духовной резиденции главы армянской церкви в Эчмиадзин и Араратскую долину как исторический центр армянской государственности.

Импульсом к возвращению в родные пенаты стала угроза потери армянской церковью национального облика под давлением Римского папы, "когда наш народ остался без своих властителей и начальников".[3] Непосредственным поводом стало направление католикосом Киликии Константином V Вахкаци делегации из четырех архимандритов во главе с кафским епископом Саргисом из Крыма на Флорентийский всецерковный собор в 1439 г., созванного для единения церквей, которая туда прибыла 25 августа 1439 г. на два месяца позже после завершения христианского форума.[4] К этому времени 6 июля была подписана уния между католической и православной церковью, которую от русской церкви подписал митрополит Исидор, но, однако, в России церковным судом был посажен в тюрьму.[5]

Армянским посланцам было уделено внимание. Римский папа Евгений IV 22 ноября 1439 г. подписал указ о восстановлении единства с армянской церковью, отделившейся якобы 900 лет, хотя до этого было несколько попыток объединения.[6] Поскольку армянские представители документ не подписали, то он получил название "Указ Армянам". На армян

---

[1] Там же.
[2] Официальный календарь первопрестола. Св. Эчмиадзин, 2012, с. 249. (на арм. яз.).
[3] **Симеон Ереванци.** Джамбр. Глава III. "Восстановители и благодетели Эчмиадзинского престола". - http://www.vostlit.info/Texts/rus14 /Erevanci /frametext1.htm
[4] **Орманян М.** Азгапатум Св. Эчмиадзин, 2001, т.2, с.2425-2428 (на арм. яз.).
[5] Фераро-Флорентийский собор (1438-1439гг.). - https://www.sedmitza.ru/lib/text/434829
[6] **Григорян М.** Ширакаванкский церковный собор 862 г. - В кн.: Вопросы истории Армении. Ереван, 2011, 12, с.69 (на арм. яз.).

распространялась уния, подписанная с греками. При этом отмечалось, что якобы армянские представители и их верховный католикос обязались принять все, что решит римская церковь. Однако в это время, пославший их католикос Константин V Вахкаци скончался, означающее неправомочность его согласия. Не знающий об этом Римский папа Евгений IV 15 декабря 1439 г. направил послание католикосу с отбывающей армянской делегацией. Из Константинополя делегация направилась не в Сис, а в Кафу, где сообщила информацию представителям Генузской республики. Из этого, как отмечает М. Орманян, делегация лишь номинально представляла армянского католикоса, а на деле выражала интересы генуэзцев.[1]

Происшедшее вызвало неоднозначную реакцию в феодальной и духовной среде Восточной Армении,[2]где возникло представление о необходимости возвращения духовной резиденции в Эчмиадзин на основе двенадцати обоснований. Суть которых имела следующий характер: униаторская тенденция деятельности киликийских католикосов; гибель шести католикосов с 1392 г.; сребролюбие, падение авторитета и образа жизни первосвященников, использование вместо св. мерона (елея) растительного масла, отпадение от союза с армянской церковью яковитской церкви, назначение взамен одного трех-четырех епископов в епархии, посвящение в духовный сан стало предметом торга, допущение деятельности католических священнослужителей в Армении, игнорирование значимости десницы св. Гр. Просветителя, необходимость сплочения вокруг Эчмиадзина для национального возрождения и государственности.[3]

Между тем в Армении с 1405 года возобновились столкновения туркменских племен кара-коюнлу и ак-коюнлу. Представитель первых Кара-Искандер (1421-1437) даже провозгласил себя “Шах-е-Арман” (царь Армении), чтобы иметь поддержку армянского населения. Полководцем при нем был Амир Рустам Орбелян, исполнявший также должность придворного советника, который политической программой сделал создание армянского княжества в Айрарате и Сюнике, заручившегося поддержкой местного духовенства. Для подготовки возвращения духовной резиденции в Айрарат им в 1431 г. были куплены семь деревень (Вагаршапат, Аштарак, Бадриндж, Норагавит, Агунаутан, Тегенис-Кираджалу, Мугни). Формальна купчая обошлась в 540000 динаров. Осуществленная купля-продажа имела цель создать материальную основу для функцио-

[1] **Орманян М.** Азгапатум, т. 2, с. 2429-2432.
[2] Джамбр” как первоисточник по истории Армении. - http://www.vostlit.info/Texts/ rus14/Erevanci/framepred1.htm
[3] **Товма Мецопеци.** Дневник. Св. Эчмиадзин, 2017, с. 47-59 (на арм.яз.).

нирования духовной резиденции армянской церкви[1].Точно также Орбеляном были затем переданы несколько деревень Татевскому монастырю.[2]

Такой подход был вызван и политикой иноземных завоевателей, захватывающих и подчиняющих себе земельные владения в качестве источника дохода и раздачи для службы отдельных личностей. Об этом Симеон Ереванци отмечает: "В то время, когда католикосы пребывали в Двине и в Ани, в св. Эчмиадзине иногда проживали монахи и иноки, но в весьма ничтожном [числе] и убого. А в продолжении 324 лет, когда католикосы пребывали в Сисе, [Эчмиадзинский престол] совершенно опустел и оставался в таком состоянии до 890 (1441) года" .

Также объясняется причина утери владельческих прав в Айрарате, дарованных армянскими царями, и необходимости восстановления документальной основы собственности: "Первые католикосы жили при властителях, всегда готовых оказать им помощь, приобретали без труда все, что хотели, и поэтому не заботились о записях будущих [поколений]; от них не осталось ни одного полезного документа и письменного указания. Может быть и были [такие документы], но исчезли; [впрочем], если бы они и были, то не пригодились бы теперь, так как власти переменились. А последующие католикосы добивались чего-либо у далеких и чуждых варваров-правителей с большими трудностями, да и то получали лишь тысячную долю просимого".[3]

Между тем после провала Флорентийской унии католикосом в Киликии стал Григор IX Мусабегянц. Главы восточноармянских епархий заявили о незаконности его избрания, поддержанного армянами Кафы, поскольку он не получил согласия четырех епископских престолов Восточной Армении - Ахпата, Артаза, Татева и Бжни. Подход диктовался целью восстановлению армянской государственности. Григор IX Мусабегянц отказался явиться на церковный собор для решения вопроса возвращения в Эчмиадзин, сославшись на недомогание, а на деле опасаясь лишиться прерогатив власти.

В мае 1441 г. Эчмиадзинский собор из более 300 представителей духовенства и светской знати, имеющий право утверждать главу церкви и место духовной резиденции, избрал протеже сюникского и араратского духовенства настоятеля монастыря Хор-Вираб вардапета Киракоса. Решающую роль сыграли главы четырех епископских престолов: Григор -

[1] **Григорян Г. М.** Очерки истории Сюника IX-XV. Ереван, 1990, с. 268-272;
[2] Там же. Приложение N 70, с. 270.
[3] **Симеон Ереванци.** Джамбр. Глава III.- http://www.vostlit.info/Texts/rus14/Erevanci/fram etext1.htm

Артаз, Григор - Ахпат, Шмавон - Татев и Ованес - Бжни. Потерпела поражение Васпураканская группировка духовенства и знати, представленная шестью ахтамарскими архимандритами, мечтавшими о восстановлении царства Вана.[1] Их представитель Григор Макевеци, из рода Орбелянов не получил поддержки, из-за опасения, что правитель Армении Джахан-шах не утвердит его.

Новоизбранный католикос получил символ власти главы армянской церкви - десницу св. Гр. Просветителя (серебряная правая рука со сложенными пальцами для благословения из части мощей Просветителя), возвращенной из Сиса в Эчмиадзин.[2] Избирательный процесс обеспечил правовую сторону возвращение духовной рези-денции католикоса всех армян в историческое местодеятельности, что имело консолидирующее значение для нации,[3] а также для освободительных установок.

Ильгар Нифталиева сводит значимость Вагаршапатского собора к необходимости борьбы против католицизма, а его итог представляет как проявление кризиса в Армянской церкви. Положение взято из армянской историографии, но дана иная интерпретация: “Тем самым был внесен очередной раскол в армянскую церковь. С этого времени имелись, по крайней мере, три армянских духовных центра, главы которых претендовали носить титул "католикоса" и находившихся в сложных отношениях друг с другом - Сисский, Эчмиадзинский и Ахтамарский. Кроме этого, в Иерусалиме (1311) и Стамбуле (1461) восседали патриархи армянской церкви”.[4]

На самом деле имел место процесс преодоления кризиса взаимоотношений с Римским папой на основе идеи восстановления армянской государственности в виде Сюникского княжества, при поддержке армянского духовенства Центральной Армении, нереализованного после удаления Рустама Орбеляна в Грузию, сплочения духовных рядов вокруг Араратского престола, что потребовало определенное время. В 1443 г. Киракос I Вирабеци был отстранен от власти, против которого выступили представители сюнийкской группировки духовенства - Гермонского и Татевского монастырей вар-дапеты Ованнес и Шмавон Ангехакотци, а его

[1] **Орманян М.** Азгапатум, т.2 , с.2455, 2456.

[2] **Симеон Ереванци.** Джамбр. Глава III.- http://www.vostlit.info/Texts/rus14/Erevanci/frametext1.htm

[3] **Погосян А.** По случаю издания (введение). - В кн.: Հիշատակարան (Дневник). Св. Эчмиадзин, 2017, с.6, 7 (на арм. яз.).

[4] **Нифталиев И.** Как Учкилисе стал Эчмиадзином.- http://news.day.az/politics/858854.htm

место занял состоятельный Григор X Маквеци (1443-1465).[1] С 1446 г. в Сисе оформлен партикулярный католикосат Великого дома Киликии.[2]

В это же время активизировался католикос Ахтамара Захарий III, который на подготовительной стадии собора 1441 г. также претендовал на сан верховного католикоса. Осенью 1460 г. он сумел добиться знаками внимания санкции Джахан-шаха на занятие Первопрестола, поскольку правитель был недоволен оперативностью поступлений от Григора X. Это означало единение двух престолов армянской церкви под главенством Захария. Однако требования правителя Персии возвысить налоговые поступления заставили его в ноябре 1461 г. удалиться в Ахтамар, где стал выступать за превращения Васпуракана в духовно-политический центр Армении.

Начались переговоры с правителем Джахан-шахом, который согласился признать царем Армении сына брата католикоса Смбата. В конце 1464 г. Захарий III вернулся в Эчмиадзин для реализации политического замысла, но здесь погиб. Однако идею воплотил его племянник католикос Степанос IV Отрок (1464-1489), который в начале 1465 г. в церкви св. Крест о. Ахтамар венчал Смбата на царство Армении. Его царствование (1465-1471) имело символическое значение, материализовав идею восстановления ар-мянской государственности, в условиях нарастающего противостояния борьбы осма-нов и персов за Армению.[3]

Отнюдь не случайно, что армянская церковь 29 мая отмечает праздник Вознесения Иисуса Христа и перемещение католикосата из г. Сиса в Киликии в Эчмиадзин. По этому поводу во время св. литургии осуществляется Патриарший молебен у Главного алтаря кафедрального собора св. Эчмиадзина.[4] Праздник возвращения в Эчмиадзин был установлен решением Вагаршапатского национально-церковного собора.[5]

Таким образом, политизация истории обуславливает появление опусов ангажированных историков и публицистов адекватных их профессиональной подготовке. Осу-ществляется избирательное отношение к историческим объектам, фактам и событиям деятельности армянской церкви, вокруг которых конструируются разные мифы, чтобы подчинить их

[1] **Григорян Г. М.** Очерки истории Сюника…,с. 269,270, 278 -283

[2] Поместные иерархические престолы ААЦ и ее епархии в России. - https://www.hayastan.com/armenia/religion/ru/catalicosat/index4.php

[3] **Утуджян А.** Попытки восстановления армянской государственности в 60-х годах XV в.. – В кн.: История Армении. Ереван, 2014, т. II, кн.II,с. 590 -596 (на арм. яз.)

[4] Джангюлум: Армянская Апостольская церковь празднует Вознесение Иисуса Христа. - https://armenpress.am/rus/news/763620/

[5] Армянская Апостольская церковь отмечает праздник Вознесения Господня.- https://news.am/rus/news/61702.html

текущим потребностям психотропной борьбы против основ армянской истории. Возвращение духовной резиденции главы армянской церкви в историческую обитель Эчмиадзин ставило целью реализацию политической программы восстанов-ления армянской государственности, консолидации национальных рядов и сохранения апостольского характера Армянской церкви.

Վալերի Թունյան, Էջմիածինը և պատմական գործընթացը - Արդի զեղծարարները խեղաթյուրում են Հայոց եկեղեցու պատմությունը: Օգ-տագործելով անհիմն փաստարկներ նրանք աշխատում են արդարացնել Ադրբեջանի հավակնությունները Հայոց եկեղեցու, պետականության և պատմության նկատմամբ:

Valeri Tunyan, Echmiadzin and the historical process - The modern falsifiers distort the history of the Armenian Church. Using baseless arguments, they are trying to justify Azerbaijan's ambitions towards the Armenian Church, statehood and history. It is suggested that the return of the Armenian Church to Echmiadzin aimed to ensure its independence and restore the Armenian statehood.

ԸՆՏՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ «ԱՆՆԿԱՏ» ՄՈՒՏՔԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ (1906-1914թթ.)

ՍԱԹԵՆԻԿ ԱՎՈՅԱՆ

Բանալի բառեր – Հայ առաքելական եկեղեցի, Ռուսական կայսրություն, եկեղեցական կանոնադրություն, թեմական խորհուրդ, Կովկասի փոխարքա, ժամանակավոր հրահանգ, օրենքների ժողովածու:

XX-րդ դարի սկզբին ռուսական կառավարության կրոնական քաղաքականության մեջ հստակ ուրվագծվում էր նրա գլխավոր սկզբունքը՝ կայսրության բոլոր դավանանքների նկատմամբ պետության լիակատար վերահսկողության ապահովումը: Դավանանքը տարանջատված հասարակությանը վերահսկելու գլխավոր գործոններից մեկն էր[1]: Կրոնական հարցերը, ընդհանուր առմամբ, կարգավորվում էին համառուսական օրենսդրությամբ:

Նշված ժամանակահատվածում Ռուսական կայսրության տարածքում գտնվող հայկական և հայաբնակ շրջանները բաժանվում էին վեց եկեղեցական թեմերի՝ Երևանի, Ղարաբաղի, Վրաստանի, Շամախի (Շիրվանի), Նոր Նախիջևան – Բեսարաբիայի և Աստրախանի[2]: Թեմակալ առաջնորդներն, իրենց թեմերի շրջանակներում, օժտված էին համապատասխան հոգևոր և կրոնական իշխանությամբ: Նրանց նշանակում և ազատում էր կայսրը[3]:

XIX-րդ դարի վերջից մինչև ռուսական առաջին հեղափոխությունը (1905-1907թթ) ռուսական ինքնակալությունը Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ վարում էր բացահայտ զավթողական, հետադիմական քաղաքականություն, որն իր արտացոլումը գտավ հայկական եղեղեցական ունեցվածքի բռնագրավման մասին 1903 թվականի հունիսի 12-ի օրենքում: Սակայն, կայսրությունով մեկ ծավալվող հեղափոխությունը բերեց նրան, որ ռուսական իշխանությունները հրաժարվեցին հայ եկեղեցու նկատմամբ կիրառվող զսպիչ և հետադիմական քաղաքականությունից ու սկսեցին գործել առավել զգույշ և կշռադատված:

---

[1] **Верт П.,** Православие, инославие, иноверие: очерки по истории религиозного разнообразия Российской империи, М.: НЛО, 2012 г., С 43-44.

[2] Кавказский календарь на 1900 год, Тифлис, 1899 г., с. 447-450.

[3] Свод законов российской империи, Том XI. Часть I. Уставы духовных дел иностранных исповеданий, СПб, 1857, N 966, с. 181,182.

Ռուսական առաջին հեղափոխության պայմաններում կայսրության հասարակական, քաղաքական և հոգևոր գործիչները համարձակորեն սկսեցին քննադատել գոյություն ունեցող օրենսդրությունը՝ պահանջելով ընտրական սկզբունքի կիրառումը: Հեղափոխության շունչը զգացվեց նաև Էջմիածնի Մայր Աթոռում, որտեղ, հասարակական պահանջմունքների թելադրանքով, ծնունդ առան վերանորոգչական որոշ տրամադրություններ: Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցին (1892-1907թթ.) մեկը մյուսի ետևից բարենորոգչական կոնդակներ հրապարակեց: Վերջինիս 1906թ. մայիսի 10-ի կոնդակը ժողովորդին իրավունք էր վերապահում իր ներկայացուցիչների միջոցով մասնակցելու ոչ միայն կաթողիկոսական և քահանայական ընտրություններին, այլև թեմական առաջնորդների, հաջորդների, գործակալների և հոգևոր վարչական հաստատությունների ընտրությանը[1]: Եկեղեցական կանոնադրության համաձայն թեմերի առաջնորդներին նշանակում էր կայսրը՝ կաթողիկոսի առաջարկած թեկնածուներից: Օրենքը չէր նախատեսում թեմերի ղեկավարների ընտրությունը: Սա նշանակում էր, որ Մկրտիչ Ա Վանեցու կոնդակը շրջանցում էր կայսրության գործող օրենսդրությունը: Չնայած դրան, մայիսի 10-ի կոնդակը չբողոքարկվեց պետական իշխանության կողմից, և ընտրական սկզբունքը սկսեց գործել ռուսահայ թեմերում:

Մկրտիչ Ա Խրիմյանին հաջորդած Մաթևոս Բ Իզմիրլյանը (1908-1910թթ.) կաթողիկոսական աթոռին հաստատվելուց կարճ ժամանակ անց աստիճանաբար սկսեց ինքնուրույն գործունեություն ծավալել: 1910թ. մայիսի 28-ին կաթողիկոսը թեմերի ղեկավարներին է ուղարկում «Թեմական ժողովների մասին ժամանակավոր հրահանգ»: Հրահանգի համաձայն Հայ առաքելական եկեղեցու թեմերում հաստատվում էին թեմական ժողովներ (ծխական եկեղեցիների կողմից ընտրված պատգամավորներից), թեմական խորհուրդներ և թեմական հանձնաժողովներ: Թեմական ժողովները իրավունք էին ստանում ընտրել թեմական առաջնորդների, թեմական խորհուրդների և թեմական վերստուգիչ հանձնաժողովների, ինչպես նաև քննել եպիսկոպոսների դեմ հարուցված բողոքները: Բացի այդ նրանց շնորհվել էր ճեմարանների, եկեղեցածխական դպրոցների, եկեղեցիների և վանքերի ունեցվածքի ընդհանուր կառավարման լիազորություն[2]:

Կոնդակի հրապարակումը չվրիպեց Ռուսական կայսրության վարչապետ Պ. Ա. Ստոլիպինի ուշադրությունից: 1910թ. հոկտեմբերի 15-ին Պ. Ա. Ստոլիպինը գրություն է ուղարկում Մաթևոս Բ Իզմիրլյանին՝ պա-

[1] **Ղազարյան Խ. Ր.,** նշվ. աշխ., էջ 107, Հրաման - Արարատ, 1906, մայիս, էջ 376, Վեհափառ կաթողիկոսի կոնդակ – Հովիվ, 1906, 21 մայիս, Կոնդակ հայ ժողովրդին – Ալիք, 1906, 16 մայիսի:

[2] РГИА, ф. 821, оп. 7, д. 324, л. 74, 74 об.

հանջելով մայիսի 28-ի կոնդակը, իբրև ոչ օրինական, չեղյալ համարել, քանի որ այն հակասում էր կայսրության օրենսդրությանը: Վարչապետը մատնանշում էր այն հանգամանքը, որ 1896թ. հրատարակված Օրենքների ժողովածուի համաձայն, թեմական առաջնորդներին նշանակում էր կայսրը, հետևաբար այդ պաշտոնական անձանց ընտրության իրավունքը չէր կարող վերապահվել թեմական ժողովներին, ինչպես նաև կաթողիկոսին: Օրենքների ժողովածուի 1142 և 1170 հոդվածները սահմանում էին, որ թեմական առաջնորդները թեմում կատարվածի համար պատասխանատու էին բարձրագույն կառավարության և իրենց հոգևոր իշխանության առջև: Իսկ դա նշանակում էր, որ թեմային առաջնորդների դեմ բողոքները չէին կարող քննարկվել թեմական ժողովներում: Ի վերջո Պ. Ա. Ստոլիպինը ընդգծում էր, որ Հայ լուսավորչական եկեղեցու կանոնադրության մեջ չկային թեմական ժողովների, թեմական խորհուրդների և թեմական հանձնաժողովների մասին հոդվածներ: Եվ քանի որ կաթողիկոսի հրատարակած հրահանգը ոչ միայն չէր համապատասխանում գործող օրենքին, այլև խիստ հակասության մեջ էր նրա հետ՝ կարծես փոխելով պետական օրենքը, ապա առաջարկում էր առանց հետաձգելու փոխել հրապարակած հրահանգը[1]:

Հայոց հայրապետ Մաթևոս Բ Իզմիրլյանն անշուշտ տեղյակ էր, որ հայոց եկեղեցին այդ տարիներին առաջնորդվում էր եկեղեցական Կանոնադրությամբ և շատ «նորարարություններ» չէին համապատասխանում այդ կանոնադրությանը: Ուստի իշխանություններից համպատասխան զգուշացումներ ստանալը անակնկալ չէր նրա համար: Չշտապելով կատարել վարչապետի կարգադրությունը՝ կաթողիկոսը նոյեմբերի 7-ին պատասխան նամակ է ուղարկում Պ. Ա. Ստոլիպինին: Նա հանգամանորեն ներկայացնում է, որ թեմական ժողովները և խորհուրդները գործում են արդեն հինգ տարի՝ մամուլի լայն հրապարակումով և տեղական իշխանությունների գիտությամբ ու թույլտվությամբ: Փորձելով կանոնակարգել թեմերի կառավարման նոր կարգը՝ Մաթևոս Բ Իզմիրլյանը պնդում է, որ թեմական ժողովները և խորհուրդները իրենցից խորհրդակցական մարմիններ են ներկայացնում. «Թեմական խորհուրդները ծառայում են որպես խորհրդակցական մարմիններ՝ թեմերի ղեկավարների ներքո»[2]:

«Երկաթյա պատրիարքը» (Մաթևոս Բ Իզմիրլյան), որն իր հուժկու ձայնը բարձրացրել էր Աբդուլ Համիդի բռնապետության դեմ այդքան հեշտությամբ չէր կարող նահանջել: Նա ամեն կերպ փորձում է համոզել ռուսական կառավարության ղեկավարին, որ թեմական ժողովները և խորհուրդները զուտ խորհրդակցական մարմիններ են: Սակայն կաթողիկոսի

[1] Մատենադարան, Անձնական դիվան կաթողիկոս Իզմիրլյանի, թղթ. 11, վավ. 236:
[2] РГИА, ф. 821, оп. 7, д. 324, л. 76, 77 об.

պնդումները դժվար թե համապատասխաներ իրականությանը: Թեմական ժողովներն ու խորհուրդները ծրագրված էին հենց որպես իրական իշխանության մարմիններ, որը թույլ էր տալիս հայ ժողովրդին որոշիչ մասնակցություն ունենալ սեփական եկեղեցական գործերում: Դրա վառ ապացույցը թեմական ժողովներում եպիսկոպոսների դեմ հարուցված բողոքների քննումն էր: Անցնելով առաջ ասենք, որ կաթողիկոս Մաթևոս Բ Իզմիրլյանին հաջորդած Գևորգ Ե Սուրենյանցը (1911-1930 թթ), փորձելով հասնել «Թեմակալ ժողովների մասին ժամանակավոր հրահանգի» ազատ գործածման իրավունքին, առաջարկում էր Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովին, որ «եթե հնարավոր չէ կաթողիկոս Իզմիրլյանի կոնդակով հրատարակված ժամանակավոր հրահանգի մեջ թողնել պատգամավորների այն իրավունքը, որով քննում են թեմակալ առաջնորդների դեմ հղած բողոքները, ապա հանել այն»[1]: Փաստորեն Գ. Սուրենյանցը փորձում էր մասնակի զիջումներով հասնել Մաթևոս Բ-ի ընդունած ժամանակավոր հրահանգի հաստատմանը:

Այսպիսով, 1910թ. մայիսի 28-ին հրապարակված «Թեմակալ ժողովների մասին ժամանակավոր հրահանգը» փաստացի օրինականացնում էր Մկրտիչ Ա Վանեցու մայիսի 10-ի կոնդակը, որով ժողովուրդն իր ներկայացուցիչների միջոցով իրավունք էր ստացել մասնակցելու ոչ միայն կաթողիկոսական և քահանայական ընտրություններին, այլև՝ թեմական առաջնորդների, հաջորդների և հոգևոր վարչական հաստատությունների ընտրությանը: Հեղափոխության պայմաններով թելադրված՝ Խրիմյանի կոնդակը ժամանակին չբողոքարկվեց իշխանության կողմից և ընտրական սկզբունքը կյանք մտավ աննկատելիորեն՝ դառնալով հայկական եկեղեցական կյանքի անբաժան մասը: Մինչդեռ «Թեմակալ ժողովների մասին ժամանակավոր հրահանգը» հրապարակվեց Ռուսական կայսրությունում ներքաղաքական կյանքի համեմատաբար խաղաղ պայմաններում, ինչը հնարավորություն տվեց Պ. Ա. Ստոլիպինին ուշադրությունը սևեռել Հայ առաքելական եկեղեցու կառավարման կարգի «անօրինականության» վրա՝ պահանջելով չեղարկել այն:

Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը, որին հանձնարարվել էր իրականացնել կառավարության պահանջը, երկակի դիրքորոշում ընդունեց: Վերջինս 1910թ. նոյեմբերի 27-ին Պ. Ստոլիպինին է ներկայացնում իր տեսակետը: Լիովին ընդունելով վարչապետի այն կարծիքը, որ մայիսի 28-ի կոնդակը հակասում է կայսրության օրենսդրությանը, այնուամենայնիվ, առաջարկում է հաշվի առնել մի շարք հանգամանքներ: Նախ, որ Մաթևոս Բ-ն, կաթողիկոսական աթոռը ստանձնելուց ի վեր, «իրեն դրսևորել էր իբրև կարգուկանոնի և քաղաքական գործերին հոգևո-

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 286, թ. 22, 22 շրջ.:

րականության չմիջամտելու կողմնակից: Նրա կաթողիկոս նշանակվելը համընկել էր Կովկասում սուր խռովության և խմորումների շրջանի հետ», ինչը հանգեցրել էր ժողովրդի շրջանում կրոնական զգացմունքների անկմանը և եկեղեցու հեղինակության թուլացմանը: Ոստի գիտակցելով, որ ժողովրդի մեջ հավատքի ամրապնդումը տեղի չի ունենա առանց հոգևորականության հեղինակության վերականգման՝ Մաթևոս Բ-ն ձեռնամուխ էր եղել վճռական գործին: Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը կարևորում է այն հանգամանքը, որ Մ. Իզմիրլյանը փորձում էր իրագործել իր նախորդի՝ Մ. Խրիմյանի մայիսի 10-ի կոնդակը, (ժողովրդին էր տրամադրվում թեմական առաջնորդների ընտրության իրավունքը), որը ժամանակին չէր բողոքարկվել կառավարության կողմից: Փոխարքան գտնում էր, որ մայիսի 28-ի կոնդակը չէր փոխում թեմականներին նշանակելու կայսերական կարգը, այլ միայն մասնակի թույլատրում էր բնակչության մասնակցությունը թեմական առաջնորդների ընտրությանը՝ խորհրդակցության հիմքի վրա: Վերջում Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը եզրակացնում է, որ կաթողիկոսի կոնդակը չի պարունակում այն ագրեսիվ միտումները, որի համար կարելի լիներ կշտամբել նրան: Ավելին, Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը հայտնում է, որ անհրաժեշտ է մայիսի 28-ի կոնդակը համապատասխանեցնել կայսերական օրենսդրության ընդհանուր հիմքերին[1]:

Կովկասի փոխարքայի առարկությունները Պ. Ստոլիպինին դրդում են ստուգումներ անցկացնել հայկական եկեղեցական գործերում[2]: Կաթողիկոսը ծանր էր տանում կուտակված հարցերը, ինչի արդյունքում 1910թ. վերջին նրա առողջական վիճակը կտրուկ վատանում է: Նոյեմբերի 10-ին Մաթևոս Բ-ն կարգադրում է պատրաստել Նիկոլայ II-ին ուղղված իր հրաժարականի դիմումը: Պատճառ էր նշվում ազատ գործունեության սահմանափակումը: Դեկտեմբերի սկզբներին կաթողիկոսի վիճակը փոքր ինչ բարելավվում է, սակայն հիվանդությունը առաջադիմում էր: 1910թ. դեկտեմբերի 11-ի լուսադեմին Ամենայն հայոց կաթողիկոս Մաթևոս Բ Իզմիրլյանը մահանում է սրտի կաթվածից[3]: Կաթողիկոսի մահը բուռն քննարկումների առիթ տվեց մամուլում: Չնայած որ Մ. Իզմիրլյանը մահացել էր սրտի կաթվածից «Հորիզոնը» շտապեց կաթողիկոսի մահվան մեջ մեղադրել «Էջմիածնի միաբանության հավիտենական անմիաբանությանը»[4]:

---

[1] Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան (1873-1910թթ), նշվ. աշխ., էջ 873- 876, **Тунян В. Г,** Правление католикоса М. Измирляна 1908-1910 гг., Ер., 2004 г., с. 183.

[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 217, թ. 1:

[3] Վեհափառ և սրբազնագոյն կաթողիկոս Ամենայն հայոց – Արարատ, 1910, դեկտեմբեր, Վեհափառ Մաթևոս Բ-ի մահը - Հորիզոն, 1910, 12 դեկտեմբերի, տե՛ս Շահ-Նազարեանց Ս., Վեհափառ Իզմիրլեանը, Մոսկվա, 1910, էջ 54:

[4] Էջմիածնի ցավը – Հորիզոն, 1910, 12 դեկտեմբերի:

Մաթևոս Բ Իզմիրլյանին հաջորդած Գևորգ Ե Սուրենյանցը շարունակեց իր նախորդների գործը՝ փորձելով ընտրական սկզբունքը համապատասխանեցնել կայսրության օրենսդրության ընդհանուր հիմքերին: Հարցի կարգավորման համար կաթողիկոսը 1912թ. հոկտեմբերի 7-ին «Թեմակալ խորհուրդների ու ժողովների մասին» դիմում է ներկայացնում ներքին գործերի նախարար Ա. Ա. Մակարովին: Գ. Սուրենյանցը նախ ներկայացնում է, որ հանգուցյալ կաթողիկոսներ Մ. Խրիմյանը և Մ. Իզմիրլյանը հայոց եկեղեցու ոգու (որը ընդունում է ընտրական սկզբունքը և հոգևոր հոտից ընտրվածների մասնակցությունը եկեղեցական գործերի կառավարմանը), ինչպես նաև Կովկասի փոխարքայի հրատարակած՝ «Հայ լուսավորչական եկեղեցու գույքի կառավարման ժամանակավոր կանոնների» համաձայն առանձին կոնդակներով կանոնակարգել են թեմական ժողովները և թեմական խորհուրդները, որպես խորհրդակցական մարմիններ[1]: Ծանոթացնելով գործի ընթացքին՝ Գևորգ Ե-ն նշում է, որ հանգուցյալ Պ. Ստոլիպինը կարգադրել էր փակել թեմական ժողովները և խորհուրդները, որին հետևել էր կաթողիկոս Իզմիրլյանի պատճառաբանված բացատրությունը: Սակայն Մ. Իզմիրլյանի և Պ. Ա. Ստոլիպինի մահվան պատճառով հարցի կարգավորումը փակուղի էր մտել: Դիմումի վերջում կաթողիկոսը ներկայացնում է նաև իր կարծիքը և խնդրում ընթացք տալ հարցին. «Համաձայն լինելով Մ. Իզմիրլյանի հայացքների հետ թեմական ժողովների և խորհուրդների վերաբերյալ, որոնք գործում են Տաճկահայաստանի, Պարսկաստանի և մյուս երկրների բոլոր հայ լուսավորչական թեմերում, խոնարհաբար խնդրում եմ թույլ տալ այդ խորհրդակցական մարմինների ազատ գործումը, ինչը համապատասխանում է հայ եկեղեցու ոգուն և ավանդույթներին»[2]:

Կաթողիկոսի դիմում խնդրանքի պատասխանը չի ուշանում: 1912թ. հոկտեմբերի 22-ին ներքին գործերի նախարար Ա. Ա. Մակարովը նամակով տեղեկացնում է Գևորգ Ե-ին, որ «նշված հաստատությունները, որոնք չեն համապատասխանում գործող օրենսդրությանը և մի շարք փոփոխություններ են մտցրել օտար դավանությունների կանոնադրությունով սահմանված Հայ լուսավորչական եկեղեցու լիազորություններում կարող են ճանաչում ստանալ միայն օրենսդրական կարգով»[3]: Միևնույն ժամանակ Ա. Ա. Մակարովը հայտնում է, որ չի առարկում հայկական եկեղեցու բարձրագույն կառավարմանը վերաբերող օրենքի վերանայման անհրաժեշտությունը և խնդրել է Կովկասի փոխարքային հիմնավորված առաջարկություն ներկայացնել հայկական եկեղեցու կառավարման մարմին-

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 286, թ. 4:
[2] Նույն տեղում, թ. 4 շրջ.:
[3] Նույն տեղում, թ. 11, 11 շրջ.:

ների վերաբերյալ՝ սահմանելով նրանց իրավասությունները և ընդհանրապես նրանց փոխադարձ իրավական հարաբերությունները[1]: Սա նշանակում էր, որ կառավարող շրջաններն արդեն դեմ չէին Հայ առաքելական եկեղեցու կառավարման համակարգում ընտրական սկզբունքի առկայությանը: Մնում էր միայն, որ կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը կառավարության հաստատմանը ներկայացներ բարեփոխումների նախագիծը:

1913թ. փետրվարի 10-ին Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը հայտնում է Գևորգ Ե-ին, որ Հայ առաքելական եկեղեցում մտնում է ընտրական սկզբունքը: Փոխարքան կարգադրում է մանրամասն ներկայացնել կաթողիկոսի առաջարկությունները (Հայ առաքելական եկեղեցու կառավարման մարմինների վերաբերյալ անհրաժեշտ բարեփոխումների մասին), որպեսզի դրանք, Կովկասի փոխարքայի խորհրդում քննելուց հետո, հնարավոր լինի ընթացք տալ օրենսդրական ճանապարհով[2]:

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի պատասխանը, սակայն, ուշացավ կապված միջազգային բարդ իրադրության հետ: 1912թ. հոկտեմբերի 8-ին Բալկանյան միության (Բուլղարիա, Սերբիա, Հունաստան և Չեռնոգորիա) և Օսմանյան կայսրության միջև բռնկվել էր Բալկանյան առաջին պատերազմը (1912թ. հոկտեմբերի 8 - 1913թ. մայիսի 30): Պատերազմում, որն ավարտվեց Լոնդոնի հաշտության պայմանագրով, Թուրքիան ջախջախիչ պարտություն կրեց: Դաշնակիցները նվաճեցին Օսմանյան կայսրության գրեթե ամբողջ եվրոպական մասը՝ Թուրքիային թողնելով Կ. Պոլիսը և Արևելյան Թրակիայի մի մասը: Ալբանիան հռչակեց իր անկախությունը: Բալկանյան ժողովուրդների հաջողությունները ոգևորեցին նաև արևմտահայությանը: Հայկական հարցի արծարծման համար նպաստավոր իրավիճակ առաջացավ, որի համար հատկապես մեծ դեր խաղաց Ռուսական կայսրության բարյացակամ վերաբերմունքը: Դա էլ ավելի ամրապնդեց արևմտահայության ռուսական կողմնորոշումը:

Այսպիսով ստանձնելով կաթողիկոսական աթոռը Գևորգ Ե Սուրենյանցը մեծ եռանդով շարունակեց Մկրտիչ Ա Խրիմյանի և Մաթևոս Բ Իզմիրլյանի գործը՝ փորձելով ընտրական սկզբունքը ամրագրել Հայ առաքելական եկեղեցու կանոնադրությունում: Կաթողիկոսի դիմում խնդրանքները դրական արձագանք ստացան ներքին գործերի նախարար Ա. Ա. Մակարովի և Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի կողմից: Վերջիններս կողմ արտահայտվեցին օրենսդրական ճանապարհով հարցի կարգավորմանը: Սակայն Առաջին համաշխարհային պատերազ-

[1] Նույն տեղում, թ. 11 շրջ.:

[2] Նույն տեղում, թ. 20, 20 շրջ.:

մի բռնկումը թույլ չտվեց ընտրական սկզբունքը համապատասխանեցնել կայսրության ընդհանուր օրենսդրության հիմքերին:

Сатеник Авоян, «Незаметное» вторжение выборного начала в Армянскую Апостольскую Церковь. (1906-1914) - Дух Первой русской революции почувствовался также в Первопрестольном Святом Эчмиадзине, где, согласно общественным запросам, родились некоторые реформаторские настрои. Католикос Всех Армян Мкртыч I Ванеци опубликовал друг за другом усовершенствующие кондаки ,которые давали право народу с помощью своих представителей участвовать не только в выборе католикосов и священников, но также и в выборе первосвященников епархии и духовных административных организаций. Последующий за Мкртычем Хримянон Матеос II Измирлян и Геворг V Суренянц предприняли конкретные шаги для отождествления выборного начала с основами общего законодательства Российской империи.

Satenik Avoyan, The electorial principle in Armenian Apostolic Church (1906-1914) - The breath of Russian first revolution also felt in Mother See of Holy Etchmiadzin where some repair moods were born by the public demand. The Armenian Catholicos Mkrtich I Khrimyan rushed to publish condiments one after another by which people got rights not only participate in the election of Catholicos and Priesthood through their representatives but also they got rights to participate in the election of Diocesan leaders, agends and spiritual administrative institution. Matheus II Izmirlian and George V Surenyants Catholicos followed by Mkrtich I Khrimyan took steps to match the electorial principles with the basis of the Russian Empire's common law.

ՍԻՆ-ԾԻԱՆԳ ՈՒՅՂՈՒՐԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՃԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ ՊԵԿԻՆԻ ՀԱՄԱՁԱՓ ԱՐՁԱԳԱՆՔԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր - Չինաստան, Սին-Ծիանգ Ույղուրական ինքնավար մարզ, ույղուրներ, անջատողականություն, իսլամ, «հանաֆիկացիա», անվտանգային հարցեր:

1990-ական թվականներից սկսած՝ Չինաստանի հյուսիս-արևմտյան և Կենտրոնական Ասիայի հետ սահմանակից գոտիներում տարածում են գտնում կրոնական՝ իսլամական, ուղղվածություն ունեցող ուժերի քարոզչական մեխանիզմները: Դրանք զուգորդվում էին ազատականացման և անջատողական գաղափարներով, որոնք վերջ ի վերջո հանգեցրեցին մի շարք պետությունների տարածքների ձևափոխումների և խաղադաշտում միջազգային հարաբերությունների նոր ակտորների առաջացմանը: Անջատողականության տարրերով լի ԽՍՀՄ-ի և դրա փլուզման փաստից զատ, անհրաժեշտ է նշել աշխարհում անջատողականության խնդրին բախված մի քանի դասական մոդելներ: Դրանց շարքին են դասվում Կանադան՝ Կվեբեքի, Ուկրաինան՝ Ղրիմի, Վրաստանը՝ Աբխազիայի և Հարավային Օսեթիայի, Չինաստանը՝ ՍՈՒԻՄ-ի և Թիբեթի, Մեծ Բրիտանիան՝ Շոտլանդիայի և Հյուսիսային Իռլանդիայի, Սերբիան՝ Կոսովոյի, Իսպանիան՝ Կատալոնիայի, Հնդկաստանը՝ Քաշմիրի հարցով, ինչպես նաև Մերձավոր արևելքում՝ քրդական մեծ հարցի առկայությունը:[1] Վերոնշյալը վկայում է աշխարհում անջատողական տենդենցիաների աճի և գաղափարների տարածման մասին: Չինաստանի և Սին-Ծիանգ Ույղուրական ինքնավար մարզի(ՍՈՒԻՄ) դեպքում՝ անջատողականությունն ու դրանից բխող ահաբեկչական դրսևորումների հիմքում ընկած են կրոնական և մշակութային տարբերությունները: Պատմականորեն ույղուրների և ՍՈՒԻՄ-ում բնակվող այլ էթնիկ փոքրամասնությունների կրոնական

[1] **CQ Researcher.** Issues in Peace and Conflict Studies: Selections from CQ Researcher. SAGE Publications, 2010,- 27-34 pp.

պատկանելիությունն՝ իսլամն է: 1990-1991 թվականներից սկսած՝ չինական իշխանություններն ավելի մեծ ուշադրություն էին ընձեռում Սին--Ծիանգին և Կենտրոնական Ասիային հարող տարածաշրջանին: ԽՍՀՄ փլուզումից հետո Կենտրոնական Ասիայում՝ Չինաստանի հետ սահմանային գոտում, ի հայտ եկան միանգամից երեք անկախ պետություններ, որոնց բնակչությունների գերակշիռ մասը նույնպես դավանում էր իսլամ[1], իսկ մեկ այլ հետխորհրդային երկրում՝ Ուզբեկստանում, խորանում էր կրոնական ծայրահեղականությունը:[2]

20-րդ դարի վերջին իսլամի գործոնը լուրջ մարտահրավեր էր նետել Պեկինի իշխանությանը, քանի որ ներթափանցելով Չինաստանի տարածք՝ այն հնարավոր էր դարձնում երկրում անկայունության մթնոլորտ ստեղծելու հանգամանքը: Դրանով պայմանավորված՝ Պեկինի և Ուրումչիի իշխանությունները փորձում էին վերահսկել իրավիճակը Սին-Ծիանգ Ույղուրական ինքնավար մարզում և թույլ չտալ երկրում անջատողական, ահաբեկչական և կրոնական ծայրահեղականությամբ առաջնորդվող ուժերի և գաղափարախոսության տարածումն ու ամրապնդումը տարածաշրջանում: ՍՈՒԻՄ-ում բնակվող անջատողականներն օգտվելով ստեղծված հարմար առիթից փորձում էին տարատեսակ եղանակներով թուլացնել չին իշխանությունների ազդեցությունը մարզում: Հայտնի է, որ իսլամ դավանող ժողովուրդներն առաջին հերթին առաջնորդվում են կրոնական օրենքներով՝ շարիաթով, իսկ այնուհետև՝ հասարակական և պետական, որոնք չպետք է հակասեն շարիաթի օրենքներին:[3] Դա լրացուցիչ խոչընդոտ էր ստեղծում չինական կառավարության համար՝ չնայած այն բանին, որ դեռևս 1984 թվականի հոկտեմբերի 1-ին ՉԺՀ կառավարության կողմից ընդունվել էր «ՉԺՀ մարզային ինքնավարության» մասին օրենքն ու էթնիկ փոքրամասնություններով բնակեցված շրջաններին տրամադրվել ավելի լայն իրավունքներ:[4] Ելնելով 1990 թվականներից սկիզբ առնող անջատողական ուժերի գործունեությունից, անհրաժեշտ է նշել, որ ույ-

---

[1] **Komil Kalanov, Antonio Alonso.** Sacred places and “Folk” Islam in Central Asia. UNISCI Discussion Papers, No.17, 2008,- 175p.

[2] Նույն տեղում՝ **K. Kalanov, A. Alonso** - 179p. / Ուզբեկստանում առավել հզոր իսլամական ծայրահեղական կազմակերպություններից էր՝ **Ուզբեկստանի Իսլամական Շարժումը** (ՈՒԻՇ), որը 1990-ական թվականներին սերտորեն համագործակցում էր ԱԹԻՇ/ԱԹԻԿ ույղուրական ահաբեկչական կազմակեչպության հետ:

[3] **Mohammed Aly Sergie, Toni Johnson. Islam**: Governing Under Sharia. Official Website of Council on Foreign Relations from July 25, 2014. URL: https://www.cfr.org/backgrounder/islam-governing-under-sharia

[4] **中华人民共和国民族区域自治法. (Law of the People's Republic of China on Regional Ethnic Autonomy).** Official Website of China’s National People's Congress. URL: http://www.npc.gov.cn/wxzl/wxzl/2001-03/03/content_4447.htm

ղուրները ներկայացված էին նաև երկրի պետական սեկտորում, տեղական ինքնակառավարման մարմիններում, որն էլ հավելյալ ռիսկեր էր ստեղծում և խոցելի դարձնում մարզի անվտանգությունն ու ներքին իրավիճակը: Սակայն մյուս կողմից, Չինաստանի պետական համակարգի և կառավարման մոդելի հիմքում ընկած են սոցալիստական հիմունքները, ուստի իշխանությունը՝ նույնիսկ մարզերում, նահանգներում, կառավարվում է Կոմունիստական կուսակցության տեղի քարտուղարի կողմից, որն ըստ օրինաչափության հան է և նշանակվում է Պեկինի կողմից:

Տարածաշրջանում անջատողական տրամադրությունների վերելքին զուգահեռ չինական կառավարությանն անհրաժեշտ էր կարգավորել և իր լիազորությունների դաշտ մտցնել իսլամ դավանող էթնիկ փոքրամասնությունների հոգևոր կյանքը՝ ելնելով ույղուրների կյանքում իսլամի օրենքների առաջնահերթ լինելու իրողությունից:

Չինաստանի Սին-Ծինագ Ույղուրական ինքնավար մարզում 1984 թվականի դրությամբ մզկիթների թիվը հասնում էր ընդամենը 9000-ի, իսկ 1995 թվականին՝ դրանց թիվը մոտավորապես 25000 էր:[1] ՍՈՒԻՄ-ում մզկիթների աճին զուգընթաց, նոր մզկիթներ բացվում էին ոչ միայն տվյալ մարզում, այլև ամբողջ Չինաստանում, իսկ 2014 թվականի տվյալներով՝ դրանց թիվը հասնում էր 39000-ի:[2] Դրանից զատ պետական աջակցությամբ վերակառուցվում էին «Մշակութային հեղափոխության» ժամանակ քանդված կամ վնասված մզկիթները:[3] Դեն Սիաոպինի առաջ քաշած տնտեսական նոր քաղաքականության արդյունքում, չինական կառավարությունը սկսում է ընդունել ույղուրների հոգևոր կյանքի առկայությունն ու նրանց կյանքում՝ կրոնից անբաժանելիության իրողությունը: Չինական կառավարությունը փորձում էր համագործակցության ուղիներ գտնել նույնիսկ հոգևոր կյանքի ոլորտում, որը հնարավորություն կտար կոորդինացնել, հսկել և ղեկավարել կրոնական ինստիտուտներն ոչ միայն Սին-Ծիանգ Ույղուրական ինքնավար մարզի, այլև՝ Չինաստանի ողջ տարածքում:

20-րդ դարի վերջին Սին-Ծիանգի մզկիթների գերակշիռ մասը կցված էր կրոնական դպրոցներով, որոնք ունեին սեփական ծառայողներ

[1] **新疆清真寺数量大幅上升 已近2.5万座. (The number of mosques in Xinjiang has risen sharply to 25,000).** China Youth Online with China Youth Daily from 2009.07.17. URL:http://zqb.cyol.com/content/2009-07/17/content_2761116.htm

[2] **Guo Chengzhen, Han Jishan.** 加强和推进清真寺规范化管理 (Strengthen and promote standardized management of mosques). 2014.12.18. URL: https://web.archive.org/web/20150222163343/http://dzb.rmzxb.com/detail.aspx?id=352820

[3] **Marlene Laruelle, Sebastien Peyrouse.** Mapping Central Asia: Indian Perceptions and Strategies. Ashgate Publishing, Ltd., 2011,- 222 p.

և քարոզիչներ։[1] Այդ իսկ պատճառով Պեկինը փորձ էր անում վերահսկողություն սահմանել ոչ միայն կրոնական կազմակերպությունների, մզկիթների, այլև՝ կրթական հաստատությունների նկատմամբ։ Ույղուրների շրջանում կրոնական դպրոցների և իսլամի (ներառյալ ծայրահեղականության քարոզիչների) հանդեպ առաջացած հետաքրքրության պատճառով՝ չինական իշխանությունների կողմից սկսեցին կառավարվել մզկիթներին կից դպրոցները, նախակրթական, միջնակարգ և նույնիսկ բարձրագույն ուսումնական հաստատությունները։ Չինաստանի «բաց դռների» քաղաքականության վարման արդյունքում, մինչև 1996 թվականը, օտարերկրյա իսլամական կազմակերպություններին և տեղի մզկիթներին կից դպրոցներում ուսումնասիրվում էին արաբերենն ու պարսկերենը, Ղուրանն ու դրանից բխող իսլամական գաղափարախոսությունը։[2]

Սին-Ծիանգում կրոնի հանդեպ աչալուրջ վերաբերմունքը կապված էր տարածաշրջանում անջատողականության և կրոնական ծայրահեղականության մակարդակի բարձացման հետ, որն ինքնին վտանգ էր ներկայացնում Չինաստանի ազգային անվտանգությանը։ Ուստի, 1996 թվականի մայիսին ՍՈՒԻՄ-ի ԿԿ հերթական ժողովի ընթացքում մարզային ղեկավարության կողմից որոշում է կայացվում խիստ վերահսկողություն սահմանել կրոնական գործունեություն ծավալող կամ դրա հետ ինչ-որ կերպ առնչվող սուբյեկտների նկատմամբ՝ պատճառաբանելով, որ կրոնը դարձել է անջատողականների և ահաբեկչական միավորումների՝ պետության դեմ օգտագործման գործիքներից մեկը։[3]

1990-ական թվականներից սկսած ույղուրների շրջանում լայն տարածում գտավ անկախանալու և Չինաստանի Ժողովրդական հանրապետության տարածքից դուրս գալու գաղափարը։ Դա հիմնականում պրոպագանդվում էր իսլամական խմբավորումների, կրոնական գործունեություն ծավալող անհատների և հոգևորականների միջոցով։ Իսլամական օրենքները առաջնային դիրք էին գրավում ույղուրների համար, որին ի պատասխան Չինաստանի իշխանությունները դեռևս 1980-ական թվականներից փորձում էին վարել լոյալ, հավասարակշռված քաղաքականություն՝ թույլ չտալով Սին-Ծիանգ Ույղուրական ինքնավար մարզում պայթունավտնագ իրավիճակի ստեղծումը։

Դեն Սիաոպինյան բարեփոխումներից հետո՝ արտաքին աշխարհի և առանձին շահեր հետապնդող ուժերի ազդեցությունը ՍՈՒԻՄ-ում և

---

[1] **Zakharyin A.B.** Evolution of Islamic Learning in China. Вестник Московского университета. Сер.13, No 4, 2010,- 60 стр.

[2] Նույն տեղում՝ **Zakharyin.** A.,- 61-63 стр.

[3] **Human Rights Watch/Asia, Mickey Spiegel, Human Rights Watch (Organization). China: State Control of Religion.** Human Rights Watch, 1997,- 39-41pp.

հարակից տարածաշրջանում բավականին մեծացել էր: Այդ ուժերը Սին-Ծիանգ Ույղուրական ինքնավար մարզում տիրող իրավիճակից, կրոնական գործոնի օգտագործման հնարավորությունից ելնելով՝ փորձում էին թուլացնել Պեկինի իշխանությունը ՍՈՒԻՄ-ում և ձեռք բերել Չինաստանի դեմ որոշակի լծակներ: Չնայած դրան, 1990-ական թվականներն ինչպես տարածաշրջանում իսլամի դերի ամրապնդման, անջատողական տրամադրությունների աճի, այնպես էլ՝ ՍՈՒԻՄ-ում չինական իշխանությունների կողմից պետականամետ գործունեության ժամանակահատվածն էր: Ուսումնասիրելով 1990-2001 թվականի Պեկինի վարած ներքին և դրանից բխող արտաքին քաղաքականության միասնական պատկերը, կարելի է գալ այն եզրահանգման, որ չինական իշխանությունները գնացին ՍՈՒԻՄ-ը բարեփոխելու և իսլամի, կրոնական բոլոր ինստիտուտների «պետականացման» ուղղով: Այդ մեխանիզմն իրենից ներկայացնում էր հստակ գործողությունների, թիրախավորված նպատակների և ՍՈՒԻՄ-ում անվտանգությանը սպառնացող գործոնների չեզոքացման գործիքների ամբողջություն: Ըստ դրա, ՍՈՒԻՄ-ում կիրառվեց կարկառուն կրոնական, տնտեսական, քաղաքական գործիչներին իշխանությունների կողմը գրավելու մեթոդը, որի շնորհիվ աստիճանաբար հսկողություն սահմանվեց իսլամի տարածման, մատուցման ձևի, կրթական ապարատի, լեզվի, հոգևոր և տնտեսական կյանքի ոլորտներում: Առաջնային նպատակ էր սահմանվել՝ համաչափ տնտեսական աճ ապահովել ՍՈՒԻՄ-ում և նպաստել կրոնական էքստրեմիզմի, ահաբեկչության մակարդակի և անջատողական տրամադրությունների նվազմանը: Ույղուրների շրջանում ընդհակառակը՝ անջատողական ուժերը պարբերաբար իրականացնում էին հրահրված քաղաքական և քաղաքացիական ակտեր, որոնք ուղղված էին թե տեղի իշխանությունների, և թե Պեկինի դեմ: Անջատողական միավորումները ձգտում էին հասնել իրենց նպատակներին՝ օգտագործելով ՍՈՒԻՄ-ում լայն տարածում գտած կրոնական դպրոցների ազդեցության պոտենցիալն ու իսլամի, Ղուրանի սեփական մեկնաբանությունները: Չնայած դրան, նշված տարիներին Չինաստանի կառավարական օղակը փորձում էր վարել մերձեցման քաղաքականություն(միջէթնիկ)՝ ելնելով ՍՈՒԻՄ-ի տնտեսական, քաղաքական ռազմավարական նշանակությունից: Այդ քաղաքականության շրջանակներում 1990 թվականի սեպտեմբերից Սին-Ծիանգի կառավարությունը մի շարք նոր որոշումներ ընդունեց: Համաձայն դրանց՝ Սին-Ծիանգին հատկացված բոլոր օտարերկրյա աջակցությունները պետք է հաստատվեին, այնուհետև թույլատրվեին տեղի իշխանությունների կողմից: Նույն ամսում ՍՈՒԻՄ-ի կառավարությունն ընդունում և հաստատում է հոգևոր ներկայացուցիչների և առհասարակ՝ կրոնական գործունեություն ծավալելու վերաբերյալ նոր կանո-

նակարգեր: Այդ կարգավորումների հիմնանական նպատակն իսլամի ծայրահեղական գաղափարների տարածումը կանխելն էր, կրոնական գործունեության պետական մակարդակով վերահսկումը և մարզում կայունության պահպանումը: Հատկանշական է, որ չինական իշխանությունների այդ գաղտնի ռազմավարական ծրագրի կետերը հայտնի դարձան հանրությանը 1996 թվականին՝ «Փաստաթուղթ No. 7» անվանմամբ:[1] Կարևորագույն կետերից էր՝ հոգևոր առաջնորդների տեղաշարժը սահմանափակող դրույթները և իշխանությունների կողմից նրանց գործունեության մոնիթորինգի մեխանիզմների ներդրումը: Մոնիթորինգի վառ գործիքներից էր Պեկինի կողմից կրոնական գործունեության և առաջնորդների լիցենզավորման համակարգը, որը խստացնում էր և արգելում անհատներին զբաղվել կրոնական գործունեությամբ առանց պետական թույլտվության:[2]

ՍՈՒԻՄ-ում սկսվեց ակտիվ պրոպագանդվել աշխատանքը, պետությանը ծառայելը, գյուղատնտեսությամբ զբաղվելը և աստիճանաբար փակվեցին մզկիթներն ու դրանց կից կրոնական դպրոցները: Ըստ տեղի իշխանությունների նոր կարգավորումների՝ արգելվեցին նաև նոր մզկիթների կառուցման աշխատանքները:[3] Ի հակառակ դրան, իշխանություններին լոյալ ույղուրների միջոցով քարոզվում էր կոմունիստական գաղափարախոսությունը՝ պետական ինստիտուտների կարևորության, Չինաստանի միասնականության, չինարեն լեզվի և Կոմունիստական կուսակցության զորության մասին: Չինաստանի իշխանությունները հակված էին վարել ինտեգրման, չինական ազդեցության վերականգման քաղաքականություն և փորձում էին կասեցնել հակապետական դրսևորումների տարածումը: ՍՈՒԻՄ-ի հարցում Պեկինի որդեգրած դիրքորոշման արդյունքում, 1990-թվականների վերջում, տարածաշրջանում կրոնական զսպվածություն է նկատվում, որին հետևում է ՍՈՒԻՄ-ի տնտեսության զարգացումն ու տնտեսական բնականոն աճը:[4]

Չինական իշխանությունների և ԿԿ կրոնական էքստրեմիզմի և անջատողականության դեմ պայքարի համատեքստում, անհրաժեշտ է նաև

---

[1] **Sean R. Roberts.** The War on the Uyghurs: China's Internal Campaign Against a Muslim Minority. Princeton University Press, 2020,- 55p.

[2] **Xiaowei Zang.** Handbook on Ethnic Minorities in China. Edward Elgar Publishing, 2016. 544 pages,- 72-73pp.

[3] **Sean R. Roberts.** The War on the Uyghurs: China's Internal Campaign Against a Muslim Minority. Princeton University Press, 2020,- 55p.

[4] Ի շնորհիվ ՉԺՀ կառավարության ներդրումների և «Արևմուտքի ինտեգրման քաղաքականության» Սին-Ծիանզը 1990-ական թվականներին ապահովել է միջինում 10% աճ և շարունակում արագ տեմպերով աճել 1999 թվականից մինչ այսօր: **Alessandra Cappelletti.** Socio-Economic Development in Xinjiang Uyghur Autonomous Region: Disparities and Power Struggle in China's North-West. Springer Nature, 2019,- 53p.

վերլուծել ույղուրների «արձագանքման» և Պեկինի կողմից վարվող քաղաքականության ընկալման երևույթը: Սին-Ծիանգի հասարակության գերակշիռ մասը կազմող ույղուրների շրջանում իշխանությունների կողմից վարած քաղաքականությունը բացասական էր ընկալվում և բախվում դիմադրության: Դրա հիմնական պատճառներից էր ույղուրների իսլամադավան լինելու իրողությունը: Ույղուրների կյանքում կրոնի գերակայության հանգամանքը, ըստ Պեկինի, օգտագործվում էր ծայրահեղականների և անջատողական ուժերի կողմից՝ տարածաշրջանում պետության դիրքերը թուլացնելու նպատակով: Աստիճանաբար փակվող մզկիթները, կրոնական սովորույթների և միջոցառումների արգելումը, մշտական հսկողություն սահմանելն ու օրեցօր իշխանությունների կողմից նոր սահմանափակումների կիրառումն օբյեկտիվորեն չէին կարող դրական ընդունվել Չինաստանի հյուսիս-արևմուտքում ընկած այս մարզում: 1993 թվականի օգոստոսի 14-ին՝ Ուրումչիում, տեղի է ունենում ՉԺՀ Կումունիստական կուսակցության, կառավարության, բանակի և Ազգային անվտանգության ծառայության բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումը՝ կապված Սին-Ծիանգում անջատողական տրամադրությունների և այդ գաղափարախոսությունը պաշտպանող անհատների թվի աճով:[1] Իշխանությունը՝ որդեգրելով «ույղուրական խնդրին» ձեռք մեկնելու և հնարավորինս չեզոքացնելու քաղաքականություն, ուժեղացնում էր իր դիրքերը մարզի թե կենտրոնական, և թե փոքր քաղաքներում: «1993 թվականի օգոստին կայացած հանդիպման ընթացքում որոշում է կայացվում՝ մեծացնել Սին-Ծիանգում ՉԺՀ զինված ոստիկանական ուժերի թիվը: Դրանք հիմնականում օգտագործվում էին հասարակական կարգը պահպանելու և հակաահաբեկչական գործողություններ իրականացնելու հակար: Ըստ այդ որոշման, 100 հոգանոց ոստիկանական ուժերի միավորումներ էին ստեղծվում Սին-Ծիանգի մեծ քաղաքներում՝ Ուրումչիում և Քաշգարում: Ոստիկանների աշխատավարձերը համապատասխանորեն բարձրացվում էին և թարմացվում էր նրանց ծառայողական հանդերձանքը:[2]

Հստակ կարելի է պնդել, որ 20-րդ դարի վերջին ՍՈՒԻՄ-ում անջատողականությունը և կրոնական ծայրահեղականությունը՝ տնտեսական զարգացում ապահովելու հետ մեկտեղ դարձել էին Չինաստանի առանցքային մարտահրավերներից մեկը: «Բաց դռների» քաղաքականությունը Չինաստանին հնարավորություն տվեց ինտեգրվել աշխարհին և բացի դրական ասպեկտներից՝ այն նաև պետք է կարողանար դիմակայել ու

[1] **Michael Dillon.** Xinjiang—China's Muslim Far North West. Taylor & Francis, London & New York, 2003,- 74p.

[2] Նույն տեղում՝ **M.Dillon,** 74-75p.

հաղթահարել ներքին և տարածաշրջանային խնդիրները:[1] Դա էր ընկած Պեկինի կողմից Սին-Ծիանգի ռազմավարական դերը ճիշտ գնահատելու և «հանաֆիկացնելու» տեսլականի պատճառահետևանքային կապի հիմքում: Ավելորդ չէ փաստել, որ այդ քաղաքականության կանխարգելիչ և անվտանգային միջոցառումների շրջանակներում՝ իշխանությունների կողմից որոշում կայացվեց փոխարինել ույղուր և այլ էթնիկ փոքրամասնության ոստիկանական ուժերի ներկայացուցիչներին չինացիներով՝ հաներով:[2]

20-րդ դարի վերջին ՍՈՒԻՄ-ում տեղի ունեցող տրանսֆորմացիոն գործընթացներն ու անջատողականության, կրոնական ծայրահեղականության դեմ Պեկինի համաչափ արձագանքը վճռորոշ դեր խաղացին տարածաշրջանում զարգացող գործընթացների վրա: Նշված ժամանակաշրջանում ՍՈՒԻՄ-ում անջատողական ուժերից բացի, ձևավորվում էին նաև ահաբեկչական խմբեր, միավորումներ, որոնց ակտիվ գործունեության արդյունքում Պեկինը ստիպված էր կիրառել խիստ կանխարգելիչ մեթոդներ, վերահսկել իրավիճակը Չինաստանի հյուսիս-արևմուտքում և ամրապնդեր իր դիրքերը տարածաշրջանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Alessandra Cappelletti.** Socio-Economic Development in Xinjiang Uyghur Autonomous Region: Disparities and Power Struggle in China's North-West. Springer Nature, 2019,- 317pages

2. **CQ Researcher.** Issues in Peace and Conflict Studies: Selections from CQ Researcher. SAGE Publications, 2010,- 544 pages

3. **Guo Chengzhen, Han Jishan.** 加强和推进清真寺规范化管理 (Strengthen and promote standardized management of mosques). 2014.12.18. URL: https://web.archive.org/web/20150222163343/ http://dzb.rmzxb.com/detail.aspx?id=352820

4. **Human Rights Watch/Asia, Mickey Spiegel, Human Rights Watch (Organization). China: State Control of Religion.** Human Rights Watch, 1997,- 144 pages

5. **Komil Kalanov, Antonio Alonso.** Sacred places and "Folk" Islam in Central Asia. UNISCI Discussion Papers, No.17, 2008,- 173-185 pages

[1] **Shigeo Kobayashi, Jia Baobo, Junya Sano**.The "Three Reforms" in China: Progress and Outlook. Sakura Institute of Research, Inc. September 1999, No.45. URL: https://www.jri.co.jp/english/periodical/rim/1999/RIMe199904threereforms/

[2] **Michael Dillon.** Xinjiang - China's Muslim Far North West. Taylor & Francis, London & New York, 2003, 224 pages,- 74p.

6. **Marlene Laruelle, Sebastien Peyrouse.** Mapping Central Asia: Indian Perceptions and Strategies. Ashgate Publishing, Ltd., 2011,- 248 pages

7. **Michael Dillon.** Xinjiang—China's Muslim Far North West. Taylor & Francis, London & New York, 2003,- 224 pages

8. **Mohammed Aly Sergie, Toni Johnson. Islam**: Governing Under Sharia. Official Website of Council on Foreign Relations from July 25, 2014. URL: https://www.cfr.org/backgrounder/islam-governing-under-sharia

9. **Sean R. Roberts.** The War on the Uyghurs: China's Internal Campaign Against a Muslim Minority. Princeton University Press, 2020,- 304 pages

10.**Shigeo Kobayashi, Jia Baobo, Junya Sano**.The "Three Reforms" in China: Progress and Outlook. Sakura Institute of Research, Inc. September 1999, No.45. URL: https://www.jri.co.jp/english/periodical/rim/1999/RIMe1999 04threereforms/

11.**Xiaowei Zang.** Handbook on Ethnic Minorities in China. Edward Elgar Publishing, 2016,- 544 pages

12.**Zakharyin A.B.** Evolution of Islamic Learning in China. Вестник Московского университета. Сер.13, No 4, 2010,- 56-70сс.

13.**中华人民共和国民族区域自治法. (Law of the People's Republic of China on Regional Ethnic Autonomy).** Official Website of China's National People's Congress. URL: http://www.npc.gov.cn/wxzl/wxzl/2001-03/03/conte nt_4447.htm

14.**新疆清真寺数量大幅上升 已近2.5万座. (The number of mosques in Xinjiang has risen sharply to 25,000).** China Youth Online with China Youth Daily from 2009.07.17. URL: http://zqb.cyol.com/content/2009-07/17/content_ 2761116.htm

Александр Хачатрян, Рост сепаратистских настроений в Синьцзян-Уйгурском автономном районе в конце XX века и ответная реакция Пекина - В конце 20-го века в Синьцзян-Уйгурском автономном районе Китая значительно активировалась деятельность сепаратистских и религиозно-экстремистских организаций. В связи с этим Пекин встал перед необходимостью отреагировать на создавшуюся угрозу национальной безопасности Китая и предпринять соответствующие действия по ее нейтрализации.

В результате принятия новой законодательной базы властями Китая, СУАР претерпел значительные изменения, а деятельность уйгурских религиозных организаций попала под государственный контроль.

Aleksandr Khachatryan, The rise of separatism in the Xinjiang Uyghur Autonomous Region at the end of the 20st century and Beijing's balanced response -

At the end of the 20th century, separatist movements and religious extremist movements' activities entered into an active phase in the Xinjiang Uyghur Autonomous Region of China. Due to this, Beijing needed to accept the threatening China's national security challenge and take appropriate actions to neutralize them.

As a result of the new regulations approved by the Chinese authorities, the XUAR underwent significant changes and the activities of Uyghur religious organizations were taken under the state control.

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՅԻ՝ «ՃԱՆԱՊԱՐՀՆ ՀԱՅՈՑ»-Ի ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանալի բառեր - Սերո Խանզադյան, պատմություն, «Մխիթար սպարապետ», «Խոսեք Հայաստանի լեռներ», «Շուշի», «Գարեգին Նժդեհ», «Անդրանիկ», ինքնություն, պատմության ֆունկցիա:

Պատմության թեմատիկան Սերո Խանզադյանի ստեղծագործության ամենածավալուն ընդգրկումներից մեկն է, եթե ոչ ամենածավալունը: Հայոց պատմության հեթանոսական շրջան, 5-րդ դար, 18-20-րդ դարասկիզբ՝ տարածաժամանակային ընդգրկումների մի ամբողջ համապատկեր, որը գեղարվեստականացվել է «Վարք հարանց» պատմվածքների շարքում, «Մեռածները հրամայում են» և «Վեց գիշեր» վիպակներում, «Մխիթար Սպարապետ», «Շուշի», «Խոսեք, Հայաստանի լեռներ», «Անդրանիկ», «Գարեգին Նժդեհ» պատմավեպում: Այս ստեղծագործություններում գործողությունները ժամանակի տարբեր հատվածներում ծավալվում են հայոց երկրի ամենատարբեր հատվածներում, նրա սահմաններից դուրս:

Պատմության թեմայով գրված ստեղծագործություններում Ս. Խանզադյանը, թափանցելով պատմության խորքերը, ներքին կապերով գեղարվեստականացնելով շարժընթացի տարբեր չափումները, փորձում է դրանք ներկայացնել պատմության շարունակականության ծիրում, հայտնաբերել «ժամանակի ներքին ֆունկցիան», «Ճանապարհն հայոցի» իր տեսլականը, արձանագրել, որ փոքրաքանակ ժողովուրդների հարատևման միակ միջոցը նրա միասնականությունն է, սեփական ներուժին ապավինելը, հոգևոր մաքառումների լայնությունն ու խորությունը:

Շարունակելով մեր պատմավիպասանության, հատկապես Րաֆֆու ավանդույթները, Ս. Խանզադյանը, մեծ վիպասանի օրինակով, ինչպես գրում է ակադեմիկոս Ս. Սարինյանը, փորձում է «իմացաբանական սկզբունքներով պատռել ժամանակագրության շրջանակներն ու թափանցել պատմության գաղափարի համապարփակ ոլորտները, մարդկային

հարաբերությունների, պատմական իրադարձությունների շարժման մեջ հայտնաբերել պատմության գաղափարը»[1]: Միով բանիվ՝ Ս. Խանզադյանի գերնպատակը, ինչպես գրում է գրականագետ Ժ. Քալանթարյանը, «Ժամանակակից հայ արձակի վիճակն ու խնդիրները» հոդվածում, նույնպես «անվերջ փոփոխվող քարտեզի» վրա մեր գույն ունենալն ու մեր հասցեի ամրագրումն է, հայոց անվախճան հույսի, հավերժորեն վերանորոգվելու և ընդհատված պատմությունը նորից ու նորովի սկսելու ազգային առանձնահատկությունը, որն ի վերջո դառնում է ազգային ճակատագիր: Հարցն ամենևին էլ չի վերաբերում ոչ ուրիշներին հակադրվելուն, ոչ էլ ինքնամեկուսացմանը: Ըստ էության, փիլիսոփայական առումով մենք խնդիր չունենք մեր ինքնությունը հաստատելու, ինչպես մեր հարևանները, որոնք մոլորվել են թուրք կամ աղվան երկընտրանքի միջև: Պատմության և գրականության մեր խնդիրը «հայի տեսակի հարատևման գաղտնիքի և ազգային հոգեբանության բացահայտումն է»[2]: Աշխարհում մեր տեղի ինքնության ամրագրումը: «Խնդիրն ունի իր բաղադրիչները, որոնք վերաբերում են առասպելական ժամանակներին ու պատմությանը, եղեռնին ու պատերազմներին, ազգային հոգեբանությանն ու փիլիսոփայությանը»[3]: Հայոց պատմության հեթանոսական շրջանին Ս. Խանզադյանն անդրադառնում է «Թագուհին հայոց» վեպով, որի նյութը վերցրել է ք. ա. 2-րդ հազարամյակում Հայասայում՝ հայերի բնօրրանում տեղի ունեցած իրադարձություններից:

Վեպը հրատարակվել է 1978 թվականին, ճիշտ ժամանակին, որովհետև թուրք-ազերական «պատմաբան» զեղծարարները ջանք ու միջոցներ չէին խնայում աշխարհին ցույց տալու համար, որ իրենք բնիկ, իսկ մենք եկվորներ ենք և բնակություն են հաստատել (իրենց «բարի կամեցողությամբ») թուրքական պապենական տարածքում:

«Թագուհին հայոց» վեպում «հազարամյակների հեռավորությունից պատմության խորքային ասպարեզ հանեց ազգային գոյության լավագույն դասերը»[4], լուծեց «գեղարվեստական բարդ խնդիր՝ գտնելով ոչ միայն պատմության գիտական ու գեղարվեստական սինթեզը, այլև այն անհայտը, աներևույթը, անփոխարինելին, որ պատկանում է միայն ու միայն գրողի ինտուիցիային ու ստեղծագործական երևակայությանը: Հնագույն ժամանակների արձանագրություններից, պատմագիտական հետազոտություններից, ժողովրդական ավանդույթներից նա հյուսում է մի

[1] **Սարինյան Ս.,** Հայ գրականության երկու դար, Գ. 2, Եր., 2002, էջ 48:

[2] **Քալանթարյան Ժ.,** Ժամանակակից հայ արձակի վիճակն ու խնդիրները, «Գրական թերթ», 2014, № 16:

[3] Նույն տեղում:

[4] **Աղաբաբյան Ս.,** Ժամանակների կապի պատմիչը, «Սովետական գրականություն», 1985, 25

նոր իրականություն՝ ստեղծելով շարժվող մի կյանք, մարդկային բնավորությունների, հոգեբանության, կրքերի, հոգեկան զեղումների մի անօրինակ աշխարհ, որ կարծես գոյություն ունի մեր կողքին, մեզ զուգահեռ »[1]:

Ս. Խանզադյանի գաղափարական ելակետը վեպում հետևյալն է՝ «հասնել պատմության գիտական լուսաբանման», ներկայացնել խեթական թագավորության դեմ թագաժառանգ Կարանիի ու թագուհի Մարի--Լույսի պայքարը «հայկական ցեղերը միավորելու մեկ միասնական կազմակերպված թագավորության մեջ»[2]:

Վեպի ուշագրավ էջերից են Կարանիի՝ Արցախում գտնվելու, համոզվելու, որ Արցախի և Վարարակնի հովտում բնակվող հայկական ցեղախմբերի միավորումով միայն կարելի է պայքարել Հայասա երկրի արևելքն ասպատակող ցեղախմբերի դեմ, ասել է թե՝ Արցախն ու Զանգեզուրը այն հզոր պատնեշը պիտի լինեն՝ այն ժամանակ՝ խեթական և այլ ցեղախմբերի, այժմ՝ պանթուրքիստական նկրտումների դեմ, որոնք օրեցօր ահագնանում են:

«Ճանապարհն հայոցի» սերռոխանզադյանական ընկալումներն ավելի խորությամբ են բացահայտվում «Մխիթար Սպարապետ», «Շուշի», «-Խոսեք, Հայաստանի լեռներ», «Անդրանիկ» և «Գարեգին Նժդեհ» վեպերում, որոնք ամբողջացնում են պատմության շարունակականության համապատկերը:

«Մխիթար Սպարապետ»-ում Ս. Խանզադյանն անդրադառնում է ազատագրական շարժման երկրորդ շրջանի իրադարձություններին՝ 18-րդ դարի առաջին տասնամյակներում Դավիթ Բեկի ու Մխիթար Սպարապետի գլխավորությամբ ծավալված ազգային-ազատագրական պայքարին:

Դավիթ Բեկի գլխավորությամբ սկսված ազատագրական պայքարը ունեցավ ազգահավաք նշանակություն: Զորավարի տարած փայլուն հաղթանակները ազդակ են հանդիսանում, որ սկսվի ներգաղթ դեպի Սյունյաց աշխարհ: Գալիս են ամենատարբեր տեղերից, հատկապես՝ Պարսկաստանից, որոնք «Շահ Աբասի գերած, Պարսկաստան տարած հայերի ժառանգորդներն են: Չեն հանդուրժում օտարի լուծը»[3]:

Դավիթ Բեկը մտովի տեղափոխվում է մերթ դեպի պատմական անցյալ, մերթ դեպի ապագա, որը նրան ներկայանում է հայոց միասնական պետության տեսքով ու համոզվում է, որ երբեք չի կոտրվի հայոց դյուցազուն ոգին, և ոչ ոք ի զորու չէ հային կտրելու իր արմատներից: Նրան խիստ զայրացնում են Ագուլիսի վաճառականների հաղորդածը Պետրոս Մեծի մտադրության մասին. «Պետրոս կայսրը միտք ունի, որ եթե

[1] Սարինյան Ս., Հայ գրականության երկու դարը, գ. 2, էջ 445:
[2] Արղամանյան Ս., սովետահայ վեպը, Գ.3, 19869, էջ 456:
[3] **Խանզադյան Ս.,** Մխիթար սպարապետ, Եր., 1981, էջ 104:

կարողանա մտնել Հայաստան, ապա կհամոզի հայ ժողովրդին տեղափոխվել Կասպից ծովի ափերը, որ շենացնի իր նվաճած աղուտները: Պատասխանն ավելի քան դիպուկ է. «Եթե նա կարողանա ազատագրել ձեր երկիրը (նկատի ունի Ագուլիսը (Ս.Գ.), ապա խորհուրդս այս է՝ թող ձեր ժողովուրդը գա ու բնակվի իմ նվաճած հողում»[1]:

Դավիթ Բեկը մտովի տեղափոխվում է պատմական անցյալ, որտեղ հայոց երկիրը տարածվում էր «Քուռ գետի ափերից մինչև Արաքսի շամբուտները, մինչև Մեղրի ու Ագուլիս, մինչև Վայոց Ձորի բերանն ու Սևանա ծովակի ափերը»: Նա այդ տարածքի մի մասում ստեղծել է մի ազատ ու անկախ տերություն, միավորել ոչ միայն Սյունյաց աշխարհի բոլոր քաղաքներն ու գավառները, այլև իր իշխանության տակ վերցնել Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդի, Դիզակի մելիքությունները, ազատելով պարսկական լծից:

Սակայն այդ ամենը Դավիթ Բեկը բավարար չի համարում պետականությունը պահպանելու համար ու կարևորում է ներքին միասնության ամրապնդումը, ռազմարդյունաբերության, տնտեսության, հատկապես մշակութային կյանքի աշխուժացումը: Այս առումով բնութագրական է նրա զրույցը Մովսես աբեղայի հետ «Փոթորկիը կանցնի, Մովսես: Շատ փոթորկներ են անցել մեր ժողովրդի գլխով: Այս էլ կանցնի: Ես հավատում եմ մեր ժողովրդի վաղվա օրվան: Մենք քեզ հետ բաց կանենք Գրիգոր Տաթևացու դպրոցը, որը հիմնել է նրա ուսուցիչ Հոհան Որոտնեցին…- Մեր հայրենակիցները հեռավոր երկրներում գրքեր են տպագրում: Նրանց կբերենք մեր լեռները: Կնորոգենք խափանված դպրոցը և քեզ հետ միասին լույս տվող մի օջախ կհիմնենք մեր մթնամած լեռնելում[2]: Միայն սուրը չէ, որ ամուր է պահում ժողովրդի ոգին: Լույսն է առաջին հերթին նրա ուժը: Որքան լուսավոր լինի ժողովրդի միտքը, այնքան լուսավոր կլինի նա»[3]:

Դավիթ Բեկի մահվանից հետո նրա գործը շարունակում է Մխիթար Սպարապետը՝ երդվելով Բեկի գերեզմանին. «Երդվում ենք քո սուրբ աճյունի առջև, մեր բախտի աստղ Դավիթ Բեկ, որ միչև վերջին շունչը կկռվենք Հայոց աշխարհի փրկության համար: Երդվում ենք: Ոչ մի օտարի ոտք չի մոտենա քո սուրբ գերեզմանին»[4]:

Մխիթար Սպարապետը նույնպես հայրենիքի փրկության ճանապարհը տեսնում է ժողովրդի միասնության ու սեփական ներուժին ապավինելու մեջ ու հաճախակի է կրկնում՝ «Ես հավտում եմ հայ ժողովրդի ուժին», «Տերությունը հաստատ է մնում ժողովրդով», սա է «ճանապարհին

[1] Նույն տեղում, էջ 138:
[2] Նույն տեղում, էջ 125:
[3] Նույն տեղում, էջ 138:
[4] Նույն տեղում, էջ 516:

հայոցի միակ ու դարերով ստուգված, ճշմարիտ ոգին»: «Մխիթար սպարապետի» շարունակությունը ժամանակագրական ու բովանդակային առումով «Շուշի» վեպն է, որտեղ գործողությունների թատերաբեմը Արցախն է, գործող անձիք՝ արցախի քաջամարտիկները:

1975 թվականին Սերո Խանզադյանը հրատարակեց «Խոսեք, Հայաստանի լեռներ» վեպը, որը գրականագիտության մեջ որակավորվեց որպես «ժողովրդական հերոսապատումի ասք տարեգրություն»[1], «Մատյան ցավի և հույսի»[2]:

Վեպում նկարագրված դեպքերը տեղի են ունենում Մեծ եղեռնի տարում պատմական Երզնկայի նահանգում և նեկայացնում են Կարթակն գյուղի հերոսական ինքնապահպանությունը:

Վեպի նկարագրված ահասասուռ դեպքերի նկարագրությունները թողնենք մի կողմ ու փորձենք ներկայացնել գրողի պատկերացումները ինքնապաշտպանության, թշնամուն միասնաբար դիմակայելու վերաբերյալ:

Երզնկայի կոտորածների օրերին Կաթակնի գյուղացիները Ներսեհ Չաուշի գլխավորությամբ ամրանում են Ակնովիտ լեռան բարձունքներում և հերոսաբար կռվում թուրքական կանոնավոր զորամիավորումների ու խուժանի դեմ:

Ս. Խանզադյանը առաջիններց մեկն է մեր գրականության մեջ, որ թուրքերի դեմ պայքարը ներկայացնում է ոչ թե որպես սոսկ ինքնապաշտպանություն, ֆիդայական շարժում, այլ որպես ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման յուրահատուկ ձև, որի կարգախոսան է՝ «Լացացրեք նրանց, ովքեր մեր աչքերից արյուն քամեցին»[3]:

Վեպի հիմնական գաղափարն այն է, որ ուժն է օրենքներ սահմանում, և պետք է ապրել ոչ թե քրիստոնեական օրինապաշտությամբ, մատաղի գառան հնազանդությամբ, այլ «ակն ընդ ական», «ատամն ընդ ատաման» կարգախոսով, որովհետև թուրքերի մոտ արմատավորված է այն մտայնությանը, թե հայերն ընդունակ չեն զենք կրելու, կռվելու, առավելևս՝ մարդ սպանելու:

Վեպի առանցքային նպատակներից մեկը կեղծ ժողովրդավարի ու բարեպաշտի դիմակով քողարկված թուրքերի դաշնակից գերմանացիների իրական դիմագծի բացահատումն է: Նրանք են նորագույն զենքերով զինում թուրքերին, հատուկ խմբերի միջոցով սովորեցնում մարտավարության եղանակներ՝ չխորշելով ոչ մի միջոցից: Մեջբերենք միայն դաժան մահվան դատապարտված ազատամարտիկ Գեղամի խոսքերը՝ ուղղված իր մահապատժին ականատես գերմանացի սպաներին. «Հե՛ր,

---

[1] **Արզումանյան Ս.,** սովետահայ վեպը, Գ.3, էջ 143:

[2] **Պետրոսյան Թ.,** Սերո Խանզադյանի պատմական արձակը, Եր., 1989, էջ 100:

[3] **Խանզադյան Ս.,** Խոսեք, Հայաստանի լեռներ, Եր., 1978, էջ 308:

գերմանացիներ, երբ դուք Հայաստանի ու հայերիս արյամբ կշտացած կվերադառնաք ձեր արշխարհը, չմկոռանաք ձեր կանանց ու երեխաներին պատմել, թե ինչպես եք դուք ձեր կայսերական վարտիքները հանել այս թուրք փաշաների ու բեյերի առաջ…Պատմեցեք այդ մասին: Դա ձեր արժանիքն է, ձեր վաստակը»[1]:

Վեպի մի շարք կերպարների միջոցով Ս. Խանզադյանը բորբոքում է հարազատներին կորցրած կերպարների վրեժխընդրության զգացումը: Դրանցից մեկն է Կուրբան լի-Մանուկը, որը հրաշքով փրկվել է սպանդից, առերես ընդունել մահմեդականություն, ծառայության մտել ոստիկանություն ու սկսել արժեքավոր տեղեկություններ հաղորդել Կաթակնի վրա հարձակման նախապատրաստությունների, հարձակումների ժամանակի, թուրքական զորքերի քանակի վերաբերյալ: Կուրբան Ալին իր վրեժը մարդակեր Էնվերից է լուծում, երբ Բուխարայի անապատում պատահաբար հանդիպում է նրան: Վրեժխնդիր է լինում նաև գերմանացի բարձրաստիճան սպա Կուրտ ֆոն Բայցից՝ գնդակահարելուց առաջ դիմելով նրան. «Ուզում եմ իմանաք, որ ես գանձերը կողոպտելու նպատակով չեմ սպանում ձեզ: Այլ ուզում եմ իմանաք, որ ես հայ եմ ու իմ արդար վրեժն եմ հանում»[2] :

Իսկ Էնվերի սպանությամբ լուծում է եղեռնի զոհերի վրեժը.

-Մի սպանիր ինձ, ես քեզ կհանձնեմ Բեռլինի բանկերում ունեցածս ողջ գումարը: Նա մեկուկես միլիոն դոլար է:

-Բարի, սակայն ասացեք, Էնվեր փաշա, ես ի՞նչ պատասխան տամ մեկուկես միլիոն հայրենակիցներիս անթող ոսկորներին, որ դու ևս քո ատամներով կրծոտելով կոտորեցիր: Ի՞նչ պատասխան տամ քո ձեռքերով ևս խոշտանգված Հայաստան երկրիս, պղծված Եփրատին: Եթե քո մեջ մարդ ասած մասունքից թեկուզ մի փշուր կա, ապա նման առաջարկի չպիտի անես ինձ: Հող գցիր բերանդ, դու պիտի սատկես»[3]:

Ժողովրդական վրեժխնդրության մարմնացումներ են նաև Մանուկի հասակակիցներ Բենիամինը, Զյունիկը, Բուլիկը և մի շարք ուրիշներ, ովքեր ծնորդներից ծածուկ գիշերով իջնում են թուրքերով բնակեցված հայկական գյուղերը և նրանց հետ վարվում այնպես, ինչպես նրանք են վարվել հայ տանտերերի հետ:

1989 թվականին Ս. Խանզադյանը հրատարակեց «Անդրանիկ», 1993-ին՝ «Գարեգին Նժդեհ» վեպերը՝ ամբողջացնելով հայոց պատմության իր ասքապատումը:

---

[1] Նույն տեղում, էջ 529:

[2] Նույն տեղում, էջ 31:

[3] Նույն տեղում, էջ 525:

Սերո Խանզադյանն այս վեպում անդրադառնում է Զանգեզուրում 1814-1821 թթ. Կատարվող իրադարձություններին, որոնց առանցքում Անդրանիկ զորավարն ու Գարեգին Նժդեհն են, ովքեր վճռական դեր են կատարել Զանգեզուրը Ադրբեջանին բռնակցելու մտադրությունները ձախողելու գործում:

Առանձնապես կարևոր նշանակություն ունեցավ «Գարեգին Նժդեհ» վեպի հրատարակումը, որը լույս սփռեց դարասկզբի հայոց պատմության մի շարք մութ կողմերի վրա: Նժդեհին լավագույն ձևով են բնութագրում ժողովրդին հղած նրա պատվիրանները՝

1. Երբեք առանց Սյունիքի ու Արցախի, առանց Հայաստանի աշխարհագրական այդ ուժեղ ողնաշարի մեր ամբողջական հայրենիքը գոյության, ունենալ չի կարող:
2. Երբեք անզեն: Թող նախ հարևանները իրրենց սրերը խոփի, նիզակները՝ օտոցների վերածեն:
3. Մի ժողովուրդ, մի ընտանիք: Բոլոր որդիներդ անկարոտ ու արի:
4. Մի ժողովուրդ-մի ընտանիք: Ազգերի մեջ միայն դու իրավունք չունես ներքուստ պառակտված լինելու:
5. Եղիր ուժեղ, էլի ուժեղ: Ժողովուրդները վերջիվերջո տեր են մնում ոչ թե նրան, ինչ-որ նրանց տրվում է, ինչ որ մուրում են, այլ միայն նրան, ինչի որ արժանի են, ինչ որ իրենց ուժերով ապահովել են կարողանում:

Վեպում նկարագրվում է, թե ինչպես է Կարմիր բանակի ուժեղացված զորախմբերի աջակցությամբ ադրբեջանական խուժանը հարձակումներ գործում Գորիսի և շրջանի գյուղերի վրա, ապանում, առևանգում, թալանում:

Հետաքրքիր են Նժդեհի հետախույզների ձեռք բերած փաստաթղթերը: Նժդեհի սեղանին էր ռուս գեներալ Սալկևիչկի՝ «Սեկրետնո» մակագրությամբ թիվ 4007 արձանագրությունը. «Զանգեզուրի միացումը Ադրբեջանին կկատարվի: Նախիջևանի ջարդերից հետո, որ կատարեցին մեր եղբայր թուրքերը, հազիվ թե Զանգեզուրը ռիսկ անի մեզ հակահարված տալու՝ չունենալով իր թիկունքում պաշտպանական որևէ ուժ, հայերը Ղարաբաղի մշտական կորստյան հետ հաշտվել չեն կարող և անկասկած պիտի ձգտեն օգտագործել ամեն հնարավորություն կորցրածը հետ բերելու համար: Պատրաստ եղեք նոր հարձակման Հայաստանի վրա»[1]:

Ահա նաև անգլիացիների բանագնաց Գիբոնի կողմից Անդրկովկասում ռազմական ուժերի հրամանատար Թոմ Թոմսոնի վերջնագիրը. «-Լեռնային Ղարաբաղն ու Զանգեզուրը ադրբեջանական տարածքներ են:

[1] **Խանզադյան Ս.,** Գարեգին Նժդեհ, եր., 1993, էջ 108:

Դա նրանց հողն է, հայեր, կամ ընդունեք Ադրբեջանին հպատակվելու մեր պահանջը, կամ դուք կջնջվեք երկրի երեսից»[1]:

Գարեգին Նժդեհի կերպարը մինչև այժմ էլ հանգիստ չի տալիս հարևան երկրի «պատմաբաններին» ու քաղաքական գործիչներին, որոնք անընդհատ հղումներ են կատարում «Հայկական սովետական հանրագիտարանից»: Գ. Նժդեհը,- գրում է հանրագիտարանը,- «1920թ մայիսին իր զորամասերով ճնշել է Զանգեզուրի աշխատավության զինված ապստամբությունը, 1920-ի հուլիս-օգոստոսին կռվել թուրքական հարձակումը կանխելու նպատակով Զանգեզուր, Ղարաբաղ և Նախիջևան մտած 11-րդ կարմիր բանակի զորամասերի դեմ: Եղել է դաշնակցականների 1921-ի փետրվարյան խռովության եռանդուն կազմակերպիչներից, այսպես կոչված Լեռնահայաստանի Հանրապետության ռազմական ղեկավար: Զանգեզուրի ազատագրումից (1921 հունիս-հուլիս) հետ փախել է արտասահման, շարունակել հակասովետական պայքարը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ համագործակցել է գերմանական ֆաշիստների հետ, դարձել Բեռլինում ստեղծված (1924) «Հայկական ազգային խորհրդի» անդամ, 1944-ին ձերբակալվել է Բուլղարիայում և հանձնվել սովետական դատարանին»:

Պատմական թեմայով գրված Ս. Խանզադյանի ստեղծագործությունները բացահայտում են գրողի՝ «Ճանապարհ հայոց»-ի վերաբերյալ պատկերացումները, ևս մի անգամ փաստում, որ փոքրաքանակ ժողովուրդների հարատևման, աշխարհի «անընդհատ փոփոխվող քարտեզի վրա իր մշտական տեղն ունենալու միակ ճանապարհը համախմբվածությունն է ու սեփական ուժերին ապավինելը»:

Այդ ստեղծագործություններն ունեն ճանաչողական ու հատկապես դաստիարակչական կարևոր նշանակություն և մեծապես կարող են նպաստել մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակաուղղված կազմակերպմանը:

Лусине Григорян, Функция истории «Армянской дороги» в сероханзадяновском восприятии - В статье анализируется произведения С.Хандазяна, его представления про движения армянской истории. Особенно подчёркивается, что малочисленные народы должны полагаться на собственную внутреннюю силу и целостность.

Lusine Grigoryan, The function of the history of the "Armenian road" in the Serokhanzadyan's perception - The article analyzes the works of S. Khandazyan, his ideas about the movements of Armenian history. It especially emphasizes that small peoples must rely on their own inner strength and integrity.

[1] Նույն տեղում, էջ 108:

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՆՀԱՏԻ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ «ՀԼՈՒՆԵՐԸ ԵՎ ԸՄԲՈՍՏՆԵՐԸ» ՎԻՊԱԿՈՒՄ

ԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր – Զապել Եսայան, միասնականություն, հայրենասիրություն, պատմություն, հալածանք, ինքնապաշտպանություն, լրջախոհություն, ուսումնական անհատ, գաղափարախոսություն:

Մեծ է հայրենանվեր մարդու դերը ազգի հարատևման ճանապարհին, և արժեքավոր այն գրականությունը, որը ցույց է տալիս նրա ճշմարիտ նկարագիրը: Այս առումով հատկանշական է Զապել Եսայանի վիպաշխարհը: Հարազատ ժողովրդի անցյալի, ներկայի և ապագայի վերաբերյալ Զապել Եսայանի սրտացավ վերաբերմունքը, հայրենասեր գաղափարները հաճախ են մուտք գործել նրա ստեղծագործության սահմաններից ներս. պայմանավորված պատմաքաղաքական իրավիճակով՝ նրանք երբեմն հանդես են եկել քողարկված, բայց և հեղինակը չի խուսափել առանց ենթիմաստների խոսքն ընթերցողին ուղղելուց: Այս առումով ուրույն տեղ ունի Զապել Եսայանի վիպագրության մեջ «Հլուները և ըմբոստները» վիպակը[1]. այն արձագանքն է 20-րդ դարասկզբին արևմտահայերի՝ հույսերով ու հուսախաբություններով լի կյանքի:

Վիպակում ներկայացվում և արժևորվում է ուսումնական մարդու հայրենասեր նկարագիրը, երևում նրա դերը հլուների ըմբոստացման ճանապարհին, հիմնավորվում աշխատասեր և խաղաղասեր ժողովրդի՝ «արյունոտ սուլթանի» կառավարության դեմ խոհեմությամբ պայքարելու, ինքնապաշտպանության դիմելու անհրաժեշտությունը: Ստեղծագործության գլխավոր կերպարն իր ուղին անցնում է վտանգներով լի միջավայրում և արևմտահայերի համար որոշիչ ժամանակահատվածում, ինչպես հեղինակն է ակնարկում.«Հայկական խնդիրը իր ամենէն անձկալի եւ փոթորկոտ վիճակին մէջ էր այդ միջոցներուն…»[2]: Այստեղ պատկերված է հայերի կյանքն այն շրջանում, երբ արդեն կատարված էր Ելտըզի հայտնի մահափորձը՝ ձախողված ելքով, զանգվածային

[1] Զապել Եսայանը վիպակն առաջին անգամ տպագրել է 1906 թվականին «Ազատ բեմ»-ում «Շահան» ծածկանվամբ, երկրորդ անգամ(մասնատված և արդեն առանց ծածկանվան) սկսած 1908 թվականից՝ «Ձայն հայրենյաց»-ում: 2018 թվականին վիպակն առաջին անգամ լույս է տեսել առանձին հատորով «Արաս» հրատարակչության կողմից՝ 1906 թվականի հրատարակության հիման վրա:

[2] **Եսայեան Զ.,** Շնորհքով մարդիկ, Հլուները եւ ըմբոստները, Ստանպուլ, 2018, էջ 185:

խուզարկություններով, ձերբակալություններով ու բռնություններով: Զապել Եսայանի նպատակն էր լսելի դարձնել «ողբերգութիւնը տառապանքին հետ մինակ մնացած, հեռաւոր, լքուած եւ արիւնոտ մարդկութեան մէկ մասին»[1]:

Կահիրեում տպագրվող «Ազատ բեմ»-ում հրատարակված «Հլուները և ըմբոստները» վիպակում կարդում ենք գրաքննության կապանքներից զերծ Զապել Եսայանին: Գրողն իր ստեղծագործությամբ բերում է ինքնապաշտպանության պատրաստ լինելու կոչեր, սեփական ուժերին վստահելու գաղափարախոսություն, ժողովրդի՝ կորստյան վտանգի առջև կանգնելու ահազանգ: Այս ամենը չէին կարող ներկայացվել Աբդուլ Համիդ 2-րդի ղեկավարած պետության սահմաններում: Ինչպես Զապել Եսայանն էր հետագայում «Ազատամարտ»-ի էջերում խոստովանելու.«….Մամուլը լուռ և համր էր. անիկա զրկուած էր բոլորովին ցեղային տագնապալի ոգորումներուն արտայայտիչը ըլլալէ»[2]: Բավական է միայն մեջբերել այն բառերը, որոնք սրբագրման էին ենթակա Աբդուլ Համիդ 2-րդի կառավարման տարիներին՝ *Հայաստան, հայրենիք, տարածել, ընտրել, գայրանալ, ապստամբել, խառնել, լալ, ամոքել, իյնալ, կտրել, փճացնել, գողնալ, կռվել, դժգոհ, անսաստ, աղքատ, հիվանդ, անհնազանդ, համառ, համերաշխ, ազգային, դեսպանատուն, հեղափոխություն, սահմանադրություն*[3].այս բառերի միջոցով կարելի է ամբողջությամբ խտացնել արևմտահայության փափագները, ազատության և հավասարության մեջ ապրելու երազները, վերոհիշյալ բառերով էլ հյուսված է Զապել Եսայանի ստեղծագործությունը: «Հլուները և ըմբոստները» վիպակի վերաբերյալ հիշատակելի են Սևակ Արզումանյանի և Գրիգոր Պըլտյանի հետազոտությունները: Սևակ Արզումանյանը ընդգծել է գրողի կողմից՝ ժամանակի հուզող խնդիրներին անդրադառնալու, աշխատող մարդկանց ազատ ու անկախ ապրելու իրավունքն ու ձգտումները արտահայտելու հանգամանքը[4], իսկ Գրիգոր Պըլտյանը վիպակի 2018 թվականի հրատարակության մեջ զետեղված «Երկու վեպեր» հոդվածում մանրամասն ներկայացրել է վիպակի տպագրության պատմությանը վերաբերող կարևոր փաստեր[5]:

Սույն հոդվածը նվիրված է Զապել Եսայանի «Հլուները և ըմբոստները» վիպակի ուսումնասիրությանը, մասնավորապես՝ ստեղծագործության մեջ գաղափարական մարդու հայրենասեր նկարագրի բացա-

---

[1] Նույն տեղում, էջ 157:

[2] **Եսայեան Զ.**, Գրական հարցեր, «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1911, օգոստոս 7/20, թիւ 4(56), էջ 2(882):

[3] Տե՛ս **Նաւասարդ Կ.,** Թուրք գրաքննութեան զուարճալի կողմերը, «Արեւելեան մամուլ», Իզմիր, 1908, օգոստ. 19, թիւ 34, էջ 806:

[4] Տե՛ս **Արզումանյան Ս.**, Զապել Եսայան (կյանքը և գործը), Երևան, 1965, էջ 107 :

[5] Տե՛ս **Եսայեան Զ.,** Շնորհքով մարդիկ, Հլուները եւ ըմբոստները, Ստանպուլ, 2018, էջ 201-212:

հայտմանը: Որպեսզի կարողանանք առավել խորը ըմբռնել վիպակի գաղափարական առանձնահատկությունները, Զապել Եսայանի պատկերացումները ուսումնական անհատի՝ ժողովրդի կյանքում ունեցած դերի վերաբերյալ, մենք անդրադարձել ենք նաև քաղաքական որոշ իրադարձությունների, որոնք մեծ ազդեցություն են թողել Զապել Եսայանի կերպարի մտածողության վրա:

Վիպակում Եսայանն իր գլխավոր կերպարի միջոցով պայքարել է համակերպվածության ու հլության, շատերի համար սովորական դարձած սարսափների դեմ: Դեպքերի զարգացման մեկնարկը գրողը տվել է խորհրդանշական պատկերներով՝ ծանր լռություն, սպառնական ամեպրով ծածկված երկինք, «փողոցներուն մէջ ուշ մնացած անցորդի մը խուլ եւ զգուշաւոր» ոտնաձայն[1]: Տպավորիչ և արդեն տրամադրող սկզբին հաջորդում է Մարտիկ աղայի յազմայի գործարանում հավաքված աշխատավորների գիշերային քննարկումների տեսարանի ներկայացումը. հեղինակն անմիջապես ակնարկում է՝ «երկար ատեն լուռ մնացած էին»[2]:

Աստիճանաբար նկատելի են դառնում որոշակի դժգոհություններ երիտասարդ գործավորների խոսքերում. նրանցից մեկին՝ Պետիկին, ոստիկանները առանց որևէ հիմնավոր պատճառի տարել էին խուզարկման: Դեպքը միակը չէր, սակայն պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ գրողն ընդգծում է՝ տեղի ունեցող անարդարությունները երիտասարդ աշխատավորներին տանում էին ոչ թե իրենց բարկության գագաթնակետին, այլ սովորական դարձած հարմարվողականության.«Պետիկ ուսերը թօթուեց արհամարհանքով եւ համակերպութեամբ»[3]: Այստեղ է հեղինակն առաջին անգամ զգում ստեղծագործության գլխավոր կերպար ուսումնական Հակոբի՝ դեպքերի զարգացման շղթա բերելու անհրաժեշտությունը:

Սկզբում հեղինակը, փոքր միջադեպի նկարագրությամբ, տալիս է ընդհանուրի բնութագիրը. արհամարհական վերաբերմունքին, կեղեքումներին սովոր գործավորները ինչքան էլ բարկանում էին, ինչքան էլ իրենց մոտ զգում վտանգը, միևնույն է, վերջում հանգում էին հեղինակի համար թերևս անընդունելի համակերպությանը: Այստեղ երևում է ըմբոստ կերպարի առկայության կարևորությունը. ըստ Եսայանի՝ պետք չէր թողնել, որ ազատության համար մղվող պայքարի ճանապարհին հաղթանակեր հլությունը, չէ՞ որ մարդկանց մոտ կային թարմ տպավորություններ՝ կոտորածների, զրկանքների, և մարդկանց բարկությունը գրագիտորեն, տրամաբանված ուղղորդող էր անհրաժեշտ. հառաչանքները օդի մեջ

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 143:

[2] Նույն տեղում, էջ 144:

[3] Նույն տեղում, էջ 150:

մնալու, գործողության չվերածվելու վտանգի առջև էին կանգնած: Զապել Եսայանը գիտակցում էր, որ միջավայրին պետք էր մեկը, ով համակերպության ուղին բռնած մարդկանց սթափեցներ.«Աւելի գէշը կ՛ըլլայ...»[1]: Ահա թե ինչպես է սկսում իր հանձնառությունը Հակոբը, ում Զապել Եսայանը հետևողականորեն, ստեղծագործության ողջ ընթացքում հլուներին հակադրելու միջոցով է ներկայացնում ընթերցողին:

Արտաքին բնութագրիչներով արդեն ընկերներից տարբերվող՝ նրանցից ավելի մաքուր հագնված և մաքուր հայերենով խոսող Հակոբը ստեղծագործության մեջ ներկայացվում է որպես մեծ նպատակներ ունեցող անհատ: Նրա հայրենասիրության, ազատասիրության ձևավորման ակունքները գտնելու, նրա ձեռնարկած քայլերի տրամաբանությունը հասկանալու համար անհրաժեշտ է ունենալ հետևյալ հարցերի պատասխանները՝ ո՞վ էր նա, ինչպիսի՞ մանկություն էր ունեցել, ի՞նչ արժեհամակարգի տեր էին եղել նրան կրթողները, ինչպե՞ս էր նրա աշխարհընկալման վրա ազդել ժամանակն ու տարածությունը: Պատասխաններն առավել կհստակեցնեն, թե ըստ Զապել Եսայանի՝ ինչպիսի՞ն էր հայրենասեր հեղափոխականի, «գաղափարական մարդու պարկեշտ»[2] նկարագիրը, որն ունակ էր սրտացավորեն ու լրջախոհությամբ ուղղորդելու միջավայում առկա ըմբոստ տրամադրությունները:

Գլխավոր կերպարի ամբողջական նկարագիրը խտացված է վիպակի «Գ» հատվածում: Պարզվում է՝ Հակոբը արհեստավորի տղա էր, ով փոքր տարիքում կորցրել էր հորը, մնացել ուրիշների տանը աշխատելու միջոցով ապրուստ վաստակող մոր խնամքին, այնուհետև թաղային վարժարանն ավարտելուց հետո սկսել էր ուսուցչությամբ զբաղվել Պոլսի վարժարաններում, իսկ դեպքերի զարգացման ընթացքում երևում է, որ օրվա ապրուստը վաստակելու համար աշխատում էր յազմայի գործարանում: Հեղինակն անդրադառնում է նաև այն հարցին, որին մեծ կարևորություն էր տալիս իր գործերում՝ ո՞վ և ինչպիսի՞ գաղափարախոսությամբ էր կրթել երիտասարդին: Եթե 1905 թվականին տպագրված «Սկյուտարի վերջալույսներ» վիպակում հեղինակի կողմից նկատվել և քննադատության էին ենթարկվել կրոնական համակերպվածությունը՝ որոշ հոգևորականների միջոցով ժողովրդին փոխանցվող, երիտասարդ սերնդի ինքնուրույն մտածողությանը խոչընդոտող կրթական միջավայրի առկայությունը, ապա «Հլուները և ըմբոստները» վիպակում նա ցույց է տալիս, որ երիտասարդի հոգին «փրկվել էր» «Երկրէն» եկած խանդավառ ուսուցչի շնորհիվ՝ ով ականատեսն էր եղել ժողովրդի եղերական կյանքի: Հեղինակի հավաստիացմամբ՝ նրա միջոցով էր, որ կրոնական երկյուղածութ-

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, էջ 184:

յուն ունեցող Հակոբը աստիճանաբար անձնական ցավից գնացել էր դեպի ընդհանուրը. մի ուսուցիչը, ըստ Զապել Եսայանի, հաջողել էր երիտասարդի հոգին ըմբոստ և վեհ գաղափարներով սնուցել: Հեղինակը, եզրափակելու համար իր գլխավոր կերպարի ըմբոստացման ուղու պատկերումը, ընդգծում է՝ դեռևս 16 տարեկան էր Հակոբը, երբ ծանր հիվանդացած՝ լսել էր ջարդերի, բանտարկությունների և գաղթողների մասին խոսակցություններ, արդյունքում.«....Բնազդական եւ անյաղթելի հերոսութեամբ մը կ՛ուզէր ապրիլ, իր ճղճիմ բազուկներուն եւ իր անսահման անձնուիրութեան նեցուկը տալու անոր»[1]: Այստեղ նաև մասնավորվում է, թե որ ժամանակահատվածում էր Հակոբի լսել ժողովրդի տառապանքի ձայները. «....Պանքային դէպքէն անմիջապէս ետքը...»[2]: Խոսքը Բանկ Օտոմանի գրավման փորձի մասին է: Դեռևս 1896 թվականի օգոստոսի 14-ին դաշնակցական գործիչների կողմից կազմակերպվել էր Կ. Պոլսի օսմանյան բանկի գրավումը, որի հիմնական նպատակն էր մարդկության ուշադրությունը սևեռել հայկական կոտորածների վրա, հիշեցնել Օսմանյան կառավրությանը իր՝ 1895 թվականին ընդունած, բայց այդպես էլ չիրականացրած բարեփոխումների մասին: Արդյունքում՝ կրկին հուսախաբություն. բանկը գրավողները, լսելով խոստումներ բարեփոխումների վերաբերյալ, նավով հեռանում են, իսկ հետո սկսվում է ջարդերի նոր ալիք, և այդ կոտորածների արձագանքներն են, որ «Հլուները և ըմբոստները» վիպակում ականարկում է Զապել Եսայանը: Տասնվեցամյա Հակոբը հարևաններից շարունակաբար լսել էր կատարվող սարսափելի իրադարձությունների մանրամասները: Հեղինակը ցույց է տալիս, թե Հակոբի հոգում ինչպես էր կաթիլ-կաթիլ բույն դրել ցեղի կորստյան վախը: Ըստ Եսայանի՝ սեփական բազուկների կարիքն ուներ արևմտահայությունը, իսկ կորստյան վտանգի առջև կանգնած լինելու գիտակցությունն ունցող մարդիկ էին, որ պետք է լինեին ժողովրդի փրկության առհավատչյան: Այս պատճառով էլ հեղինակը վիպակում կառուցում է համապատասխան իրադրություններ՝ հավաստելու իր դավանանքը. երբ արդեն հասուն Հակոբը գործավոր ընկերներին պատմում էր դժբախտությունների, ինչպես նաև հույսերի մասին, ընկերները անմիջապես կառչում էին դրսից եկող օգնության գաղափարին: «Բայց իր անգիտակից ընկերները՝ անկարող՝ դժբախտութեանց բեռը կրելու եւ կարծես զգուշանալով անոնցմէ, կառչեցան վերջին յուսատու խօսքերուն»[3],- Եսայանն այստեղ ականարկում է, որ ժողովուրդը դեռ դաս չէր քաղել օտարներից սպասելիքներ ունենալու անհեռանկար տեսլականից, քանզի նրանց հույսը կամ «Ռուսիան» էր,

[1] Նույն տեղում, էջ 180:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 156:

կամ «Ինկիլզ»-ը: Առաջին տարբերակի դեպքում եթե պատասխանը հստակ մերժվում է Հակոբի կողմից, ապա երկրորդի դեպքում հեղինակը ցույց է տալիս, թե թերթերից ստացված «հնձուած,կտրտուած եւ խեղաթիւրուած» լուրերը ինչպես կարող են մոլորեցնել և թուլացնել ժողովրդին: Զապել Եսայանը ակնարկում է՝ դրսից օգնություն սպասելը գլխավոր հերոսի համար խաբուսիկ երջանկություն էր[1]: Ընդգծենք՝ պատմության մեջ դժվար չէ որոնել մեծ պետությունների «բարեկամական» նկրտումների, սուտ խոստումների արդյունքում կրկին ու կրկին թշնամու առջև միայնակ մնացած ջարդվող ժողովրդի, ինչպես Եսայանն է սիրում ասել, «սիլուէթ»ը: Այս պարագայում նույնպես զգալի էր այն մտավորականի առկայության կարևորությունը, ով չուներ շրջապատի կույր հավատը: Ճի՞շտ էր Եսայան-Հակոբը. մեջբերենք «Ավերակներուն մեջ» վիպակում արձանագրված խոսքերը և ընդգծենք՝ սա արդեն ասում էր... կոտորածի, անարդարության ու անտարբերության համը կրկին ու կրկին ճաշակած ժողովուրդը.«....Օտարին սիրտը քարի պես կարծր է. մեկ ձեռքով կտան, մյուս ձեռքով կզարնեն»[2]:

Վիպակում ընդգծվում է, որ «Ազատություն, Հաւասարութիւն, Եղբայրութիւն» բառերն արդեն բավական էին երիտասարդների համար, որ ինքնամոռացորեն երազեին, բայց գրողն առավել արժևորում էր սթափությունը: Այստեղ նույնպես ուսումնական Հակոբն իր արագ կողմնորոշվելու ունակությամբ զգացնել է տալիս իր ներկայության կարևորությունը. տարիներ շարունակ հլության վարժվածների մոտ ձևավորվող ըմբոստ գաղափարները խելամտորեն ուղղորդելու համար նա ընտրում է ազգակիցների՝ հեռվից լսվող ցավերի, տառապանքների ձայնը լսելի դարձնելու ուղին. այսպես է, որ անձնական ցավը ուղղորդվում է դեպի ընդհանուրը, միասնականը: Նա չի կորցնում առիթը ընկերներին պատմելու, թե ինչպես էին իրենց արյունակիցները տառապում սովի, շարունակական ջարդերի մեջ: Հակոբն ընկերներին գուժում է ցեղի ոչնչացման վտանգը: Աշխատավորների զայրույթը Հակոբի շնորհիվ անձնականից քայլ առ քայլ դառնում է ընդհանուր, իսկ նրանց միասնականությունն ամրապնդվում է այն ժամանակ, երբ Հակոբը հուզմունքով ընթերցում է.«Օգնութեան հասէք մեզի, ճար ճարակ ըրէք, մեր *ումէմ*ը ձեր վրայ է... աղբրտանք,հասէք մեզի...»[3]: Օգտվելով նրանց մեջ ազգի փրկության համար պայքարի դուրս գալու տրմադարությունների ձևավորման առկայությունից, Զապել Եսայանի ուսումնական կերպարը շարունակում է կարդալ արտասահմանյան թերթից հատվածներ, նամակներ տարբեր

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 157:

[2] **Եսայան Զ.,** Ավերակներուն մեջ, Երևան, 2006, էջ 63:

[3] **Եսայեան Զ.,** Շնորհքով մարդիկ, Հլուները եւ ըմբոստները, Ստանպուլ, 2018, էջ 158:

բնակավայրերից: Աշխատավորները զգում են համընդհանուր ողբերգության առկայության ներկայությունը, տարբեր վայրերում իրենց եղբայրների տառապանքի ձայնին ականջալուր լինելը նրանց մեջ սերմանում է ըմբոստացման տրամադրություններ: Հեղինակը վիպակում նաև պատկերում է ուսումնական երիտասարդի բախումը քծնանքը որպես կյանքում գոյատևելու միջոց ընտրած հակահեղափոխականների հետ: Ստեղծագործության մեջ երևում է, թե ինչպես կարող է ազգակիցների ողբերգությանն ականատես լինելը մեկի մոտ առաջացնել ըմբոստություն, մյուսի մոտ՝ հլություն: Եթե ջարդերի մասին լուրերը նպաստել էին Հակոբի մոտ ստրկության, համակերպության դեմ ընդվզման տրամադրությունների առաջացմանը, ապա Խասգյուղի ջարդը յազմայի գործարանի տիրոջ՝ Մարտիկ աղայի մոտ առավել խորացել էր վախը.«Տասնեակ տարիներէ ի վեր Պոլսոյ մէջ պատահած դէպքերը եւ աղէտները զինքը սահմռկեցուցած եւ բոլորովին վախկոտ դարձուցած էին....»[1]: Ի տարբերություն Հակոբի՝ Մարտիկ աղայի համար բավական էր այն, որ հավատար Սկյուտարի կառավարիչի ազնիվ լինելուն, և շարունակաբար քծներ Սկյուտարի Սելամսըզի թաղամասի կոմիսարին: Զապել Եսայանը բարձրացնում է նաև հետևյալ հարցը՝ մի՞թե նրա նմանները չեն ցանկացել ազատ լինել: Պատասխանը միանշանակ բացասական չէ վիպակում. թերևս Մարտիկ աղան, պատրաստ չլինելով որևէ ըմբոստացման, հոգու խորքում զգում էր համակրանք նրանց հանդեպ, ովքեր գտել էին իրենց մեջ ընդվզելու ուժ, այստեղից էլ նրա պատկառանքն ու վախը ուսումնական Հակոբի նկատմամբ:

Հաջորդ բախումը առավել կտրուկ երևում է Հակոբի և մեծահարուստ Մեսրոպյան էֆենդիի միջև: Երբ ժողովուրդը շարունակական կոտորածների մեջ մասնատվում էր, Մեսրոպյան էֆենդին, զգալով իր ունեցվածքը կորցնելու վտանգը, չուներ ցանկություն հայրենակիցներին օգնության ձեռք մեկնելու: Մեսրոպյանների մասին է, որ կարող ենք կարդալ «Ազատ բեմ»-ի 1906 թվականի համարներից մեկում.«....Անոնք իրենց և իրենց պնակալէզներուն համար ստեղծած, իրենց պաշտելի աստուածը, դրամին խնկարկելու ախտէն վարակեալ՝ թերևս զղջացած ալ ըլլան տառապեալ ազգի մը մէջ ծնած ըլլալնուն»[2]: Ազգային ցավն այնքան է խոցել գրողին, որ նա վերջնամասում ընդգծված կերպով սկսել է հեգնել իր բացասական կերպարին. Մեսրոպյանի՝ ջարդերի մեջ միայն հեղափոխականներին մեղադրելու և հայրենակիցներին չօգնելու իրողությունը համարում է «հրէշային» եզրակացություն, հեգնանքով նետում է՝ «ու այս մե՛ծ քաղաքագէտը մոռցած էր արդեն…»[3]: Եսայանի համար անընդունելի էր

[1] Նույն տեղում, էջ 165:

[2] **Արայ**, Գերեզմանի մը առջեւ, «Ազատ բեմ», Աղեքսանդիրա, 1906, 27 յունվար, թիւ 41, էջ 1:

[3] Տե՛ս՝ **Եսայեան Զ.,** Շնորհքով մարդիկ, Հլուները եւ ըմբոստները, Ստանպուլ, 2018, էջ 192:

այն մարդու հլության քարոզչությամբ զբաղվելը, ով հոգու խորքում հիշում էր կատարված ողբերգության մանրամասները.«….Քովի խանին մէջ անխնայ կը ջարդէին այն խե՛ղճ անպաշտպան գաւառացիները…»[1]: Գրողի համոզմամբ պիտք է վառ պահվեին ազգային ողբերգության հիշատակները, չպետք է մոռացվեր այն ճշմարտությունը, որ թշնամին կարող էր անմիաբան, ինքնապաշտպանության անպարտաստ հլուներին առավել անկաշկանդ ոչնչացնել: Գրողի համար դատապարտելի էր մոռացումը արդեն թափված և թափվող արյան:

Վիպակում Եսայանը հաշտության եզրեր չէր տեսնում Մեսրոպյանի և ուսումնական Հակոբի միջև. ստրկության հակված Մեսրոպյանը ինչքան էլ արդարացներ իր անտարբեր կեցվածքը, միևնույն է, ունակ չէր լինելու հեղափոխելու երիտասարդ մտավորականի՝ հաստատուն նպատակների վրա հենված հայրենասեր գաղափարները.«….Եւ հզօրապէս զիրար ատեցին այդ երկու հայերը, որովհետեւ Ստրկութիւնը եւ Ըմբոստութիւնը չէին կրնար զիրար հասկնալ»[2]: Ըստ Զապել Եսայանի՝ նա արդեն դատապարտված էր, նրա նմանները չպետք է ներվեին ըմբոստ հակոբնեերի կողմից: Այսպիսի տրամադրվածությամբ էլ ավարտվում է շարունակելի թվացող վիպակը. «Ազատ բեմ»-ի 62-րդ համարում տպագրվում է վիպակի հերթական հատվածը, վերջում՝ «շարունակելի»[3], սակայն հետագա համարներում այլևս չենք հանդիպում «Հլուները և ըմբոստները» վիպակին: Ճիշտ է, անավարտ է մնում ստեղծագործությունը, սակայն այսքանով հանդերձ հեղինակը կարողանում է լսելի դարձնել իր ասելիքը: Այս հանգամանքը Զապել Եսայանին չի խանգարում վիպակում ստեղծելու կենդանի կերպարներ: Ճիշտ է, ստեղծագործության մեջ ամբողջականորեն չի երևում որոշ կերպարների բնավորության բազմազանությունը, օրինակ Մարտիկ աղայի գործարանում աշխատող երիտասարդ գործավորների՝ Էրամի, Մանոլի, Պետիկի, Միհրանի կերպարների դեպքում, սակայն հեղինակը նրանց խոսքի միջոցով է հասնում որոշակի անհատականացման. նրանք ներկայանում են իրենց զարգացվածության մակարդակին, միջավայրին բնորոշ բառապաշարով, կարողանում են փոխանցել իրենց դասակարգին հատուկ մտածելակերպը: Ստեղծագործության մեջ, այլ գործող անձանց համեմատ, առավել ամբողջական է Հակոբի կերպարը, ով ինչքան էլ կրում է Զապել Եսայանի գաղափարական էական կողմերը, չի դադարում անհատ լինելուց. նրա մոտ բացարձականացված չէ գաղափարի համար մղվող պայքարը: Հակոբն անհատ է, ով կարող է ազդվել օրիորդ Մեսրոպյանի արհամարհական նայվածքից և հանկարծա-

[1] Նույն տեղում, էջ 190:

[2] Նույն տեղում, էջ 194:

[3] Տե՛ս **Շահան,** Հլուները եւ ըմբոստները, «Ազատ բեմ», Գահիրէ, 1906, 24 նոյեմբեր, թիւ 62, էջ 2:

կի զգալ սեփական ուժերի անկարողությունը, ում համար հանուն վեհ գաղափարի մղվող պայքարը ինչ-որ տեղ նաև միջոց է՝ վեր բարձրանալու միջավայրից, բարձրից նայելու «հայհոյող ու ստրկացող ջոջ»[1]-ին, ում համար ցանկալի է արտասահմանյան հայտնի գործիչների կացությունը, բայց նրա բնավորության մեջ առաջնային հատկանիշ է հայրենասիրությունը.«...Գիտէր արտասահմանի հայ գործիչներուն անունները, կը հիանար անոնց վրայ եւ կը ցանկար անոնց վիճակին... Կը զգար միեւնոյն ատեն թէ իր կացութիւնը փառքի եւ համբաւի գինովութիւններէն զերծ՝ աւելի արժանի էր գնահատման, եւ թէ իր ըրածին մէջ աւելի հաստատ հաւատք եւ անկեղծութիւն կար….»[2]:

Ազգասեր է Զապել Եսայանի ուսումնական կերպարը, քանզի ունակ է ականջալուր լինելու ազգային ողբերգությանը, իր պայքարի ճանապարհին աչքի առջև ունի այն ճշմարտությունը, որ հաշվետու է ապագա սերունդներին, ում համար գերխնդիր է ազգային միասնականությունը, ի վերջո նա կրողն է պայքարի հետևյալ ռազմավարության.«....Մեր փրկութիւնը ձեր բազուկներէն կախում ունի, բայց պէտք է խոհեմութեամբ վարուիլ, վստահութիւն ունեցէք մեր վրայ եւ երբ ժամանակը գայ, կը գիտնաք թէ ի՛նչ պէտք է ընել. դուք իբր ճշմարիտ զինուորներ պէտք է քաջ՝ բայց հնազանդ ըլլաք»[3]: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Զապել Եսայանի համար կարևորը խաղաղության, հավասարության համար մղվող պայքարն էր, ուստի 1908 թվականին երիտթուրքերի հեղաշրջումից հետո «Ձայն հայրենեաց»-ում տպագրում է վիպակի մի մասը միայն: Այս կերպ ավարտուն էր համարվում այն տարբերակը, որտեղ բացակայում էին ըմբոստ տրամադրությունները, այս հանգամանքը հուշում է՝ գրողը, ինչպես որոշ հայ մտավորականներ, կարծում էր՝ արդեն իրականություն է ազատության ձեռքբերման հույսը, տանջված ժողովրդի ուժերի վերականգման տեսլականը: Իհարկե շատ ժամանակ պետք չէր, որ երիտթուրքերը ցույց տային իրենց իրական դեմքը, իսկ Եսայանը զարմանար, արձանագրեր ու արձագանքեր՝ կրկին ու կրկին հնչեցնելով հայրենասիրության, միասնականության և ցանկացած իրավիճակում ինքնապաշտպանության պատրաստ լինելու կարևորությունը:

Анна Саргсян, Патриотическое описание идеологического индивида в повести “Покорные и бунтари” Запел Есаян - Статья посвящается изучению повести «Покорные и бунтари» Запел Есаян, в частности, раскрытию патриотическому описанию идеологического человека в произведении.

[1] **Եսայեան Զ.,** Շնորհքով մարդիկ, Հլուները եւ ըմբոստները, Ստանպուլ, 2018, էջ 195:
[2] Նույն տեղում, էջ 185:
[3] Նույն տեղում, էջ 160:

Чтобы суметь более глубокоосознать идеологические особенности повести, представления Запел Есаян о роли учебного индивида в жизьны народа, мы также обратили внимание на некоторые политические события, которые оставили большое воздействие на мышление Запел Есаян.

В ходе исследования были применены следующие методы: сопоставление, абстрагирование, анализ и синтез

Anna Sargsyan, The patriotic description of the ideological individual in the story "The Obedients and the Rebels " of ZabelYesayan - This article is devoted to the study of the story "The Obedients and the Rebels " of Zabel Yesayan, in particular, the disclosure of the patriotic description of the ideological person in the work.In order to be able to more deeply understand the ideological features of the story, Zabel Yesayan's ideas about the role of the educational individual in the lives of the people, we also drew attention to some political events that left a big impact on Zabel Yesayan's thinking.

In the course of the study, the following methods were applied: comparison, abstraction, analysis and synthesis.

ԻՄԱՍՏԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԳԱՅԱՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բանալի բառեր - իմաստափոխություն, բառիմաստի ընդլայնում, բառիմաստի նեղացում, բառիմաստի շրջում, բառի վերաիմաստավորում, գործառական իմաստափոխություն, իմաստափոխություն ըստ զուգորդության և կցորդության, առօրյա-խոսակցական ոճ, բառերի իմաստաձևային խմբեր, հարանունություն։

Իմաստաբանությունը՝ որպես բառագիտության՝ բառերի ու դարձվածային միավորների բառային իմաստներն ու դրանց փոփոխությունները ուսումնասիրող բաժին[1], առանձնակի դեր ունի թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքի բառապաշարի փոփոխությունները և զարգացման օրինաչափությունները բացահայտելու և մեկնաբանելու գործում: Բառային իմաստի փոփոխությունների տարբեր ուղիներ կան, որոնց մի մասը խիստ կենսունակ է հատկապես խոսակցական լեզվում: Իր ճկունության և արտաքին ազդակներին արագ արձագանքելու ունակության շնորհիվ լեզվի բառապաշարը բազմաբնույթ տեղաշարժերի է ենթարկվում: Այս երևույթը քննենք բառերի մենիմաստության և բազմիմաստության համատեքստում: Հայտնի է, որ մենիմաստ բառերը լեզվում համեմատաբար փոքր թիվ են կազմում. դրանք հիմնականում գրավոր խոսքին բնորոշ իրողություններ են, ինչպես, օրինակ, գիտաբառերը: Այլ է բազմիմաստ բառերի նկարագիրը: Բազմիմաստությունը առաջ է գալիս տվյալ բառի նախնական իմաստի զարգացման կամ փոփոխման շնորհիվ: Այսպես՝ եթե գրավոր խոսքում միևնույն բառը կարող է մի քանի իմաստներով կիրառվել, ապա բանավոր խոսքում այդ շարքն զգալիորեն ընդլայնվում է: Ասվածը դիտարկենք օրինակների միջոցով: Փոխառված անտիկվար բառը, որն ունի բառարանային երկու իմաստ՝ հնահավաք և հնագրավաճառ, խոսակցական լեզվում իմաստն ընդարձակել է՝ նշանակելով նաև հին, հետամնաց, անհետաքրքիր (տարբերակը, իհարկե, ժարգոնային է)։ Ծաղկել բառն ունի բառարանային քսան իմաստ. բանավոր խոսքում եղած իմաստներին ավելացել է ևս մեկը. ծաղկել բանավոր խոսքում փոխաբերաբար նշանակում է նաև դեմքի վրա բշտիկներ առաջանալը: Ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, բանավոր խոսքը կարող է չկիրա-

[1] **Սուքիասյան Ա...,** Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատ., Երևան, 1982, էջ 128:

ռել բառերի բառարանային իմաստներից շատերը, սակայն դրանց փոխարեն կարող է առաջ քաշել բոլորովին այլ իմաստներ և լայնորեն կիրառել: Համակարգչային զարգացման այս դարաշրջանում բառերի՝ արդեն հայտնի իմաստների կողքին նոր իմաստներ ձեռք բերելու հատկությունը զգալիորեն աշխուժացել է: Նոր ոլորտը իր հետ բերել է բազմաթիվ իրողություններ, որոնք պետք է բառային արտահայտություն ստանան, սակայն հաճախ նոր բառեր ստեղծելն իրեն չի արդարացնում, և առաջանում է բառերի սկզբնական իմաստի/իմաստների զարգացման կամ փոփոխման անհրաժեշտություն: Ինչպես իրավացիորեն նշում է լեզվաբան Աշոտ Սուքիասյանը, բառիմաստի փոփոխության տիպերը սերտորեն կապված են դրանք առաջացնող պատճառներին: Այդ պատճառները կարող են լինել թե՛ լեզվական, որոնք բխում են զուտ լեզվական գործոններից, թե՛ արտալեզվական, որոնք պայմանավորված են արտալեզվական՝ հասարակական գործոններով[1]: Հետազոտության ուշագրավ նյութ են բառապաշարի հարստացման արտալեզվական գործոնները: Լեզվաբանների կողմից առանձնացվում են իմաստափոխություն ենթադրող բառիմաստի ընդլայնումը, բառիմաստի նեղացումը, բառիմաստի շրջումը, բառի վերաիմաստավորումը, գործառական իմաստափոխությունը, իմաստափոխությունն ըստ զուգորդության և կցորդության[2]: Նշված եղանակներով փոփոխությունները երկարատև ճանապարհ են անցնում՝ դառնալով որակական փոփոխությունների աստիճանական կուտակման հետևանք: Խոսակցական լեզուն ևս մեծապես նպաստում է այդ փոփոխություններին: Գիտատեխնիկական և մշակութային առաջընթացը, հասարակական հարաբերությունների, տնտեսակարգերի փոփոխություններն ազդում են լեզվի բառապաշարի ամենատարբեր փոփոխակերպումների վրա: Լեզուն արագորեն հարստանում է այնպիսի բառերով, որոնք ընդամենը մի քանի տարի առաջ բացակայում էին բառապաշարում: Այս գործընթացը հատուկ է խոսքի թե՛ գրավոր, թե՛ բանավոր տարբերակներին (այսուհետ բանավոր տարբերակ ասելով՝ մենք նկատի կունենանք առավելապես առօրյա-խոսակցական ոճը): Բառիմաստի ընդլայնումը ներկայումս լայնորեն նկատվող գործընթաց է. երբ բառը, պահելով իր հիմնական իմաստը (իմաստները), ընդարձակում է բովանդակային մեկնաբանությունների դաշտը՝ ձեռք բերելով նոր իմաստներ: Բառիմաստի ընդլայնման դիպուկ և լայն տարածում գտած օրինակ է ռուսերենից փոխառված Газель ավտոմեքենայի մակնիշի անվանումը: Հանրության կողմից բառի՝ որպես փոխադրամիջոցի ընդհանրական անվանում կիրառելու հետևանքով այն այսօր խոսակցական լեզվում գիտակցվում է որպես երթուղային տաքսի

[1] **Սուքիասյան Ա..,** Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատ., Երևան, 1982, էջ 138:
[2] **Մարգարյան, Ա.,** Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատ., Երևան, էջ 198:

կամ փոքր ավտոբուս: Նման օրինակ է նաև պատճենող սարքեր արտադրող հայտնի ֆիրմայի Xerox օտար անվանումը, որն այսօր հայերենի խոսակցական լեզվում, ստանալով բայական վերջավորություն կամ անել բայի հավելումով (քսերոքսել, քսերոքս անել), նշանակում է պատճենահանել, բազմացնել: Այդպես և հանքային ջրերի ‹‹Ջերմուկ›› տեսակի անվանումն այսօր խոսակցական լեզվում մեծ մասամբ կիրառվում է ընդհանրապես հանքային ջրի նշանակությամբ: Այս իրողություններն իրականում ոչ թե հարստացնում, այլ անհարկի ծանրաբեռնում են լեզուն: Իհարկե, երևույթը բնորոշ է խոսակցական ոճին և, բարեբախտաբար, գրավոր խոսք չի ներթափանցել: Իսկ ահա բառիմաստի կեղծ ընդլայնման դեպքեր, ցավոք, նկատվում են թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքում: Այսպես՝ այլևս ժամանակի մակբայը, որը գործածվում է ժխտական նախադասություններում, սկսել է լայնորեն կիրառվել նաև հաստատական նախադասություններում: «Մեր հաղթանակը այլևս իրողություն է», «Մեր երկրում իշխանափոխությունն այլևս իրականություն է» և նման նախադասությունների պակաս չի զգացվում: Բառերի անհարկի կիրառությունները, իհարկե, խրախուսելի չեն, ուստի պետք է խուսափել սխալ նախադասություններ կազմելուց:

Լեզվի պատմական զարգացման ընթացքում հայերենում տեղի է ունեցել շատ բառերի իմաստային ծավալի նեղացում՝ բառիմաստի նեղացում, երբ բառի իմաստային ծավալը նեղանում է բառի ավելի լայն իմաստի կամ իմաստների մասնավորման շնորհիվ: Պետք է նշել, սակայն, որ արդի հայերենի խոսակցական լեզուն այնքան էլ հարուստ չէ այդպիսի օրինակներով. բանավոր խոսքում, ի տարբերություն գրավորի, տեղի է ունենում բառիմաստի նեղացում բառերի՝ իրենց անհրաժեշտ իմաստային կիրառության ճանապարհով: Այսպես՝ գրիչ բառը, որ նշանակել է գրող, արտագրող, ծաղկող, այսօր մատնանշում է միայն այն առարկան, որով գրում են, այդպես և ուսուցիչ բառը, որ նշանակում է որևէ ուսմունքի հիմնադիր, հեղինակ, որևէ գիտելիք, արհեստ կամ արվեստ սովորեցնող մասնագետ, այժմ բանավոր խոսքում հիմնականում կիրառվում է դպրոցում դասավանդող, դասատու նշանակությամբ:

Բառիմաստի նեղացման օրինակ է պատգամավոր բառի իմաստի զարգացումը: Այն ունեցել է դեպուտատ, երեսփոխան, բանագնաց, ինչպես նաև հրեշտակ, առաքյալ, մարգարե իմաստները[1]: Այսօր թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում մնացել է միայն դեպուտատ՝ ժողովրդական ներկայացուցիչ իմաստը: Բառիմաստի նեղացման պատճառ կարող են դառնալ դրանց երկրորդական, երրորդական իմաստներով չկիրառելը, հետա-

[1] **Աւգիասյան Ա.,** Հայոց լեզվի հոմանիշների բառարան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967, էջ 537:

գայում նաև կիրառությունից դուրս թողնելը: Իսկ բառերի վերոնշյալ իմաստներով չկիրառելու պատճառ կարող է լինել լեզվում դրանց՝ առավել ընդունված և լայն տարածում ունեցող հոմանիշների առկայությունը լեզվի տարբեր ոճերում:

Գրաբարից մեզ փոխանցված բազմաթիվ բառեր փոխել են իրենց նախնական իմաստը և այսօր իմաստային այլ կիրառություն ունեն. այսպես՝ բյուր բառը, որ նշանակել է տասը հազար և թվական է եղել, այսօր թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում նշանակում է շատ, բազմաթիվ, իսկ որպես թվական կիրառելի չէ:

Բառիմաստի շրջումը, որի հետևանքով լեզվի պատմական զարգացման ընթացքում բառի իմաստը տրամագծորեն հակառակ իմաստ կամ իմաստներ է ձեռք բերում, լայն տարածում չունի ժամանակակից հայերենում, սակայն այդպիսի օրինակներ ևս կարող ենք գտնել: Այսպես՝ բառիմաստի շրջման օրինակ է այսօր քաղաքական բառապաշարում լայնորեն կիրառվող դիմադիր բառը, որը նշանակում է հակառակող, դիմադրող, հակառակորդ. այսօր դարձել է ընդդիմադիր բառի սխալ կիրառվող հականիշը: Այն կիրառում են համաձայն, կողմնակից իմաստով՝ հակադրելով ընդդիմադիր բառի նշանակությանը:

Բառիմաստի փոփոխություն է տեղի ունենում նաև այն ժամանակ, երբ բառի նախկին իմաստները մթագնում են՝ դառնալով երկրորդական, և դրանց փոխարեն առաջ են գալիս նոր, հիմնական իմաստներ: Օրինակ՝ պահպանակ բառը նախկինում նշանակել է զինվորի մարմինը պահպանող զրահ, հետագայում՝ գրքի բնագիրը մաքուր պահելու հարմարանք, իսկ ներկայումս՝ աչքերը ճառագայթումից պաշտպանելու նպատակով համակարգչի էկրանին կցված հարմարանք, ինչպես նաև՝ հակաբեղմնավորիչ միջոց: Պաստառ բառը նշանակել է աստառ, շորի կտոր, նկար, հետագայում՝ պատերին փակցվող թղթի երկար նկարազարդ շերտ, այժմ՝ նաև դասագործընթացում օգտագործվող դիդակտիկ նյութ՝ այսպես կոչված պլակատ: Ինչպես տեսնում ենք, այս դեպքում տեղի է ունեցել բառի վերաիմաստավորում:

Լեզվի զարգացման ընթացքում տեղի է ունենում նաև իմաստափոխություն իմաստների նմանության հիման վրա, այսինքն՝ կատարվում է իմաստափոխություն ըստ զուգորդության: Օրինակ՝ գումարում բառը թվաբանական գործողություն է, մաթեմատիկական հասկացություն, հետագայում ձեռք է բերել նաև կազմակերպում, հավաք, ժողով իմաստները (‹‹ՀՀ Ազգային ժողովի յոթերորդ գումարման ընտրությունները տեղի են

ունեցել 2018 թվականի դեկտեմբերի 9-ին»»[1]): Հիշողություն նշանակում է գիտակցության մեջ անցյալի տպավորությունները պահելու և վերականգնելու կարողություն, գիտակցության մեջ պահվող հիշողությունների ամբողջություն, այսօր այն ձեռք է բերել մի իմաստ ևս. նշանակում է համակարգչում զետեղված ամբողջ տեղեկատվությունը պահպանելու կարողություն: Ներկայումս լայնորեն կիրառվող տեսլական բառը, որի բառարանային նշանակությունն է տեսլապաշտ, գաղափարական, գաղափարապաշտ, մտատիպար, տեսակական /հզվդպ./[2] (բառարանում նշված է, որ բառը ածական է) այսօր թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում այլ նշանակություն է ձեռք բերել՝ ստանալով հայեցակարգ, ապագայի պլանավորում, նպատակ և նման իմաստներ: Ի դեպ, հիմնական իմաստը մթագնել է՝ տեղը զիջելով արհեստականորեն առաջ քաշված ու գնալով ավելի կենսունակ դարձող գոյականական նոր իմաստին:

Առաջ եկած նոր իմաստները հիմնականում չեն խանգարում լեզվի բնականոն զարգացմանը. լեզվական այս իրողությունները՝ որպես հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների արտացոլում, նպաստում են լեզվի զարգացմանը, տվյալ դեպքում՝ բառապաշարի հարստացմանը՝ համալրելով բառերի բազմիմաստային շարքերը:

Այժմ անդրանառնանք բառերի ձևիմաստային խմբերին՝ դրանց միջոցով հասարակական ամենատարբեր իրողությունների համատեքստում բառապաշարի իմաստաբանական տեղաշարժերը ցույց տալու նպատակով:

Բառերի ձևիմաստային խմբերի միջև գոյություն ունեն զանազան կապեր, որոնց շնորհիվ բառապաշարը ներկայանում է որպես փոխկապակցված, սերտ ամբողջություն: Այստեղ բառերը կարող են տարբեր փոխհարաբերությունների մեջ մտնել՝ ձևավորելով հոմանշային, հականշային, համանունային և հարանունային շարքեր: Այս տեսակետից հետաքրքիր նկարագիր ունեն հարանունները, որոնց՝ խոսքում ձեռք բերած նորանոր իմաստները երբեմն բառարանները չեն կարողանում արձանագրել, ինչի արդյունքում դրանց կիրառությունների սահմանները բանավոր խոսքում խախտվում են:

Մանուկ Աբեղյանն իր «Հայոց լեզվի տեսություն» աշխատության «Նույն բառի կրկնակներ և նրանց տարբերակումը» ենթաբաժնում[3] անդ-

---

[1] https://hy.wikipedia.org/wiki/ՀՀ_ԱԺ_7-րդ_գումարման_պատգամավորների_ցանկ: Այս էջը վերջին անգամ փոփոխվել է 2020 թվականի մայիսի 28-ին՝ ժամը 09:47-ին, Դիտումը՝ 02.07.2020:

[2] **Սուքիասյան Ա.,** Հայոց լեզվի հոմանիշների բառարան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1967, էջ 623:

[3] **Աբեղյան Մ.,** Երկեր, հ. Ջ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974:

բադառնում է որոշ բառերի կրկնակ ձևերի քննությանը, որոնք, հաճախ ձեռք բերելով տարբեր նշանակություններ, հարստացնում են լեզվի բառապաշարը: Հեղինակը նշում է այն ուղիները, որոնց միջոցով առաջանում են միևնույն բառի տարբեր ձևերը: Այդ բառերից մեկը, ժամանակի ընթացքում ձեռք բերելով այլ նշանակություն, պահպանում է բովանդակային ընդհանրությունը, այսինքն՝ այդպիսի բառազույգերի նշանակությունները հարակից են: Հարանունները՝ որպես բառերի ձևիմաստային առանձին խումբ, լեզվաբանների կողմից երկար ժամանակ չէին քննարկվում, սակայն արդի բառագիտության մեջ իրենց ուրույն տեղն ունեն: Հարանունները բանավոր խոսքում մեծապես կիրառվող բառազույգեր են, որոնք բանավոր խոսքում հաճախ շփոթ են առաջացնում: Համեմատենք հետևյալ բառազույգերը. հրատարակել-հրապարակել, ցուցում-ցուցմունք, զգացում-զգացմունք, հասկացություն-հասկացողություն, ամանորյա-ամենօրյա, տեղի տալ-տեղիք տալ, թոթովել-թոթվել, հրավեր-հրավերք, պատրաստակամություն-պատրաստականություն, պաշտոնական-պաշտոնեական, տնօրենություն-տնօրինություն, խմբային-խմբակային և այլն:

Ինչպես տեսնում ենք, նշված բառերի մեծ մասն ունի նույն արմատը, շատերը առաջացել են բառազույգերից մեկի հետագա հնչյունափոխության հետևանքով և ձեռք են բերել նախորդից տարբեր իմաստներ: Այդ է պատճառը, որ բանավոր խոսքում դրանք իմաստային շփոթ են առաջացնում: Այսպես՝ մենք հաճախ կարող ենք հանդիպել ընդգծված բառերի սխալ կիրառությունների. «Սերը երկնային զգացում է» (զգացմունք), «Մի քանի հասկացողություններ (հասկացություններ) անհասկանալի են ինձ», «Ես արդեն հրապարակել եմ (հրատարակել եմ) իմ հոդվածը», «Հարցազրույցին մասնակցելու հրավերք (հրավեր) եմ ստացել», «Վարդավառի տոնին միմյանց վրա ջուր լցնելու ավանդությունը (ավանդույթը) հասել է մինչև մեր օրերը», «Բժիշկները մանրամասնորեն քննարկեցին (քննեցին) հիվանդին և համապատասխան բուժում նշանակեցին», «Փորձառու մարզիչը վերջին ցուցմունքներն (ցուցումներն) էր տալիս իր մարզիկներին», «Նա, չիմանալով ինչ պատասխանել, թոթովեց (թոթվեց) ուսերը», «Տնօրենի որոշումը դժգոհության տեղի տվեց» (տեղիք տվեց), «Աշակերտներն իրենց երախտիքը (երախտագիտությունը) հայտնեցին ուսուցիչներին», «Ուսումնառության խմբակային (խմբային) մեթոդն այսօր շատ տարածված է աշխարհում» և այլն: Ինչպես տեսնում ենք, ընդգծված բառերի սխալ կիրառությունները բխում են դրանց և հարանուն ձևերի արտաքին և բովանդակային նմանությունից առաջ եկած շփոթից: Այսպես՝

- Զգացում նշանակում է ապրում, հույզ զգալու կարողություն, իսկ զգացմունք՝ մարդու ֆիզիկական ու հոգեկան զգացությունների ամբողջություն:

• Հասկացություն նշանակում է իրականության առարկաների և երևույթների ընդհանուր և էական հատկանիշներն արտահայտող տրամաբանական կերպով տարորոշված գաղափար, հասկացողություն՝ հասկանալու և ըմբռնելու կարողություն։

• Հրապարակել նշանակում է հրապարակ հանել, լուր տարածել, հրատարակության միջոցով տպագրվածը տարածել հաարակության մեջ, հրատարակել՝ տպագրել և լույս ընծայել։

• Հրավերք՝ հյուրասիրություն, ճաշկերույթ, հացկերույթ, հրավեր՝ մի տեղ գնալու, մի բանի ներկա լինելու կամ մասնակցելու առաջարկ՝ խնդիրք։

• Պաշտպանել նշանակում է թշնամու հարձակումից՝ ոտնձգություններից, վնասակար գործողություններից ապահովել, անվտանգություն ապահովել, պահպանել՝ անվնաս՝ առանց կորուստի կամ փչացման պահել։

• Ավանդություն նշանակում է ավանդազրույց, ժողովրդական բանահյուսության մի տեսակը՝ փոքրածավալ արձակ ստեղծագործություն, ավանդույթ՝ պատմականորեն հաստատված կարգ, օրենքի ուժ ստացած սովորույթ։

• Քննել նշանակում է որևէ ուսումնական առարկայից քննության ենթարկել, առողջական վիճակը հետազոտել՝ պարզել, հարցաքննել, քննարկել՝ քննության առնել, ուսումնասիրել, հետազոտել, քննական մոտեցումով հետազոտել։

• Թոթվել նշանակում է թափ տալ, թոթափել, թափահարել, թոթովել՝ թոթով լեզվով խոսել, որոշ հնչյուններ չարտասանել կամ սխալ արտասանել, թլվատել։

• Ցուցմունք նշանակում է վկաների, մեղադրյալի՝ դատարանում տված բացատրությունների ու տեղեկությունների ամբողջությունը ըստ գործի էության, ցուցում՝ հրահանգ, առաջադրանք, պատվեր այսպես կամ այնպես վարվելու, գործելու մասին, տեղի տալ նշանակում է տեղը տալ, զիջել, նահանջել, ընկրկել, տեղիք տալ՝ առիթ տալ, պատճառ դառնալ[1]։

Քննարկենք խմբային-խմբակային բառերի գործածության սահմանները։ Հեռուստահաղորդումներում, կայքերում, նաև մեր ուսումնասիրությունների ընթացքում նկատել ենք այս բառերի գործածության սխալներ. խմբակային նշանակում է խմբակին վերաբերող՝ հատուկ, խմբակի կամ խմբակային բնույթ կրող, խմբակ հանդիսացող, իսկ խմբային նշանակում է խմբական, խմբով կատարվող՝ արվող, նաև խմբակային։

[1] Հարանուն բառերի բացատրությունների հիմնական մասը վերցված է Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանից», Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1976։

Իրականում խմբային-խմբակային հարանունային զույգը իրականում հարանունային զույգ չէ, այլ հոմանշային, և այսօրվա ծայրահեղացված տեսակետը, թե խմբային բառի իմաստը խմբով աշխատանքն է, իսկ խմբակային բառը միայն բացասական երանգ ունի և գործածվում է միայն մի քանի հոգով հանցագործություն կատարելու իմաստով, ընդունելի չէ: Կարծում ենք, բառի սխալ կիրառությունն առաջ է եկել այդ բառերի իմաստների շփոթից:

Եթե մի դեպքում գրավոր խոսքն ավելի ուշադիր և զգույշ է բառերի ճիշտ կիրառության հարցում, և բառերի աղավաղումների ու սխալ կիրառությունների հանդիպում ենք գերազանցապես բանավոր խոսքում, ապա հարանունների դեպքում սխալ գործածությունից պաշտպանված չէ թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքը: Այսինքն՝ անգամ գրավոր խոսքում նույնիսկ բարձրագույն կրթություն ունեցող մարդկանց կողմից նկատվում են հարանունների սխալ կիրառություններ: Պատճառները տարբեր են. առաջին և հիմնական պատճառն այն է, որ սրանք լեզվում եղել են հոմանիշներ. այս է վկայում Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանը», որտեղ վերոնշյալ հարանունները բերված են որպես հոմանիշներ, մինչդեռ այսօր թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում դրանք իրենց իմաստներով հստակորեն առանձնացված կիրառություններ են: Գրական ու խոսակցական լեզվում այս բառերի՝ իրենց ճիշտ իմաստներով կիրառությունները կամրանան հաճախակի և ճիշտ գործածվելու դեպքում, իսկ հակառակ պարագայում այդ սխալ գործածությունները կամրապնդվեն խոսքում՝ դառնալով չարիք լեզվի համար:

Բացի հարանունների սխալ կիրառությունից՝ գրավոր և բանավոր խոսքում հանդիպում են բառերի աղավաղված տարբերակների կիրառություններ, որոնք արհեստական, կեղծ հարանունների տպավորություն են թողնում: Խոսակցական լեզվում կարելի է լսել նման նախադասություններ. «Լեռնագնացները, հաղթահարելով հերթական բարձրունքը, շարունակեցին իրենց վերելքը», «Ներկա գտնվողները երիտասարդի ելույթը ըստ արժանավույն գնահատեցին», «Այդ որոշումն ամենևին ձեռնատու չէր աշխատողներին», «Նրա բարյացկամ վերաբերմունքը բոլորիս զարմացրեց», «Կազմակերպության հոգեբարձուների խորհուրդը որոշեց օգնել անապահով ընտանիքներին», «Այդ արարքով նա վարքաբեկեց թե՛ իրեն, թե՛ իր ընտանիքին», «Ուսանողները այսուհետ չեն կարողանա օգտվել տարեկետման իրավունքից», «Հուղարկավորության հաջորդ օրը կլինի հանգուցյալի ինքնահողը» և այլն: Բերված օրինակները բառերի աղավաղված կիրառությունների ընդամենը մի փոքր մասն են: Հայերենը չունի բարձունք-բարձրունք, արժանվույն-արժանավույն, բարյացակամ-բարյացկամ, հոգաբարձու-հոգեբարձու, վարկաբեկել-վարքաբեկել, տարկե-

տում-տարեկետում, էգնահող-ինքնահող հարանունային զույգեր: Բերված բառերի երկրորդ տարբերակներն իրականում գոյություն չունեն. դրանք չիմացության արդյունք են:

Այսպիսով, հարանուն բառերը իրենց տեղին և ճիշտ գործածությամբ խոսքին, հատկապես գեղարվեստական գրականությանը հաղորդում են որոշակի երանգավորում՝ չափածո ստեղծագործություններում ստեղծելով հետաքրքիր հանգավորումներ: Դրանք նաև շուտասելուկների, առածների համար եզակի գոհարներ են և կարող են հարստացնել խոսքի ցանկացած ոճ:

Ինչպես համոզվեցինք, իմաստափոխությունը շարունակական գործընթաց է, որն ուղեկցում է լեզվին իր զարգացման ողջ ընթացքում: Բառերի իմաստափոխություններն արդի հայերենում կարող են հանգեցնել դրանց նորանոր, երբեմն սխալ կիրառությունների: Այդ սխալներից խուսափելու համար անհրաժեշտ է ներկայացնել և սովորեցնել այդ բառերի ճիշտ իմաստները և գործածությունները խոսքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աբեղյան Մ.,** Երկեր, հ. Ջ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1974, 848 էջ:
2. **Ամատյան Հր.,** Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Հայպետհրատ, Երևան,1951, 610 էջ:
3. **Եզեկյան Լ.,** հայոց լեզվի ոճագիտություն(ուսումնական ձեռնարկ), Երևանի համալս. հրատ., Երևան, 2003, 376 էջ:
4. **Մարգարյան Ալ.,** Ժամանակակից հայոց լեզու (Բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Երևանի համալս., հրատ., Երևան, 1990, 408 էջ:
5. **Սուքիասյան Ա.,** Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Երևանի համալս., հրատ., Երևան, 1982, 440 էջ:
6. **Աղայան Է.,** Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան,1976, 1616 էջ:
7. **Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ա.,** Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևանի համալս. հրատ., Երևան, 1975, 616 էջ:
8. **Սուքիասյան Ա. Մ.,** Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1967, 685 էջ:

Гаяне Варданян, “Роль семантики в обогащении словарного запаса языка” - В статье обсуждаются способы обогащения языка новыми словами. Словосозидательный процесс является непрерывным процессом.

Научно-технический и культурный прогресс в общественной жизни, изменения в социальных отношениях и в экономике оказывают большое влияние на обогащение языковой лексики. Существуют различные способы обогащения словарного запаса. Со стороны лингвистов отдельные типы изменения в значении слов: расширяемость значения слова, реверсирование, переосмысление слова, функциональное переосмысление слова, изменение смысла слова с помощью соединения и сочетания - также очень актуальны сегодня. Такие изменения в значении слов проходят долгий путь, становясь следствием постепенного накопления качественных изменений и обогащая словарный запас языка.

Gayane Vardanyan, "The role of semantic shift in enriching the vocabulary of the language" - In the article are discussed about the ways to enrich vocabulary. The vocabulary formation is a non-linear process. Scientific-technical, cultural and economic progress in society have marked a great impact of vocabulary enrichment. There are many ways of vocabulary enrichments. Linguists have a separate role in vocabulary enrichment and word meaning modifications: extensibility of the meaning of the word, reversal, rethinking of the word, functional rethinking of the word, changing the meaning of the word by means of connection and combination, are very relevant today. Such kind of changes pass a long journey and become a result of the gradual accumulation of qualitative changes, thus enriching the vocabulary of the language.

ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ-20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

ԱՐՏԱՇԵՍ ՂԱԶԱՐՅԱՆ

Բանալի բառեր - ավետարանական համայնքներ, հայ ավետարանականների Արարատյան միություն, Արևելյան Հայաստան, ավետարանական կրթական հաստատություններ, քարոզչություն, աղոթատուն, «Մշակ» թերթ:

Արևելահայերի շրջանում ավետարանական համայնքները ձևավորվեցին 19-րդ դարի կեսից: Արևելահայոց մեջ ավետարանականության տարածմանը նպաստեցին Արևելյան Հայաստանի մի շարք շրջաններում ավետարանական առանձին խմբերի ու անհատների գոյությունը, որոնք դավանում էին հայկական միջավայրում իր առանձնահատուկ գաղափարական տեսքը ստացած ավետարանական վարդապետություն: Հետագայում այդ անհատները դարձան արևելահայ առաջին ավետարանական համայնքների, կազմավորված ավետարանական եկեղեցիների հիմքը, սկզբնական տարրը:

Դեռևս 1823 թ. Շուշիում հաստատված Շվեյցարիայի Բազել քաղաքի «Ավետարանական քարոզչական ընկերության» քարոզիչներն իրենց գաղափարների հետևողներ էին գտել նաև Ղարաբաղից և Շիրվանի նահանգից (Շամախի) դուրս: Սևանի միաբանությունից երկու սարկավագ հարեցին բողոքականությանը: Այդ մասին Սևանի վանահորը նամակով տեղեկացրել էր Էջմիածնի միաբան Հովհաննես վրդ. Շահխաթունյանցը և զգուշացրել այդ վարդապետության վտանգավորության մասին[1]: Էջմիածնում բազելյան քարոզիչներին ավելի ընդդիմացան, երբ նրանք սկսեցին աշխարհաբարով Ավետարանի հրատարակության թույլտվություն խնդրել: Հայ եկեղեցականներն ամեն միջոցով խափանում էին նրանց գործունեությունը, ինչ նպատակի էլ որ այն ուղղված լիներ (Ավետարանի թարգմանություն, աշխարհաբարի ուսուցում, կրթություն և այլն):

[1] Տես՝ **Մեղրակյան Ա.,** Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի կենսագրությունը, Ս.Պետերբուրգ, 1898, էջ 226:

Բազելյան բողոքական քարոզիչների գործունեությունն աննշան էր Արևելյան Հայաստանում, և Շուշիից ու Շամախիից դուրս, գրեթե ոչ մի հետևանք չթողեց ավետարանականության տարածման գործում: Արևելյան Հայաստանում, բացառությամբ Ղարաբաղի և Շամախիի, ի տարբերություն Արևմտյան Հայաստանի, Թիֆլիսի և Կովկասի այլ վայրերի, ավետարանական շարժումը սկզբնավորվել է առանց օտար քարոզիչների գործունեության:

Ավետարանականությունը սկզբում տարածվեց Վաղարշապատում: Դա ժամանակի մամուլը համարել է «զարմանալի հակադիպութիւն», քանի որ «բողոքականութիւնն իւր հիմքը դրել է Էջմիածնի աւելի մոտ գիւղերում, ինչպես օրինակ, Վաղարշապատում (մոտ 20 տուն), Սամաղարում (մոտ 100 տուն), Քէօրփալու (մոտ 15 տուն) և մի քանի այլ գիւղեր»[1]: Թերթը բողոքականության տարածման պատճառ է համարում այն, որ ժողովուրդը կարոտ է քարոզի և որ «քարոզ, մի քաղցր, մխիթարական խօսք լսած չլինելու պատճառով են փոխում հաւատը»: Վաղարշապատից «Մշակ» շաբաթաթերթի նամակագիրն էլ սխալ է համարում «Մեղու Հայաստանի» թերթի այն պնդումը, թե հայերի տգետ մասն է ընդունում ավետարանականություն: Նա առաջարկում է, որ մի գյուղացի հայ ավետարանական և նույն գյուղի առաքելական քահանան խոսեն իրար հետ կրոնի, արտաքին խնդիրների և այլ հարցերի շուրջ, և այդ ժամանակ կերևա, թե «որն է առողջ դատողութեան տէր և օրինաւոր հասկացութիւն ունեցողը»[2]: «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունին էլ խոսելով Փոքր Ասիայում և Հայաստանում հայ բողոքականների մասին, գրում էր, որ «մեզ, լուսաւորչական հայերիս, մնում է ուսումնասիրել բողոքականների հասարակական և ազգօգուտ գործունէութեան կազմակերպութեան և եղանակի ձեւերը և օրինակ առնել նրանցից»: Գրիգոր Արծրունին նշում էր, որ հակառակ դեպքում մենք հետ կմնանք ավետարանական եղբայրներից և «կուշանանք ամբոխի վրա մեր ազդեցութիւնը ներգործելու մէջ»[3]:

Վաղարշապատում ավետարանականությունը տարածվել է 1850 թ., առանց օտար քարոզիչների օգնության, հենց հոգևորական դասին պատկանող մեկի միջոցով[4]: Այդ միաբանը Կ.Պոլսից եկած Ղազար վարդապետն էր, որի գործունեության սկիզբը արխիվային փաստաթղթերից մեկը նշում է 1848թ.[5]: Նրան միացան Ասլիանց Մխսի Սարգիս անունով կա-

[1] «Նոր դար», Թիֆլիս, 1887, N:190:

[2] «Մշակ», Թիֆլիս, 1880, N:152:

[3] **Արծրունի Գր.,** Բողոքականների գործունեութիւնը Փոքր Ասիայում, «Մշակ», 1878, N:179:

[4] «Մշակ»,1880, N:152:

[5] ՀԱԱ, ֆ. 1, ց. 9, գ. 192, թ. 73, տես նաև՝ Քասունի Ե., Հայ աւետարանականութեան նպաստները հայ ժողովրդի կրօնական կեանքին, Բեյրութ, 1946, էջ 4: Նույնի, Լուսաշաւիղ. Պատմութիւն հայ աւետարանական շարժման, 1846-1946, Բեյրութ, 1947, էջ 233-234:

թողիկոսարանի տպագրիչը, Էջմիածնի վանքի մառանապետ, ավելի ուշ՝ Վաղարշապատի ավետարանականների հովիվ Մարտիրոս Ցրտատարյանը, նրա եղբայր Ասատուրը, հյուսն Արսենը, կույր աշուղ Շիրինը և ուրիշներ[1]: Մարտիրոս Ցրտատարյանը հաճախ էր շրջում Ալեքսանդրապոլի ու Կարսի գյուղերում և տարածում էր ավետարանականությունը: 1888թ. նա ձեռնադրվեց Վաղարշապատի, Երևանի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Արարատյան ավետարանական համայնքների ընդհանուր երեց[2]: Ավետարանական համայնքներ կազմավորվեցին Վաղարշապատի շրջակա գյուղերում՝ Սամաղար, Քեորփալու, Կոշ, Հաջիղարա և այլն[3]: 1871 թ. Վաղարշապատի ավետարանականները, հետևելով շամախեցիների օրինակին, որոշեցին դիմել կառավարությանը՝ առանձին բողոքական հասարակություն ճանաչվելու համար: Նրանք դիմեցին նաև Ավետարանական-լյութերական եկեղեցիների վերատեսուչ ֆոն Լեզեդովին, որը բնակվում էր Թիֆլիսում, սակայն մերժում ստացան[4]:

Այնուհանդերձ, Վաղարշապատում և շրջակա գյուղերում ավետարանականությունը գնալով տարածվում էր: 1880 թ. Վաղարշապատում կար 30 տուն ավետարանական, նույնքան էլ՝ Սամաղարում[5] (այժմ՝ Գեղակերտ): Դեռևս 1871թ.-ից Սամաղարի բնակիչները բազմիցս դիմել էին պետական մարմիններին՝ ավետարանականություն ընդունելու խնդրանքը բավարարելու համար, սակայն այդ դիմումները մնում էին անպատասխան: Բայց արդեն 1875թ. օգոստոսին Սամաղար գյուղից 30 հոգի (17 տղամարդ և 13 կին), երբ «Լուտերի դավանությունը» ընդունելու խնդրանքով դիմեցին Էջմիածնի ոստիկանություն՝ Կովկասի փոխարքայի կողմից իրենց խնդրանքը վավերացնելու համար, ստացան թույլտվություն[6]: Եվ դա այն դեպքում, երբ Էջմիածնի հոգևորականությունն անտեղյակ էր դրանից, երկար ժամանակ չէր իմացել ու չէր տեսել, որ այդքան մարդ միասին ցանկանում է փոխել դավանանքը: Իզուր չէին վաղարշապատցիները դժգոհում հայ եկեղեցականներից, «Ս. Էջմիածնի գիտնական վարդապետներից», որոնք ոչ մի անգամ չայցելեցին իրենց, չծանոթացան իրենց հոգսերին և չփորձեցին համոզել վերադառնալու Հայ եկեղեցու գիրկը[7]: Վաղարշապատում և շրջակայքում «քարոզի խիստ պետք է զգացվում», - գրում էր «Նոր դար» թերթը, ապա շարունակում, որ 1000 տուն ծխից 300 տունն արդեն կրոնափոխ է եղել, իսկ Սամաղար գյուղի մասին

[1] Տես՝ **Քասունի Ե.,** Հայ աւետարանականութեան նպաստները…, էջ 4-5:
[2] Տես՝ **Պապիկյան Սուրեն**, Նամակ Երևանից, «Աւետաբեր», Կ.Պոլիս, 1913, էջ 163-164:
[3] Նույն տեղում, տես նաև՝ Քասունի Ե., Հայ աւետարանականութեան նպաստները…, էջ 5:
[4] Տես՝ **Ղուկասյանց Հ.,** Բողոքականութիւնը Կովկասու Հայոց մէջ, Թիֆլիս, 1886, էջ 161-165:
[5] «Մշակ»,1880, N:152:
[6] «Մշակ»,1875, N:36:
[7] «Մշակ»,1880, N:152:

էլ նշում, որ «համարեա ամբողջապէս կրօնափոխ է եղած»[1]: Մեկ այլ տեղ կարդում ենք, որ Սամաղար գյուղի հայ առաքելական համայնքն ավելի փոքրաթիվ է, քան գյուղի հայ ավետարանական համայնքը[2], իսկ հայ ավետարանական հասարակության «տանուտեր» է հիշվում պարոն Կիրակոս Ղազարյանը[3]:

1890 թ. Սամաղարում բացվել է գյուղական մեկդասյա դպրոց: Սկզբնապես շենքը հատկացվել է հայ ավետարանականներին՝ հոգևոր պաշտամունքների համար, այնուհետև ծառայել թե իբրև աղոթարան և թե դպրոց, որտեղ սովորում էր ավետարանական և առաքելական դավանության հիսուն աշակերտ: Դպրոցում սովորում էին տարբեր տեղերից, անգամ Ալեքսանդրապոլից եկածները, իսկ այդ կրթական հաստատությունը ղեկավարվում էր «նորագույն մանկավարժական մեթոդների արժեքը հասկացող ղեկավարներով»[4]: Դպրոց այցելած և դասավանդմանը ներկա գտնված «Մշակի» հոդվածագիրը փաստում էր այն համերաշխությունը, որ տիրում էր ավետարանական և առաքելական հայերի միջև: Նա գրում էր, որ եթե մի քանի տարի առաջ բողոքական հայը հալածվում էր իր ազգակից առաքելական հայից, համարվում ազգուրաց, ապա այժմ ուրախալի է տեսնել, որ նույն առաքելական հայն իր որդուն ուղարկում է ավետարանական հայի դպրոցը, ըմբռնել է իր եղբոր հետ համերաշխ ապրելու անհրաժեշտությունը, մոտեցել այն ճշմարտությանը, թե բողոքական հայն էլ նույնքան հայ է, որքան առաքելականը, և դավանությունը չպետք է երկպառակության առիթ դառնա[5]: Ավետարանականությունը տարածվել էր նաև Էջմիածնի գավառի Ապարանի գյուղերում, քանի որ տեղի բնակչությունը «հարազատ աղբիւրը ցամաքած տեսնելով, իւր հոգու ծարաւը սկսել է յագեցնել օտար աղբիւրից»[6]:

Վաղարշապատից և նրա շրջակայքից ավետարանականությունը տարածվեց Սուրմալուի, Նախիջևանի, Նոր Բայազետի, Ալեքսանդրապոլի շրջաններում[7]:

Շիրակի գավառում ավետարանականության կենտրոններից էր Արխվելի գյուղը (Երրորդ Արխվելի, Արխվալի, այժմ՝ գ. Լեռնանիստ, Ախուրյանի տարածաշրջան), որի անունը փոխեցին Ֆարմասոնի (Արևելյան Հայաստանում այդպես էին անվանում ավետարանականներին): Արխվելի գյուղի բնակիչները, որոնց մեջ թոնդրակեցիների հետևորդներ

[1] «Նոր դար», 1885, N:157:
[2] «Մշակ»,1882, N:49:
[3] «Մշակ»,1882, N:35:
[4] «Մշակ»,1891, N:148:
[5] Նույն տեղում:
[6] «Արձագանք», Թիֆլիս, 1894, N:16:
[7] Տես՝ **Քասունի Ե.,** Լուսաշաւիղ, էջ 234:

կային, գաղթել էին Արևմտյան Հայաստանի Խնուս գավառի Չևիրմե գյուղից: Էջմիածնի Ս. Սինոդը նրանց բնորոշել է որպես «թոնդրակյան աղանդ»[1]: Նրանք ավելի ուշ հարեցին բողոքականությանը: Գյուղում ջաջուռցի տիրացու Գևորգ Սարգսյանն իր մի քանի համակիրների հետ 1830-ական թթ. քարոզում էր «թոնդրակյան աղանդը»[2], իսկ դրանից տարիներ առաջ բազմաթիվ արխվելցիներ մկրտվել ու հաղորդության արարողություններ էին անում ըստ «Բանալի ճշմարտության» գիրքի[3]: Նրանք հետևորդներ ունեին նաև Ալեքսանդրապոլում[4], որոնք Արխվելի գյուղում և Ալեքսանդրապոլում գաղտնի դավանում էին իրենց ուսմունքը[5]: Այդ ուսմունքը, ըստ Էջմիածնի Ս.Սինոդի, մոտ է ավետարանական-լյութերական եկեղեցու վարդապետությանը[6]: 1837 թ. Ալեքսանդրապոլի առաջնորդ Նիկողայոս եպիսկոպոսը խնդրում է, որպեսզի Գևորգ Սարգսյանը, Սուվար Հովհաննիսյանը, Տոնո Կիրակոսյանը և Հեպո Մեհրոյանը, որոնք ղեկավարներն էին, հեռացվեն Արխվելի գյուղից, քանի որ կարող են շեղել գյուղի ժողովրդին[7]: Նրանց անվանում էին նաև «նոր թոնդրակեցիներ»[8], որոնց մոտ էլ հայտնաբերվել էր ավետարանականություն դավանող և քարոզող «Բանալի ճշմարտության» գիրքը[9]:

Վաղարշապատից ավետարանականությունը Ալեքսանդրապոլում 1850-1851 թթ. տարածել է կույր աշուղ Շիրինը (Հովհաննես), որը դարձել էր Ալեքսանդրապոլի և շրջակա գյուղերի (Ղուլիճան, Դյուզքյանդ, Ղութնի-Ղըշլաղ, Եգյանլար և այլն) հայ ավետարանականների ավետարանիչ: Նրան գործակցում էին աշուղ Մալիլը (Գալուստ Սարգսյան), աշուղ Հավեսին (Թադեոս Հովհաննիսյան), Աղաբար Զաքարյանը և ուրիշներ[10]: Ալեքսանդրապոլի աշուղները կազմել էին աշուղական խումբ և ավետարանականություն էին տարածում Ալեքսանդրապոլում ու շրջական գյուղերում: Նրանք հիմնականում երգեր էին հորինում սուրբգրային թեմաներով և երգում ժողովրդի մեջ: Բացի այդ, ծածուկ հավաքվում էին որևէ մե-

---

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 59, թ. 1-14:

[2] Նույն տեղում, թ. 14:

[3] Նույն տեղում, թ. 103-103 շրջ.:

[4] Տես՝ **Զամինյան Աբր.,** Հայոց եկեղեցու պատմութիւուն, Նոր-Նախիջևան, 1909, էջ 220:

[5] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 59, թ. 69-69 շրջ.:

[6] Նույն տեղում, թ. 56:

[7] Նույն տեղում, թ. 124 շրջ.:

[8] Տես՝ **Երիցյան Ալ.,** Թոնդրակեցի հայք մեր օրերում, «Փորձ», Թիֆլիս, 1880, N:10, էջ 91-132:

[9] Այս մասին մանրամասն տես՝ **Ղազարյան Ա., Լևոնյան Ռ.,** Հայաստանեայց Ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Ե., 1999, էջ 41-59, տես նաև՝ **Օհանջանյան Ա.,** «Բանալի ճշմարտության» երկը, Ե., 2015:

[10] Տես՝ **Ղուկասյանց Հ.,** նշվ. աշխ., էջ 170:

կի տանը և կարդում Աստվածաշունչ, Զմյուռնիայում ավետարանականների տպագրած զանազան կրոնական գրքեր:

Աղբյուրների վկայությամբ 1852 թ. պարսկահպատակ Աբրահամը, ով Հին Նախիջևանի վերաբնակիչ էր, եկած Կարին քաղաքից, Ալեքսանդրապոլում քարոզում էր «Լուտերի աղանդը»[1]: 1868-1869 թթ. հայտնի էր Առաքել Մարտիրոսյանը, որն Ալեքսանդրապոլում զբաղվում էր քարոզչությամբ, իսկ «ժողովրդին մոլորեցնելու» համար նրա դեմ հարուցվել էր քրեական գործ[2]:

Պատմաբան, հրապարակախոս Դավիթ Անանունը (Տեր-Դանիելյան) նշում է, որ Ալեքսանդրապոլում ավետարանականության խիստ հակառակություն էին ցույց տալիս արհեստավոր վարպետները, մինչդեռ դեպի նոր դավանանքը հակում ունեին վարպետացուները (ենթավարպետները-քարդահները) և հասարակ ժողովուրդը: Դ. Անանունը դա բացատրում է նրանով, որ վարպետները ապահով էին, այնինչ ենթավարպետները տնտեսական կախյալ վիճակի մեջ էին գտնվում: Տնտեսական ներհակությունն այստեղ ընդունում էր կրոնական գժտության և անհամաձայնության կերպարանք: Ալեքսանդրապոլում ենթավարպետ արհեստավորները «զգում էին իրենց վիճակի առանձնահատկությունը և կրոնական անհամաձայնությամբ էին դրսևորում տնտեսական հողի վրա մթերված դժգոհությունը»[3]: Դ. Անանունը հայության մեջ ավետարանականության ծավալումը համարում էր «որպես արդյունք այն վտանգի, որ սպառնում էր մանր արհեստին առևտրական խոշոր կապիտալը և զարգացող գործարանային արդյունաբերությունը», ուստի «նրանք երկյուղածորեն կառչում էին կրոնին, մանավանդ որ նա պահեցողության, խնայողության և ողորմածության ուսմունք էր նաև»[4]:

Ալեքսանդրապոլի ավետարանականները, ինչպես ամենուրեք, ենթարկվում էին հալածանքների, որոնք մեծ արձագանք էին գտնում հայ առաջավոր մտավորականների շրջանում: Նրանք հատկապես «Մշակ» շաբաթաթերթի էջերում առաջ էին քաշում և պաշտպանում կրոնական ազատության գաղափարները, դատապարտում ավետարանականների հանդեպ հալածանքները և խտրական վերաբերմունքի դրսևորումները: Ալեքսանդրապոլից գրված մի նամակի առիթով, որտեղ պատմվում էր 1880թ. մարտին քաղաքում հայ ավետարանականների հալածանքների մասին, Գր.Արծրունին կոչ էր անում հայ հասարակության «բարեմիտ մե-

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2859, թ. 6-8:
[2] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5196, թ. 4-11:
[3] **Անանուն Դ.,** Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870), հ. 1, Բաքու, 1916, էջ 241:
[4] Նույն տեղում:

ծամասնությանը» անտարբեր չմնալ անիրավություն տեսնելով և ամեն ջանք գործադրել անկարգություն անողներին զսպելու համար: Ավետարանականների դեմ հալածանքները նա համարում էր մարդկային արժանապատվությունը ստորացնող, միջնադարին բնորոշ գործողություններ: Նա կոչ էր անում հրաժարվել արյունակից եղբայրներին հալածելուց և շեշտում միմյանց սիրելու, միմյանց օգնելու և հանդուրժելու անհրաժեշտությունը[1]: Հալածանքների պատճառով Ալեքսանդրապոլի ավետարանականները մտադիր էին մեկնել Կարս, մինչդեռ նրանք ցանկանում էին գումար հավաքել Վանի սովյալ եղբայրներին օգնելու համար, սակայն վախից նրանցից շատերը հաջորդ օրը չներկայացան աղոթարան[2]:

Ալեքսանդրապոլի գավառի գյուղերից իր հայ ավետարանական համայնքով հայտնի էր Ղուլիճան գյուղը (այժմ՝ Սպանդարյան, Արթիկի տարածաշրջան), որը բաղկացած էր 50 ծխից և երեք դավանության պատկանող բնակիչներից: Դրանցից 1/10-ը մահմեդական թուրքեր էին, կեսը՝ հայ ավետարանականներ, մնացածը՝ առաքելական հայեր: Այստեղ ավետարանականությունը տարածվել է 1870-ական թթ. վերջին՝ տեղի Սարգիս և Հարություն քահանաների տգիտության պատճառով: Աղբյուրը նշում է, որ Ղութնի-Ղըշլաղ (այժմ՝ Հովտաշեն, Արթիկի տարածաշրջան) գյուղից ոմն Աբիսողոմ Բաղդիյանց, օգտվելով քահանաների և բնակիչների մի մասի երկպառակություններից, գյուղում տարածել է ավետարանականությունը[3]: 1890-ական թթ. և 1900-ական թթ. սկզբին Ալեքսանդրապոլի Վերին Ղանլիճա գյուղի ավետարանիչն էր Հարություն Մարտիկյանը, որը գործել է նաև Երևանում, իսկ Հաջի Ղարա և Ֆրանգանոց գյուղերում ավետարանիչն էր Հաջի Հովհաննես Բարշամյանցը:

Կարսի նահանգում, որն Արևելյան Հայաստանի մի մասն էր և գտնվում էր ռուսական կայսրության կազմում, ավետարանականությունը տարածվել է Ալեքսանդրապոլի և Շիրակի հետ գրեթե միաժամանակ: Կարսի հայ ավետարանականներն ունեին իրենց եկեղեցին և սերտ կապերի մեջ էին Արևմտյան Հայաստանի հայ ավետարանական եկեղեցիների հետ: Ըստ Ալ. Երիցյանի, 19-րդ դարի 70-ական թթ. վերջին Կարսում, Օվայում, Բասենում և Ալաշկերտում միասին կար 33 տուն ավետարանական (117 հոգի արական և 84 հոգի իգական սեռի բնակիչներ, ընդամենը՝ 201 հոգի)[4]:

Ալեքսանդրապոլի, Կարսի և շրջակա գյուղերի հայ ավետարանականները ենթարկվելով հալածանքների, դիմեցին կառավարությանը՝ բնակության համար Կարսի նահանգի անբնակ գյուղերից մեկը իրենց

[1] Տես՝ **Արծրունի Գր.,** «Գոնե այժմ ամաչէինք», «Մշակ»,1880, N:56:

[2] Նույն տեղում:

[3] «Մեղու Հայաստանի», 1883, N:86:

[4] Տես՝ **Երիցյան Ալ.,** Բողոքականութիւնը Տաճկական Հայաստանում, «Փորձ»,1879, N:2, էջ 109:

հատկացնելու խնդրանքով: Կառավարության միջնորդությամբ ու արտոնությամբ նրանք ապաստանեցին Կարսի նահանգի Ղարաղալա գյուղում: Ըստ Հ.Ղուկասյանցի, 1882 թ. այնտեղ հաստատվեցին 48 տուն հայեր, որոնց մեջ կային ավետարանական-լյութերականներ, հունադավաններ, բապտիստներ (մկրտականներ)[1]: Իսկ 1886 թ. տվյալներով գյուղը բաղկացած էր 50 տնից, որից 41 տունը հայ ավետարանականներ էին[2]: Ղարաղալա գյուղում կային նաև Արևմտյան Հայաստանից գաղթած հայ ավետարանականներ: 1894թ. նշվում էր հայ ավետարանական 18 ընտանիք և ևս 8 ընտանիք, որոնք վերադարձել էին Հայ առաքելական եկեղեցու գիրկը[3]: Շնորհիվ վերաբնակիչների Ղարաղալա փոքր և աննշան գյուղը մեծացավ, հարստացավ և վերածվեց մեծ ավանի: Կենցաղավարությունը Ղարաղալայում շատ պարզ էր, ոգելից խմիչքներ և ծխախոտ գրեթե չէր օգտագործվում, բնակիչներն ապրում էին համերաշխ և փոխադարձաբար օգնում էին միմյանց: Աշխատասիրության շնորհիվ նրանք կարողացան հաղթահարել աղքատությունը և հասնել հաջողությունների[4]: 1893թ. ուսուցիչ Խ.-Մառանկոզյանը գյուղում բացել է մասնավոր մեկդասյա երրորդ կարգի երկսեռ ուսումնարան, որտեղ հաճախում էին 22 տղա և 11 աղջիկ: Իշխանության հաստատած ծրագրով դպրոցում շաբաթական վեց ժամ դասավանդվում էր հայոց լեզու[5]: Ղարաղալայում 1890-1900-ական թթ. քարոզել են պատ. Ղազար Ղազարյանը, վեր. Սարգիս Լևոնյանը (քարոզել է նաև Կարսում և Ալեքսանդրապոլի գյուղերում) և վեր. Արշակ Հյուսյանը: Այդ գյուղի բնակիչները 1918թ., երբ թուրքերը գրավեցին այն, գաղթեցին Ամերիկա[6]: Ավետարանականությունը տարածված էր նաև Կարսի մոտակա Խանի գյուղում[7]:

19-րդ դարի վերջից, հատկապես 1900-ական թթ. սկզբից, ավետարանականության կենտրոնը Արևելյան Հայաստանում դառնում է Երևանը: Երևանի ավետարանականների մասին ամենահին տեղեկությունը վերաբերում է 1867 թ., որտեղ այդ ժամանակ միայն երկու տղամարդ և երկու կին ավետարանականներ կային, իսկ 1871 թ. արդեն 80 տղամարդ հետևում էին ավետարանականությանը[8]: Պետք է նշել, որ Երևանի նամակագիրներից մեկը «Մշակին» հայտնում է, որ Երևանում ավետարանակա-

[1] Տես՝ **Ղուկասյանց Հ.,** նշվ. աշխ., էջ 171:
[2] «Նոր դար», 1886, N:140:
[3] «Նոր դար», 1894, N:109:
[4] «Մշակ»,1914, N:181:
[5] «Նոր դար», 1894, N:109, «Մշակ»,1893, N:9:
[6] Տես՝ Հայ ավետարանական շարժումը Կովկասի մէջ, «Աւետագիր», Նյու Յորք, 1947, էջ 146-147:
[7] «Նոր դար», 1885, N:32:
[8] Տես՝ **Ղուկասյանց Հ.,** նշվ. աշխ., էջ 163:

նությունը մուտք է գործել 1870-ական թթ. կեսին՝ Էջմիածնից[1]: Ըստ Ե. Քասունու, 1870-ական թթ. Երևանի ավետարանական համայնքը բաղկացած էր 54 ընտանիքից, բայց կազմակերպված եկեղեցի չկար[2]: Ավետարանականները հավաքվում էին Երևանի Շահար անվանված թաղում՝ աղոթելու: Ժամանակակցի վկայությամբ նրանք աչքի էին ընկնում համեստությամբ, հասարակ ու պարզ կենցաղավարությամբ, իրար վերաբերվում էին քրիստոնեական սիրով[3]: Չնայած հալածանքներին, Երևանի ավետարանականների թիվն ավելանում էր: Երևանից նամակագիրը նկարագրում էր մի շարք դեպքեր, թե ինչպես էր մոլեռանդների ամբոխը հարձակվում ավետարանականների վրա աղոթք անելու ժամանակ, ջարդում լուսամուտների ապակիները, կրակում և վախեցնում էին հավաքվածներին[4]: Ավետարանականների նկատմամբ նման վերաբերմունքը ոչ բոլոր երևանցիներն էին ողջունում, իսկ առաքելական հայերից մեկը Երևանից գրում էր, որ «հաւատքի համոզմունքները պետք է յարգել…, հաւատը իմ անձնական, անհատական համոզմունքի գործ է. Ոչ ոք իրաւունք չունի նրան դիպչել»[5]: Նամակագիրը կրոնական հանդուրժողականության կոչ էր անում և հույս հայտնում, որ «մեր հայ բողոքական եղբայրները մտավորապէս աւելի զարգացած լինելով քան թէ մենք՝ հայ լուսաւորչականներս, իրանք կը հասկանան այս ճշմարտութիւնը և չնայելով տգէտ հոգևորականութեան և ամբոխի կողմից կրած հալածանքներին, դարձեալ կապացուցանեն, որ ոգով և ազգութեամբ հայ են, և հայ կը մնան»[6]:

Երևանի ավետարանականները 1908 թ. մի փոքր սենյակ վարձեցին, որտեղ հավաքվում էին 5-8 ընտանիքներ: Քանի որ 1905 թ. ապրիլի 7-ի կայսերական հրամանով ռուսական կայսրությունում կրոնի ազատություն հայտարարվեց, և ավետարանականներն էլ կարող էին անարգել ժողովներ անել, 1909 թ. Երևանի ավետարանականներն այդ հրովարտակի հիման վրա ավելի մեծ տուն վարձեցին ու մի ծանուցագրով նահանգապետին հայտնեցին իրենց հոգևոր ժողովների մասին: Կառավարության թույլտվությամբ մինչև 1913 թ. Երևանի ավետարանականները կատարել են կանոնավոր պաշտամունքներ շաբաթական չորս անգամ: 1910-14 թթ. Երևանի ավետարանական համայնքը հազիվ 10 տուն լինելով, կիրակնօրյա պաշտամունքին հաճախորդների թիվը հասնում էր 30-60 հոգու՝ երկու սեռից, իսկ երբեմն՝ օտար քարոզիչներ գալու և հանդիսավոր օրերին,

[1] «Մշակ»,1880, N:199:
[2] Տես՝ **Քասունի Ե.,** Լուսաշաւիղ, էջ 233:
[3] «Մշակ»,1880, N:199:
[4] Նույն տեղում:
[5] «Մշակ»,1876, N:28:
[6] Նույն տեղում:

ունկնդիրների թիվը հասել է 100-ի[1]: Երևանի ավետարանական համայնքն ուներ իր ապաստարան-որբանոցը, որտեղ 1913-14 թթ. կար 27 երեխա[2]: Նրանք հիմնականում կոտորածներից մազապուրծ որբեր էին՝ Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից: Որբանոցին օգնում էին Շուշիի, Շամախիի, Թիֆլիսի և այլ վայրերի հայ ավետարանական համայնքները: Երևանի ավետարանականներն ունեցել են նաև կիրակնօրյա դպրոց[3]:

Արևելյան Հայաստանի ավետարանականները 1906թ. խնդրեցին իրենց վերցնել Հայ առաքելական եկեղեցու հովանավորության տակ, առաջարկեցին, որ ավետարանական դավանությունը պահպանելու պայմանով իրենց հոգևոր գործիչները ձեռնադրություն ստանան Մայր Աթոռից և նրա վերին հսկողության տակ իրենց ներքին ինքնավարությունն ունենան: Այդ կապակցությամբ Երևանի նահանգի հայ ավետարանականների անունից նրանց լիազոր ներկայացուցիչ Զոհրապ Սարգսյանը խնդրագիր ներկայացրեց Էջմիածնի Սինոդին: Նա գրում էր, որ հայ ավետարանականները ցանկանում են իրենց առանձին և սեփական եկեղեցական, դպրոցական, բարեգործական ու այլ բարենպաստ հաստատություններն ունենալ, միաժամանակ նպատակահարմար գտնելով իրենց ամբողջ գործունեությունը դնել տեղական և ազգային հողի վրա՝ հնարավորին չափ կապ պահելով ազգի և ազգային հաստատությունների հետ[4]: Սակայն Սինոդը ձգձգեց հարցի լուծումը, այնուհետև բոլորովին մոռացության մատնեց այն:

1914 թ. Երևանի նահանգի ավետարանականները հանրագիր ներկայացրին Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին՝ միջնորդելու համար կայսերական կառավարության առջև, որպեսզի ճանաչվեն իբրև «Արարատյան հայ ավետարանական համայնք» և անկախ եկեղեցի: Որոշ ժամանակ անց փոխարքան պատասխանեց, որ «Ձեր խնդրանքը շուտով պիտի կարգադրվի»[5]: 1914 թ. հունվարի 31-ին պաշտոնապես գրանցվեց Հայ ավետարանականների Արարատյան միությունը, որը միավորում էր Երևանի, Վաղարշապատի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Նոր Բայազետի և նրանց շրջակա գյուղերի հայ ավետարանական համայնքները:

Հայ ավետարանականների Արարատյան միությունը կամ համայնքը (1914-1928 թթ.), որի նախագահն էր վեր. Վահան Միքայելյանը, ամբող-

---

[1] Տես՝ **Պապիկյան Սուրեն,** Նամակ Երևանից, «Աւետաբեր», Կ.Պոլիս, 1913, էջ 163-164:

[2] «Բարի Լուր», Բաքու,1915, N:23:

[3] Տես՝ **Ղազարյան Ա.,** Հայ ավետարանական համայնքներն Արևելյան Հայաստանում մինչև խորհրդային կարգերի հաստատումը (համառոտ ակնարկ), «Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի», Ե., 2010, N:1 (53), էջ 6:

[4] Տես՝ **Ատանասյան Կ.,** Յուշարձան հայ աւետարանականաց և աւետարանական եկեղեցւոյ, Ֆրեզնո, 1952, էջ 208-209:

[5] **Միքայելյան Վ.,** Կրոնական սահմանադրություն Հայ-ավետարանականաց Արարատյան համայնքի, Վաղարշապատ, 1923, էջ 5:

ջովին կազմավորվել և իր գործունեությունն էր ծավալում տեղի հայ ավետարանական ղեկավարների ուժերով ու առաջնորդությամբ: Այն դարձավ Կովկասում ամենաազդեցիկ ու մեծ հայ ավետարանական միությունը: Առաջին համաշխարհային պատերազմը մեծապես արգելակեց Միության կանոնավոր գործունեությունը: 1915-16 թթ. Երևանի ավետարանականներն ունենում էին հոգևոր ժողովներ նեղ շրջանում, իսկ մասնակիցներից մի քանիսը Վանի «Բարեսիրական ընկերության» անդամներն էին[1]:

1917թ. հունիսի 28-ին Երևանում Արարատյան դաշտի հայ ավետարանականներն անց են կացրել իրենց տարեկան ժողովը: Այդ օրվա պաշտամունքին ներկա էին դոկտ. Ռեյնոլդսը, Հարիսոն Մեյնարտը, Կարսի շրջանից չորս ներկայացուցիչներ, Արարատյան միության, Ալեքսանդրապոլի և շրջակայքի 300 մասնակիցներ, Վանի, Բիթլիսի ավետարանականներ: Մտադրություն է եղել կազմել Կովկասի, Վանի, Բիթլիսի հայ ավետարանական եկեղեցիների միություն և միավորել կովկասահայ ու արևմտահայ ավետարանականներին: Ընտրվել է 11 հոգուց բաղկացած մի հանձնախումբ[2], բայց քաղաքական հանգամանքների բերումով (1917թ. հեղափոխությունը Ռուսաստանում, քաղաքացիական կռիվները, ապա՝ 1918թ. Այսրկովկասյան երեք պետությունների անկախացումը, թուրք-հայկական պատերազմները) դրա իրականացումը դարձրին անհնարին:

Արևելահայ մտավորականության նոր սերնդի առաջադեմ մտավորականների համար ազատական գաղափարների, ուսուցման և կրթական նոր համակարգի, կրոնի ազատության, կրոնական հանդուրժողականության, Ս Գրքի աշխարհաբար թարգմանության անհրաժեշտության և բազմաթիվ այլ հարցերի ազատ արտահայտման մի իսկական ամբիոն էր Թիֆլիսում լույս տեսնող «Մշակ» թերթը: Հատկապես նրա հիմնադիր և ցկյանս խմբագիր Գրիգոր Արծրունու ժամանակ (1872-1892 թթ.) «Մշակը» դարձել էր ազատամիտ մտավորականության գաղափարական օրգան, որը պայքարում էր կարծրացած մտածողության, կրոնական խտրականության և անհանդուրժողականության, ամեն նորը մերժող մտածելակերպի և գործելակերպի դեմ: Դատապարտում էր կրոնական մոլեռանդությունը, ում կողմից էլ որ այն դրսևորվեր՝ լինի առաքելական, կաթոլիկ, թե ավետարանական: Այս առումով Գր. Արծրունին, ամփոփելով «Մշակի» 10-ամյա շրջանը, խմբագրականում գրում էր, որ թերթի քարոզած մտքերը «հայոց հասարակութիւնը սկսում է իրացնել, սկսում է մեր գաղափարներին համակրել»[3]: Նա ամենամեծ վարձատրությունը համարում էր այն համոզմունքը, որ «Մշակի» մեջ քարոզած եղբայրական միությունը, ազ-

[1] Տես՝ **Ղազարյան Ա.,** Լևոնյան Ռ., նշվ. աշխ., էջ 157:

[2] «Բարի Լուր», Բաքու,1917, ԺԲ տարի N:13, էջ 208:

[3] «Մշակ»,1882, N:1:

գային գաղափարի անունով, իրականություն դարձավ հայերի մեջ, քանի որ «հայ-լուսաւորչականը, հայ-բողոքականը և հայ-կաթոլիկը, իրանց անցեալ փոխադարձ ատելութիւնը և միմեանց դեմ ունեցած ֆանատիկոսութիւնը մոռանալով,-միմեանց եղբայրական ձեռք մեկնեցին, ազգային գաղափարի անունով, զգացին թէ եղբայրներ են, մի ընտանիքի անդամներ են»[1]: Նա այդ նվաճումը վերագրում է ոչ միայն իրեն, այլ՝ գլխավորապես այն հանգամանքին, որ իր քարոզած մտքերը համամարդկային մտքեր էին, որոնք հիմնված էին ճշմարտության, անկեղծության վրա, դեպի ժողովուրդն իր ունեցած անկեղծ, անսահման սիրո զգացմունքի վրա: Հատկանշական էր, որ Գրիգոր Արծրունու մահվան կապակցությամբ «Մշակի» հոդվածագիր Առաքել Սարուխանյանը շեշտում էր նրա լայնախոհությունը, որի նշանաբանն էր խղճի ազատությունը, և դրա «ուղղակի հետևանքը և արդիւնքը եղաւ նրա քարզը՝ հայութիւն առանց կրօնի խտրութեան»: Գրիգոր Արծրունին համոզված էր և «համոզեց մեզ բոլորիս, որ հայութիւնը ազգի միայն մեծամասնութեանը չի պատկանում, այլ նաև այն հատվածներին, որոնք հանգամանքների բերումով կամ իրենց ներքին համոզմամբ ուրիշ կրօն են դաւանում»[2]: Գրիգոր Արծրունու և «Մշակի» նպատակը մեկն էր՝ ոչ թե պաշտպանել որևէ հարանվանության պատկանողների, այլ՝ միացնել տարբեր դավանանքների պատկանող միևնույն ազգի զավակներին և մի կողմ թողնելով կրոնական վեճերը, նպաստել ազգի ընդհանուր առաջընթացին:

Арташес Казарян, Общины Армянских Евангелистов Восточной Армении со второй половины 19 века до начало 20 века - Общины армянских евангелистов среди восточных армян были сформированы с половины 19 века. Евангелизм свое распространение начала с Вагаршапате и его окрестных селах, затем в регионах Александрапола, Нахиджевана, Нор Баязета, города Ереван и Карса.

Армянские Евангелисты открыли школы во многих селах, в Александраполе и в Ереване приюты-укрытия, способствовали распростнению грамотности у насиления. С 1914 Армянских Евангелисты создали Араратский Союз или общину, которая собрала всех армянских евангелистов Восточной Армении. Этот Союз просуществовало до 1928г., когда советская власть запретила деятельность всех релегиозных организаций.

Artashes Ghazaryan, Armenian Evangelical Communities in the Eastern Armenia of the second half of 19th century until the beginning of the 20th century

[1] Նույն տեղում:

[2] «Մշակ»,1892, N:148:

- The Evangelical Communities among of the Eastern Armenian were formed from the middle of 19th century. The Evangelicalism first was spread in Vagharshapat and its surrounding villages, then in the regions of Alexandrapol, Nakhijevan and Nor Bayazet, Yerevan city and Kars.

The Armenian Evangelists opened schools in many villages, shelters and orphanages in Alexandrapol and Yerevan, they promoted the inflammation among the population. In 1914 the Armenian Evangelists of Yerevan region created the Ararat unity or community, which gathered all Armenian Evangelists of Eastern Armenia. It continued its existence until 1928, when the Soviet Union banned the activities of religious organizations.

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ՍԵՊՈՒՀ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր – Պետություն, մշակույթ, մշակութային քաղաքականություն, կերպարվեստ, ժողովուրդ, եկեղեցիներ, մանրանկարչություն, հզորություն, վերելք, անկում:

Պետություն հասկացողության քաղաքագիտական ձևակերպումը ընդհանուր առմամբ հայտնի է. այն մի տարածք է, ընդգծված սահմաններով, որտեղ ապրում է ժողովուրդ, որն օրենքներով կառավարվում է իշխանության կողմից: Պետությունն ինքնին քաղաքական միավոր է և նրա հզորության աստիճանն ուղիղ համեմատական է ռազմական կարողությանը, դիվանագիտական կարողությանը, կառավարման համակարգին: Այս երեքը եթե թերի են՝ այն դառնում է թույլ մի կառույց՝ ենթակա արտաքին ճնշումների, զերծ ինքնուրույնությունից և, բնականաբար, սոցիալական առումով խոցելի: Դժվար է ապացուցել ասվածի հակառակն, ընդ որում, ոչ միայն արդի, այլև՝ պատմության բոլոր ժամանակների համար: Բայց մեր խնդիրն այսօր մի փոքր այլ է՝ ցույց տալ, թե ինչ դերակատարություն ունի մշակույթը պետականությունների ամրապնդման տեսանկյունից, որն այսօր էլ կոնկրետ մեր ժողովրդի և պետության համար շատ կարևոր է, որովհետև գտնվում ենք տարբեր մշակույթների ժողովրդավարության քողի տակ մեր դեմ իրականացվող էքսպանսիաների ոլորտում, որոնց դիմակայելը դարձել է բարդ խնդիր: Բարդ այն առումով, որ անհնար է դրանց նկատմամբ իրականացնել մերժողական քաղաքականություն, եթե միտված են մեր ժողովրդին հեռացնելու իրենց մշակութային արմատներից, որն էլ արդեն տանելու է ազգային դիմագծի աղարտմանը, ինքնության պահպանման մի կարևոր երաշխիքից զրկվելուն: Ասվածից եզրկացությունը հետևյալն է՝ մշակույթը ունի ազգային անվտանգության ամրապնդման առումով կարևոր դերկատարություն, քանի որ նպաստում է ազգի նկարագրի պահպանմանը: Եվ եթե ազգային մշակութային արժեքները խեղաթյուրվում կամ վերանում են, ժողովուրդը բաժանվում է տարբեր, օտար մշակութային արժեքներ կրող հատվածների, դա իր հերթին նպաստում է պետության անվտանգության վտանգմանը, որովհետև այլևս ինչ պետություն, եթե չունի միակենտրոն քաղաքականություն՝ հիմնված ավանդականի հիմքով էվոլյուցիոն կարգախոսի վրա, այսինք, եթե վերցվում է նորը, ապա դա պետք է արվի լուրջ հաշվեկշռի ենթարկելով այն, մանավանդ այն տեսանկյունից, թե որքանով է այն աղերսվում այն պատմականորեն ձևավորված հոգևոր արժեքներին, որոնց առկա-

յությամբ է պայմանավորված բազում բարդ և հակասական ժամանակահատվածներում անվտանգության և գոնե գոյության ապահովումը: Եվ ամենևին պատահական չէ, որ հայ ժողովրդի պարագայում, երբ նա կորցրած է եղել իր պետությունները, ապա մինչև հաջորդ պետականության ձևավորումը իր ինքնությունը պահել է մշակույթով և հակառակը, երբ ունցել է համեմատաբար ուժեղ պետականություն, ապա՝ մշակույթը ապրել է վերելքային շրջան: Այսպես, վերցնենք մեր ժողովրդի գոյության արշալույսին այս տարածաշրջանում երբեմնի ամենահզոր պետության՝ Ուրարտուի թագավորության ժամանակահատվածը: Թեև իր՝ պատմական ժամանկահատվածով պայմանավորված պարզունակությամբ, այս պետությունն ունեցել է յուրօրինակ մի մշակույթ, որն արտացոլումն է այն քաղաքական իրավիճակների, որն ապրել է այս պետությունը: Վերցնենք կերպարվեստը: Այս թագավորության շրջանում ծաղկել է քանդակագործական արվեստը, որն իր դրսևորումներն է ունեցել Մուսասաիր կամ Մուծածիր քաղաքում զետեղված հին հեթանոս աստվածների բագիններին կից կերտված արձաններով: Այդ արձաններն իրենցից ներկայացրել են՝ ա. պաշտամունքի առարկա հանդիսացած աստվածների արձաններ, որոնցից գլխավորն, ինչպես հայտնի է, Խալդին էր, բ. թագավորների բրոնզե հսկա արձաններ, որոնցից Արգիշտիի, ամենահզոր արքայի արձանը կշռում էր մոտ երկու տոննա, գլխի խույրը աստղագույն, որը բնորոշ էր աստվածներին, Ռուսայի արձանն իրենից ներկայացնում էր երկու ձիերին լծված կառքը՝ կառապանով, ինքը կառքի, տվյալ դեպքում որպես պատվանդան հանդես եկող, վրա[1], հզորություն ճառագող կենդանիների պատկերներ՝ ցուլ, վիշապ և այլն: Ավելորդ ենք համարում անդրադառնալ այն վահանների վրայի պատկերներին, որոնք եղել են ոսկուց՝ վրաններըը ժանիքավոր շների գլուխներ, որոնք հափշատակել է Մուծածիրից Ասորեսատանի թագավոր Սարգոն 1 – ը: Կարմիր բլուրում հայտնաբերվել է նաև Սարդուրի 1 – ի վահանը, որի վրա պատկերված են ցլեր և առյուծներ: Հետևությունը մեկն է՝ մշակույթը արտացոլում է պետության դեմքը, նրա հզորության աստիճանը, ունի նաև քարոզչական նշանակություն, այն ժամանակների համար աննկուն հավատի, թագավորի և որ նույն էր՝ պետության հանդեպ սիրո և ակնածանքի, նրա խարիզմատիկ կերպարի մշակույթի տարբեր ուղղություններով դրսևորումներով: Այս ամենում ավելի համոզվելու համար հիշենք սեպագիր արձանագրությունները, որոնք նույնպես վկայում են հիշվածի մասին: Դրանց բովանդակությունը վկայում է հզոր պետականության ու բանակի, հաղթանակների, շինարարական աշխատանքների և, որ պակաս կարևոր չէ, հզոր Աստվածների մա-

[1] Տե՛ս P.E. Botta et E. Flandin, Monuments de Ninive, II, Paris, 1849, 141 տախտակ:

սին, որոնք հաղթանակի և ուժի գրավականն են, թեոկրատիկ պետության առկայության վկայողը, որը նշանակում է պետություն՝ կրոնական գաղափարախոսության հիմքով կամ թեոկրատիկ պետություն: Եվ այս ամենից մենք տեղեկանում ենք հիմնականում մշակույթի պահպանված արժեքներից, մի ոլորտի, որը փաստորեն կարևորագույն դեր է ունեցել պետական անվտանգության համար, քանզի հանդես է եկել պետության ամրապնդման և հզորացման, այդ ուղղությամբ կատարված քայլերի հավերժացման երաշխավոր, որն այսօր էլ չի կորցրել իր ունեցած նշանակությունը: Պատահական չէ, որ այսօր ամեն մի պատերազմական իրավիճակում մենք մեզ ոգեշնչում ենք նաև մեր նախնյաց հզորությամբ և փառքով:

Եզրակացությունը մեկն է՝ ինչքան հզոր է եղել պետությունը՝ այնքան վերելք է ապրել մշակույթը՝ որպես այդ հզորության արտահայտիչ և երաշխավոր: Այս առումով երբեմն ավելի հավաստի կարող են հնչել մշակութային արժեքները, քան պատմիչների գրածները, որովհետև նրանք հաճախ հենվում են բանավոր խոսքի վրա, իսկ մշակութային արժեքները կրում են առարկայական բնույթ:

Որպես ապացույց ասվածի ճշմարտության, կարելի է բերել Երվանդունիների թագավորության օրինակը: Սա մի պետությյուն էր, որի թագավորություն լինելը երբեմն տարածվում է նրա գոյության ամբողջ ընթացքի վրա (6 – րդ դարի սկիզբ - 3- րդ դարի վերջ, թեպետ վերջում արդեն մասնատված էր տարբեր թագավորությունների), բայց այն անկախ է եղել կարճատև փուլերում, գտնվել է Մարաստանի, Աքեմենյան Պարսկաստանի գերիշխանության տակ, ապա Սելևկյան թագավորության: Այսինք՝ իր հզորությամբ այնքան չի փայլել, քանի որ հիմնականում եղել է կիսանկախ: Բայց նրա գոյության հսկա ժամանակահատվածից մեզ չի հասել մշակութային այնպիսի ժառանգություն, որը եկել է Ուրարտական շրջանից և որը մեծ վերելք է ապրել Արտաշիսյան թագավորության շրջանում: Արտաշես Ա (189-160թթ. Ք. ա.) որը Մեծ Հայքի անկախության վերականգնողն էր և հողերը միավորողը, միաժամանակ նոր մշակույթի արմատավորողն էր՝ հնի հետ միաձուլումով: Նրա պետության շրջանը համարում են հելենիզմի շրջան, բայց արդյո՞ք այդպես էր: Անշուշտ, նա չէր կարող զերծ լինել հունական հզոր մշակույթի ազդեցությունից, բայց նրա մեծությունը կայանում էր նրանում, որ այդ մշակույթից վերցրեց լավը, միաձուլեց հայկական հնին՝ արդյունքում մշակույթում, (նաև քաղաքական) բերելով նոր զարգացում, որը կարևոր դաս է նաև այսօրվա մշակութային տարբեր ուղղությունների որդեգիրների համար, եթե նրանք ծառայում են համահայկական շահերին: Եվ պատահական չէ, որ նրա օրոք ոչ միայն զարգացավ խոսքի մշակույթը, այլև կենցաղային մշակույթը, դրվեց նոր հասարակական հարաբերությունների հիմքը, ճշտվեց դիցարանը, որը ներառում էր մեր հին աստ-

վածներին, որոնցից հզորություն, գեղեցկություն, բարություն և սեր էր ճառագում: Այսինքն՝ կրկին մշակույթը իր արտահայտության տարբեր ձևերով նպաստում էր պետության անվտանգությանը, որի հիմքը բանակից և դիվանագիտությունից բացի հզոր հեթանոսական հավատն էր սեփական աստվածների պաշտամունքը, ցեղի աստվածների շունչը, որն զգացվում էր բոլոր ոլորտներում: Մշակույթից ոչ թե խեղճություն, այլ ուժ էր ճառագում: Այդ են վկայում պատմահոր տեղեկությունները[1]:

Արշակունյաց թագավորության (52/66/ - 428) վերաբերյալ հայեցակարգային նշանակություն ունեցող կարծիք ներկայացնելը բավական բարդ խնդիր է: Բարդ է այն առումով, որ այս երկարատև ժամանակահատվածում մենք ականատես ենք լինում պետականության համար պայքարի գործընթացների տարբեր փուլերի՝ ա. հայ- պարթևական պայքար ընդդեմ Հռոմի՝ հանուն այս արքայատոհմի հաստատման, որը նույն Պարթևստանում իշխող արքայտոհմն էր, բ. 226թ. Սասանյան հեղաշրջումից հետո պայքար Սասանյան Պարսկաստանի և Հռոմի Հայաստանն իրենց գերիշխանության տակ գցելու դավերի դեմ, գ. ավատատիրական հարբերությունների զարգացմամբ պայմանանվորված պայքար կենտրոնախույս ձգտումների դեմ, որոնք հաճախ զուգակցվում էին արտաքին ուժերի նկրտումներին: Այս ամենն, ի վերջո, ավարտվեց թագավորության բաժանումով (387թ) և անկումով: Այս բուռն և երկարատև ժամանակահատվածում տեղի են ունենում քաղաքակրթական և մշակութային զարգացման ուղղությունների փոփոխություններ: Երկու կարևորագույն իրադարձություններ իրենց խորը կնիքն են դնում դրանց վրա՝ Քրիստոնեության ընդունումն որպես պետական կրոն և հայոց այբուբենի գյուտը: Առաջինը փաստորեն իր հետ բերում է մշակութային կործանում և ավեր նրա բոլոր ոլորտներում, անխնայորեն կործանվում է հինը, իսկ նորի սկզբնավորելը պարզ խնդիր էր մի ժողովրդի համար, որը երկու հազարամյակից ավելի ապրել է բոլորովին այլ քաղաքական մշակույթով, որի պետականության հիմքը եղել է հեթանոսական գաղափարախոսությունը, որի աստվածների պաշտամունքի արմատականացումը հազարամյակների պատմություն ուներ: Այս ամենը գրեթե մեկ դար պահեց մշակութային ավերը, քանի որ դժվար էր լցնել այն դատարկը, որը բացվել էր մի ողջ քաղաքական և մշակութային համակարգի փլուզման հետևանքով[2]:

Մշակութային վերելքը սկսվեց 5 – րդ դարի սկզբից, երբ որպես պետական քաղաքականության արդյունք Մեսրոպ Մաշտոցի կողմից ստեղծվեց հայոց այբուբենը, որն ինքնին դարձավ պետականության ակնհայտ անկում գնալու պայմաններում մեր ինքնության պահպանման երաշխավո-

[1] Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 180 – 195:

[2] Տե՛ս Ագաթանգեղոս, Պատմություն հայոց, Երևան, 1983:

րը: Այբուբենի գյուտը վկայում է մայն մասին, որ իրոք առանց մշակույթի չի կարող գոյատևել պետությունը և պետության ամրապնդման կարևորագույն պայմաններից է մշակույթի և գիտության զարգացումը: Փաստորեն քրիստոնեության ընդունումից հետո բացված մշակութային դատարկությունը նպաստեց պետության բաժանմանը և տրոհմանը, որի պայմաններում հասկացվեց, որ ազգային մշակույթի նորովի զարգացումը միայն կնպաստի արդեն հայ ժողովրդի գոյության հարատևությանը: Արդյունքում ամրապնդվեց քրիստոնեական հավատը, ամբողջացավ Քրիստոսի կերպարը հայության համար, քանի որ եկեղեցական ժողովները նրա մեջ ներառեցին հեթանոսական աստվածներից Միհրի հատկանիշները: Արդեն Բագրատունյաց թագավորության շրջանում (885 – 1045թթ.) մենք ականատես ենք լինում հազվագյուտ մի երևույթի՝ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միաձուլմանը, որը պարզ երևում է արվեստի կոթողներում, մասնավորապես Արծրունյաց թագավորության հիմնադիր Գագիկ 1 – ի կառուցած Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու վրա կերպարվեստի արտահայտության ձևերից, որոնցում ակնհայտ են աշխարհիկ և հոգևոր պատկերներ միաժամանակ, ինչը պետության ամրապնդման կարևորագույն երաշխիքներից է[1]:

Առհասարակ 10 – 14 –րդ դարերում պետությունների առկայության պայմաններում թե՛ մայր հայրենիքում և թե՛ Կիլիկիայի նախ՝ իշխանության, ապա՝ թագավորության գոյության շրջանում ականատես ենք լինում մշակույթի համակողմանի վերելքային զարգացման, անշուշտ, ժամանակի ուժեղ քաղաքակրթությունների ազդեցության առկայությամբ, բայց ազգայինի պահպանման հիմքով: Այս ժամանկահատվածում իրոք եկեղեցին և պետությունը հիմնականում ծառայում էին պետականության ամրապնդմանը՝ հատկապես հզոր արքաների իշխելու ժամանակահատվածում (Գագիկ, Աբաս, Աշոտ 3-րդ Ողորմած, Լևոն Մեծագործ, Հեթում և այլն): Եվ հենց այդ ժամնակահատվածում է վերելք ապրում մշակույթը:

Իսկ արդեն 14 – րդ դարից հետո այն անկում է արպրում և չի զարգանում որպես պետական քաղաքականության արդյունք, այլ՝ իր տարբեր դրսևորումներն է գտնում եկեղեցիներում՝ դարձյալ ծառայելով հայության ինքության պահպանման վեհ գործին: **Այսպիսով, մշակույթը պետականությունների գոյության պայմաններում նպաստել է դրանց ազգային անվտանգության պահպանմանը, քանի որ արտահայտել է պետական իշխող գաղփարախոսությունը, իսկ դրանց բացակայության պայմաններում նպաստել է ժողովրդի ինքնության պահպանմանը կամ ինչ որ տեղ ժողովրդի անվտանգության ապահովմանը, քանի որ սերմանել է հայ մնալու գա-**

[1] Արշակ Ներսիսյան, Կերպարվեստի արտահայտության ձևերը Արծրունյաց թագավորության շրջանի եկեղեցաշինության մեջ, տե՛ս «Հայագիտական հանդես», թիվ 2(40), էջ 192 – 198:

դափարը: Հայաստանի առաջին հանրապետության և Խորհրդային Հայաստանի գոյության շրջանում նույնպես մշակույթը եղել է պետության հոգացության առարկա: Բավական է նշել, որ 1918 – 20թթ. դրվել են մեր գիտության և մշակութային նոր զարգացման հիմքերը, ստեղծվել է համալսարան, զարկ է տրվել կրթությանը և մշակույթին, այն պետական գիտակցությամբ, որ առանց դրա դժվար կլինի լ պետականության հզորացումը: Եվ վերջապես, որ մշակույթն իրոք ունի պետականության ամրապնդման կամ նրա գաղափարական անվտանգության ամրապնդման նշանակություն, դրա վկայությունն է սոցռեալիզմի մեթոդը, որը պարտադրվեց արդեն անցյալ դարի 20 – ական թթ. վերջերին որպես մշակույթի և գիտության պարտադիր մեթոդաբանություն: Ճիշտ էր այն, թե սխալ, չենք քննարկում, բայց դրանով դրվում էր խնդիր այն պետական գաղափարախոսության մասսայականացման, որը իշխում էր խորհրդահայ շրջանում:

Վերջնական եզրակացություններն հետևյալներն են.

1. Մշակույթը պետականությունների գոյության և ժողովուրդների անվտանգության կարևորագույն երաշխիքներից մեկն է:

2. Եթե պետությունը հեռանում է իր ժողովրդի մշակութային ակունքներից՝ նպաստում է նրա ձուլմանը կամ վերացմանը:

3. Մշակույթն իր զարգացման ընթացքում չի կարող զերծ լինել օտար ազդեցություններից, բայց դրանցում անհրաժեշտ է զգուշություն այն աստիճան, որ երկրորդական չդառնան տվյալ ժողովրդի ավանդական արժեքները:

4. Հայության պարագայում մշակույթը պետականությունների պայմաններում նպաստել է դրանց անվտանգությանը, իսկ դրանց բացակայության պայմաններում՝ ազգի ինքնության պահպանմանը:

Сепу Нерисян, История и культура - Культура - одна из важнейших гарантий существования и безопасности государства и народа. Если государство или люди оставляют свои культурные корни, они подлежат уничтожению или ассимиляции. Вся история армянского народа является доказательством всего этого.

Sepuh Nerisyan, History and culture – One of the most important state and people existence and security guaranties is the culture. If the state or people leave their cultural roots, they are subject to destruction or assimilation. The whole story of Armenian people is the proof all of this.

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹԵՄԸ

ՄԱՅՐԱՆՈՒՇ ՊՈՂՈՍՅԱՆ

Բանալի բառեր – Հայ առաքելական եկեղեցի, թեմ, համայնք, Գերմանիա, Եվրոպա, հոգևոր հովիվ, Սփյուռք, հայապահպանության հարցեր:

Հայաստանյաց առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմը կազմավորվել է 1991-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով:[1] «Վերջին տասնամեակներին, ինչպէս Մայր Հայրենիքում, այնպէս էլ արտասահմանում, մեր Եկեղեցու զաւակները, տեղաշարժների հետևանքով, նոր բնակութիւն հաստատեցին աշխարհագրական տարբեր շրջաններում, ուր մեր Եկեղեցին սկսեց կազմակերպել նոր եկեղեցական համայնքներ և թեմեր: Ահա նման պայմաններում ասպնջական Գերմանիոյ մէջ ևս հետզհետէ աճեց թիւը հայ ազգաբնակչութեան, և կազմուեցին բազմաթիւ եկեղեցական համայնքներ, հոգևոր հովանու և խնամքի ներքև կենտրոնական Եւրոպիոյ Հայրապետական բարեջան Պատուիրակին: Այս օրերին սակայն արդէն անհրաժեշտութիւն է դարձել Գերմանիոյ հայ համայնքները կազմակերպել իբրև ինքնուրոյն առանձին եկեղեցական թեմ: Մայր Աթոռիս Գերագոյն Հոգևոր Խորհուրդը, Մեր նախագահութեան ներքոյ, հաստատելով այս իրողութիւնը և ընդառաջելով Գերմանիոյ հայ համայնքների վարչութեանց ներկայացուցիչների 25 դեկտեմբերի 1991-ին Քէօլնում տեղի ունեցած ժողովի դիմումին, Մենք այսու Մեր հայրապետական կոնդակով հռչակում ենք կազմաւորումը Գերմանիոյ Հայոց Եկեղեցական ինքնուրոյն թեմի, կենտրոն ունենալով Քէօլն քաղաքը և նշանակում ենք Հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետ Պէքճեանին որպես թեմակալ առաջնորդ, կանոնական բոլոր իրաւասութիւններով, մաղթելով նրան լիակատար յաջողութիւն իր հոգևոր առաքելութեան ճանապարհին: Յանձնարարում ենք Տ. Գարեգին Հայր Սուրբին, որ անյապաղ կազմի Թեմական Խորհուրդ և թեմական կանոնագրութիւն, Գերմանիոյ Հայ Առաքելական Եկեղեցու թեմի, Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կանոնական վերին իշխանութեան ներքոյ: Այս ուրախ առիթով յղում ենք Մեր հայրապետական բարի մաղթանքները և օրհնութիւնը նորահաստատ թեմի առաջնորդ Տ. Գարեգին վարդապետին, Գերմանիոյ եկեղեցական հայ համայնքների վարչութեանց յարգարժան անդամներին, հայկա-

[1] Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 142: // Տե՛ս նաև Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 211:

կան եկեղեցական համայնքներին, և մշակութային ու բարեսիրական միութիւններին և համայն մեր հաւատացեալ զաւակներին: Թող բարին Աստուած քրիստոսասէր Գերմանիոյ տարածքի վրայ անսասան և ծաղկեալ պահպանէ Գերմանիոյ հայոց թեմը իր եկեղեցիներով և բարեպաշտ ժողովրդով: Տուաւ կոնդակս ի 31 Յունուարի 1992 Փրկչական ամի, և ի տումարիս Հայոց ՌՆԽԱ ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի, Հմր. 1852»:[1]

Մինչ առանձին թեմ դառնալը Գարմանահայ համայնքը գտնվել է Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակության կազմաում: Հատագայում դուրս է եկել Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակության կազմից և անցել Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակության իրավասության տակ: Այսօր թեմի կազմի մեջ մտնում են ավելի քան 20 մշակութային միություններ և 15 համայնքներ:[2]

Դրանք են՝

1. Բադեն - Վյուրթենբերգի հայ համայնք (Armenische Gemeinde Baden-Württemberg)
2. Բեռլինի հայ եկեղեցական և մշակութային համայնք (Armenische Kirchen- und Kulturgemeinde Berlin)
3. Բիելեֆելդի հայ համայնք (Armenische Gemeinde Bielefeld)
4. Բրաունշվայգի հայ համայնք (Armenische Gemeinde Braunschweig)
5. Բրեմենի հայ համայնք (Armenische Gemeinde Bremen)
6. Դուիսբուրգի հայ համայնք (Armensiche Kirchengemeinde Duisburg)
7. Գիեսենի հայ համայնք (Armenische Gemeinde Gießen)
8. Հեսսենի հայ համայնք (Armenische Gemeinde Hessen)
9. Քեհլի հայ համայնք (Armenische Gemeinde Kehl)
10. Քյոլնի հայ համայնք (Armenische Gemeinde Köln)
11. Մայնցի հայ համայնք (Armenische Gemeinde Mainz)
12. Մյունխենի հայ համայնք (Armenische Gemeinde München)
13. Նոյվիեդի հայ համայնք (Armenische Gemeinde Neuwied)
14. Նյուրնբերգի հայ համայնք (Armenische Gemeinde Nürnberg)
15. Սաքսոնիա - Անհալթի հայ համայնք (Armenische Gemeinde Sachsen-Anhalt)

Վերջիններս ենթակա են Գերմանիայում գործող Գերմանահայոց առաջնորդարանին, որն էլ կազմակերպում է նրանց համագործակցությու-

[1] Տե՛ս Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը Գերմանիայում Հայ եկեղեցու ինքնուրույն թեմ հռչակելու մասին, «Էջմիածին հանդես», 1992, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, էջ 3-4: // Տե՛ս նաև Աթոռակալության հանդիսություններ Քյոլնում, «Էջմիածին հանդես», հունվար, փետրվար, մարտ, 1993, էջ 47-48:

[2] Տե՛ս Die Diözese der Armenischen Kirche in Deutschland, http://www.a-rm.de/?page_id=16 // տե՛ս նաև Armenische Organisationen in Deutschland, http://www.a-rm.de/?page_id=22,// http://honorarkonsulat-armenien.de/diaspora.htm

նը:[1] Առաջնորդանիստը հանդիսանում է Քյոլնում գտնվող Ս. Սահակ – Մեսրոպ եկեղեցին: Առաջնորդարանի հիմնական եկամուտը թեմական տուրքն է:[2] Առաջնորդարանը տուրքի միջոցով վճարում է եկեղեցականներին, հոգում է Առաջնորդարանի բոլոր ծախսերը, օգնում է համայնքներին, ինչպես նաև տարեկան օգնություն է հատկացնում Հայաստանին:[3] Տուրք վճարողները համարվում են եկեղեցական համայնքի անդամ, կարող են անդամակցել եկեղեցական բոլոր հանձնախմբերին, ունեն ընտրելու և ընտրվելու իրավունք, եկեղեցական արարողությունները (մկրտության, պսակադրության և հուղարկավորման արարողություններ) վերջիններիս համար կատարվում է անվճար:[4] Գերմանահայ կազմակերպություններից թվով ամենաշատ անդամներ ունի Գերմանահայոց առաջնորդարանը:[5] Գերմանիայի թեմը, ինչպես Հայ առաքելական եկեղեցու բոլոր թեմերը, առաջնորդվում է Մայր Աթոռի կողմից սահմանված թեմական կանոնադրությամբ:[6]

Հայ առաքելական եկեղեցին դարեր շարունակ պաշտպանել է իր զավակների հոգևոր կյանքն ազգային արժեքներին սպառնացող վտանգներից,[7] իսկ հայ ազգային ինքնության պահպանումը, սերունդներին հայեցի կրթելու և դաստիարակելու, պատմական ակունքներին հաղորդակից լինելու ձգտումը մշտապես եղել և մնում է մեր ժողովրդի ազգային հոգեկերտվածքի կարևորագույն բաղկացուցիչը:[8]

Գերմանիայի թեմի գործունեության հիմնական ուղղությունը հայապահպանությունն է: Թեմը ակտիվ գործունեություն է ծավալում իր իրավասության ներքո գտնվող բոլոր համայնքներում, կորդինացնում է համայնական կյանքը: Այստեղ կանոնավոր կերպով նշվում են տոնական և հիշատակի արարողությունները: Համարյա բոլոր համայնքները ունեն իրենց ինտերնետային կայքէջերը: Ելնելով համայնքների և տեղեկատվական աղբյուրների գործունեության հիմնական ուղղություններից և նպատակների ինքնաներկայացումից՝ հետխորհրդային հայկական սփյուռքի գրեթե բոլոր համայնքներն ունեն մի շարք ընդհանուր գերակայությու-

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս https://germany.mfa.am/hy/community-overview/

[3] Տե՛ս Օրացոյց, Քէոլն, 2017, էջ 39:

[4] Տե՛ս https://germany.mfa.am/hy/community-overview/

[5] Տե՛ս նույն տեղում:

[6] Առավել մանրամասն տե՛ս Ուղենիշ Հայաստանյաց առաքելական Սուրբ եկեղեցու թեմական կանոնադրության, «Էջմիածին հանդես», նոյեմբեր, Ս. Էջմիածին, 2009, էջ 38-47:

[7] Տե՛ս **Դանիելյան Է., Լ.,** Հայոց հոգևոր արժեքների պաշտպանության պատմությունից, «21-րդ դար» N 3(61), Երևան, 2015, էջ 114:

[8] Տե՛ս **Անտինյան Ս.,** Սփյուռքի հայկական կազմակերպությունների, միությունների և Հայ եկեղեցու դերը հայկական դպրոցների ստեղծման ու զարգացման գործում, «21-րդ դար» N5, Երևան, 2011, էջ 46:

ներ (ազգապահպանում, մշակութային ինքնաներկայացում, կապ Հայաստանի հետ, Ցեղասպանության ճանաչում, ԼՂՀ խնդիր):[1] Սակայն, միաժամանակ, յուրաքանչյուրն ունի մասնավոր, օրակարգային խնդիրներ՝ սկսած ընդունող երկրի զբաղվածության ոլորտում ինտեգրվելուց մինչև եկեղեցաշինության հարցեր:[2]

Թեմը ակտիվորեն համագործակցում է Գերմանիայում ՀՀ դեսպանության, Գերմանիայի կառավարության, այստեղ գործող կրոնական կազմակերպությունների և բազմաթիվ պաշտոնական և ոչ պաշտոնական շրջանակների հետ: Գերմանիայում, Հայ առաքելական եկեղեցին շատ ակտիվ է էկումենիզմի ոլորտում:[3] Հայ եկեղեցու թեմի հիմնադրումից ի վեր այն եղել է Գերմանիայում քրիստոնեական եկեղեցիների աշխատանքային խմբի անդամ:[4]

Երկրում հայերի բնակեցվածության աշխարհագրությունը չափազանց հետաքրքիր է: Հայեր ապրում են Գերմանիայի գրեթե բոլոր շրջաններում: Դա պայմանավորված է Գերմանիայի Դաշնային Հանրապետության միգրացիոն քաղաքականությամբ:

Իրենց ակտիվությամբ աչքի ընկնող կարևորագույն համայնքներից կարելի է առանձնացնել Բադեն-Վյուրթենբերգի, Բեռլինի, Քյոլնի համայնքները:

Բադեն – Վյուրթենբերգի հայ համայնքը գրանցված է Գյոփինգենի շրջանային դատարանում, իսկ ներկայիս Բադեն – Վյուրթենբերգի միաբանությունը հիմնվել է 1996թ. ապրիլի 20-ին: Գյոփինգենում է գտնվում Ս. Խաչ եկեղեցին: Այն Գյոփինգենի տարածքում առաջին եկեղեցին է, որ հայերը ձեռք են բերել կաթոլիկ գերմանացիներից և, ներքնապես վերափոխելով, օծել որպես հայկական եկեղեցի:[5] Հոգևոր հովիվն է Տ. Տիրատուր քահանա Սարդարյանը: Նա մեծ դերակատարություն ունի հայկական համայնքի համախմբման գործում: Համայնքը ունի տնօրենների խորհուրդ: Տնօրենների խորհուրդը ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից երեք տարին մեկ անգամ: Այստեղ նշվում են բոլոր ազգային և եկեղեցական տոները, հիշատակի արարողությունները: Կատարվում են մշակութային միջոցառումներ[6], իրազեկման արշավներ և այլն: Կան շաբաթօրյա

[1] Տե՛ս Հայկական տեղեկատվական համայնքային ռեսուրսները հետխորհրդային երկրներում, հեղինակային խումբ՝ **Ժամկոչյան Ա., Գալստյան Դ., Մարտիրոսյան Ս., Մանուկյան Ս., Հովյան Վ.,** Երևան, 2009, էջ 9:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս Ökumene, https://armenische-kirche.de/glaube/oekumene/

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 142:

[6] Տե՛ս Մշակույթների հաջողված երկխոսություն. Շտուտգարտում կայացան 8-րդ Հայ մշակույթի օրերը, 18:00, 03.11.2018, https://www.zangezur.tv/news/view/10429.html

դպրոցներ, երգչախումբ, պարի խմբակ: Կազմակերպվում են նաև հանգանակություններ, որոնց հասույթը ուղղվում է Մայր հայրենիքի վերաշինության սուրբ գործին: 2016թ. ապրիլյան պատերազմից հետո Տ. Տիրատուր քահանա Սարդարյանի նախաձեռնությամբ Բադեն – Վյուրթենբերգի հայ համայնքը ֆինանսական հսկայական աջակցություն ցուցաբերեց Արցախին:[1] Ֆինանսական օգնությունից զատ, արցախահայությանը տրամադրվել է նաև նյութական օժանդակություն:[2]

Բեռլինի հայ համայնքը համարվում է ամենահինը գերմանական հողի վրա և պաշտոնական գրանցում է ստացել հեռավոր 1923-ին: 1998թ. Շառլոտենբուրգի շրջանային դատարանում այն գրանցում ստացավ որպես Բեռլինի հայ եկեղեցական համայնք, իսկ 2006թ. վերանվանվեց Բեռլինի հայ եկեղեցական և մշակութային համայնք: Հայ առաքելական եկեղեցու եկեղեցական, մշակութային կազմակերպությունն է: Ներկայացնում է բեռլինահայությանը: Համայնքի կյանքը կազմակերպում է խորհուրդը, որն ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից՝ երկու տարի ժամկետով: Խորհրդի անդամներն աշխատում են կամավոր հիմունքներով: Ծխականն ունի ծխական քահանա, որը նշանակվում է թեմի առաջնորդի կողմից: Այստեղ կա նաև գրադարան, որտեղ առկա է հայագիտական հարուստ նյութ: Համայնքն ունի եկեղեցական երգչախումբ[3]: 2000 թվականից իր ազգանվեր գործունեությունն է ծավալում Կանանց միությունը: Գործում է նաև Երիտասարդների միությունը: «Հայ տուն» կոչվող կենտրոնը բեռլինահայության սիրելի հավաքատեղին է և ամենակարևոր հանդիպման վայրերից մեկը: Այն ոչ մայն հանդիպման և հաղորդակցման սիրելի վայր է, այլև հայկական ավանդույթների, մշակույթի պահպանման և տարածման վայր: Բեռլինում կա նաև շաբաթօրյա դպրոց, որտեղ դասավանդվում է հայոց լեզու և պատմություն: 2016թ. ապրիլի 23-ին Բեռլինում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված խաչքարի օծման արարողությունը:[4]

---

[1] Ավելի մանրամասն տե՛ս Արցախը պետք է ավելի հասանելի լինի Եվրոպային. Բադեն-Վյուրթենբերգի հայ համայնքի հոգևոր հովիվ, 24 հունվարի, 2017, 16:33, https://artsakhpress.am/arm/news/60475/ // Տե՛ս նաև Գերմանիայի Բադեն Վյուրթենբերգի հայ համայնքի հոգևոր հովիվն այցելել է ԼՂՀ, https://a1plus.am/hy/article/157485

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս Բեռլինի Հայ եկեղեցական ու մշակութային համայնքի երգչախումբը ելույթ կունենա Բեռլինի ֆիլհարմոնիայում, 24 փետրվարի 2010 - 18:42, AMT, http://www.panarmenian.net/arm/news/44564/

[4] Տե՛ս Feierlich geweiht: Der Kreuzstein vor der St.-Hedwigs-Kathedrale in Berlin-Mitte, http://www.deutscharmenischegesellschaft.de/2016/04/25/feierlich-geweiht-der-kreuzstein-vor-der-st-hedwigs-kathedrale-in-berlin-mitte/?fbclid=IwAR2umNvQRHYzhMWxV6epwOVw4kBASu3PN31TpSk7siswUOaJuPJ-cLS8V5Y

Քյոլնի հայ համայնքը Գերմանիայի ամենամեծ համայնքն է և ունի ավելի քան 6000 անդամ:[1] Միևնույն ժամանակ այն Գերմանահայոց թեմի նստավայրն է:[2] Մինչև 2018թ. թեմը ղեկավարում էր Գարեգին Բեկչյանը: Այնուհետև նրան այդ պաշտոնում փոխարինել է Սերովբե վարդապետ Իսախանյանը[3]: Քյոլնի հայ համայնքն իր անդամներին առաջարկում է բազմազան մշակութային ծրագրեր, երեխաների համար հայոց լեզվի դասընթացներ, թատերական ներկայացումներ, երգչախմբի դասեր երեխաների և մեծահասակների համար, դասախոսություններ, ընթերցումներ, կինոդիտումներ:[4] Ամեն ամսվա վերջին կիրակին համայնական գրադարանում երիտասարդների համար կազմակերպվում է կրոնական դաս:[5] Համայնքը իր առջև դրված կարևորագույն խնդիրներից է համարում կարիքավոր անդամներին սոցիալական աջակցություն ցուցաբերելը՝ մասնավորապես կրթությունը և ինտեգրումը:[6] «Վերջին տարիներին Քյոլնի հայ համայնքը երիտասարդացել է: Բոլոր միջոցառումներին ու պատարագներին ավելի շատ երիտասարդներ են հաճախում: Սփյուռքի մեջ երիտասարդության հետ աշխատանքը մեր առաջնային հարցերից է: Թեմի գոյատևումը պայմանավորված է այնքանով, որքանով այսօր երիտասարդ ունենք: Որովհետեւ այդ գիտակից երիտասարդն է, որ վաղն այս համայնքը պետք է աշխույժ պահի: Համայնքն ունի երիտասարդական ծրագրեր, որոնք կազմակերպվում են Երիտասարդական հանձնախմբի կողմից: Նրա կազմում չորս-հինգ երիտասարդ են, ովքեր փորձում են ամսվա մեջ գոնե մեկ միջոցառում կազմակերպել, որը հետաքրքրում է այսօրվա երիտասարդին: Այս ձևով փորձում ենք ամսվա առաջին կիրակին երիտասարդներին համայնք բերել, զրուցել, զվարճանալ, իրար հետ ծանոթանալ և կապ հաստատել: Ես ուրախ եմ, որ թեմի կյանքը առաջընթաց է ապրում: Կարևորն այն է, որ վաղն ունենանք ամուր և կայուն հայ համայնք» - իր հարցազրույցներից մեկում նշել է Գերմանիայի թեմի հոգևորականներից Տ. Վահիճ քահանա Բաղդասարյանը:[7] Առաջնորդարանը ունի նաև Մ-

[1] Տե՛ս http://armenischegemeindekoeln.de/ueber-uns/

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս Armenische Kirche in Deutschland führt neuen Bischof ein, https://www.domradio.de/themen/%C3%B6kumene/2019-05-24/feierliche-amtseinfuehrung-arm nische-kirche-deutschland-fuehrt-neuen-bischof-ein, 24.05.2019, // տե՛ս նաև Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ է ընտրվել Սերովբե վարդապետ Իսախանյանը, https://www.shoghakat.am/am/telecasts/14090, // Փափագելի թեկնածուն ընտրվեցավ, 2018-04-20, 00:42:53, https://www.azg.am/AM/2018042006/, // Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 226:

[4] Տե՛ս http://armenischegemeindekoeln.de/ueber-uns/

[5] Տե՛ս նույն տեղում:

[6] Տե՛ս նույն տեղում:

[7] Տե՛ս Քյոլնի հայ համայնքը երիտասարդացել է, 16:50, 28 փետրվար, 2020, https://armenpress.am/arm/news/1006728.html

շակութային հանձնախումբ, որի ջանքերով Քյոլնում ամեն տարի անցկացվում են նաև «Հայ մշակույթի օրեր»[1]:

Հեսսենի, Գիեսենի և Մայնցի հայ առաքելական համայնքների հետևորդները միասին շուրջ 2500 են: Հեսսենում կանոնավոր կերպով տեղի են ունենում պատարագները: Գերմանահայերը այստեղ սեփական եկեղեցի չունեն, եկեղեցական արարողությունները, ըստ պայմանավորվածության, կատարում են բողոքական եկեղեցում:

Բրաունշվայգի հայ համայնքը փոքր է: Այստեղ շուրջ 120 հայկական ընտանիք է ապրում:[2]

Վերոշարադրյալից պարզ է դառնում, որ Գերմանիայում հայերը ապրում են ցրված: Կան համայնքներ, որտեղ հայերի թիվը բավականին մեծ է (Բեռլին, Քյոլն), իսկ կան համյնքներ էլ (Բրաունշվայգ), որտեղ ընդամենը 120 տուն հայ է ապրում:

Միջազգային կազմակերպությունների գնահատականներով Գերմանիայում ապրում է ավելի քան 65 հազար հայ, իսկ պաշտոնական գերմանական վիճակագրությունը հայտնում է 45 հազար հայի մասին:[3] Այս երկրում հայերի թիվն աճել է հատկապես վերջին 20-25 տարիներին:[4] Գերմանիայում հայերի ճիշտ թվաքանակը որոշել հնարավոր չէ դինամիկ փոխփոխվող աճի պատճառով:[5] Ամեն տարի այդ երկրում մեր հայրենակիցների թիվը միայն աճում է[6] և բնորոշվում է իր բնակության պետության սոցիալական կառուցվածքին ինտեգրվածությամբ:[7]

Էթնիկ հայերի առաջին խմբերը ժամանակակից Գերմանիայի տարածք են եկել 1915թ. Հայոց ցեղասպանության ժամանակ:[8] Ցեղասպանության հետևանք հանդիսացող Հայկական սփյուռքը տասնամյակների

---

[1] Առավել մանրամասն տե՛ս Հայկական մշակույթի օրեր՝ Քյոլնում, 00:00, 5 Նոյեմբեր, 2009, https://armenpress.am/arm/news/575494.html // տե՛ս նաև Քյոլնում մեկնարկում են հայ մշակույթի օրերը, 19 հոկտեմբերի, 2017, 12:52, https://artsakhpress.am/arm/news/74513/qyoln um-meknarkum-en-hay-mshakuyti-orery.html

[2] Տե՛ս Armenische Gemeinschaft in Braunschweig feiert Gottesdienst, 13.01.2020 - 13:22, https://www.braunschweiger-zeitung.de/braunschweig/article228128233/Armenische-Gemeinsch aft-in-Braunschweig-feiert-Gottesdienst.html

[3] Տե՛ս Армянская община Германии: время объединения, https://noev-kovcheg.ru/mag/2011-06/2473.html

[4] Տե՛ս **Ordukhanyan A.,** Armenier in Deutschland, Geschichte und Gegenwart, Erfurt, 2008, S. 25.

[5] Տե՛ս Армянская община Германии: время объединения, https://noev-kovcheg.ru/mag/2011-06/2473.html

[6] Տե՛ս նույն տեղում:

[7] Տե՛ս Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ. Զարգացման հեռանկարներ, Հետազոտական խմբի ղեկավար՝ **Ավետիսյան Ս.,** Երևան, 2015, էջ 197:

[8] Տե՛ս **Казарян Т.,** Специфика деятельности Армянской общины ФРГ в период канцлерства А. Меркель, 180, https://cyberleninka.ru/article/n/spetsifika-deyatelnosti-armyanskoy-obschiny-frg-v-period-kantslerstva-a-merkel/viewer

ընթացքում ենթարկվել է որոշակի փոխակերպման՝ իր ներսում տեղի ունեցող «ժողովրդագրական» տեղաշարժերի հետ կապված:[1] Հարկ է նշել, որ Գերմանիայի հայ համայնքը անմասն չի մնացել «ժողովրդագրական» այդ տեղաշարժերից: Հայեր այստեղ շատ եկել են Թուրքիայից: Հետագայում Մերձավոր և Միջին Արևելքում քաղաքական անբարենպաստ իրադարձությունների պատճառով Գերմանիայում հայության թվաքանակը զգալիորեն ավելացավ: Լիբանանի քաղաքացիական պատերազմը, Իրանում Իսլամական հեղափոխությունը և իրանա – իրաքյան պատերազմը[2] պատճառ հանդիսացան, որպեսզի բազմաթիվ հայեր հեռանան իրենց նախկին բնակության սահմաններից: Նրանց մի մասը հաստատվեց Գերմանիայում: Հայեր այստեղ եկել են նաև Սիրիայից: ԽՍՀՄ փլուզումից հետո Գերմանիայում հայերի հոսք նկատվեց նախկին Խորհրդային Միության երկրներից: 90-ական թթ. Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական ճգնաժամի պայմաններում ՀՀ-ից նույնպես արտահոսք եղավ դեպի Գերմանիա:

Հարկ է նշել նաև, որ Գերմանիան Եվրոպայի լավագույն երկրներից է, Եվրամիության անդամ: Ունի զարգացած տնտեսություն, հզոր առողջապահություն, ապրելու համար լավագույն պայմաններ: Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը բնութագրվում է նաև ներքին կայունությամբ: Այստեղ ստեղծված են լավագույն պայմանները ապրելու համար: Եթե նախկինում հայերը այստեղ էին գալիս քաղաքական կամ սոցիալ-տնտեսական դժվար պայմաններից ելնելով, ապա այժմ իրավիճակը փոքր ինչ փոխվել է: Գերմանայի դաշնային Հանրապետությունը այսօր նաև գայթակղող երկիր է, որտեղ կարելի է սովորել, աշխատել և ապրել բարեկեցիկ կյանքով: Այստեղ ձուլման վտանգները բավականին բարձր են, խառնամուսնությունների թիվը մեծ է, հայերենով խոսողները գնալով քչանում են: Կան մարդիկ էլ, որոնք իրենց համարում են աշխարհաքաղաքացի, դուրս են մնում համայնական կյանքից, ազգային կրթությունն ու դաստիարակությունը համարում են ժամանակավրեպ, հեշտությամբ ամուսնանում են օտարազգիի հետ:

Ձուլման մարտահրավերներին դիմակայելու համար Հայ առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմը՝ իր 15 համայնքներով, անում է ամեն ինչ, որպեսզի գերմանահայությանը, որքան հնարավոր է, զերծ պահի ու-

---

[1] Տե՛ս **Սարդարյան Ս.,** Հայկական սփյուռքի արդի հիմնախնդիրների շուրջ, «21-րդ ԴԱՐ» N 1, Երևան, 2014, էջ 112:

[2] Առավել մանրամասն տե՛ս **Բայբուրդյան Վ.,** Իրանի պատմություն (Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2006, էջ 713-720, 721-730: Տե՛ս նաև **Դալլաքյան Կ.,** Հայ սփյուռքի պատմություն, (համառոտ ակնարկ), Երևան, 2004, էջ 94-95: // **Բայբուրդյան Վ.,** Իրանի հայ համայնքը. Արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013, էջ 29-30:

ծացումից: Նրա ազգապահպան գործունեությունը գերմանահայության շրջանում բազմազան է՝ սկսած կրոնական, մանկավարժական, գիտական, մշակութային գործունեությունից մինչև լոբբինգ:

Բեռլինի եկեղեցական համայնքի ղեկավար քահանա Գնել Գաբրիելյանը հավատը համարում է ազգային ինքնության փրկիչ խարիսխը և գտնում է, որ համայնքի ձևավորումը բխում է հենց հավատից:[1] Եթե հավատ չլիներ, համայնքներ չէին լինի, և միայն Գերմանիայի հայերի հավատի շնորհիվ է հաջողվում այստեղ հայ երեխաներ դաստիարակել:[2]

Հայ առաքելական եկեղեցու սպասավորները ձգտում են անպայման կազմակերպել եկեղեցական արարողություններ: Եկեղեցական արարողությունների համար, այն շրջաններում որտեղ չկան եկեղեցիներ, նրանք վարձակալում են: Այդ մասին նախապես ծանուցում են իրենց համայնքի ներկայացուցիչներին: Եկեղեցական արարողությունները շատ կարևոր են հայապահպանության համար: Մարդիկ, հավաքվելով եկեղեցում, լսում են պատարագ, հաղորդակից են լինում Ս. Գրքին: Պատարագը կատարվում է հայերենով: Նրանք լսում են հայերեն խոսք: Եկեղեցին այն եզակի կառույցն է, որ օտար ափերում միմյանց է կապում մեր ժողովրդի զավակներին: Որպես կանոն՝ եկեղեցի հաճախող հայի մոտ շատ բարձր է լինում հայ ինքնությունը: Եկեղեցին նաև հանդիսանում է հաղորդակցման վայր, ուր համայնքի անդամները շփվում են միմյանց հետ, ճանաչում են միմյանց, կիսվում են իրենց մտահոգություններով, առօրյա հոգսերով: Այստեղ սովորական երևույթ են հիշատակի միջոցառումների կազմակերպումը, հայոց պատմության կարևորագույն իրադարձությունների ոգեկոչումը, ավանդական կրոնական տոների կազմակերպումը (Սուրբ Ծնունդ, Տյառնընդառաջ, Զատիկ, Վարդավառ), գրական-երաժշտական երեկոները և այլն:

Հայկական սփյուռքի ձևավորումից ի վեր նրա օրակարգի ամենաառանցքային խնդիրներից մեկն էլ եղել է օտար միջավայրում ազգային ինքնության կամ նկարագրի պահպանումը,[3] և փոխանցումը հաջորդ սերունդներին[4], իսկ ազգային նկարագրի պահպանման կարևորագույն հիմքը ազգային դպրոցն է, մայրենի լեզվով կրթությունը: Ի տարբերություն որոշ այլ երկրների (Հունաստան, Կիպրոս, Բուլղարիա, ԱՄՆ, Կանադա, Արգենտինա, Լիբանան, Իրան և այլն), գերմանական պաշտոնական

[1] Տե՛ս **Тунян В. Г.,** Армянская Апостольская церковь за рубежом. Начало XXI в., Ереван, 2015, с. 230.

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **Հովյան Վ.,** Արտերկրի հայագիտական կենտրոնների դերակատարությունը, «21-րդ դար» N6, 2014, էջ 47:

[4] Տե՛ս **Թորոսյան Տ., Սարդարյան Մ.,** Հայկական սփյուռքի հնարավորությունները և ազդեցությունը Հայաստանի Հանրապետության սոցիալ-քաղաքական գործընթացների վրա, Երևան, 2017, էջ 46:

դպրոցական համակարգում հայ երեխաներին չի կարող տրվել հայկական ազգային կրթություն,[1] իսկ ինչպես ցույց է տալիս իրականությունը, սոցիոմշակութային այլ միջավայրին ինտեգրումն անխուսափելիորեն ենթադրում է էթնիկ փոքրամասնության մի ինչ-որ մասի ձուլում:[2] Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում ապրող մեր հայրենակիցները հաճախում են գերմանական դպրոցներ, հանրակրթական առարկաները անցնում են գերմաներենով: Դա իրենից մեծ վտանգ է ներկայացնում, քանի որ նրանք ամեն օր, կարելի է ասել ամեն ժամ, ամեն վայրկյան ենթարկվում են ձուլման մարտահրավերներին: Փորձը ցույց է տվել, որ այն հայը, ով խոսում է հայերենով, մոտ ապագայում նրա ձուլումը այլ ազգերի մեջ ավելի քիչ է հավանական, քան այն հայը, ով հայերեն չի խոսում: Լեզվի պահպանումը տվյալ դեպքում դառնում է Գերմանիայի թեմի հայապահպանությանն ուղղված կարևորագույն խնդիրներից մեկը: Հայ առաքելական եկեղեցին լեզվի պահպանումը, օտար ափերում մատաղ սերնդին հայ ազգային կրթությամբ ապահովվելը լուծում է հետևյալ կերպ. աշխատում է հայաբնակ վայրերում անպայմանորեն ունենալ մեկօրյա, կամ երկօրյա դպրոցներ: Այդ դպրոցներում դասավանդվում են հայագիտական առարկաներ՝ Հայոց լեզու, Հայոց պատմություն, Հայ մշակույթ, Հայ գրականություն: Որոշ դպրոցներում էլ դասավանդում են նաև երգեցողություն և ազգային պարեր: Հայ առաքելական եկեղեցուն կից մեկօրյա դպրոցներ են գործում Քյոլնում, Բեռլինում, Մայնի Ֆրանկֆուրտում, Շտուտգարտում: Դպրոցների առկայությունը չափազանց կարևոր է գերմանահայության համար: Սակայն պետք է նշել, որ այստեղ էլ կա խնդիր: Ոչ բոլոր ծնողներն են իրենց երեխաներին բերում հայկական դպրոցներ: Դրանք ունեն իրենց պատճառները: Որոշ ծնողներ վկայակոչում են ժամանակի սղությունը, մյուսները՝ դպրոցի հեռու գտնվելը, կան ծնողներ էլ, որոնք ազգային կրթությունը այդքան էլ կարևոր չեն համարում: Այդ ամենով հանդերձ, կարելի է եզրակացնել, որ Գերմանիայում Հայ առաքելական եկեղեցու հովանու ներքո գտնվող դպրոցները իրենց առջև դրված խնդիրները կատարում են գերազանց:

Գերմանիայում հայերի մշակութային միավորման խիստ կարևոր գործոն է Հայ Առաքելական եկեղեցին:[3] Ինչպես եկեղեցական արարողությունները, դպրոցաշինությունը, մշակութային միջոցառումները նույնպես գտնվում են Հայ առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմի հատուկ հոգածության ներքո: Հարկ է նշել, որ մշակութային միջոցառումնե-

[1] Տե՛ս **Ordukhanyan A.,** Armenier in Deutschland, Geschichte und Gegenwart, Erfurt, 2008, S. 26:

[2] Տե՛ս **Մինասյան Է., Մայիլյան Բ., Միտյան Հ.,** Հյուսիսասային Կովկասի Հայկական համայնքները 20-րդ դարում. Պատմություն և մարտահրավերներ, Երևան, 2018, էջ 79:

[3] Տե՛ս **Սումլյոննի U.,** Գերմանիայի Հայ սփյուռքը, «21-րդ դար» N3, 2006, էջ 115:

րը նույնպես համախմբիչ և հայապահպան հսկայական նշանակություն ունեն: Դրանք բազմազան են ու բազմաբովանդակ: Կազմակերպվում են ցուցահանդեսներ, գիտաժողովներ, ընթերցանություններ, գրական երեկոներ, Հայաստանից հրավիրում են արվեստագետներ, կատարում են հուշակոթողների բացումներ և այլն: Այս ամենից զատ, իրականացվում են նաև խաղաղ երթեր, իրազեկման արշավներ, որոնց նպատակն է գերմանացի ժողովրդին ծանոթացնել հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին, արվեստին և այլն:

Հայրենիքն ու հայրենիքի շուրջ հյուսված առասպելը, հիշողությունը սփյուռքյան ինքնագիտակցության կարևոր հիմնատարրերն են:[1] Հայրենիքի ընկալումը և պատկանելության զգացումը ոչ միայն նպաստում են ներհամայնքային կապերի սերտացմանը, այլև խթանում սփյուռքանդամների ակտիվ ներգրավ-վածությունը ընդունող երկրի և հայրենիքի սոցիալական, տնտեսական և քաղաքական գործընթացներում:[2] Հայաստանյաց առաքելական եկեղեցին առանձնահատուկ տեղ ունի Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման ու զարգացման ոլորտում:[3] Պատահական չէ, որ աշխարհի հայությանը համախմբող ամենակարևոր գործոնը հենց Մայր հայրենիքի առկայությունն է: Իսկ թիկունքում հզոր Հայրենիք ունենալը և գիտակցելը, որ հարկ եղած դեպքում Հայրենիքը սիրով կընդունի և ապաստան կտա, յուրաքանչյուր հայի ամենամեծ երազանքն է: Գերմանիայի թեմը մշտապես կազմակերպում է տարբեր տիպի հանգանակություններ, ինչպես նաև աջակցում է այն բոլոր ձեռնարկները, որոնք ուղղված են Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններին օգնություն տրամադրելուն: Թեմերի հոգևոր հովիվները մշտապես լծված են այդ ազգանվեր գործին: Բացի դրանից, համագործակցելով Գերմանիայում ՀՀ դեսպանության հետ, նրանք իրենց նպաստն են բերում հայ-գերմանական հարաբերությունների սերտացմանը: Այսօր Հայաստան – Գերմանիա հարաբերությունները դինամիկ զարգացում են ապրում:[4] Դա նաև շնորհիվ Գերմանիայի թեմի և գերմանահայության:

Հայ առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմի գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը հանդիսանում է թուրք-ադրբեջանական լոբբիին դիմակայելը: Նրանք դա անում են Գերմանիայում գործող Հայ դատի հանձնախմբերի հետ համագործակցած: Գերմանիայում ապ-

---

[1] Տե՛ս **Հակոբյան Հ.,** Սփյուռքագիտության արդի հիմնախնդիրները, http://www.ysu.am/files/01H_Hakobyan.pdf. էջ 7:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **Մինասյան Է.,** Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, 2013, էջ 402:

[4] Տե՛ս Armeniens Präsident in Berlin, http://www.deutscharmenischegesellschaft.de/2010/06/26/armeniens-prasident-in-berlin/#more-1967

րում է Եվրոպայի թուրքական ամենամեծ սփյուռքը: Նրանք հիմնականում ապրում են թաղամասերով, ունեն կրթական շատ ցածր ցենզ և երբեմն իրենց համայնքի ներսում առաջնորդվում են ոչ թե գերմանական, այլ սեփական, շատ հաճախ սովորույթային օրենքներով: Թուրքական սփյուռքը անընդհատ խնդիրներ է ստեղծում Հայ առաքելական եկեղեցու և գերմանահայության համար: Հարկ է նշել, որ մինչ օրս գերմանաբնակ մեր հոգևոր հայրերը, մեր հայրենակիցները կարողացել են ակտիվորեն դիմակայել թուրքական լոբբիին: Ավելին, Հայ առաքելական եկեղեցու, հայ համայնքների, լոբբիստական կազմակերպությունների երկար տարիների միահամուռ ջանքերի և քրտնաջան աշխատանքի շնորհիվ Գերմանիայի Բունդեսթագը 2016թ. հունիսի 2-ին ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև[1]: Սա այն դեպքում, երբ թուրքերը Գերմանիայի Դաշնային Հանրապետության գրեթե բոլոր մակարդակներում ունեն ազգությամբ թուրք քաղաքական գործիչներ: Այստեղ շատ ակտիվ է նաև Ադրբեջանը: Անընդհատ ստեղծվում են տարաբնույթ կազմակերպություններ, որոնք զբաղված են հակահայ քարոզչությամբ, պատմության կեղծարարությամբ: Այդ ամենը ուղղորդվում է պաշտոնական Բաքվի կողմից, որի համար ծախսվում է միլիոնավոր դոլլարներ: Այս ամենով հանդերձ, Գերմանիայում ապրող մեր հայրենակիցները մեծ հաջողությամբ պայքարում են թուրք – ադրբեջանական լոբբիի դեմ, որում ոչ երկրորդական դեր ունի Հայ առաքելական եկեղեցին: Հայ եկեղեցու քաղաքական ներգրավվածությունը եղել է և այսօր էլ կա:[2] Եկեղեցին Հայկական սփյուռքում առանձնահատուկ նշանակություն ունեցող քաղաքական գործոն է:[3]

2020թ. հուլիսի 12-ին Ադրբեջանը սադրիչ գործողություններ ձեռնարկեց Հայաստանի հյուսիսարևելյան սահմանագոտու երկայնքով: Այդ լուրը ցնցեց ողջ հայությանը, ինչպես Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում: Հայ առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմը արեց հնարավորը, որպեսզի Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում ճիշտ իրազեկում լինի և ճիշտ գնահատականներ տրվեն միջազգայնորեն ճանաչված պետության սահմանների անձեռնմխելիությունը խախտելու համար: Վերոշարադրյալի մասին մամուլում հանդիպում ենք հետևյալ հաղորդագրությունը. «Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ.

[1] Առավել մանրամասն տե՛ս Գերմանիայի Բունդեսթագում ընդունված Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևի տեքստը, http://www.genocide-museum.am /arm/Germany.php

[2] Տե՛ս **Tölölyan Kh.,** The Role of the Armenian Apostolic Church in the Diaspora, p. 67, https://www.academia.edu/28688102/TololyanKhachig-The_Role_of_the_Armenian_Apostolic_Church_in_the_Diaspora.pdf

[3] Տե՛ս **Tölölyan Kh.,** Traditionelle Identität und politischer Radikalismus in der armenischen Diaspora, Herausgegeben von Dabag Mihran, Platt Kristin, Identität in der Fremde, Bochum, 1993, S. 215.

Սերովբե եպիսկոպոս Իսախանյանը և թեմական խորհուրդն այսօր նամակով դիմել է Գերմանիայի Դաշնային հանրապետության Արտաքին գործերի նախարար Հայքո Մասասին եւ Գերմանական Խորհրդարանի խմբակցությունների արտաքին հարաբերությունների խոսնակներին, ինչպես նաև Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների ղեկավար եպիսկոպոսներին և Գերմանիայի Միջեկեղեցական Կեդրոնական Խորհուրդի ատենապետին՝ Հայաստանի հյուսիսային սահմանների վրա վերջին օրերին ադրբեջանական հարձակումների առնչությամբ: Գրությամբ նրանք խնդրել են նամակների հասցեատերերին դատապարտել ադրբեջանական իշխանությունների ռազմական հոետորաբանությունը, նրանց ստորաբաժանումների հարձակումները և կողմերին կոչ են արել վերադառնալ խաղաղ բանակցությունների սեղան»:[1]

Այսպիսով, հայտնի է, թե որքան մեծ է Հայ առաքելական եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում,[2] իսկ սփյուռքահայության համար այն շարունակում է մնալ բարձրագույն արժեք՝ էթնիկ ինքնորոշման առաջնային միջոց:[3]

Հայ առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմը կազմավորվել է 1991թ.՝ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի կոնդակով: Առաջնորդանիստը Քյոլնի Ս. Սահակ – Մեսրոպ եկեղեցին է: Այսօր թեմի կազմի մեջ մտնում են ավելի քան 20 մշակութային միություններ և 15 համայնքներ: Եկեղեցին ակտիվորեն ներգրավված գերմանահայության համայնական կյանքում:

Հայ առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմի գործունեության հիմնական ուղղությունը հայապահպանությունն է: Հայապահպանության ազգանվեր գործին լծված են համայնքի բոլոր հոգևորականները: Թեմի հովանու ներքո կազմակերպվում են եկեղեցական արարողություններ, մշակութային միջոցառումներ, իրազեկման արշավներ, դասախոսություններ, գիտաժողովներ, ընթերցումներ, կինոդիտումներ և այլն: Եկեղեցուն կից գործում են դպրոցներ, որտեղ դասավանդվում են հայագիտական առարկաներ՝ Հայոց լեզու, Հայոց պատմություն, Հայ գրականություն, ազգային երգ ու պար: Դպրոց հաճախող երեխաները մոտիկից ծանոթանում են հայ ժողովրդի պատմությանը, նրա անցյալին, հարուստ մշակու-

[1] Տե՛ս Գերմանիայի թեմակալ առաջնորդն ու թեմական խորհուրդը դիմել են Գերմանիայի ԱԳ նախարարին, https://iravunk.com/news/116655?fbclid=IwAR3UTEX9RBD7UJlp10tbBKzvBZ5bYDC_2TPYfWUSJlLUb3tZQt85VNxdWu0

[2] Տե՛ս **Казаров С. С., Оганнисян М. С.,** Возрождение религиозной жизни Донских армян в конце XX - начале XXI веков, Армянская община Дона в новейший период: история, институты, идентичность, Сборник научных статей, (Составитель - Минасян Э), Ереван, 2020, с. 159.

[3] Տե՛ս **Мелконян Э.,** Армянская Апостольская Церковь во взаимоотношениях Армении и Диаспоры, Религия и политика на Кавказе, Материалы международной конференции, под ред. Искандарян А., Ереван, 2004, с. 37.

թային ավանդույթներին: Փորձը ցույց է տվել, որ եկեղեցի և դպրոց հաճախող երեխայի մոտ բավականին բարձր է հայ ինքնությունը և ապագայում նրա ձուլվելու հնարավորությունը շատ փոքր է:

Հայապահպանությունը Գերմանիայի հայ համայնքում գտնվում է բարձր մակարդակի վրա, և չնայած որոշակի դժվարություններին (արևմտյան մտածելակերպ, աշխարհաքաղաքացի, խառնամուսնություններ, լեզվի նահանջ և այլն)՝ կարելի է եզրակացնել, որ Հայ առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմը իր առջև դրված խնդիրները կատարում է գերազանց:

Майрануш Погосян, Германская епархия Армянской Апостольской Церкви - В статье представлены основные направления деятельности Германской епархии Армянской Апостольской Церкви для сохранения армянской идентичности в армянских общинах Гармании.

Германская епархия Армянской Апостольской Церкви была образована в 1991 году. Сегодня епархия включает в себя более 20 культурных объединений и 15 общин. Церковь активно участвует в общественной жизни немецких армян.

Основным направлением деятельности Германской епархии Армянской Апостольской Церкви является сохранение армянской идентичности. Все духовенство общины привержены для этой благой цели. Под эгидой епархии проводятся церковные церемонии, культурные мероприятия, информационные компании, лекции, конференции, чтения, показы фильмов и т. д. При поддержке церкви действуют армянские школы, где преподаются арменоведенческие предметы: армянский язык, армянская история, армянская литература, народные песнии и танцы. Дети, посещающие школу, знакомятся с историей армянского народа, его прошлым, богатыми культурными традициями. Опыт показывает, что ребенок, посещающий церковь и школу, имеет довольно высокую армянскую идентичность и шансы на ассимиляцию в будущем очень малы.

Несмотря на некоторые трудности (западный менталитет, космополитизм, смешанные браки, языковые отступления и т. д.), сохранение армянской идентичности в армянской общине Германии находится на высоком уровне.

Mayranush Poghosyan, German Diocese of the Armenian Apostolic Church - The article presents the main directions of the activities of German Diocese of the Armenian Apostolic Church for the preservation of Armenian identity in the Armenian communities of Garmany.

The German Diocese of the Armenian Apostolic Church was founded in 1991. Today the diocese includes more than 20 cultural associations and 15

communities. The church actively participates in the social life of German Armenians.

The main activity of the German Diocese of the Armenian Apostolic Church is the preservation of the Armenian identity. The whole priesthood of the community is committed to this mission. Church ceremonies, cultural events, information campaigns, lectures, conferences, readings, film screenings, etc. are held under the auspices of the diocese. With the support of the church Armenian schools are operating, where Armenian studies are taught: Armenian language, Armenian history, Armenian literature, folk songs and dances. Children attending school get acquainted with the history of the Armenian nation, with their past, and with rich cultural traditions. Experience shows that a child attending church and school has a quite high Armenian identity and the chances of assimilation in the future are very small.

Despite some difficulties (Western mentality, cosmopolitanism, mixed marriages, linguistic deviations, etc.), the preservation of the Armenian identity in the Armenian community of Germany is at a high level.

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ

ՏԻԳՐԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր - Պետականության անկում, կաթողիկոսական աթոռ, Հռոմկլա, Պահլավունիներ, դեգերումներ, Գրիգոր Բ Վկայասեր, եկեղեցի, միջեկեղեցական հարաբերություններ, պայքար, ծրագիր,Կիլիկիա։

1045 թվականից հետո Հայաստանը հայտնվել էր միանգամայն նոր իրադրության առջև։ Անիի թագավորությունը վերացել էր, կաթողիկոսը երկրից հեռացված ու մեկուսացված էր, իշխանական զինուժը կազմալուծված։

Եկեղեցու գործունեությունն էլ ավելի վատացավ այն ժամանակ, երբ տասնյակ հազարավոր հայեր սկսեցին թողնել հայրենիքը և գաղթել օտար երկրներ, մասնավորապես, հարևան Վրաստան, Բյուզանդական կայսրության տարբեր շրջաններ և այլ վայրեր։ Իր հերթին Բյուզանդական կայսրությունը, հայոց եկեղեցին դիտելով որպես հայկական թագավորության անկումից հետո հայ հոգևոր և քաղաքական ուժերը միավորող միակ կառույցը, հետևողականորեն փորձում էր վերջինիս իր ազդեցության տակ գցել։ Միակ լուծումը, որ տեսնում էր Բյուզանդական կայսրությունը վերոնշյալ հարցում, կաթողիկոսությունը Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռին ենթարկեցնելն էր։

Բյուզանդիան դեռ Անիի Բագրատունյաց թագավորության անկումից առաջ էլ ամեն կերպ ձգտում էր հայրապետական աթոռը հեռացնել Մեծ Հայքի սահմաններից[1]։ Դեռ ավելին՝ Բյուզանդական եկեղեցին որդեգրել էր նույն զավթողական քաղաքականությունը մյուս եկեղեցիների նկատմամբ՝ ձգտելով իր դավանաբանական սկզբունքները պարտադրելու ճանապարհով աստիճանաբար ձուլել նրանց։ Տեղին է նշել, որ և՛ Պարսկաստանը, և՛ Արաբական խալիֆայությունը նույն կրոնական քաղաքականությունն էին վարում իրենց ենթակայության տակ գտնվող ժողովուրդների նկատմամբ՝ գտնելով, որ կրոնական խաղաղությունը քաղաքական կայունության հիմքն է։

Բյուզանդիան ամեն կերպ ջանում էր Հայոց կաթողիկոսի հաստատումն ու նշանակումը իրականացնել կայսեր միջոցով, որով հեշտ կլիներ սահմանափակել կաթողիկոսների իրավունքները։

[1] Տ՛ես **Բոզոյան Ա.**, «Կաթեղիկոս հայոց» տիտղոսի նորովի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո»Հայաստանը և քրիստոնյա արևելքը,Երևան, 2000, էջ՝ 80-85։

Կայսրությունը շատ մեծ նշանակություն էր տալիս հայոց կաթողիկոսությանը, որն ազդեցիկ ուժ էր թագավորության կողքին, իսկ թագավորության անկումից հետո փաստորեն ողջ Մերձավոր Արևելքով ցրված հայությանը համախմբող միակ կառույցն էր:

Հայրապետական աթոռի դեգերումները սկսվեցին Պետրոս Գետադարձի աթոռակալման տարիներին, երբ վերջինս բյուզանդական կայսեր ճնշման տակ ստիպված եղավ աթոռը Սեբաստիա տեղափոխել, քանի որ նրան արգելվեց Անի վերադառնալ:

Աթոռի դեգերումների վերաբերյալ Ա. Տեր-Միքելյանը նշում է. «Հայաստանյայց աստվածային աթոռին վիճակված էր գրեթե ամբողջ Հայաստանը պտտելու և նորա անկյունք սրբագործելու»[1]:

Հայրապետական աթոռը Խաչիկ Բ (1058-1065) կաթողիկոսից հետո թափուր էր մնացել: Ինչպես նշեցինք, Բյուզանդիան էլ ամեն կերպ խոչընդոտում էր նոր կաթողիկոսի ընտրություններին: Այդ խնդրի առնչությամբ գործնական քայլերի դիմեց Կարսի նախկին թագավոր Գագիկ Աբբասյանը[2], ում նախաձեռնությամբ էլ 1066 թ.-ին Լեռնային Կիլիկիայի Ծամնդավ բերդաքաղաքում գումարվում է մի ժողով, որտեղ նոր կաթողիկոս է ընտրվում Հարավային Հայաստանի և Միջագետքի կուսակալ Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամը (1066-1105), ով ստանում է Գրիգոր Բ Վկայասեր անունը և հիմնում է Պահլավունիների կաթողիկոսական հարստությունը (1066-1203)[3] : Նրա աթոռակալությամբ Հայոց կաթողիկոսների հաջորդականության մեջ տեղի ունեցավ մի էական փոփոխություն: Կաթողիկոսական աթոռը համարվեց տոհմական, և Պահլավունիները, ովքեր ներկայանում էին իբրև Հայոց առաջին հայրապետ Ս.Գրիգոր Լուսավորչի տոհմակիցներ, սկսեցին ժառանգականության սկզբունքով բազմել կաթողիկոսական գահին: Այս երևույթը շարունակվեց շուրջ մեկ ու կես դար:[4]

Այս գործընթացն իր նախապատմությունն է ունեցել՝ սկսվելով դեռևս 11-րդ դարի 20-40-ական թվականներից, երբ Բագրատունյաց թագավորության մեջ կարևոր դիրքի հասած Պահլավունի իշխանական տոհմի ներկայացուցիչները շարժում էին սկսել կաթողիկոսական գահին տիրանալու համար: Այն մի ուշագրավ, հեռուն գնացող ծրագիր էր, որն ուներ որոշակի դրդապատճառներ և հիմնավորումներ: Փաստերը համադրելով՝ կարծում ենք, որ այդ գործի հիմքը դրեցին Անիի թագավորության ազդեցիկ գործիչներ սպարապետ Վահրամ Պահլավունին և նրա եղբայր

---

[1] **Տեր - Միքելյան Ա.**, Հայ եկեղեցին և Բյուզանդյան ժողովոց պարագայք, Մոսկվա, 1892, էջ 160:

[2] Տե՛ս **Ներսէս Շնորհալի**. Վիպասանութիւն, Երևան, 1981, էջ 114-116:

[3] **Օրմանյան. Մ**., Ազգապատում, հ. Ա, Էջմիածին 2001 **,** էջ 1489-1560:

[4] Տե՛ս **Մաթևոսյան Կ.**, Անիի ազնվականության պատմությունից կամ 3 Գրիգոր Մագիստրոս, Երևան, 2015, էջ 38:

Աբլղարիբ մարզպանը, իսկ բուն ծրագրի հեղինակն ու կյանքի կոչողը վերջիններիս եղբորորդի Գրիգոր Մագիստրոս Պահլավունին էր[1]:

Ի վերջո, 1065 թ.Կարսի թագավոր Գագիկ Աբասյանն իր թագավորությունը Բյուզանդիային զիջելու գնով ձեռք բերեց հայոց նոր հայրապետ ընտրելու թույլտվություն: Այս մասին վկայություն կա սկզբնաղբյուրներու և հատկապես դրանցից երկուսում[2]:

Պատահական չէ, որ այդ պաշտոնում ընտրվեց կայսրության համար համեմատաբար չեզոք մարդ: Նա էր, որ ակտիվորեն հարաբերություններ սկսեց քույր եկեղեցիների հետ՝ անձամբ այցելելով այդ եկեղեցիներն ու տեղի հայկական համայնքները: Ա. Տեր-Միքելյանը հենց նրան է ներկայացնում որպես Հայոց եկեղեցին միջազգային և միջեկեղեցական ասպարեզ հանողի[3]: Մ.Օրմանյանը պարտադիր պայման է համարում այնպիսի գործչի ընտրության անհրաժեշտությունը , «որուն յունասէր զգաացումները երկբայութեան տեղի չթողուին», ըստ այդմ էլ՝ իրադարձությունը բացատրում է միայն դրանով[4]:

Նրա աթոռակալության շրջանը նշանավորվեց մի շարք իրողություններով, որոնք հայոց եկեղեցու վերակազմակերպման գործընթացի արդյունք էին: Այսպես, եկեղեցական ժողովը միաոժամանակ կորցնում է հայրապետական ընտրությունը վավերացնող մարմնի իր գործառույթը՝ այն հանձնելով «սուրբ հոգուն»: Պատահական չէ, որ Գրիգոր Վկայասերի ընտրության առիթով Մ.Օրմանյանը գրում է. «եպիսկոպոսներէն գումարած ընտրողական ժողով չէ եղածը»[5]:

Այսպիսով, քաղաքական հանգամանքների բերումով եկեղեցական ժողովը միաոժամանակ զրկվում է կաթողիկոսական ընտրություն անցկացնելու իրավասությունից, որը հայ պատմագրության ընկալմամբ, հանձնվում է «սուրբ հոգուն»: Իրականում վերադարձ է կատարվում կաթողիկոսական իշխանության ժառանգականության կարգին.հայրապետական աթոռն անցնում է Պահլավունյաց տան անդամներին, որոնք իրենք են նշանակում իրենց հաջորդողներին:

Հայոց եկեղեցու պատմության այս շրջանն այնքանով է հետաքրքրական, որ Կիլիկիայում հաստատված Հայոց կաթողիկոսարանը, ակտիվ շփման մեջ լինելով Մերձավոր Արևելքի պես բարդ տարածաշրջանում ապրող ժողովուրդների հետ, մի տեսակ նոր քաղաքական կարգավիճակ

---

[1] Տե՛ս նշվ.աշխ., էջ 39:

[2] **Ներսես Շնորհալի**, Բանք չափաւ, Վենետիկ, 1928, էջ 598, Սրբոյն **Ներսեսի Շնորհալւոյն** Պատմութիւն Վարուցն, «Սոփերք Հայկականք», հ.ԺԴ,Վենետիկ,1854, էջ 17:

[3] **Տեր - Միքելյան Ա.**. նշվ. աշխ., էջ 154:

[4] **Օրմանյան Մ.,** նշվ.աշխ., , էջ՝ 1490:

[5] **Օրմանյան Մ**., էջ՝ 1489:

է ձեռք բերում՝ պաշտոնական հարաբերություններ հաստատելով Բյուզանդիայի, խաչակիր իշխանությունների, կաթոլիկ հոգևոր պետերի, եվրոպական միապետերի, Արևելքի մահմեդական և քրիստոնեական կրոնական ու քաղաքական առաջնորդների հետ[1], որի արդյունքում տեղի ունեցավ Հայոց եկեղեցու վերակազմակերպման մյուս դրսևորումը՝ կաթողիկոսական տիտղոսի փոփոխությունը: Արդեն Գրիգոր Գ Պահլավունու աթոռակալության կապակցությամբ Մատթեոս Ուռհայեցին գործածում է «Կաթողիկոս ամենայն տանն հայոց»[2] արտահայտությունը՝ «կաթողիկոս Հայոց Մեծացի»-ի փոխարեն: 1160-1170-ական թթ. հայ-բյուզանդական բանակցությունների վավերագրերում ևս գտնում ենք նոր տիտղոսի գործածության դրվագներ[3]: Փոփոխության պատճառը միանգամայն հասկանալի է. հայոց կաթողիկոսարանի աշխարհագրական ընկալումը հետզհետե փոխարինվում է էթնիկական հատկանիշով[4]: Հայոց կաթողիկոսը դրանից հետո ոչ միայն Մեծ Հայքի, այլև տարասփյուռ ողջ հայության հոգևոր առաջնորդն էր: Հենց այս գիտակցումով է 1160-ական թթ. Ներսես Շնորհալին սահմանել Հայոց կաթողիկոսի հոգևոր իրավասության սահմանները՝ այն տարածելով հայազգի բոլոր այն քրիստոնյաների վրա, «որք յարևելս՝ ի սեփական աշխարհս Հայաստանեայց բնակեալք,և որք յարևմտեան կողմանսդ սահեալք նշդեհութեամբ,և որք ի Միջերկրեայս»[5]: Հայրապետի նոր տիտղոսն օտար աղբյուրների կողմից համարժեք է դիտվում «խալիֆա» մահմեդական տիտղոսին[6]:

Այսպիսով, վստահ կարող ենք պնդել, որ ի հակադրություն հայոց քաղաքական կյանքում ավելի խորացող մասնատվածությանն ու արտագաղթին, հայ եկեղեցին քայլեր էր ձեռնարկում ամեն գնով պահպանելու եկեղեցական նվիրապետության միասնությունն ու ամբողջականությունը: Հիշատակելի է այս ուղղությամբ Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսի այցը Մելիքշահին՝ մյուսներին գահընկեց անելու և իրեն հայոց ընդհանրական կաթողիկոս ճանաչելու խնդրանքով[7]: Պատմական որոշակի հանգամանքներում առաջացել էին միաժամանակ մի քանի կաթողիկոսարաններ, ինչը կարելի է ասել աննախադեպ երևույթ էր Հայ Առաքելական Եկեղեցու

---

[1] Տե՛ս **Բոզոյան. Ա.**, նշվ. աշխ., էջ 80-85:

[2] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Երևան, 1991, էջ 360:

[3] Տե՛ս **Բոզոյան Ա.**, Հայոց կաթողիկոսի նորովի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո, «Քրիստոնյա Արևելքը և Հայաստանը», Երևան, 2000, էջ 80-85:

[4] Նույն տեղում:

[5] **Ներսես Շնորհալի**, Թուղթ ընդհանրական, աշխ. **Է. Բաղդասարյանի**, Երևան,1995,էջ 53:

[6] Տե՛ս **Բոզոյան Ա.**,նշվ. աշխ., էջ 83-84:

[7] **Մատթէոս Ուռհայեցի ,** էջ 256-257:

պատմության մեջ: Դրանք էին՝ Ծամնդավում՝ Գրիգոր Բ Վկայասերը, Հռնիում՝ Թեոդորոսը, Մարաշում՝ Պողոսը, Անիում՝ Բարսեղ Ա Անեցին[1]:

Անիի Բագրատունյաց թագավորության կործանումից հետո Կապադովկիայում հայտնված հայրապետական աթոռն աստիճանաբար տեղաշարժվեց հարավ-արևմուտք՝ դեպի Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք: Սա հիմնականում կապված էր այդ տարածքներում արագ կազմավորվող և նույնքան էլ արագ անկում ապրող հայկական իշխանությունների գոյությամբ: Պետք է արձանագրենք, որ Կիլիկիայում ստեղծված հայկական առաջին իշխանությունները գոյատևեցին մինչև իրենց հիմնադիրների մահը:

Բյուզանդական կայսրությունը, հետևողականորեն փորձում էր շարունակել Հայ եկեղեցու գլխատումն իրականացնելու իր ծրագիրը: Միակ լուծումը, որ տեսնում էր կայսրությունն այս հարցում, կաթողիկոսությանն ինքնուրույնությունից զրկելն ու Կ. Պոլսի պատրիարքական աթոռի ենթակայության տակ մտցնելն էր, միով բանիվ՝ Հայոց եկեղեցին Արևելքում իր քաղաքականությունն իրագործելու ճանապարհին իբրև գործիք օգտագործելը: Նույնիսկ Մանազկերտի ճակատամարտից ու Խաչակրաց արշավանքներից հետո էլ Բյուզանդական կայսրությունը չհրաժարվեց այդ քաղաքականությունից:

Հիշյալ գործոնները հաշվի առնելով՝ պետք է արձանագրել, որ Հայոց կաթողիկոսությունը, լինելով ողջ հայության խոսնակը, փնտրում էր ամեն հնարավոր միջոց՝ սեփական ինքնուրույնությունը պահպանելու և անկախ պետականությունը վերականգնելու համար: Շատ ժամանակ չէր անցել Հայոց թագավորության անկումից և, բնականաբար, մեծ էր այն կրկին վերականգնված տեսնելու ցանկությունը: Բուն Հայաստանում՝ Մեծ Հայքի տարածքում, մեծ չափերի հասնող արտագաղթն ավելի էր դժվարացնում պետականության վերահաստատման գործը, իսկ Փիլարտոսի, Գող Վասիլի, Ռուբենի և մյուսների իշխանությունների առկայությունը հուշում էր պետականության վերականգնմանն ուղղված ջանքերն աշխարհագրորեն տեղափոխել այլ տարածքներ, ուր օրեցօր ստվարանում էր հայ բնակչությունը և նպաստավոր պայմաններ էին ստեղծվում հիշյալ գործընթացի համար:

Երկար դեգերումներից հետո Հայոց կաթողիկոսարանը փորձեց հաստատվել «ի բազում վայրս՝ ի Կարմիր վանքն, և ի Շուղրն, և ի Ծովքն, գնացեալ դադարէ ի Հռոմկլայն կոչեցեալ դղեակն վասն Հռոմ աբեղայի անդ բնակելոյ[2]»: Սմբատ Սպարապետն էլ այս մասին գրում է. «Իսկ յօրերս երետ կինն պարոն Ճոսլին զՀռոմկլայն սուրբ կաթողիկոսին Տէր Գրիգորի-

[1] **Հովհաննիսյան Ա.**, Հայոց եկեղեցին Կիլիկյան շրջանում, Երևան 2020, էջ՝ 20-21:

[2] Հաւաքումն պատմութեան **Վարդանայ** վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 128, հմմտ. **Վարդան Բարձրբերդցի**. Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 167:

սի ձեռնագրով զի մնասցէ աթոռ հայապետութեան Հայոց. եւ կայ գիրն մինչև ցայսօր[1]»: իսկ Ա. Տեր-Միքելյանը կարծում է, որ Ճոսլինի կինն ու որդին ծախել են Հռոմկլան Գրիգոր Գ-ին[2]: Կա ևս մեկ տեսակետ,ըստ որի Գրիգոր Գ կաթողիկոսն ուրախությամբ ընդունեց Հռոմկլան իրեն նվիրելու առաջարկը, որն արել էր Բեատրիսը՝ Ճոսլին II Կուրտենեցու կինը: Հռոմկլան, ըստ երևույթին, սկզբում շնորհվել էր «ի տնօրինութիւն», սակայն հետագայում կաթողիկոսը 15 000 դահեկանով գնել էր Ճոսլին II-ից[3]»:

Ուսումնասիրողներից ոմանք հայրապետական աթոռի տեղափոխումը Հռոմկլա դիտում են որպես Ռուբինյանների կողմից հայկական պետականության ձևավորմանն ուղղված քայլ այնքանով, որ Հռոմկլայում կաթողիկոսությունն ազատվում էր Կ. Պոլսի պատրիարքության ազդեցությունից: Դրանով նաև հնարավոր էր դառնում «եկեղեցին ներգրավել կառավարման համակարգում և վերահսկողություն սահմանել նրա գործունեության նկատմամբ[4]» , քանի որ Հռոմկլան վարչական առումով Կիլիկյան Հայաստանից դուրս էր:

Հռոմկլան բավական երկար ժամանակ մնաց որպես կաթողիկոսանիստ ամրոց (1149–1292):

1151 թ. դադարում է գոյություն ունենալ Եդեսիայի կոմսությունը, և նրա նախկին տարածքները, այդ թվում և Հռոմկլան, հայտնվում են Հալեպի սուլթան Նուր ալ-Դինի և Իկոնիայի սելջուկյան սուլթան Մասուդի իշխանության տակ: Որպես դրա վկայություն՝ ուսումնասիրողները մատնացույց են անում Վարդան պատմիչի՝ նոր կաթողիկոս նշանակելու Նուր ադ-Դինի միջամտության մասին հիշատակությունը, ըստ որի՝ Ներսես Շնորհալու մահից հետո «առնու զքօղն Գրիգոր եղբօրորդի իւր ձեռնտուութեամբ Նորադնին[5]»: Այս մասին տեղեկություններ են հաղորդում նաև Ստեփանոս եպիսկոպոսը իր տարեգրության մեջ[6] և Միքայել Ասորին[7]: Սակայն ըստ Սաատեթյանի այս փաստը միանշանակ ընդունել չի կարելի: Նա կարծում է,որ որ «կարող ենք սակայն աներկբայ ըսել, թէ Ապիրատ լոկ իբրև կաթողիկոսական տեղապահ մը հռչակվեցավ ի բացակայության Գրիգոր Տղայի, և սա երբ եկավ Հռոմկլա և կաթողիկոսացավ 1173-ին, յուր

---

[1] Տարեգիրք **Սմբատայ Սպարապետի**, Փարիզ, 1859, էջ 95:

[2] Տե՛ս **Տեր - Միքելյան Ա.**. նշվ. աշխ., էջ 160

[3] Տե՛ս նաև **Տեր - Պետրոսյան. Լ.** , Հայերը և խաչակիրները, հ. Ա, Երևան, 2005, էջ 392:

[4] **Հարությունյան Գ.**.,Դիտողություններ Կիլիկիայում հայկական պետականության առաջացման շուրջ.– Հայոց պատմության հարցեր, Երևան, 2005, էջ 228:

[5] Հաւաքումն պատմութեան **Վարդանայ** վարդապետի, էջ 129, հմմտ. **Վարդան Բարձրբերդցի**. Պատմութիւն Տիեզերական, էջ 168:

[6] Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., հ. I, կազմեց **Վ. Ա. Հակոբյան**, Երևան, 1951, էջ 35:

[7] Ժամանակագրութիւն **Տեառն Միխայէլի** ասորւոց պատրիարքի, Երուսաղէմ, 1871, էջ 472:

առաջին գործն եղավ անշուշտ հոգևոր հովիվ մը հղել այն կարևոր գավառին, որ դժբախտաբար թատր էր եղած երկու հայազգի իշխաններու խռովությանց և հորմե դեռ նոր բաժնված էր ինքն հապճեպով[1]»:

Հալեպի աթաբեկից ոչ բացարձակ կախվածություն ունենալու մասին է խոսում այն փաստը, որ Ներսեսի մահից հետո, ինչպես Միքայել Ասորին է վկայում, Գրիգոր Ապիրատն է գահին նստում, իսկ Նուր ադ-Դինի միջամտությունը Մլեհի միջոցով է լինում, ում էլ իր հերթին թերևս դիմել էր Գրիգոր Տղան: Սրանով կարելի է ենթադրել, որ աթաբեկից կախված լինելու հանգամանքը շատ դեպքերում հարաբերական էր, և կաթողիկոսարանի գործերին արտաքին միջամտությունն այս դրվագում Գրիգոր Տղայի խնդրանքով էր:

Հայ-բյուզանդական միութենական բանակցությունների շրջանում Հայոց կաթողիկոսարանը, լինելով քաղաքական ոչ հզոր միավոր, ուներ կառավարման մի շարք լծակներ և հոգևոր ակնհայտ հեղինակություն: Սա բխում է այն հանգամանքից, որ կաթողիկոսի իշխանությունը տարածվում էր ազգությամբ հայ բոլոր հավատացյալների վրա՝ անկախ նրանից, թե որ պետության կամ իշխանության տակ էին նրանք ապրում: Այն գերագահ էր հայկական մյուս բոլոր իշխանությունների նկատմամբ՝ Հայաստանում և Հայաստանից դուրս գտնվող, ու շատ դեպքերում իբրև միջնորդ և հաշտարար էր հանդես գալիս հակամետ հայ իշխանական տների միջև: Սրա վկայությունն են Ներսես Շնորհալու և Գրիգոր Տղայի հաշտարար առաքելությունները՝ դադարեցնելու Կիլիկիայում իրար դեմ պատերազմող հայ իշխանական տների՝ Ռուբինյանների և Լամբրոնի Օշինյանների ատելությունն ու թշնամանքը[2]:

Այս շրջանում հայոց եկեղեցին մտերմիկ հարաբերությաուններ ե ունեցել ասորի հոգևորականության հետ[3]:

Միայն երկու հանգամանք է հիշվում, որ ինչ-որ շրջան լարվածություն մտցրեց հարաբերությունների մեջ, բայց՝ միայն ժամանակավորապես.

> 1.Միքայել Ասորի պատրիարքի օրոք առաջ եկավ Բար-Վահբունի հերձվածը, որին հովանավորում էին նաև Հայոց արքունիքն ու կաթողիկոսարանը: Բար-Հեբրիոսն ու ասորական մյուս մատենագիրները միաբերան մեղադրում են հայերին, որ Հռոմկլայում ապաստան տալով և խրախուսելով հակաթոռ պատրիարքին՝ պատճառ դարձան 13 տարի տևած հերձվածի[4],

---

[1] **Մամբատ** եպսկ. **Սաատեթյան**, Ներսէս Լամբրոնացի, Անթիլիաս, 1981, էջ 52-53:

[2] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, նշվ աշխ., էջ 39-40:

[3] Նշվ. աշխ., էջ 51:

[4] Տե՛ս **Տեր - Մինասյանց Ե.**, Հայ եկեղեցու հարաբերությունները ասորվոց եկեղեցիների հետ, Ս. Էջմիածին, 1908, էջ 282:

2. Հզորացող Կիլիկյան թագավորությունը ասորիների նկատմամբ երբեմն փորձում էր վարվել այնպես, ինչպես հույներն իրենց հետ՝ Հայոց եկեղեցու միջոցով փորձելով ենթարկել և ստորադաս վիճակի մեջ դնել Ասորական եկեղեցին: Բար-Եբրեոսը պատմում է, որ Հայոց կաթողիկոսը ասորիների Իգնատիոս Րաբբան Դավիթ պատրիարքից նույնիսկ մի սեղան է պահանջում Խառանի ասորական եկեղեցում[1]:

11-12-րդ դարերում հայոց եկեղեցու գործունեությունը միտված էր կենտրոնացված պետականության վերականգնմանը: Այս նպատակի իրագործման լավագույն միջոցն այդ տարածքներում (Կիլիկիա, Ասորիք, Եգիպտոս, Բալկաններ) եկեղեցական թեմերի կազմակերպումն էր: Բացի սրանից, պետականության հասնելու համար անհրաժեշտ էր հայերի հետ կողք կողքի ապրող քրիստոնյա մյուս ազգերի՝ հույների, ասորիների և լատինների քաղաքական ու եկեղեցական կազմակերպությունների աջակցությունը:Այս շրջանում դրան էին ուղղված Հայ եկեղեցու իրականացրած հաշտության փորձերը նաև քրիստոնեական մյուս եկեղեցիների նկատմամբ[2]:

Այս հենքի վրա նշված ժամանակաշրջանում սկսեցին ակտիվանալ հայ-բյուզանդական եկեղեցիների միության շուրջ բանակցությունները, որոնք էլ, կարելի է ասել, վեճերի պատճառ դարձան կիլիկյան հոգևորականության և բուն Հայաստանի վանականների միջև: Կիլիկիայում այս առումով աչքի էր ընկնում Տարսոնի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացին, իսկ արևելյան եկեղեցականների շարքում՝ Գրիգոր Տուտեորդի վարդապետը: Որքան էլ շեշտվում էին գաղափարական հակասություններն ու դրանց արդյունք վեճերը, այնուամենայնիվ պահպանվում էր փոխադարձ կարծիքները հարցնելու և հաշվի առնելու՝ Հայոց եկեղեցում ընդունված ավանդույթը, ինչի ապացույցն են քաղաքական այդ բարդ պայմաններում ժողովներին ներեկեղեցական գրեթե բոլոր թևերի ներկայացուցիչների մասնակցությունը, մյուս եկեղեցիների հետ փոխհարաբերությունների մասին կաթողիկոսի տեղեկացնող նամակներն առաջնորդներին ու վանահայրերին: Ա. Տեր-Միքելյանը, խոսելով Գրիգոր Տղայի՝ Տուտեորդուն ուղղված նամակի մասին, ասում է, որ այս «թուղթը հրաշալի ապացույց է՝ թե ինչպես Հայոց կաթողիկոսները հրապարակ էին կոչում յուրեանց վարդապետներին՝ զինակից լինելու ի պաշտպանություն Հայաստանյայց եկեղեցու[3]»:

---

[1] Նշվ. աշխ., էջ 283:

[2] **Բոզոյան Ա. ,** Հայոց եկեղեցու փոխհարաբերությունները քույր եկեղեցիների հետ ԺԱ-ԺԴ դարերում. «Էջմիածին», 2006, Բ-Գ, էջ 49-57:

[3] **Տեր - Միքելյան Ա.**, Միջին դարերի կաթողիկոսական ձգտումներն եկեղեցական խաղաղության համար, «Արարատ», 1893, էջ 245-253:

Երկու խմբակցության միջև ծավալված վիճաբանությունների հիմնական կետը ընդհանրապես քաղկեդոնականների հետ բանակցություն վարել-չվարելու հարցն էր: Հյուսիսային կամ Արևելյան վարդապետների տեսակետն այն էր, որ ելնելով Հայ եկեղեցու դավանական ուղղափառության դիրքերից՝ անթույլատրելի է Քաղկեդոնի ժողովն ու Լևոնի «պիղծ տոմար»-ն ընդունած եկեղեցիների հետ միության որևէ քայլ՝ այդ ժողովում ընդունված սահմանումները համարելով նեստորականության վերապրուկ: Ըստ այդմ՝ նրանք դեմ էին ծիսադավանական որևէ զիջման:

Այլ էր Կիլիկիայի հայ հոգևորականության մոտեցումը, ըստ որի Հունական, Ասորական, Լատինական և Հայկական եկեղեցիները համահավասար իրավունքներով հանդիսանում են Քրիստոսի Տիեզերական եկեղեցու անդամներ, և, հետևաբար, պետք է հաշտության եզրեր գտնել հարևան եկեղեցիների ու հատկապես Բյուզանդական եկեղեցու հետ: Ի տարբերություն Արևելյան վարդապետների՝ այս թևը համաձայն էր հույների հետ միությանը զոհաբերել դավանական որոշ կետեր՝ հնարավորինս պահպանելով նաև սեփական եկեղեցու ինքնուրույնությունը: Վերջիններիս այս դիրքորոշումը բխում էր տարածաշրջանում տիրող եկեղեցական և քաղաքական իրավիճակից և դրանց համեմատ՝ կաթողիկոսարանի ծրագրերից, որոնց մեջ մտնում էր նաև հայկական պետականության վերականգնումը:

Հայ-բյուզանդական հարաբերությունների մեջ դավանական հարցերի այդքան հաճախ շոշափումը զուտ կրոնական դրդապատճառ չուներ, այլ քաղաքական ենթատեքստ[1]:

Դիվանագիտական տեսակետից դիտարկելիս կարելի է ասել, որ բանակցությունների դրական արդյունքի դեպքում Հայոց եկեղեցին կունենար հետևյալ ձեռքբերումները.

1.Կայսրության տարածքում եկեղեցական թեմերի ու համայնքների բարելավում:

2.Բյուզանդական եկեղեցու և պետության կողմից Հայ եկեղեցու պաշտոնական ճանաչում՝ որպես ուղղադավան քույր եկեղեցի:

3.Բյուզանդական կայսրության և եկեղեցու հոգևոր-քաղաքական լծակների ու հեղինակության օգտագործմամբ՝ միջազգային հարաբերությունների ասպարեզում Հայ եկեղեցու հեղինակության բարձրացում և կաթողիկոսարանի դիրքերի ամրապնդում:

Իր հերթին բյուզանդական կողմը հետապնդում էր երեք հիմնական նպատակ՝

1.ձեռք բերել կայսրության ներքին գործերում հայերի աջակցությունը:

[1] **Բարթիկյան Հ.**, Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, «Բանբեր Մատենադարանի», 1958,թիվ 4, էջ 286:

2.եկեղեցական միության դաշինք կնքելով՝ համաձայնության գալ հայկական գաղթօջախների բնակչության հետ, որը հակադրվում էր բյուզանդական պաշտոնական եկեղեցուն և մեղադրվում աղանդավորության մեջ:

3.Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության հանգուցակետերից մեկում՝ Կիլիկյան Հայաստանում, տեղի հայ ազգաբնակչության աջակցության և վստահության ձեռքբերումը:

Բյուզանդիան հայերին առաջարկում էր ընդունել դավանաբանական ինը կետեր[1]՝

1. նզովել մի բնություն ընդունող Եվտիքեսին, Դիոսկորոսին,
2. դավանել Քրիստոսի երկու բնություն՝ երկու կամք, երկու ներգործություն,
3. «Սուրբ Աստված» երգից «Խաչեցար» բառը հանել,
4. հույների և լատինների հետ միաժամանակ կատարել Քրիստոսի Ծննդյան, Մկրտության և Ավետման տոները,
5. մյուռոնը պատրաստել ձիթենու յուղով,
6. պատարագը կատարել խմորուն հացով ու ջրախառը գինով,
7. պատարագի և ժամասացության ժամանակ ժողովրդին ներկա դարձնել եկեղեցում,
8. ընդունել 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ տիեզերական ժողովների որոշումները,
9. Հայոց կաթողիկոսի ընտրությունը պետք է արժանանա կայսրի հավանությանը:

Հետաքրքիր է, որ պատասխանելով կայսեր առաջադրած ինը ծիսադավանական հարցերին՝ կարևոր մի դրույթ է առաջ քաշվում, որով Հայ եկեղեցուն բյուզանդականի հետ կողք կողքի Տիեզերական եկեղեցում հավասար իրավասություններով կարգավիճակի ավելի հստակ սահմանում էր տրվում: Ի պատասխան գլխակարգությունների իններորդ հարցին՝ բանակցություններին մասնակից հայկական կողմն առաջարկում է Հայոց կաթողիկոսին տալ Անտիոքի պատրիարքի իրավասություններ. «Հարսնացուցանել զաթոռն Անտիոքայ հայրապետութեանս Հայոց, զի ի ձեռն ողջախոհ կուսին այնորիկ, եւ անբիծ փեսայիս այսորիկ միաւորութեան, հաւատամք լինել ի մէջ երկուց ազգացս անքակ սիրոյ խնամութիւն[2]» : Սակայն անմիջապես էլ շեշտում է, որ սա «ոչ եթէ յիշխանասիրութեան ախտ է շարժեալ այսպէս համարձակ խօսիմք», այլ «հիմն հաստատուն, եւ անշարժ միութեան եկեղեցեաց մերոց» տեսնելու բաղձանքով[3]» : Այսպի-

[1] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, նշվ աշխ., էջ 46-47:

[2] **Պալճեան Ա.** , Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս…, էջ 265:

[3] Տե՛ս նույն տեղում:

սով Հայ եկեղեցին կոնկրետ պայման էր դնում կայսրության հոգևոր ու աշխարհիկ վերնախավի առջև:

Ըստ հայ հոգևոր առաջնորդների՝ Անտիոքի պատրիարքությունը Հայոց կաթողիկոսությանը միացնելու երևույթը բոլորի կողմից կդիտվեր իբրև բյուզանդական արքունիքի ու եկեղեցու կողմից Հայ եկեղեցին գործնականորեն քույր եկեղեցի ճանաչելու և կայսերական հովանավորության տակ վերցնելու փաստ: Այս պայմաններն առաջադրող նամակները, սակայն, այդպես էլ Կ. Պոլիս չհասան և չքննարկվեցին:

Ավելորդ չէ հիշատակել,որ 13-րդ դարում՝ Կիլիկյան թագավորության օրոք, փորձեր եղան նորից արծարծելու Հայոց կաթողիկոսության և Անտիոքի պատրիարքության հարցը, սակայն այս խնդիրը, լինելով տվյալ ժամանակաշրջանի կրոնաքաղաքական իրավիճակից բխող հանգամանք, քաղաքական և հոգևոր նոր տեղաշարժերի պայմաններում աստիճանաբար դուրս մղվեց հիշյալ հարաբերությունների շրջանակից:

Չնայած կիլիկյան հոգևորականության և բուն Հայաստանի եկեղեցականների միջև առկա հակասական տեսակետներին՝ Հայոց կաթողիկոսների կողմից հնարավոր ամեն ինչ արվում էր եկեղեցու ներքին միասնականությունը պահպանելու համար: Դրան էին ուղղված այն ջանքերը, որ ողջ հայ հոգևորականությունը՝ «յամենայն Հայաստանեայս, սկսեալ յաթոռոյն Աղուանից մինչեւ ի կողմանս Մարացւոց եւ մինչեւ յարեւմտային կողմանս[1]» տեղյակ և մասնակից լիներ եկեղեցական-դավանաբանական երկխոսություններին: Սրա լավագույն վկայությունն այն է, որ Ներսես Շնորհալի կաթողիկոսն ու կիլիկյան հոգևորականությունը ճիշտ չնկատեցին բյուզանդացիների հետ բանակցություններում «առանց արեւելական եպիսկոպոսացն կատարելապէս գրել պատասխանի»՝ համարելով, որ «գլխոյն անհնար է առանց անդամոյն գործոյ իրիք կատարումն առնել[2]»:

Այսպիսով, 12-րդ դարի քաղաքական տեղաշարժերին զուգահեռ՝ փոփոխություններ է կրում նաև Հայ եկեղեցին: Ողջ Մերձավոր Արևելքով ու Բալկաններով հայ ժողովրդի սփռվելու և Հայոց կաթողիկոսության՝ միջազգային ու միջկրոնական խաչմերուկում հանգրվանելու արդյունքում եկեղեցաքաղաքական բոլորովին նոր կարգավիճակ է ձեռք բերում Հայոց կաթողիկոսարանը: Տարածքային՝ «Մեծ Հայքի կաթողիկոս» տիտղոսը վերածվում է ավելի ազգային՝ «Ամենայն Հայոց կաթողիկոս» տիտղոսի: Հոգևոր և աշխարհիկ դաշտում Հայոց կաթողիկոսների դերի ու հեղինակության բարձրացումն այդ շրջանի հատկապես արաբալեզու մատենագիրներին տեղիք է տալիս նրանց համեմատելու խալիֆի հետ: Այս կարծիքի ձևավորմանը նպաստում է նաև բավական երկար շրջան կաթո-

[1] Ընդհանրական թուղթք Սրբոյն **Ներսիսի Շնորհալւոյ**, Երուսաղէմ, 1871, էջ 159:

[2] Նշվ. աշխ., էջ 165:

ղիկոսական գահին իշխանական նույն տան ներկայացուցիչների ձեռքում լինելու հանգամանքը: Առավել կարևոր հանգամանք է Անտիոքի պատրիարքությունը Հայոց կաթողիկոսի իրավասության տակ դնելու հայկական առաջարկը, որով Ընդհանրական եկեղեցում Հայ եկեղեցու կարգավիճակն ու իրավասությունները կհավասարվեին Բյուզանդական եկեղեցու հետ: Համահայկական նշանակության խնդիրներ լուծելու Հայ եկեղեցու և կաթողիկոսության ձգտումը, ի վերջո, հայ հոգևոր և աշխարհիկ վերնախավի համատեղ ջանքերի արդյունքում պսակվեց հաջողությամբ՝ 12-րդ դարի վերջում հնարավոր դարձնելով հայկական կենտրոնացված պետության ստեղծումը Կիլիկիայում:

Тигран Нерсисян - Армянская церковь после падения Багратидского царства - Наряду с политическими изменениями XII века Армянская церковь претерпела изменения и приобрела новый церковно-политический статус. Стремление армянской церкви и католикосата решить общеармянские проблемы при поддержке светской элиты увенчалось успехом. В конце XII века это сделало возможным создание централизованной армянской государственности в Киликии.

Tigran Nersisyan, The Armenian Church after the fall of the Bagratid kingdom – Along with the political changes of the 12th century, the Armenian Church underwent changes and acquired a new ecclesiastical-political status. The aspiraton of Armeinian church and Catholicosate to solve the pan-Armenian problems with the support of secular elite was successful. In the end of the 12th century it made possible creation of a centralized Armenian statehood in Cilicia.

ОСНОВНЫЕ КОНЦЕПТУАЛЬНЫЕ НАПРАВЛЕНИЯ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ ИРАНА НА ЮЖНОМ КАВКАЗЕ

АНИ ОВАСАПЯН

Ключевые слова - Иран, Южный Кавказ, принципы внешней политики, концепция, конституция, энергоресурсы, конфликт.

Бесспорным фактом является то, что Исламская Республика Иран занимает одно из ключевых мест в важнейшем регионе, который включает Ближний и Средний Восток, Кавказ, зону Каспийского моря и Центральную Азию. Территориально, Иран занимает значимое военное и стратегическое положение, находясь одновременно на стыке Среднего Востока, Кавказа, и Центральной Азии, и страной, которая омывается водами Персидского и Оманского заливов Индийского океана. В иранской провинции Хузистан и в тех провинциях, которые прилегают к Персидскому заливу, и на его шельфе находятся крупные месторождения иранской нефти и природного газа.

Следуя конституции Исламской Республики Иран, внешняя политика Ирана препятствует любому виду оккупации. Она основана на принципах национальной независимости и территориальной целостности своей страны, защиты прав всех мусульман мира и создания гармоничных взаимоотношений с антиколониальным государствами[1] .

Начавшаяся после 1945 года «холодная война» между двумя сверхдержавами- СССР и Соединенными Штатами Америки, установила биполярный мировой порядок. Но он претерпел изменение вместе с распадом Советского Союза. В сменившихся условиях Иран также ввел некоторые коррективы в свою внешнюю политику. Как известно, после победы исламской революции в Иране, страна взяла свой курс, отличный и от восточных, и от западных установок.

Но, сначала обратимся к тому, каким именно методом разрабатывались принципы внешней политики Ирана. С первой половины 50-х годов прошлого века, официальной установкой шахского режима была

[1] Конституция ИРИ // [электронный ресурс] URL: http://www.divan-edalat.ir/show.php?Page =base

концепция позитивного национализма, и базирующиеся на ней идеи паниранизма и прежде всего лозунги защиты интересов шахского режима. Вследствие того, что она расходилась с исламской идеологией, и не могла стать ее основой, она официально была отвергнута новым руководством Ирана. Итак, в основу внешней политики Ирана была заложена идея, которая была принята еще во время правления самого пророка Мухаммеда, так называемая концепция уммы пророка. Следует отметить, что она во многом, отличается от концепции арабского национализма (панарабизма), которая в первый раз была принята 1949 году партией БААС в Сирии, а потом стала официальной идеологией режима Саадама Хусейна в Ираке[1]. В соответствии с новыми международными условиями, Исламская Республика Иран сделала акцент в своей внешней политики на исламскую идеологию. По сути, она была основана на принципах взаимной ответственности перед всеми мусульманами мира и на принципе бескорыстной защиты всех обездоленных, прежде всего в странах исламского мира . Основные подходы внешней политики Исламской Республики Иран были сформулированы после революции аятоллой Хомейни, который провозгласил ислам государственной религией и, тем самым закрепил статус ислама конституционно.

Иранские лидеры надеялись трансформировать иранскую революцию в общемусульманскую, в конечном счете преследуя цель в "экспортировать идеи революции" в исламские государства. Однако не добившись своих целей, официальный Иран лишь получил настороженные оценки исламских стран и сложил отрицательный имидж иранской революции во всем мире. Осознав это, Иран начал разрабатывать свою внешнеполитическую политику, направленную на установление “политических, экономических, военных и прочих отношений со всеми государствами мира, независимо от их системы власти и политической структуры”.

В основу принципов внешней политики ИРИ, заложено, как уже было упомянуто, осуществление свободной деятельности, которая не зависит от какого бы ни было государства, а также, защита интересов и прав всех мусульман в мире. Эти принципы и задачи изложены и закреплены в концепции внешней политики ИРИ. В первую очередь основной упор делается на возможность обеспечить суверенитет страны в политической, экономической и военной сферах. Вместе с тем, согласно 152-й статье конституции ИРИ, внешняя политика Ирана не допускает никакого вида

[1] **Аббас Манучехри**, Книга Ирана (политическая система в Иране), Тегеран, Министерство культуры и исламской ориентации, 2002 г.

экспансии со стороны других иностранных государств, а также строит отношения только с теми государствами, которые не стремятся к глобальному главенству в мире. В продолжении статьи, указано, что Иран остается на стороне тех народов, которые подверглись насилию . Принимая во внимание все вышеперечисленные принципы, мы можем уверенно сказать, что внешняя политика и дипломатия Ирана развивается в рамках национальных интересов[1].

Иран выделяет следующие основные направления во внешней политике: 1. Россия; 2. Кавказский регион и Центральная Азия; 3. Китай; 4. Афганистан; 5. Персидский залив[2].

Заинтересованность Ирана на Южном Кавказе в настоящее время предопределена разными факторами, среди которых: общая история, общая территория, устоявшиеся связи, заманчивый рынок для ее товаров и технологий, большие месторождения нефти и других полезных ископаемых, логистическая территория.

На этом фоне, начиная с 90-е годов роль Южного Кавказа в регионе и в системе международных отношений значительно возросла. В первую очередь это связано с разработкой месторождений касающихся энергоресурсов Каспия, их логистикой и возрождением Великого Шелкового пути[3].

Следует также отметить, что стратегической целью Ирана всегда было и остается поддержание стабильности и безопасности южнокавказского региона. Этот интерес в первую очередь исходит из того, что только в условиях обеспечения мира и отсутствия напряженности в регионе можно обусловить бесперебойную добычу нефти и ее экспорт на международные рынки. Иран готов вкладывать в инвестиции в развитие стран региона.

Иран пытается наиболее выгодно использовать свое географическое положение (на стыке Европы и Азии, плюс выход к открытым морям), активно участвует в формировании и модернизации транспортной инфраструктуры для создания на своей территории транспортного узла. По этой программе, уже в феврале 2016 г. запущен новый маршрут Китай – Казахстан – Туркменистан – Иран, который является важным решением по скорости и логистике доставки грузов из Восточного Китая. Иран намерен совместно с Арменией построить автомобильную магистраль, которая

---

[1] Конституция ИРИ. [электронный ресурс] URL: http://www.divan-edalat.ir/show.php?page =base

[2] **Салиев А.Л.** Восточный вектор внешней политики Кыргызстана: Азиатско-Тихоокеанский регион и Ближний Восток. 2011

[3] **Салиев А.Л.** «Иранская идентичность» как фактор внешней политики».,М. 2007, стр. 88

свяжет Персидский залив с Черным морем по территории Ирана, Армении и Грузии. В марте 2017 г. состоялся пилотный запуск железнодорожной линии Астара (Иран) – Астара (Азербайджан), которая является частью МТК «Север – Юг», который соединяется с иранским портом Энзели[1].

Естественно, Иран заинтересован в прорыве собственной изоляции и выходе на широкое торгово-экономическое сотрудничество с северными и европейскими странами через Южный Кавказ. Соответственно, региональный мир и стабильность на Южном Кавказе являются непременными условиями успешного сотрудничества.

В контексте рассмотрения расширения экономического сотрудничества перспективным является формирование партнерских отношений с ЕАЭС, что подразумевает создание зоны свободной торговли. Временное соглашение между Евразийским экономическим союзом и его государствами-членами, с одной стороны, и Исламской Республикой Иран, с одной стороны, о создании зоны свободной торговли, было подписано 17 мая 2018 года[2]. Важно отметить, что Иран, который традиционно руководствовался принципом протекционизма (политика, направленная на ограничение импорта иностранной продукции с целью стимулирования роста национального производства), в условиях жестких международных санкций, предоставляет таможенные льготы странам-членам ЕАЭС на около 500 наименований продукций, что может сделать товары ЕАЭС конкурентоспособными на иранском рынке. Выход ЕАЭС на иранский рынок также даст возможность в будущем выйти на рынки Ближнего Востока.

Энергетическое сотрудничество с прилегающими регионами Азии и республик Южного Кавказа предполагает обеспечение внутренних потребностей и вывод иранских энергоресурсов на внешние рынки, а также транзитную транспортировку энергоресурсов центрально-азиатских стран. В сфере энергетики Иран продолжает осуществление программы с Арменией под названием «Электроэнергия в обмен на газ». В 2016 г. Иран подписал четырехстороннее соглашение с Россией, Грузией и Арменией, по которому будет вести строительство энергетического коридора «Север–Юг», который свяжет энергосистемывсех четырех стран[3]

---

[1] Электронная газета «Туркменистан: золотой век», «В Ашхабаде торжественно встретили пробный контейнерный поезд, следующий по маршруту Китай-Казахстан-Туркменистан-Иран»

[2] **Курбангулова Р,** Временное соглашение о ЗСТ ЕАЭС – Иран: вызовы и перспективы для евразийского бизнеса. М., 2018, Режим доступа: http://eurasian-studies.org/archives/8772.

[3] **Хоссейнзадех В.** Развитие российско-иранского сотрудничества в Каспийском регионе: на примере транспортного коридора «Север-Юг» // Вестник Дипломатической академии МИД России. Россия и мир. – № 4(14). С. 102-105. – М., 2017.

Обеспечение безопасности и стабильности в Средней Азии и в южнокавказских республиках является приоритетным направлением для Ирана. Тегеран всегда связывал свою национальную безопасность со стабильностью в этом регионе, поэтому всегда выступал с посредническими инициативами, например, в Нагорном Карабахе. Позиция руководства Ирана об обеспечении региональной безопасности без участия нерегиональных игроков осталась неизменной.

Непрекращающийся нагорно-карабахский конфликт, который длится вот уже более 30-и лет, является одним из факторов сформировавшейся системы отношений в этом регионе. Известно, что в Нагорно-Карабахском конфликте Иран изначально проявлял миротворческие инициативы. Тогдашний президент Армении Левон Тер-Петросян и и.о. президента Азербайджана Якуб Мамедов в мае 1992 года в Тегеране подписали совместное соглашение[1], положения которого были намного лучше и весомее, чем «Мадридские принципы». Однако вспыхнувшие военные действия обрекли миротворческие попытки Ирана на провал. Но даже во время горячего этапа конфликта Иран продолжал косвенно поддерживать то одну, то другую сторону конфликта. В начале 1990-х годов у иранских властей были свои идеологические причины оказания военно-стратегической помощи Азербайджану. Тогда Иран поддерживал афганских моджахедов и их лидеров. Моджахеды воевали на азербайджанской стороне в карабахском конфликте[2]. Все факторы - участие, а также те иранские боеприпасы, которые использовались азербайджанской армией в ходе войны, указывают на то, что Азербайджан в то время был важной и стратегической страной для Ирана. Но в то же время подавляющая доля иранского общества (несмотря на даже на шиизм) вместе с Иранской политической элитой занимает весьма прагматическую позицию в отношении Азербайджана.

У иранцев имеется богатый опыт враждебности отношений с различными исламскими государствами и общинами. «Болевой точкой» во взаимоотношениях Азербайджана и ИРИ является проблема Южного (Иранского) Азербайджана, азербайджанскую часть населения которого принято считать самым крупным национальным меньшинством Ирана,

---

[1] **Vaezy M.** Karabakh's Crisis Iran's Mediation and the Aftermath / Center for strategic research. December 2008. Режим доступа: http://www.csr.ir/departments.aspx?lng=en&abtid=07&depid=74&semid=1387

[2] **Michael Taarnby** / The Mujahedin in Nagorno-Karabakh: A Case Study in the Evolution of Global Jihad, May, 2008. Режим доступа: http://www.realinstitutoelcano.org/wps/wcm/connect/a2aa12004f018b88b8d1fc3170baead1/WP20-2008_Taarnby_Mujahedin_Nagorno-Karabakh_Global_Jihad.pdf?MOD=AJPERES&CACHEID=a2aa12004f018b88b8d1fc3170baead1

которое выступает за создание автономии с широкими правами в составе Ирана, а в дальнейшем стремится к независимости, либо к присоединению с Азербайджанской Республикой, которая активно поддерживает эти стремления, эксплуатируя термины «северный и южный Азербайджан». Последователи пантюркизма и вовсе видят себя в будущем в составе единого тюркского государства – Великого Турана[1]. В свою очередь Азербайджан рассматривается Ираном, прежде всего , как отличный материал для интеграции в будущий блок «ирано -шиитской империи» и в исламское политическое пространство.

Получается, что преимущественно шиитский Азербайджан отдает предпочтение стратегическому союзу не с флагманом шиизма – Ираном, а с центром пантюркизма – Турцией, состоящей в НАТО и союзе с США, Великобританией и Израилем. В ответ Азербайджану Тегеран поддерживает интересы Армении. В противовес Турции, которая до сих пор не имеет дипломатических отношений с Арменией, Тегеран наоборот, является одним из ближайших союзников Еревана. Более того, именно добрососедские отношения с Ираном позволили Армении свести к минимуму последствия турецкой блокады, а Тегеран, открыто заявляет, что не допустит реализации каких-либо миротворческих планов, содержащих хотя бы намек на возможность территориального обмена или утраты общего участка ирано-армянской границы. При этом, Тегеран с помощью частных инвесторов хочет наладить тесные военно-политические взаимоотношения не только с Арменией, но и стремится участвовать в совместных экономических проектах на территории Нагорно-Карабахской Республики (НКР). Заинтересованность Ирана в проведении политики полной поддержки НКР, рассматривается руководством страны как средство давления на Азербайджан, по большому счету, как зона стратегически важного буфера между Азербайджаном и населенными тюркоязычными этническими народами провинции Ирана. Кроме того, контроль армией НКР азербайджанских территорий еще дальше отдаляет Нахичеван от Азербайджана – примерно на 250 км, что в свою очередь способствует реальной отдаленности этой области от Баку. Иран проводит активную политику изоляции Нахичевана, делая основной акцент на этническую и религиозную близость населения, экономические и политические факторы, а также большой рост сепаратистских настроений в Нахичеване. Однако надо признать, что после окончания войны, когда в регионе усилилась роль России и Минской группы ОБСЕ,

[1] Азербайджанский вопрос в Иране: взгляд востоковеда , Каспийский вестник, 2019. Режим доступа: http://casp-geo.ru/azerbajdzhanskij-vopros-v-irane-vzglyad-vostokoveda/

политическое руководство Ирана (единственной страны, имеющей границы с непосредственными участниками конфликта) отстранилось от конфликта и склонилось лишь к поддержке дружественных отношений с конфликтующими сторонами.

На сегодняшний день, в дипломатических кругах Ирана сформировалась две основные концепции на конфликт и его методы его регулирования. Первая позиция исходит из точки зрения, что, обстановка в Нагорном Карабахе напоминает положение «ни мира, ни войны». Этой обстановкой очень ловко пользуются для оказания давления на Баку с помощью общественного мнения, а также через иранских азербайджанцев. Тегеран придерживается того мнения, что, необходимы прямые переговоры между конфликтующими сторонами, которые сами должны решить и определить судьбу своей страны. Второй принцип основан на признании исторически сложившихся религиозных и международных связей между Азербайджаном и Ираном. Вследствие этого, решение конфликта будет происходить путем все более активного вмешательства в формировании общественного мнения внутри Азербайджана[1]. То есть, фактически, политика Ирана по отношению к нагорно-карабахскому конфликту менялась в зависимости от того, какая из двух позиций брала верх. На сегодняшний день Иран выступает против «обновленных Мадридских принципов», так как они включают присутствие иностранных, нерегиональных международных миротворческих сил в регионе[2].

Важной стратегической целью Ирана в регионе также является обеспечение доли в каспийских нефтяных и газовых ресурсах и сохранение статуса главной транзитной страны. Именно по этим причинам Иран, также как и Россия, заинтересован в обеспечении экономической и политической стабильности в данном регионе. Иран является крупнейшей военно-морской силой в Персидском заливе. Каспийское море рассматривалось Тегераном в качестве запасного в военно-морском отношении. В портах Каспия дислоцирована школа иранских боевых пловцов. Всего на Каспийском море военно-морские силы Ирана имеют около 90 мелких боевых и вспомогательных единиц корабельного состава[3].

---

[1] Сотрудничество России, Ирана и Азербайджана носит тактический, но не стратегический характер – Маркедонов. Режим доступа: http://newsarmenia.am/news/politics/sotrudnichestvo-rossii-irana-i-azerbaydzhana-nosit-takticheskiy-no-ne-strategicheskiy-kharakter-mark/

[2] Сотрудничество России, Ирана и Азербайджана носит тактический, но не стратегический характер – Маркедонов. Режим доступа: http://newsarmenia.am/news/politics/sotrudnichestvo-rossii-irana-i-azerbaydzhana-nosit-takticheskiy-no-ne-strategicheskiy-kharakter-mark/

[3] Одно море на пять флотов, Информационное агентство Иран.ру, июнь, 2003. Режим доступа: https://www.iran.ru/news/politics/11578/Odno_more_na_pyat_flotov

Согласно принципам внешней политики Исламской Республики Иран, основными задачами являются возможность осуществления свободной деятельности, не зависящей от какого бы ни было государства. Иран стремится создать в регионе новую концепцию отношений, и за счет этого получить статус страны-лидера. Стратегия внешней политики Ирана, также как и в других странах призвана обеспечить официально провозглашенные ее задачи – служить цели превращения региона и исламского мира в превосходящую силу. Для реализации этих целей и задач, Иран осуществляет сотрудничество со всеми странами, противодействие США и Израилю, единство политики со странами ислама, всего региона, третьего мира, тесные отношения с персоязычными государствами. В обстановке происходящих глобальных и порой противоречивых процессов в нашем мире и при сложной системе международных отношений почти невозможно достичь синхронности в различных направлениях деятельности внешней политики. Именно поэтому, в зависимости от того, какая ситуация царит в международной обстановке и какова ситуации внутри страны, в Иране, каждый раз становится актуальным то одно, то другое направление, что в общем приводит к очень непоследовательным и противоречивым шагам во внешней политике.

Для Ирана немаловажным стратегическим направлением является также сотрудничество с еще одной южнокавказской страной-Грузией. Официальный Тегеран во время абхазского и южноосетинского конфликта долгое время сомневался, осудить или оправдать шаги Саакашвили. Причиной выжидательной политики было то, что Иран ожидал предложений со стороны России, поддержку в процессе признания независимости Абхазии и Южной Осетии, однако никаких предложений Тегерану от Москвы так и не последовало. В результате этого Иран повернулся в сторону Грузии. Тегеран заявил, что уважает территориальную целостность Грузии. Это означало, что Иран не собирался признавать Абхазию и Южную Осетию до тех пор, пока окончательно не будет урегулирован конфликт с Грузией. Интересно также, что в Тегеране прохладно воспринимают облеченные в религиозные и националистические лозунги призывы абхазских лидеров поддержать движение самопровозглашенной республики к государственному суверенитету, предпочитая иметь дело с официальным Тбилиси[1].

[1] **Мамедова Н.М. ,** Мехди Санаи. М. отв. ред, Иран: ислам и власть. 2002. стр. 351

Однако следует отметить, что двухсторонние отношения между Ираном и Грузией строятся довольно сложно. А это вызвано, прежде всего, тем, что:

1. Для Ирана неприемлемо укрепление позиций Запада (США, Израиля, НАТО) как в целом на Южном Кавказе, так и в частности, в Грузии;
2. Иран не одобряет развитие энергетических инфраструктур в обход себя.

В то же время власти ИРИ осознают, что партнерство с Грузией открывает путь в Европу через Черное море, а в случае тесных связей между странами, Грузия может выступить в роли форпоста для Ирана в случае инициации против него военных действий со стороны НАТО и других.

Таким образом, в дипломатии Ирана кавказское направление приобрело весьма важное значение после распада СССР. Интересы Ирана в регионе пересекаются с разными по характеру интересами ведущих акторов. При этом, ему удается сохранить баланс в этом лабиринте и избегать конфликтов. Важным фактором стабильности в отношениях является и то, что при всей сложности взаимоотношений Азербайджана и Армении, Иран смог придерживаться «срединной линии» и одновременно найти понимание и уважение конфликтующих сторон к собственной позиции. Одним из здравых подходов дипломатии Ирана сегодня-это отказ от использования исламского фактора на Южном Кавказе .

Подводя итог проведенному анализу основных концептуальных направлений внешней политики ИРИ на Южном Кавказе, следует отметить, что Южный Кавказ является важнейшим регионом для Ирана.

Исламская республика Иран всеми силами стремится развивать сбалансированную политику в отношении южнокавказских государств, но этот процесс затрудняется существующими региональными этнополитическими конфликтами. Несмотря на все трудности, именно развитие всесторонних отношений Ирана с государствами Южного Кавказа будет во многом способствовать в дальнейшем стабильному развитию региона, в том числе и установлению устойчивых путей транзита энергетических ресурсов.

Անի Հովասափյան, Իրանի արտաքին քաղաքականության հիմնական հայեցակարգային ուղղությունները Հարավային Կովկասում - Հոդվածի նպատակն է բացահայտել Իրանի արտաքին քաղաքականության հիմնական հայեցակարգային ուղղությունները Հարավային Կովկասում:

Իրանի Իսլամական Հանրապետությունը ձգտում է հավասարակշռված քաղաքականություն վարել հարավկովկասյան երկրների նկատմամբ, սակայն այս գործընթացին խոչընդոտում են առկա տարածաշրջանային էթնոքաղաքական հակամարտությունները: Չնայած բոլոր դժվարություններին, Հարավային Կովկասի երկրների հետ Իրանի համակողմանի հարաբերությունների զարգացումը կարող է մեծապես նպաստել տարածաշրջանի հետագա կայուն զարգացմանը, այդ թվում նաև էներգետիկ ռեսուրսների կայուն տարանցիկ ուղիների ստեղծմանը:

Ani Hovasapyan, The main conceptual directions of Iran's foreign policy in the South Caucasus - The purpose of the article is to identify the main conceptual directions of Iran's foreign policy in the South Caucasus. The Islamic Republic of Iran is striving to develop a balanced policy towards the South Caucasian states, but this process is hampered by the existing regional ethnopolitical conflicts. Despite all the difficulties, the development of Iran's comprehensive relations with the states of the South Caucasus will greatly contribute to the further stable development of the region, including the establishment of sustainable transit routes for energy resources.

ՀՆԴԿԱՍՏԱՆ - ՎՐԱՍՏԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՇԽԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Բանալի բառեր - քաղաքական հարաբերություններ, երկկողմ կարևոր այցեր, համագործակցության հուշագիր, «Վրաստանում Գանդիի հիմնադրամ», «Հնդկական մշակույթի օրեր», «դարպաս դեպի եվրոպական շուկա»:

Հնդկաստանի և Վրաստանի միջև կապերը հիշատակվում են դեռևս մարդկության քաղաքակրթության վաղ ժամանակներից, որի մասին են վկայում հնդկական Պանչատանտրա առակների ազդեցությունը վրացական ժողովրդական լեգենդների վրա: Հնդկա-վրացական կապերը էլ ավելի ամրապնդվեցին միջնադարյան դարաշրջանում՝ առևտրականների և ճանապարհորդների շնորհիվ և տարիների ընթացքում, ինչպես նաև խորհրդային ժամանակաշրջանում և անկախացումից ի վեր երկկողմ հարաբերությունները սկսեցին ընդգրկել քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ավելի լայն համագործակցության շրջանակներ:

Հնդկաստանի և Վրաստանի երկկողմ քաղաքական կապը ավելի նշանավորվեց դեռևս Խորհրդային միության տարիներին,երբ 1955 թ.-ին Հնդկաստանի վարչապետ Նեհրուն այցելեց Թբիլիսի, իսկ այնուհետև 1976թ.-ին վարչապետ Ինդիրա Գանդիի և 1978 թ.-ի հունիսին Շրի Աթալ Բիհարի Վաջպայի այցերը Խորհրդային Վրաստան:

Խորհրդային միության փլուզումից և Վրաստանի անկախացումից հետո Հնդկաստանը ճանաչեց Վրաստանի անկախությունը 1991 թ.-ի դեկտեմբերի 26-ին, իսկ պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ հաստատեց 1992թ.-ի սեպտեմբերի 28-ին, չնայած այն հանգամանքին, որ Վրաստանում հնդկական դեսպանատուն չկա, սակայն Հնդկաստանի դեպանը Հայաստանում միաժամանակ հավատարմագրված է նաև Վրաստանում: Վրացական կողմն առաջինն է ստեղծել իր պատվո հյուպատոսությունը Դելիում՝ 2005թ-ին, որը հետագայում լիարժեք վերակազմավորվել է 2009թ-ին և Վրաստանի առաջին դեսպանը ժամանել է Դելի 2010թ.-ի փետրվարի 25-ին: Փաստացի Հնդկաստանը արձավ աշխարհի առաջին երկրներից մեկը, որը ՄԱԿ-ում ճանաչեց Վրաստանի անկախությունը: Այդ ժամանակվանից ի վեր երկու անկախ պետությունները պարբերաբար այցեր են փոխանակել բարձրաստիճան պաշտոնյաների և

գործարարների մակարդակով, ինչը հանգեցրել է երկկողմ հարաբերությունների հետագա ամրապնդմանը:[1]

Քաղաքական հարաբերությունների ամրապնդման վրա իրենց կարևոր ազդեցությունը թողեցին 2000 թ.-ի մայիսի 11-ին Դելիում Վրաստանի արտգործնախարար Իրակլի Մենագարիշվիլին և Շրի Ջասանթ Սինհի հանդիպումը, որի ընթացքում ստորագրվեց Արտաքին գործերի գրասենյակի խորհրդատվությունների վերաբերյալ արձանագրություն:Այնուհետև 2012թ.-ի մայիսի 26-28-ին Հնդկաստանի սփյուռքի (արտերկրում ապրող հնդիկների) նախարարության քարտուղար Շրի Փարվեզ Դևանը այցելեց Թբիլիսի՝ ներկայացնելու Հնդկաստանը՝ Վրաստանում կայանալիք առաջին «Սփյուռքի օրը» միջոցառմանը:[2] Արտաքին գործերի գրասենյակի խորհրդատվությունների չորրորդ փուլի անցկացման համար 2013թ.-ի հուլիսին Շրի Աջայ Բիսարիան այցելեց Թբիլիսի: Իսկ այնուհետև 2015 թ.-ի փետրվարին Հնդկաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ղեկավար Նասիմ Զաիդին այցելեց Բաթումի՝ մասնակցելու Ընտրությունների հանձնակատարների միջազգային համաժողովին, որին պատասխան 2015-ի հուլիսի 13-ին Վրաստանի ընտրական հանձնաժողովի նախագահ տիկին Թամար Ժվանիան այցելեց Դելի և ստորագրեց ընտրությունների ղեկավարման և վերահսկման ոլորտում համագործակցության հուշագիր: Հնդկաստանի ընտրական հանձնաժողովի անդամ երեք պատվիրակություն՝ ընտրական հանձնակատար Շրի Օ.Պ.Ռավաթի գլխավորությամբ 2016 թ.-ի փետրվարի 15-18-ը այց կատարեցին Վրաստան (Կախեթի նահանգ) ՝ մասնակցելու ընտրական պրակտիկայում և հարակից հարցերի վերաբերյալ բազմակողմանի միջոցառմանը: 2016 թ.-ի հունիսին Հնդկաստանի Ժողովրդավարության և ընտրությունների կառավարման միջազգային ինստիտուտի հինգ անդամից բաղկացած պատվիրակությունը այցելել է Թբիլիսի՝ Վրաստանի ընտրական հանձնաժողովում դասընթացներ անցկացնելու համար:Առանցքային էր նաև 2017 թ.-ի ապրիլի 10-11-ը Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարար Գեորգի Գախարիայի այցը Հնդկաստան, որտեղ հանդիպումներ էր ունեցել բեռնափոխադրման, զբոսաշրջության, առևտրի և արդյունաբերության, երկաթուղիների և քաղաքացիական ավիացիայի նախարարների հետ, որի ընթացքում Հնդաստանի և Վրաստա-

[1] Press Release India-Georgia Foreign Office Consultations. https://eoiyerevan.gov.in/pages.php?id=82, India-Georgia Relationship: A Window of Opportunity Sarma, Hriday; Khutsishvili, Levan. https://www.ssoar.info/ssoar/bitstream/handle/document/54875/ssoar-indrastraglobal-2017 -11-sarma_et_al-India-Georgia_Relationship_A_Window_of.pdf?sequence=1, India-Georgia Relations. https://mea.gov.in/Portal/ForeignRelation/Georgia_Brief_2013.pdf.

[2] Annual report. https://mealib.nic.in/?pdf2533?000.

նի միջև օդային ծառայությունների մասին համաձայնագիր էր ստորագրվել և մեկնարկվել երկու երկրների միջև ազատ առևտրի գոտու պայմանագրի ստորագրման համար համատեղ ուսումնասիրությունները:

Ինչ վերաբերում է երկկողմ մշակութային հարաբերություններին, ապա հարկ եմ համարում նշել, որ երկրները ունենալով խորը պատմական կապեր տարեցտարի զարգացրել են մշակութային համագործակցությունը, ընդգրկելով նաև կրթական ոլորտը: Մասնավորապես <<հնդկական տեխնիկական և տնտեսական համագործակցության>> և <<հնդկական մշակութային հարաբերությունների խորհրդի>> ծրագրերի շրջանակներում ամեն տարի վրացի ուսանողներ և մասնագետներ իրենց մասնագիտական գիտելիքաների կատարելագործման ծրագրերի են մասնակցում Հնդկաստանում, ինչպես նաև հնարավորություն են ստանում հետագայում հնդկական համալսարաններում (մասնավորապես Քենդիրա Հինդի Սանսթհանում հինդի լեզու սովորելու) ուսանելու: Իսկ Թբիլիսիի պետական համալսարանում ստեղծվել էր Ժամանակակից հնդկական հետազոտությունների ամբիոն, որտեղ Հնդկաստանից ժամանած Պրոֆեսոր Ռ. Լ. Հանգլոն դասավանդել է մեկ տարի (2011-2012), սակայն այժմ ամբիոնն այլևս գոյություն չունի: Կարևոր եմ համարում նշել 2013 թ.-ի սեպտեմբերի 18-ին հնդկական <<հնդկական մշակութային հարաբերությունների խորհրդի>> կողմց հովանավորված 15 հոգուց բաղկացած <<Բոլիվուդ խմբի>> պատվիրակության այցը Վրաստան, որտեղ և մասնակցեցին Հնդկաստանի դեսպանատան և Վրաստանի մշակույթի և հուշարձանների պաշտպանության նախարարության հետ համատեղ կազմակերպած միջոցառումներին:

Կարևոր ձեռքբերում էր 2014թ.-ի հունիսի 30-ին Թբիլիսիում Հնդկաստանի «Գանդի» հիմնադրամի հետ համատեղ՝ Թբիլիսիի բազմակողմանի դիվանագիտության ինստիտուտում հիմնված «Վրաստանում Գանդիի հիմնադրամը»: Այս հիմնադրամի կողմից կազմակերպվել են «Ո՛չ բռնությանը» և «Յան Սաթյագրահա»-ին նվիրված սեմինարներ, որի ընթացքում իրենց դասախոսություններով հանդես են եկել նաև Գանդիի հիմնադրամի կանադական և հնդկական ներկայացուցիչները: Հիմնադրամը հետագայում իր մասնաճյուղը բացեց Բաթումիում, և ակտիվորեն սկսեց ներգրավվել Վրաստանում «Գանդիի ճշմարտություն և ո՛չ բռնությանը» փիլիսոփայությունը քարոզող զանազան ծրագրերի կազմակերպման գործում: ԵՎ այս հիմնադրամի կողմից 2016թ.-ի հուլիսի 25-30-ը կազմակերպվել էր «Գանդիի ո'չ բռնությանը համաժողովը», որի իրականացման համար <<հնդկական մշակութային հարաբերությունների խորհուրդը>> 10,000 ԱՄՆ դոլարի ներդրում էր կատարել:

Հնդկաստանում, 2015թ-ի փետրվարի 1-15-ին մի խումբ վրացի նկարիչներ, պարողներ և երգիչներ ելույթ ունեցան «Սուրաջկունդ Մելա» ամենամյա ներկայացմանը: Իսկ 2015թ.-ի հունիսի 21-ին Թբիլիսիում նշվեց Յոգայի առաջին միջազգային օրը, որին մասնակցեցին ավելի քան 200 մարդ:Վրացական կողմը ներկայացնում էր Թբիլիսիի փոխքաղաքապետը: 2016 թ.-ի հունիսի 25-ին և 2017թ.-ի հունիսի 25-ին Թբիլիսիում հաջորդաբար նշվեցին կրկին Յոգայի միջազգային օրերը: «Հնդկական մշակույթի օրեր»-ը 2015թ.-ի նոյեմբերի 20-22-ը Թբիլիսիրում կազմակերպել էր «Բհարաթի ժողովրդական պարերի ակադեմիայի» կենդանի համերգը, երեք հնդկական ֆիլմերի ցուցադրություն և Ջամմու ու Քաշմիր նահանգների լուսանկարների ցուցահանդեսը:Իսկ 2017 թ.-ի հունվարի 19-21-ը Թբիլիսիում կայացավ բոլիվուդյան երեք ֆիլմերի ցուցադրություն, այնուհետև 2017 թ.-ի սեպտեմբերի 5-20-ին Հնդկաստանում անցկացվող «Սիներջի միջազգային մշակութային» փառատոնին մասնակցեց վրացական ազգային բալետը՝ Սուխիշվիլիի խմբի 39 անդամներով հանդերձ, և համապատասխանաբար 2017թ.-ի հոկտեմբերի 14-ին և նոյեմբերի 1-ին Թբիլիսիում ելույթ ունեցան հնդկական պարային խմբեր:[12]

Այսպիսով, Վրաստանը գտնվելով Եվրոպայի և Ասիայի խաչմերուկում, Հնդկաստանի համար կարող է դառնալ դարպաս՝ դեպի եվրոպական շուկա: Բացի այդ, Վրաստանը կարող է ռազմավարական կարևոր դաշնակից դառնալ Հնդկաստանի համար՝ ընդդեմ Պակիստանի՝ մեծացնելով ռազմական համագործակցությունը հարևան Ադրբեջանի հետ: Երկու երկրների տնտեսական համագործակցության հիմքերը թույլ են տալիս կայուն համագործակցություն ապահովել այնպիսի կարևոր ոլորտներում ինչպիսիք են՝ կրթությունը, տեղեկատվությունը և հաղորդակցությունը, էներգետիկան, կանաչ տեխնոլոգիաները, և այլն: Նման գործընկերության ամրապնդումը կստեղծի տարածաշրջանային արժեքավոր շղթաներ, որոնք կամրացնեն երկու երկրների ներքին շուկաները, ինչպես նաև իր հերթին կհանգեցնի Հարավային Ասիայի և Հարավային Կովկասի միջև շուկայական ինտեգրմանը:

Ашхен Овсепян, “Индийско-грузинские политические и культурные отношения” - После независимости Грузии двусторонние отношения вступили в новую фазу, включая политические, экономические и культурные сферы. Важные двусторонние визиты способствовали развитию политических отношений, в частности визит министра

[1] India-Georgia Relations. https://mea.gov.in/Portal/ForeignRelation/Georgia_Brief_2013.pdf,

[2] Екатерина Микаридзе "Многоликая Грузия", https://sputnik-georgia.ru/reviews/20161213/234130845/Indijskaja-odisseja-v-Gruzii.html.

иностранных дел Грузии в Дели 11 мая 2000 года, а затем визит председателя Центральной избирательной комиссии Грузии в Дели 13 июля 2015 года, где был подписан меморандум о сотрудничестве в области управления и контроля выборов. Наряду со всем этим развивались культурные связи, в которых активно участвовали «Фонд Ганди в Грузии», основанный в Тбилиси 30 июня 2014 года, и «Дни культуры Индии», организованные в 2015 году.

Таким образом, Грузия, находясь на перекрестке Европы и Азии, может стать воротами на европейский рынок для Индии.

Ashkhen Hovsepyan, "India-Georgia political and cultural relations" - After the independence of Georgia, bilateral relations have entered a new phase, including the political, economic and cultural domains. Important bilateral visits contributed to the development of political relations, especially Georgian Foreign Minister's visit to Delhi on May 11, 2000, then the visit of the Chairman of the Central Electoral Commission of Georgia to Delhi on July 13, 2015, where was signed cooperation memorandum in the filed of election management and control. Along with all this, cultural ties were developing, in which had an active contribution the "Gandhi Foundation in Georgia" founded in Tbilisi on June 30, 2014 and the "Days of Indian Culture" organized in 2015.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԱՇԽԻՉ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՍՊԵԿՏԸ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

ՆԱՐԻՆԵ ԱՍՐՅԱՆ

Բանալի բառեր - հանրային քաղաքականություն, վերաբաշխիչ քաղաքականություն, վերաբաշխիչ գործառույթ, քաղաքական, սոցիալական և տնտեսական գործոններ, տնտեսական աճ, անհավասարություն, համաչափ զարգացում, եկամուտների վերաբաշխում:

Հայտնի է, որ ցանկացած պետության նպատակների կյանքի կոչումը և խնդիրների լուծումն իրագործվում է հանրային քաղաքականության մշակման և իրականացման միջոցով: Հատկանշական է, որ հանրային քաղաքականությունը կոչված է պահպանելու պետության քաղաքական-կառավարչական համակարգի բոլոր տարրերի կայուն զարգացումը՝ կողմնորոշված լինելով դեպի հասարակական մեծ արժեք ներկայացնող ռազմավարական և ընթացիկ հիմնախնդիրների լուծումը:

Հանրային քաղաքականության ոլորտում հետազոտությունների համեմատաբար նոր ուղղություն ներառում է այդ նույն քաղաքականության ձևավորման վրա ազդող քաղաքական, սոցիալական և տնտեսական գործոնների համակարգային և պարբերական ուսումնասիրությունը: Նման հետազոտությունների արդյունքները հանգել են նրան, որ քաղաքական փոփոխականները գործնականում շատ քիչ են ազդում քաղաքականության արդյունքների վրա.ավելին, վերջիններս մեծապես պայմանավորված են սոցիալ-տնտեսական գործոններով:[1]

Ուշագրավ է այն փաստը, որ պետության ներսում հասարակական-տնտեսական փոխակերպումներն ուղեկցվում են սոցիալական ոլորտի ապակարգավորմամբ, բնակչության եկամուտների մակարդակի անհավասարության ուժեղացմամբ և որպես արդյունք՝ սոցիալական շերտավորման խորացմամբ, ինչը հանգեցնում է սոցիալ-տնտեսական կողմնորոշմամբ պետության կառուցման խոչընդոտների առաջացմանը: Այս հակասությունների հարթման ուղիներից մեկը հասարակության ներսում բնակչության եկամուտների վերաբաշխման գործուն մեխանիզմի ներդնումն է:

[1] **Sharkansky, I., Hofferbert, R. I.**, Dimensions of state politics, economics, and public policy. American Political Science Review, (1969), 63, pp. 867-879.

Ավանդաբար պետության՝ տնտեսության մեջ ունեցած դերակատարությունը սահմանվում է երեք գործառույթներով՝ ռեսուրսների տեղաբաշխմամբ (resourse allocation), վերաբաշխմամբ (redistribution) և կայունության (stability) ապահովմամբ:[1] Այս գործառույթներից հատկապես հարկ է առանձնացնել պետության վերաբաշխիչ գործառույթը, քանի որ վերջինիս օգնությամբ պետությունը, վերաբաշխելով նախկինում արդեն իսկ տեղաբաշխված ռեսուրսները, կարողանում է հասնել ներպետական սոցիալ-տնտեսական (հեռանկարում՝ նաև քաղաքական) կայունության:

Պետության կողմից հանրային քաղաքականության իրականացման համատեքստում վերաբաշխիչ գործառույթի առանցքային դերակատարությունն ընդգծել է ամերիկացի տնտեսագետ, սոցիոլոգ, քաղաքական փիլիսոփա Կառլ Պոլանին (1886-1964): Իր «Տնտեսությունը որպես ինստիտուցիոնալ ձևավորված գործընթաց» (1957) նա առանձնացնում է տնտեսության գործառնման հետևյալ երեք մեխանիզմները՝ փոխադարձ փոխանակություն (reciprocity), ապրանքային փոխանակում (exchange) և վերաբաշխում (redistribution):[2] Կ.Պոլանին պնդում էր, որ ոչ բոլոր տնտեսական համակարգերն են հիմնված շուկայի վրա. մի շարք հասարակություններ, ելնելով իրենց զարգացման պատմական-մարդաբանական առանձնահատկություններից, ունեն տնտեսական համակարգ՝ հիմնված վերաբաշխման վրա:

Այսպիսով, շուկայական տիպի տնտեսական համակարգերից զատ, գոյություն ունեն նաև ոչ շուկայական՝ վերաբաշխիչ տնտեսական համակարգեր, որոնք ձևավորում են ոչ շուկայական տիպի վերաբաշխիչ տնտեսություն (redistribution economy): Վերաբաշխման ժամանակ տեղի է ունենում համընդհանուր, միասնական սեփականության բաղկացուցիչների բաշխում տնտեսական սուբյեկտների միջև. ընդ որում, սահմանվում են վերջինիս օգտագործման կանոնները, այսինքն, վերաբաշխման և թողարկվող ռեսուրսների և բարիքների հավաքագրման պարամետրերը: Այսինքն, կարող ենք փաստել, որ վերաբաշխումն իրենից ներկայացնում է storage-cum-redistribution գործընթաց. հենց վերաբաշխման միջոցով է հնարավոր լինում ապահովել հանրային հարստության ձևավորման գործընթացը՝ իրականացնելով վերաբաշխման և աշխատանքի բաժանման հետևանքով ձևավորված արդյունքների վերամիավորում:[3]

---

[1] **Łucja Tomaszewicz L.,Trębska J.,** The role of general government in the income redistribution in the Polish economy, University of Social Sciences, Lodz,Poland, Journal of International Studies, 2015, p.3. https://www.jois.eu/files/JIS_Vol8_N2_Tomaszewicz.pdf

[2] **Maucourant E., Plociniczak S.,** The Institution, the Economy and the Market: Karl Polanyi's Institutional Thought for Economists, Review of Political Economy, Vol. 25, No. 3, 2013, pp. 512– 521, http://dx.doi.org/10.1080/09538259.2013.807675

[3] Նույն տեղում, էջ 525-528

Հարկ է նշել, որ վերաբաշխիչ քաղաքականությունը ցանկացած պետության գործունեության առանցքային ուղղություններից մեկն է, և հանրային հատվածն, անշուշտ, չպետք է անմասն մնա և վերացարկվի դրանից: Ամեն անգամ, երբ կառավարությունն իրականացնում է գործողությունների որոշակի համակազմ՝ նախանշված նպատակին հասնելու համար, ձևավորվում են, այսպես կոչված, «հաղթողներ» և «պարտվողներ», անգամ այն դեպքում, երբ այդ բաշխիչ էֆեկտները նպատակադրված չէին: Այս իմաստով կարելի է ասել, որ գործնականում պետության հանրային քաղաքականության բոլոր ուղղություններն ունեն վերաբաշխիչ բնույթ: [1]

Պետության վերաբաշխիչ գործառույթի և իրականացվող վերաբաշխիչ քաղաքականության առանձնահատկությունների ըմբռնման համար անհրաժեշտ է վերաբաշխումն ընկալել որպես մի համակարգ, որի սուբյեկտները միմյանց հետ սոցիալ-տնտեսական փոխհարաբերությունների մեջ գտնվող անհատներ և խմբեր են: Իր հերթին, դժվար չէ կռահել, որ վերաբաշխումն ունի տնտեսագիտական բնույթ, և ավելին, տնտեսագիտական տեսության մեջ վերաբաշխումը կարող է դիտարկվել երկու ասպեկտներով՝ որպես տնտեսական երևույթ և որպես տնտեսական գործընթաց. իր հերթին, այս երկու ընկալումները հարաբերակցվում են որպես պետության վերաբաշխիչ քաղաքականության և գործառույթի ստատիկ և դինամիկ ասպեկտներ: Այսպես, վերաբաշխումը՝ որպես տնտեսական երևույթ, սահմանվում է որպես տվյալ հասարակության ներսում ձևավորված և կայացած տնտեսական հարաբերությունների համակարգ, իսկ վերաբաշխումը՝ որպես տնտեսական գործընթաց, սահմանվում է որպես գործողությունների փակ պարբերաշրջան, որը բնութագրվում է վերաբաշխիչ հաջորդական գործողությունների շղթայով:

Անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկել պետության վերաբաշխիչ գործողությունների բնույթը, իրագործման նախադրյալները և հետևանքները. վերջիններս ցույց են տալիս պետության տնտեսական վարքագծի իրական տրամաբանությունը: Անհրաժեշտ է նաև վերահսկել այն ազդեցությունը, որով հավասարության և արդարության այս կամ այն չափորոշիչներին համապատասխանող վերաբաշխիչ քաղաքականությունը ներգործում է հանրային և մասնավոր բարիքների արտադրության արդյունավետության վրա:

Վերաբաշխիչ քաղաքականության ուսումնասիրումը, որպես կանոն, կանգ է առնում եկամուտների հոսքի դիտարկման վրա, որոնք, իրենց հերթին, ազդում են տնտեսական աճի ցուցանիշների վրա: Սակայն պետք է նշել, որ եկամտային հոսքերի վրա վերաբաշխիչ քաղաքակա-

[1] **Moran M., Martin R., Goodin E.R.**, The Oxford Handbook of Public Policy, edited by, Oxford University Press, 2006, p.607

նության ազդեցությունը կարող է պայմանավորված լինել մի շարք հանգամանքներով. վերաբաշխումը՝ որպես գործընթաց, իր բնույթով ներքին է, քանի որ կախված է այնպիսի ցուցանիշներից, ինչպիսիք են պետության ժողովրդագրական տվյալները, տնտեսական և քաղաքական պայմանները, և այլն:[1]

Հարկ է նշել, որ առաջին փաստարկը հենվում է քաղտնտեսության վրա. այսպես, օրինակ, երբ անհավասարությունը հասնում է այնպիսի սահմանային կետի, որը ժողովրդավարության պայմաններում այլևս ընդունելի չէ հասարակության համար, վերջինս կպահանջի այնպիսի հանրային քաղաքականության մշակում և իրագործում, որը, օրինակ, հարկային բարձր դրույքաչափերի սահմանմամբ կխոչընդոտի գործարարության զարգացմանը կամ պաշտպանական այլ մեխանիզմների ընդունմամբ կկանխի ներդրումային խթանների ի հայտ գալը: Մյուս կողմից, անհավասարության բարձր մակարդակը կնպաստի սոցիալական լարվածության առաջացմանը, որն էլ, իր հերթին, կհանգեցնի սոցիալ-քաղաքական անկայունության, վերաբաշխման բազմակի իրականացման, և որպես արդյունք, տնտեսական անկման:[2]

Այսպիսով, կարելի է փաստել, որ պետության վերաբաշխիչ գործառույթի էությունը կայանում է բնակչության տարբեր սոցիալական խմբերի կենսամակարդակների միջև եղած տարբերությունների մեղմման և սոցիալական համահարթեցման ապահովման մեջ: Այլ կերպ ասած, պետության վերաբաշխիչ գործառույթի համատեքստում հասարակության հավաքական պահանջմունքների բավարարմանն ուղղված ծախսերն (օրինակ, կրթության կամ առողջապահության ոլորտում) առավել քան արդարացված են:

Ռեսուրսների հարկադրական տեղաբաշխումը, որին շատ հաճախ դիմում է պետությունը, սովորաբար հանգեցնում է հասարակության բարեկեցության մակարդակում նշանակալի փոփոխությունների. արդյունքում հասարակության մի մասը ձեռք է բերում առավելություն, փոխարենը նվազում են հասարակության մյուս անդամների տնտեսական հնարավորությունները: Այս իմաստով կարելի է փաստել, որ վերաբաշխիչ գործընթացները ներառում են ոչ միայն ֆինանսների, ապրանքների և ծառայությունների (աշխատավարձի, գների, մաքսային սակագների և այլ տնտեսական փոփոխականների պետական կարգավորում), այլև տնտեսական հնարավորությունների վերաբաշխում, այն է՝ կրթական և առողջապահական ավելի լավ ծառայությունների, աշխատանքի ստացման

[1] **Kohler P.,** Asset-Centred Redistributive Policies for Sustainable Development, August 2014, pp .5-6

[2] **Osberg L.,** Income Distribution and Public Social Expenditure: Theories, Effects and Evidence, 2003, p. 5.

հասանելիության. երկարաժամկետ հեռանկարում հավասար հնարավորությունների ապահովումը կհանգեցնի եկամուտների համեմատաբար ավելի մեծ հավասարության ձեռքբերման: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ վերաբաշխիչ գործընթացների ինտենսիվությունը և իրական ուղղվածությունը շատ հաճախ չի բացահայտվում, իսկ վերջնարդյունքները ոչ միշտ են համաձայնեցվում նախնական նպատակների հետ:

Այսպես, բաշխիչ քաղաքականություն իրականացնելիս պետությունը՝ ի դեմս կառավարության, եղած ռեսուրսները բաշխում է հասարակության բոլոր խմբերի միջև: Սա խթանում է ռեսուրսների նկատմամբ հավասար հասանելիությունը. ըստ էության, այս դեպքում իրագործվում է «հաղթանակ-հաղթանակ» ռազմավարությունը, քանի որ բոլորը՝ անկախ նրանից, թե որ սոցիալական խմբին են պատկանում, ստանում են ռեսուրսների իրենց չափաբաժինը: Բաշխիչ քաղաքականության հիմնական նպատակը էգալիտարիզմի (համահավասարության) նվաճումն է:[1] Սա նշանակում է, որ բաշխիչ քաղաքականություն իրականացնելիս պետական իշխանության համապատասխան մարմիններն իրականացնում են բնակչության տարբեր սոցիալական խմբերի շրջանում նյութական բարիքների և եկամուտների բաշխում, ընդ որում, բաշխման գործընթացները տեղի են ունենում սոցիալական ծրագրերի, կրթական և առողջապահական ծառայությունների մատուցման, սոցիալական երաշխիքների և արտոնությունների տրամադրման և այլնի տեսքով: Այս տեսակի քաղաքականության իրականացման դեպքում հնարավոր է լինում ձեռք բերել համաձայնություն հասարակության տարբեր սոցիալ-քաղաքական խմբերի միջև՝ ապահովելով փոխադարձ աջակցություն և համագործակցային ոգու ձևավորում:

Ըստ Օ. Օլանիի, վերաբաշխիչ քաղաքականությունը սովորաբար ենթադրում է «նյութական ռեսուրսների փոխանցման գործընթացների ամբողջություն»:[2] Այսինքն, սա նշանակում է, որ վերաբաշխիչ քաղաքականությունը ենթադրում է առկա ռեսուրսների փոխանցում հասարակության մի խմբից մյուսը: Վերաբաշխիչ քաղաքականության հիմնական նպատակը հասարակական հավասարակշռության նվաճումն է, ինչը, առաջին հերթին, հնարավոր է իրագործել ռեսուրսների նկատմամբ հավասար հասանելիության ապահովմամբ: Քաղաքականության այս տեսակի

[1] **Lowi T.,** American Business Public Policy, Case Studies and Political Theory World Politics 16, 1964, No 14

[2] **Olaniyi O.,** "Fiscal federalism and the performance of local governments in Nigeria's economic development: an impact analysis," in Fiscal Federalism and Nigeria's Economic Development, collected volume of papers presented at the 1999 Annual Conference of the Nigerian Economic Society.

հիմքում ընկած է այն ենթադրությունը, որ հասարակության ներսում որոշ խմբեր ունեն սոցիալական արտոնություններ, մինչդեռ մյուսները զուրկ են դրանցից: Այսինքն, վերաբաշխիչ քաղաքականությունը «զրոյական գումարով խաղ է», քանի որ մեկի նվաճումը ենթադրում է մյուսի կորուստ:

Սա նշանակում է, որ վերաբաշխիչ քաղաքականություն իրականացնելիս ձևավորվում է որակապես այլ իրավիճակ. ակնհայտ է, որ առավել սուր տարաձայնություններ ծագում են հենց վերաբաշխիչ քաղաքականության իրականացման ժամանակ, երբ պետությունը համաչափ հասարակական զարգացում ապահովելու և համահարթեցում իրականացնելու համար ստիպված է լինում որոշ նյութական, ֆինանսական և այլ ռեսուրսներ վերաբաշխել հասարակության որոշակի, առավելապես խոցելի սոցիալական խմբերի միջև: [1]

Կարելի է փաստել, որ պետությունը վերաբաշխիչ քաղաքականության իրականացմամբ լուծում է հասարակության ընթացիկ և հեռանկարային սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, քանի որ այս դեպքում, հաշվի առնելով բնակչության տարբեր սոցիալական խմբերի շահեր, այն նպաստում է նաև հասարակական առաջընթացին: Այսինքն, պետության վերաբաշխիչ քաղաքականությունը պետք է փոխկապված լինի հասարակական զարգացման գերակա, մասնավորապես, սոցիալ-տնտեսական ուղղվածության հետ:

Առհասարակ, ռեսուրսների վերաբաշխման հիմնահարցը մշտապես եղել է ոլորտի տեսաբանների ուշադրության կենտրոնում: Որոշ աշխատություններում հեղինակները ուսումնասիրում են վերաբաշխման նկատմամբ սոցիալական պահանջարկը՝ ելնելով եկամուտների ոչ հավասար մակարդակներից: Այսպես, օրինակ, Դ.Աճեմողլուն և Ջ.Ռոբինսոնը, ուսումնասիրելով քաղաքական կոնֆլիկտների լուծման գործում միջին դասի դերը, պնդում են, որ վերջինս կարևոր դերակատարություն ունի ժողովրդավարության նվաճման և պահպանման մեջ:[2] Իրենց հերթին, Մ.Ռավալյոնը և Մ.Լոկշինը հետազոտում են, թե ինչպես են բարեկեցության մակարդակի աճի կամ անկման նկատմամբ սպասելիքներն ազդում պետության վերաբաշխիչ քաղաքականության աջակցման վրա՝ հանգելով այն մտքին, որ բարեկեցության սպասվելիք աճը նվազեցնում է վերա-

[1] **Лобанов В.В.,** Государственное управление и общественная политика: Учебное пособие, Питер, 2004, стр.48-49

[2] **Acemoglu, D., Robinson, J. A.,** Economic Origins of. Dictatorship and Democracy. New York, Cambridge University. Press., 2006, pp.290-292, http://www.untag-smd.ac.id/files/Perpustakaan_Digital_1/DEMOCRACY%20Economic%20Origins%20of%20Dictatorship%20and%20democracy.pdf,

բաշխման պահանջարկը: [1] Իսկ Բենաբուն և Օկը, ի տարբերություն վերոնշյալ երկու հետազոտողների, ուսումնասիրում են այն հարցը, թե ինչպես է սոցիալական մոբիլությունն ազդում պահանջարկի և եկամուտների վերաբաշխման վրա:[2] Մեկ այլ հեղինակներ՝ Ալեսինան և Անգելետոսը իրենց աշխատանքում բերում են մի շարք գործոններ, որոնք բացատրում են հասարակության վերաբերմունքը անհավասարության և պետության կողմից վերաբաշխիչ քաղաքականության իրականացման նկատմամբ:[3]

Պետության կողմից վերաբաշխման ուղղությամբ իրականացվող հանրային քաղաքականության սահմանման մեջ կարևոր է միջին դասի դերը: Այսպես, Ս.Հանթինգտոնը պնդում է, որ միջին դասի առանցքային գործառույթը վերաբաշխիչ կոնֆլիկտների հարթումն է: Այլ կերպ ասած, միջին դասն ազդում է պահանջարկի և եկամուտների վերաբաշխման վրա. մյուս կողմից, ինչպես ցույց է տալիս զարգացած երկրների պրակտիկան, կայուն հասարակության մեջ քաղաքական և տնտեսական որոշումները պետք է ընդունվեն միջին դասի պահանջների հաշվի առնմամբ:[4]

Մի կողմից, վերաբաշխիչ քաղաքականությունը կառավարության գործունեության կարևորագույն ուղղություններից է, քանզի այն ենթադրում է հասարակության համաչափ զարգացման ապահովում: Սակայն, մյուս կողմից, ելնելով էթիկական և տնտեսական ընկալումներից՝ հասարակության ներսում առկա են տարաձայնություններ՝ կապված եկամուտների վերաբաշխման նպատակահարմարության և հետևանքների հետ: [5]

Պետության կողմից վերաբաշխման իրագործման առավելություններն առավել քան ակնհայտ են. այսպես, վերաբաշխիչ քաղաքականության կողմ փաստարկներից մեկն այն է, որ վերջինիս արդյունքը սոցիալական արդարության վերականգնումն է: Այլ կերպ ասած, հարստության վերաբաշխումը կարող է շահեկան լինել ինչպես աղքատների, այնպես էլ հարուստների համար, քանի որ վերաբաշխման գործընթացներն ուղղակիորեն և միջնորդավորված կերպով կարող են հանգեցնել տնտեսական արդյունավետության:

---

[1] **Ravallion, M., Lokshin, M.,**. Who Wants to Redistribute? The tunnel effect in 1990s Russia. Development research group, World Bank, 1999, pp.87-104, http://citeseerx.ist.psu.edu/viewdoc/download?doi=10.1.1.538.6152&rep=rep1&type=pdf,

[2] **Benabou, R., Ok E.A.,** Social Mobility and the Demand for Redistribution:The POUM Hypothesis," NBER Working Paper No. 6795, 1998, pp.451-487

[3] **Alesina A., Angeletos G.M.,** Fairness and Redistribution. The American Economic Review, American Economic Association, 2005, pp.962-965, https://economics.mit.edu/files/335,

[4] Նույն տեղում, էջ 966

[5] **Симонян Г. Г.,** Факторы, влияющие на отношение различных групп населения к перераспределению доходов, https://elibrary.ru/item.asp?id=22961869

Կառավարության վերաբաշխիչ քաղաքականության իրականացման օգտին մեկ այլ փաստարկ է նաև այն, որ վերաբաշխիչ մեխանիզմների գործարկմամբ պետությունը հանդես է գալիս իր քաղաքացիներին «ապահովագրողի» դերում. այսպես, օրինակ, եթե կառավարությունը սկսում է գործարկել բնակչության խոցելի խավերին օժանդակության ցուցաբերման ծրագրեր, այն ինչ-որ կերպ պետական մակարդակում իր քաղաքացիներին ապահովագրում է աղքատությունից՝ տրամադրելով այնպիսի երաշխիքներ, որոնք չի տրամադրում շուկան:

Վերաբաշխման օգտին երրորդ փաստարկն ունի հասարակական-քաղաքական բնույթ. հասարակության ներսում եկամուտների արդյունավետ վերաբաշխումը կարող է իր էական ներդրումն ունենալ սոցիալ-քաղաքական իրավիճակի կայունացման մեջ. որքան ավելի բարձր է սոցիալական լարվածության մակարդակը, այնքան ավելի մեծ է սոցիալական հուզումների, քաղաքացիական անկարգությունների և ապակայունացնող այլ գործոնների շագման հավանականությունը:[1]

Այսպիսով, ամփոփելով վերաբաշխման գործընթացին կողմ փաստարկները, կարող ենք պնդել, որ վերաբաշխման մեխանիզմը պետության տնտեսական քաղաքականության գործիքներից մեկն է: Այն թույլ է տալիս արդյունավետ հավասարակշռություն հաստատել սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության միջև: Այլ կերպ ասած, վերաբաշխիչ արդյունավետ մեխանիզմների ներդնումն ու գործարկումը կնպաստեն սոցիալական լարվածության մեղմմանը և հասարակական բարեկեցության աճին:

Մյուս կողմից, վերաբաշխիչ քաղաքականության իրագործման նկատմամբ առկա է նաև փաստարկված բացասական վերաբերմունք. առաջին, պետության վերաբաշխիչ մեխանիզմների գործարկման հակառակորդները համոզված են, որ տնտեսության պետական կարգավորմամբ ուղեկցվող վերաբաշխումը դեմ է ազատ կապիտալիզմին: Բացի այդ, նրանք պնդում են, որ վերաբաշխումը կարող է խոչընդոտել տնտեսական աճի հնարավորությունների բացահայտմանը:

Պետության կողմից վերաբաշխիչ քաղաքականության իրագործման դեմ մյուս փաստարկն այն է, որ վերաբաշխումը՝ որպես գործընթաց, փոփոխում է շուկայական խթանների բնույթը և խոչընդոտում արտադրական գործունեության լիարժեք դրսևորումը. սա նշանակում է, որ եթե կառավարությունը, այսպես ասած, «վերցնում է հարուստներից և տալիս աղքատներին», ապա բնակչության առավել ապահովված խավի համար

[1] **Chalekian P.,** Patterns of Public Policy and Administration: Identifying Interfaces and Relationships,.-Proceedingd of the 21st Conference of Pattern Languages of Programs, PloP 14, Maryland University College, December 2014, pp.1-5

բնութագրական է դառնում վարքագծի փոփոխությունը, այն է՝ սեփական ռեսուրսներն այլ կերպ տնօրինելու պրակտիկան:

Վերաբաշխման դեմ ուղղված մեկ այլ փաստարկ պնդում է, որ այն կարող է հանգեցնել սպառողական տրամադրությունների արմատավորմանը. այլ կերպ ասած, եթե կառավարությունը վճարում է մարդուն «նրա համար, որ նա աղքատ է», աշխատելու և կայանալու խթանները շատ ավելի նվազում են: Մյուս կողմից, սույն փաստարկով համարվում է, որ այս դեպքում վերաբաշխումը հանդես է գալիս որպես հարկադիր բարեգործության տարատեսակ, քանի որ հասարակության առավել ապահովված հատվածը համաձայնում է կիսվել իր ռեսուրսներով ոչ թե ինքնակամ, այլ պետության հարկադրանքի ներքո:[1]

Ամփոփելով, կարելի է եզրահանգել, որ ժամանակակից պայմաններում պետության կողմից վերաբաշխիչ գործառույթի իրականացման առանձնահատկությունը պահանջում է նոր մոտեցում, այն է՝ վերաբաշխիչ քաղաքականության դերակատարության վերագնահատում և վերաիմաստավորում: Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ վերաբաշխման՝ որպես երևույթի, մեջ ամփոփված են սոցիալ-տնտեսական մի շարք հիմնախնդիրներ և հակասություններ: Ավելին, վերաբաշխիչ փոխհարաբերությունների տեսության և պրակտիկայի մեջ դեռևս առկա են մի շարք չլուծված խնդիրներ՝ պայմանավորված անցումային, փոխակերպվող տնտեսական հարաբերությունների համակարգով և ժամանակակից հասարակության պահանջմունքների աստիճանական աճով: Այս ամենը հանգեցնում է, այսպես կոչված, վերաբաշխման տեսության հետագա մշակման և խորացման անհրաժեշտության առաջացմանը:

Нарине Асрян, Перераспределительная функция государства в контексте государственной политики: социально-экономический аспект и политические предпосылки для реализации - В современных общественно-политических и социально-экономических условиях растет необходимость государственного регулирования экономики, в рамках которой выделены следующие три функции государства: распределение ресурсов, перераспределение и обеспечение стабильности. В данной статье обсуждается перераспределительная функция государства, в особенности подчеркивая его социально-экономический аспект.

Однако известно, что в указанном контексте не только социально-экономические, но и политические факторы влияют на разработку и реализацию государственной политики. В этом смысле можно выделить те

[1] **Kunhen, F.,** Causes of Underdevelopment and Concepts for Development Theories, in Journal of Development Studies. Penschawa Vol. VIII, 1986, 1987, pp.4-19

политические предпосылки, которые играют важную роль в реализации перераспределительной политики. В статье также обсуждаются и оцениваются аргументы за и против государственной перераспределительной политики.

Narine Asryan, The Redistributive Function of State in the Context of Public Policy: Socio-Economic Aspect and Political Preconditions for Realization - In modern socio-political and socio-economic conditions, the necessity of state regulation of economics grows, within which three functions of government are separated: resource allocation, redistribution and deprivation of stability. This article discusses the redistributive function of the state, emphasizing especially its socio-economic aspect.

However, it is known that in the above context, not only socio-economic but also political factors influence the development and implementation of state public policy. by the state. In this sense, the political preconditions that play a significant role in the implementation of redistributive policy can be singled out. The article also discusses the arguments for and against the redistributive policy and evaluates them.

ԻԻՀ-ՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ Մ. ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԼԻԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բանալի բառեր - Մ. Ահմադինեժադ, Ա. Խամենեի, Իրանի Իսլամական Հանրապետություն, ԻՀՊԿ, համակարգային փոփոխություն:

Իրանի Իսլամական հեղափոխությունը 1979թ. վերջ դրեց Մերձավոր Արևելքի հնագույն միապետության գոյությանը և մեկնարկ հանդիսացավ քաղաքական նոր տիպի համակարգի ձևավորման համար, որը մինչ օրս դիմակայում է ներքին և արտաքին մարտահրավերներին: Քաղաքական համակարգի «իրանական» տիպի բնույթն ու առանձնահատկությունը կայանում է կառավարման աստվածապետական և հանրապետական սկզբունքների մեկտեղման և միաձուլման մեջ: Ըստ էության ԻԻՀ-ն աստվածապետական հանրապետություն է, որտեղ հոգևոր վերնախավը վերահսկում է իշխանության բոլոր ճյուղերը և հանդիսանում է որոշումների կայացման գործընթացի հիմնական դերակատար:

Երբ Մահմուդ Ահմադինեժադի նախագահության երկրորդ շրջանում սկսեցին լուրեր պտտվել նախագահ-հոգևոր առաջնորդ լարված հարաբերությունների վերաբերյալ, շատերը դրան վերապահումով մոտեցան, պնդելով, թե հոգևոր առաջնորդ Ալի Խամենեիի աջակցությամբ վերընտրված նախագահը չէր կարող կարճ ժամանակում «անցանկալի» անձնավորություն դառնալ հոգևոր առաջնորդի համար: Սակայն 2009թ. նախագահական ընտրություններին հաջորդած իրադարձությունները վկայում էին, որ Իրանը կանգնած էր համակարգային փոփոխությունների վտանգի առջև, որոնց ձեռնամուխ էր եղել նորընտիր նախագահը:

Հոդվածում ներկայացվում է ԻԻՀ-ում համակարգային փոփոխությանն ուղղված նախագահ Մ. Ահմադինեժադի քաղաքականությունը և վերջինիս առճակատումը հոգևոր առաջնորդ Ա. Խամենեիի հետ:

Փորձենք հասկանալ, թե որոնք էին երկրում ծայր առած իշխանության համար պայքարի պատճառները և ինչ հետևանք կարող էին ունենալ երկրի ներքաղաքական հետագա ճակատագրի վրա:

- Իշխանության համար պայքարը պայմանավորված էր իրանական վերնախավում գերիշխող դիրքեր ունեցող պահպանողականների մրցակցությամբ: Քաղաքական կոշտ դիրքորոշում ունեցող հոգևորականների և նրանց աջակիցների կարծիքով Մ. Ահմադինեժադը և վերջինիս հովանավորությունը վայելող Էսֆանդիար Ռահիմ Մա-

շաին սոցիալական հարցերում արմատական լիբերալներ էին, որոնց կոշտ դիրքորոշումներն ու քաղաքականությունը ԱՄՆ-ի և Իսրայելի նկատմամբ կարող էին վտանգավոր հետևանքներ ունենալ Իրանի համար:

- Իրականում իշխանության համար պայքարը այնքան էլ չէր վերաբերում քաղաքականությանը, որքան Իսլամական Հանրապետությունում միմյանց առջև ծառացած երկու քաղաքական գործիչների անձնական ուժին և իշխանությանը. այլ կերպ ասած՝ աստվածապետության և հանրապետության միջև առճակատում:
- Իրանի ներքաղաքական կյանքում ի հայտ եկած խմորումները կարող էին հանգեցնել Մ. Ահմադինեժադին անվստահություն հայտնելով պաշտոնից հեռացմանը և ի վերջո վերջինիս մերձավորին՝ իրեն իրավահաջորդ նշանակելու հնարավորությունից զրկելուն[1]:
- Ակնհայտ էր, որ քանի դեռ ԻՀՊԿ-ն հավատարիմ էր հոգևոր առաջնորդին, այնքան վերջինիս դիրքերը անսասան էին, սակայն խնդիրն այն է, որ ԻՀՊԿ-ի օրեցօր աճող ազդեցությունը իշխանության գրեթե բոլոր ոլորտներում՝ նրան հոգևոր առաջնորդի նկատմամբ ևս գերիշխող դիրքեր կարող էր շնորհել:

Իշխանության գալու առաջին իսկ օրերից Մ. Ահմադինեժադը որդեգրեց մահդիականության գաղափարական փիլիսոփայությունը: Բանն այն է, որ 1979թ. Իրանում Իսլամական հեղափոխության առաջին իսկ օրերից մինչև Մ. Ահմադինեժադի նախագահությունը՝ մահդիականությունն Իրանում միայն կրոնական ուսմունք և շիայական ավանդույթ էր և քաղաքական բովանդակություն չուներ: Սակայն Մ. Ահմադինեժադի նախագահության սկզբում այս կրոնական ուսմունքը դարձավ քաղաքական փիլիսոփայություն և կենտրոնական տեղ գրավեց իրանական քաղաքական կառավարման համակարգում: Դրան մեծապես նպաստում էր նաև Մ. Ահմադինեժադի հոգևոր հայր այաթոլլահ Մեսբահ Յազդին[2]: Նորընտիր նախագահը ոչ միայն տարբեր առիթներով հայտարարում էր իմամ Մահդիի վերադարձի մասին, այլև պնդում, թե վերջինիս հետ հոգևոր կապ ունի և իր քաղաքականությունը կառուցում էր՝ հիմնվելով «իմամ Մահդիից ստացած անմիջական ուղերձների վրա»[3]:

---

[1] Բանն այն է, որ նախագահության վերջին շրջանում Մ. Ահմադինեժադը փորձում էր 2013թ. նախագահական ընտրությունների թեկնածուների մեջ ընդգրկել Ռ. Մաշաիին

[2] Այաթոլլահ Յազդին Մ. Ահմադինեժադի հոգևոր դաստիարակն է եղել և անմիջական ազդեցություն ունեցել նրա քաղաքական հայացքների ձևավորման վրա: Հայտնի է, որ Մ. Յազդին ղեկավարում էր Հոջաթիեի կրոնական շարժումը, որը առավելագույնս պարուրված էր միստիցիզմով և թաքուցյալ իմամ Մահդիի ժամանման ակնկալիքով:

[3] Special Dispatch No.1328, Iran President Ahmadinejad: 'I Have a Connection with God, Since God Said That the Infidels Will Have No Way to Harm the Believers'; 'We Have [Only] One Step

Կարելի է փաստել, որ մեսսիականության ժամանակակից վերածնունդը, ամենայն հավանականությամբ, իր ամենամեծ ազդեցությունն է ունեցել Իրանի ներքաղաքական կյանքի վրա: Սա, իր հերթին, դարձավ պատրվակ՝ Իրանում մարդու իրավունքների հետագա վատթարացման, ինչպես նաև «Երկրորդ մշակութային հեղափոխության» ի հայտ գալու համար, որը փորձում էր «մաքրել» հասարակական և գիտական կյանքը՝ ոչ իսլամական բոլոր ազդեցություններից[1]:

Հատկանշական է, որ իմամ Մահդիի վերադարձի շուրջ շահարկումներից հոգևորականներն էլ աստիճանաբար սկսեցին վտանգ զգալ, քանի որ նախագահը ամեն առիթով պնդում էր, թե ստանում է թաքուցյալ իմամի պատգամներն ու աջակցությունը: Այս կերպ թերևս, նա փորձում էր ժողովրդին ներշնչել, թե ինքը Աստծո մարդն է և պետական գործերում հոգևորականների կարիքը չկա, քանի որ նախագահը կարող է կառավարել երկիրը հենց իմամ Մահդիի աջակցությամբ: Սրանով հետագայում հոգևորականների դերի նվազումը երկրի քաղաքական կյանքում դառնալու էր անխուսափելի, ուստի պատահական չէ, որ նախագահի հանդեպ սկսեցին անբարյացակամորեն տրամադրվել հոգևոր խավի ներկայացուցիչները:

2008թ. խորհրդարանական ընտրություններից հետո օրենսդիր մարմնի ղեկավարումը անցավ ավանդական պահպանողականների ձեռքը, որոնք քննադատում էին նախագահի քաղաքականությունը արտաքին և ներքին ոլորտներում: Նրանք Մ. Ահմադինեժադի գործողությունները համարում էին որպես հեղափոխականների առաջին սերնդի ուժն ու ազդեցությունը սահմանափակելու, հոգևորականությանը ինչ-որ չափով իշխանությունից հեռացնելու և նոր քաղաքական ու գործարար վերնախավ ստեղծելու փորձեր՝ պետական մարմիններում ԻՀՊԿ-ի ներկա և նախկին աշխատակիցներին առաջ մղելով և ԻՀՊԿ կառույցների շուրջ ստեղծված ընկերություններին աջակցելով:

Արդեն 2009թ. նախագահական ընտրությունների ժամանակ Ա. Խամենեին սատարեց Մ. Ահմադինեժադին, քանի որ նախագահի մյուս թեկնածուների համեմատ (Մ. Քարուբի, Մ. Հ. Մուսավի և այլն) Մ. Ահմադինեժադը առավել ցանկալի թեկնածու էր հոգևոր առաջնորդի համար: Կարելի է ենթադրել, որ Ա. Խամենեին իրեն աջակից էր փնտրում նաև հոգևորականների խավից դուրս, քանի որ 1979թ. Իսլամական Հանրապետության սահմանադրությամբ ԻԻՀ միակ և անփոխարինելի հոգևոր առաջնորդ

Remaining Before We Attain the Summit of Nuclear Technology'; The West 'Will Not Dare to Attack Us', https://www.memri.org/reports/iran-president-ahmadinejad-i-have-connection-god-god-said-infidels-will-have-no-way-harm, (19.10.2006)

[1] Freedom House, Freedom in the World Report 2011, Iran, https://freedomhouse.org/report/freedom-world/2011/iran?page=22&year=2011&country=8057

էր հռչակվում իմամ Խոմեյնիին, իսկ արդեն նրա մահվանից հետո իշխանության եկած Ա. Խամենեին չեր կարող չզգալ իմամ Խոմեյնիի ազդեցությունը: Միևնույն ժամանակ, նրան անձամբ հավատարիմ Մ. Ահմադինեժադը, արդեն նախագահ վերընտրվելուց հետո սկսեց սահմանափակել հոգևոր առաջնորդի անմիջական շրջապատին պատկանող անձանց իրավունքներն ու արտոնությունները: Այդ առումով նախագահի քաղաքական քայլերը կարելի էր մեկնաբանել որպես փորձ՝ հոգևոր առաջնորդի և հոգևորականության խնամակալությունից դուրս գալու և իսլամական պետականության սկզբունքներն ու շարիաթի օրենքները պահպանելով՝ Իսլամական Հանրապետության կառավարող էլիտան փոխելու փորձ: Չէ որ 2009թ. նախագահական ընտրություններում Մ. Ահմադինեժադի հաղթանակը դժգոհություն առաջացրեց իրանցիների զգալի մասի շրջանում, ովքեր նորընտիր նախագահին համարում էին ոչ լեգիտիմ և ընտրակեղծիքներով իշխանության եկած, իսկ Ա. Խամենեիի աջակցությունը «ոչ լեգիտիմ» նախագահին, միայն ստվեր էր գցում նրա հեղինակության վրա:

Բանն այն է, որ 2009թ. արդեն լուրեր էին պտտվում հոգևոր առաջնորդի մոտալուտ մահվան վերաբերյալ, ով այդ ժամանակ 70 տարեկան էր: Ուստի պատահական չէ, որ քննարկումներ էին տեղի ունենում նոր հոգևոր առաջնորդի թեկնածուների շուրջ[1]: Շատերը Ա. Խամենեիին արժանի իրավահաջորդ էին համարում Հ. Ռաֆսանջանիին, ով, թեև տարիքով քիչ էր զիջում հոգևոր առաջնորդին, սակայն թե՛ Իրանում և թե՛ դրա սահմաններից դուրս ազդեցիկ քաղաքական գործիչ էր[2]: Նման պայմաններում, Մ. Ահամդինեժադին առավել քան երբևէ անհրաժեշտ էր մտածել հոգևոր առաջնորդի՝ իր համար ավելի ցանկալի թեկնածուի ընտրության շուրջ, քանի որ վերջինիս հարաբերությունները Հ. Ռաֆսանջանիի հետ լարված էին: Այս պարագայում Մ. Ահմադինեժադի համար հոգևոր առաջնորդի ցանկալի թեկնածուն կարող էր լինել այյաթոլլա Մոհամմադ Թաքի Մեսբահ-Յազդին, ով հանդիսացել է նախագահի հոգևոր ուսուցիչը: Բացի այդ, գաղտնիք չէ, որ 2013թ. հունիսին Մ. Ահմադինեժադը չէր կարողանալու մասնակցել Իրանի նախագահական ընտրություններին, ուստի վերջինիս համար առավել նպատակահարմար կլիներ նախագահի պաշտոնում տեսնել Է. Մաշաիին, ով խնամիական կապից բացի, անձնական ջերմ հարաբերություններ ուներ Մ. Ահմադինեժադի հետ: Հենց այս նպատակներին հասնելու համար էլ Մ. Ահմադինեժադը ձգտում էր համակարգային փոփոխության ենթարկել երկրի ներքաղաքական կառուցվածքը՝

[1] **Thaler D., Nader A., Chubin Sh., Green J., Lynch Ch., Wehrey F.,** Mullahs, Guards, and Bonyads: An Exploration of Iranian Leadership Dynamics, Rand Corporation, Santa Monica, 1010, p. 123

[2] **Саджадпур К.** Читая Хаменеи: Взгляды на мир самого влиятельного деятеля Ирана, Эхо Бук, Москва, 2009, стр. 42

պաշտոններից հեռացնելով Ա. Խամենեիի կողմնակիցներին և իր համար վտանգ ներկայացնող քաղաքական գործիչներին:

Մ. Ահմադինեժադ-Ա. Խամենեի հարաբերություններում ճաքեր նկատվում էին դեռևս Մ. Ահմադինեժադի նախագահության առաջին շրջանի կեսերից, երբ երկրի ղեկավարների միջև հակասություններ ի հայտ եկան Ա. Լարիջանիի հետ կապված, ով ոչ միայն Գերագույն ազգային անվտանգության խորհրդի նախագահն էր և Միջուկային հարցերով գլխավոր բանակցողը, այլև Ա. Խամենեիի մերձավորներից և 2005թ. նախագահական ընտրություններում Մ. Ահմադինեժադի հիմնական հակառակորդներից մեկը: Եվ ահա, 2007թ. Մ. Ահմադինեժադը, առանց հոգևոր առաջնորդի հետ խորհրդակցելու, Ա. Լարիջանիին հեռացնում է Միջուկային հարցերով գլխավոր բանակցողի պաշտոնից՝ նրան փոխարինելով Սաեդ Ջալիլիով[1]:

Բանն այն է, որ Ա. Լարիջանին այն մարդն էր, ով մեղմ դիվանագիտությամբ կփորձեր կայունացնել հարաբերությունները ԻԻՀ-ի և ԱՄՆ-ի միջև, ինչը այդ պահին ձեռնտու չէր Մ. Ահմադինեժադին, ով օրեցօր զգում էր երկրի ներսում իր դիրքերի թուլացումը: Վերջինիս անհրաժեշտ էր արևմտյան սպառնալիքի պայմաններում ներքաղաքական խնդիրներից ժողովրդի ուշադրությունը շեղել: Մյուս կողմից, հոգևոր առաջնորդին ևս անհանգստացնում էր Ա. Լարիջանիի՝ չափազանց մեղմ դիրքորոշումը ԱՄՆ-ի և արևմուտքի նկատմամբ, ինչը հակասում էր հոգևոր վերնախավի՝ ոչ մի գնով զիջումների չգնալու դիրքորոշմանը:

Արդեն 2009թ. հուլիսի 17-ին նորընտիր նախագահը հայտարարում է, որ իր մեծավորներից Է. Մաշաին (ում որդին ամուսնացած էր Մ. Ահմադինեժադի դստեր հետ) պետք է նշանակվի երկրի նոր, առաջին փոխնախագահ[2]: Սակայն հանդիպելով հոգևոր առաջնորդի վճռական դիմադրությանը՝ Է. Մաշաին հուլիսի 24-ին հրաժարական տվեց փոխնախագահի պաշտոնից՝ նշանակվելով նախագահի աշխատակազմի ղեկավար[3]:

Հետագայում Մ. Ահմադինեժադը «հարձակվեց» հոգևոր առաջնորդի ուժային բազայի վրա՝ պաշտոններից հեռացնելով Ներքին գործերի նախարար Մոստաֆա Փուր-Մոհամմադին և ինֆորմացիոն ներհոսքերի առումով շահեկան պաշտոն համարվող Հետախուզության նախարար Ղոլամ-Հոսեին Մոհսեն Էջեհիի: Մ. Ահմադինեժադը ձգտում էր նաև ազատ-

[1] Ğalīlī sarparast moḏākerāt-e hastei šod (Ջալիլին՝ միջուկային բանակցությունների պատասխանատու), tabnak.ir/0000C3, (28.10.2007)

[2] Այդ շրջանում Իրանում գործում էր տասներկու փոխնախագահի պաշտոն, սակայն առաջին փոխնախագահի պաշտոնը ամենակարևորն էր, քանի որ նախագահի բացակայության դեպքում նա էր հանդես գալու որպես երկրի նախագահ:

[3] Ğalīlī sarparast moḏākerāt-e hastei šod (Ջալիլին՝ միջուկային բանակցությունների պատասխանատու), tabnak.ir/0000C3, (28.10.2007)

վել Արտաքին գործերի նախարար Մանուչեհր Մոթաքիից՝ նրա փոխարեն նշանակելով այլ անձի, ով ուղղակիորեն հաշվետու կլիներ նախագահին: Եվ ահա, 2010թ. Մ. Մոթաքին պաշտոնանկ է արվում և նրա փոխարեն մի քանի ամսվա պաշտոնավարումից հետո 2011թ. Արտաքին գործերի նախարար է նշանակվում նախագահի մերձավորներից՝ Իրանի ատոմային էներգիայի կազմակերպության ղեկավար և երկրի փոխնախագահ Ալի Աքբար Սալեհին[1]:

Սա որոշ չափով կարելի է համարել Մ. Ահմադինեժադի պատասխան քայլը այն բանին, որ դեռևս 2008թ. նոյեմբերին Իրանի խորհրդարանը ձայների ճնշող մեծամասնությամբ անվստահություն հայտնեց նույն թվականի օգոստոսի 5-ին Ներքին գործերի նախարարի պաշտոնում հաստատված Ալի Քորդանիին՝ նրան մեղադրելով Օքսֆորդի համալսարանի դոկտորի դիպլոմը կեղծելու մեջ: Ինքը, Ա. Քորդանին ընդունեց մեղադրանքները՝ մեղքը բարդելով միջնորդի վրա, ով ընդունել էր փաստաթղթերը և հայտարարեց, որ իր դեմ ուղղված սադրանքը կազմակերպվել է Իսրայելի կողմից, քանի որ ինքն իրականում վստահ էր դիպլոմի օրինական լինելու մեջ: Այնուամենայնիվ, Մ. Ահմադինեժադը պաշտպանեց Ա. Քորդանիին, քանի որ վերջինիս թեկնածությունը ինքն էր առաջադրել: Արդյունքում, Մ. Ահմադինեժադի հրամանով Ներքին գործերի նախարարի պաշտոնում Ա. Քորդանիին փոխարինեց Սադեղ Մահսուլին[2]:

Շատերին զարմացնում և մտահոգության տեղիք էր տալիս Ա. Խամենեիի լռությունը՝ նախագահի ամենաթողության հետ կապված: Սակայն լռությունը խախտվեց, երբ 2011թ. ապրիլին պաշտոնից հեռացվեց Ազգային անվտանգության նախարար և Ա. Խամենեիի մերձավոր՝ Հեյդար Մոսլեհին[3]: Արդեն մեկ ժամ անց լրատվական կայքերը գրում էին, որ Ա. Խամենեին վերականգնել է Հ. Մոսլեհիի պաշտոնը: Վերոնշյալ դեպքերից հետո շուրջ 10 օր Մ. Ահմադինեժադը դադարեց դուրս գալ հասարակության մեջ և կարծես թե ընդհատակ անցավ, ինչը գալիս էր փաստելու, որ կառավարության ներսում միասնականության գաղափարը և «քաղաքականությունից վեր լինելու»՝ Ա. Խամենեիի կերպարը կարող էր խաթարվել, եթե նախագահը շարունակեր իր մեկուսացումը:

Արդեն իր «վերադարձից» հետո Մ. Ահմադինեժադը հանդես եկավ հեռուստաելույթով, որը թեև նշված էր որպես ուղիղ եթեր (live), սակայն

---

[1] Alī Akbar Salehī vazir-e omur-e ḫāreje-ye Irān šod, (Ալի Աքբար Սալեհին Իրանի Արտաքին Գործերի նախարար դարձավ), https://p.dw.com/p/Qwl1, (30.01.2011)

[2] Ṣādeq Maḥṣūlī vazir-e kešvar šod (Սադեղ Մահսուլին Ներքին գործերի նախարար դարձավ), https://www.bbc.com/persian/iran/2008/11/081118_he_mahsuli_confirmed, (18.11.2008)

[3] **Alfoneh A.,** Ahmadinejad versus Khamenei: IRGC Wins, Civilians Lose, Middle Eastern Outlook, American Enterprise Institute for Public Policy Research, No 3, May 2011, p. 2

շատերի կարծիքով ակնհայտ էր, որ ցուցադրվում էր նախօրոք արված ձայնագրություն, որն, անկասկած, պետք է արժանացած լիներ հոգևոր առաջնորդի հավանությանը: Ձայնագրությունում նախագահը հայտարարում էր հոգևոր առաջնորդ Ա. Խամենեիին լիակատար հավատարմության մասին[1]: Բանն այն է, որ նախագահն, ինքը, հասկացել էր, որ հոգևոր առաջնորդին մարտահրավեր նետելով կարող էր զրկվել իր աջակիցներից շատերից, քանի որ այս շրջանում Ա. Խամենեիի և նախագահի հարաբերությունները այնքան էին վատթարացել, որ հոգևոր առաջնորդի հրամանով Մ. Ահմադինեժադի կողմնակիցները մեղադրվեցին «վհուկության» մեջ և ձերբակալվեց շուրջ 25 հոգի[2]:

Փաստորեն 2011թ. նշանավորվեց նախագահի կողմնակիցների պաշտոնանկություններով և 29-ից ավելի ձերբակալություններով, ինչին ի պատասխան Մ. Ահմադինեժադը հայտարարեց, որ այդ գործընթացն ունի քաղաքական դրդապատճառներ, ըստ որի ցանկանում են կառավարության վրա ճնշում գործադրել: Նախագահի պնդմամբ նախարարների կաբինետը սահմանագիծն է, և եթե նրան ձեռք տան, ապա իր պարտքն է լինելու պաշտպանել նրանց: Այս ամենով հանդերձ, ակնհայտ էր, որ Մ. Այմադինեժադը աստիճանաբար զրկվում է իր արտոնություններից և նրան այլ ելք չէր մնում, քան ենթարկվել հոգևոր առաջնորդին մինչև 2013թ. նախագահական ընտրությունները[3]:

Արդեն 2011թ. տարեվերջին հոգևոր առաջնորդը իր ելույթներում չէր թաքցնում դժգոհությունը Մ. Ահմադինեժադի վարած քաղաքականությունից և ժողովրդի մեջ սերմանում էր այն գաղափարները, որ գործող համակարգը ի զորու չէ լուծել երկրում սկիզբ առած սոցիալ-տնտեսական դժվարությունները: Անգամ հոկտեմբերին վերջինիս կողմնակիցները առաջ քաշեցին սահմանադրության արմատական փոփոխման նախագիծը, ըստ որի նախատեսվում էր վերացնել նախագահի պաշտոնը և երկիրը կառավարել հոգևոր առաջնորդ-կառավարություն համատեղ փոխգործակցությամբ[4]: Սակայն նախագիծն այդպես էլ անկատար մնաց. բանն այն է, որ իրանական հասարակությունը չէր հաշտվի նախագահի ինստի-

---

[1] **Milani A.,** Ahmadinejad vs. The Ayatollah, https://nationalinterest.org/article/ahmadinejad-vs-the-ayatollah-5441, (21.06. 2011)

[2] Doūwlatmardān-e ğādugar va soquṭ goftemān-e siyāsi dar Irān (Վհուկ քաղաքական գործիչները և Իրանում քաղաքական դիսկուրսի անկումը), https://www.bbc.com/persian/iran/2011/05/110509_iran_ahmadinejad_magic_government, (09.05.2011)

[3] **Իսկանդարյան Գ.,** Իրանում ներքաղաքական վիճակը մնում է լարված, http://theanalyticon.com/?p=371, (06. 2011)

[4] **Erdbrink Th.,** Iran's supreme leader floats proposal to abolish presidency, https://www.washingtonpost.com/world/middle_east/irans-supreme-leader-floats-proposal-to-abolish-presidency/2011/10/25/gIQAsOUKGM_story.html, (25.10.2011)

տուտի վերացման հետ, և, բնականաբար, դժվար կլիներ կանգնեցնել բողոքի ալիքը:

Խնդիրը կայանում է նրանում, որ հենց Մ. Ահմադինեժադի նախագահության երկրորդ շրջանում ի հայտ եկան պատժամիջոցների թողած բացասական հետևանքները իրանական տնտեսության վրա: Հենց տնտեսական ճգնաժամը ցույց տվեց կառավարության և խորհրդարանի միջև փոխգործակցության բացակայության իրական հետևանքները: Որպես կանոն, այս կամ այն տնտեսական հիմնախնդրի լուծման համար կառավարության օրինագծի ընդունումը մեծ խնդիր էր դարձել խորհրդարանի համար, քանի որ խորհրդարանը նախագահին քննադատելու համար օգտագործում էր կառավարությունից խորհրդարան մտնող ցանկացած փաստաթուղթ, ինչը հետաձգում էր օրինագծի ընդունումը և խոչընդոտում դրա օպերատիվ արձագանքին[1]:

Արդեն 2012թ. խորհրդարանական ընտրություններում Ա. Խամենեիի կողմնակիցների հաղթանակը նշանավորեց Մ. Ահմադինեժադի և իր կողմնակիցների քաղաքական կարիերայի ավարտը: Այսպիսով, ամփոփելով Ա. Խամենեի-Մ. Ահմադինեժադ քաղաքական պայքարը, պետք է փաստել, որ 2011-2012թթ. Իրանի ներքաղաքական կյանքի ամենադժվար և վտանգներով լեցուն շրջանն էր, երբ երկիրը կագնած էր լուրջ մարտահրավերի առջև: Միջուկային ճգնաժամի պայմաններում իրանական իշխող վերնախավի կամ Սահմանադրության փոփոխության դեպքում երկիրը կհայտնվեր արտաքին ճնշման ներքո, ուստի ո՛չ հոգևոր առաջնորդը և ո՛չ էլ իրանական բարձրաստիճան պաշտոնյաները չէին կարող թույլատրել տարիներով արմատացած կառավարող համակարգի ավանդույթների ամենաչնչին իսկ փոփոխություն: Ըստ էության ԻԻՀ համակարգային փոոխությանն ուղղված Մ. Ահմադինեժադի հույսերը ի դերև ելան, իսկ դրան ուղղված քաղաքականությունն ու վերջինից բխող հետևանքները ամփոփ կարելի է հետևյալ կերպ ներկայացնել.

- Նախկինում Իսլամական Հանրապետության ոչ մի նախագահ այդքան բացահայտ մարտահրավեր չէր նետել իշխող կրոնական համակարգին և այդքան անխոհեմորեն չէր փորձել հոգևոր վերնախավից զավթել իշխանության լծակները: Բնական է, որ դա նաև չէր հաջողվի Մ. Ահմադինեժադին:
- Ըստ էության, նախագահի և հոգևոր առաջնորդի, ինչպես նաև նրանց սատարողների միջև մղվող պայքարը Իսլամական Հանրապետության հետագա կառուցվածքի երկու տեսլականի միջև էր: Կշեռքի մի նժարին Ա. Խամենեիի տեսլականն էր առ այն, որ իդեալը

[1] **Սարուխանյան Ս.,** նույն տեղում:

ոչ այլ ինչ է, քան ստատուս-քվոյի պահպանում, իսկ մյուս նժարին՝ Մ. Ահմադինեժադի տեսլականը, որում կղերական իշխանությունը մարգինալացված էր հօգուտ ազգայնականության և պոպուլիստական կրոնական ջերմեռանդության: Կարճ ժամանակ անց, սակայն, բոլորի համար պարզ դարձավ, որ Իսլամական Հանրապետությունը հավատարիմ է մնալու քաղաքական կառավարման և դրանում հոգևոր առաջնորդների կարևոր դերակատարության՝ տարիներով արմատացած սկզբունքին:

- Իմամ Մահդիի հետ անմիջական կապի մեջ լինելու հայտարարությունները հանգեցրին նրան, որ անգամ Մ. Ահմադինեժադի հոգևոր հայր իմամ Յազդին ևս երես թեքեց նախագահից և սկսեց վերջինիս վարած քաղաքականության քննադատությամբ հանդես գալ այն դեպքում, երբ պաշտոնավարման առաջին իսկ օրերից սատարել և անվերապահ աջակցություն էր ցուցաբերել Մ. Ահմադինեժադին և իր կողմնակիցներին:
- ԻԻՀ ներքաղաքական կյանքում համակարգային փոփոխության իրականացման քաղաքականության ընթացքում Մ. Ահմադինեժադը հույս ուներ ստանալ ԻՀՊԿ-ի աջակցությունը: Բանն այն է, որ վերջինիս ռազմական և քաղաքական անցյալը կապված էր հենց ԻՀՊԿ-ի հետ և գալով իշխանության նա քաղաքական պաշտոններ շնորհեց Իսլամական հեղափոխության և Իրանա-իրաքյան պատերազմի վետերաններին: Հետագայում, բնականաբար, նա ակնկալում էր ստանալ վերջիններիս անվերապահ աջակցությունն ու հավատարմությունը: Սակայն ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ ԻՀՊԿ-ի վերնախավը շարունակում է հավատարիմ մնալ հոգևոր առաջնորդին և Իսլամական հեղափոխության իդեալներին՝ ձգտելով պահպանել իսլամական կառավարման ավանդույթները:
- Մ. Ահմադինեժադի վարքագիծը մի քանի անգամ նախադրյալներ էր ստեղծել վերջինիս իմպիչմենտի համար, սակայն ենթադրում ենք, որ դա տեղի չէր ունեցել հենց Ա. Խամենեիի միջնորդության շնորհիվ: Բանն այն է, որ եթե գործող նախագահը ժամանակից շուտ հեռացվեր պաշտոնից, դա ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս մեծ աղմուկ կառաջացներ՝ կասկածի տակ դնելով իսլամական կառավարող համակարգի կայունությունն ու միասնականությունը: Բացի այդ, եթե Մ. Ահմադինեժադը հեռացվեր նախագահի պաշտոնից, դա կնշանակեր, որ «Կանաչների շարժումը» չէր սխալվել, և իրականում թե՛ հոգևոր վերնախավը և թե՛ աշխարհիկ ղեկավարները սպառել էին իրենց, քանի որ պաշտպանելով Մ. Ահմադինեժադի թեկնածությունը Ա. Խամենեին, փաստորեն,

ևս մեկ անգամ ընդգծում էր իր հովանավորությունն ու վստահությունը նախագահի նկատմամբ:

Лиана Петросян, Политика президента М. Ахмадинежада направленная на системные изменения в ИРИ - Исламская Революция Ирана положила начало нового типа политической ситемы, которое до сих пор решительно преодолевает внутренние и внешние проблемы. По сути, ИРИ - это теократическая республика, в которой духовная элита контролирует все ветви власти и играет ключевую роль в процессе принятия решений.

Однако события после президентских выборов 2009 года показали, что Ирану угрожают системные изменения, предпринятые вновь избранным президентом. В статье представлена политика президента М. Ахмадинежада, направленная на системные изменения в Иране и его противостояние с духовным лидером А. Хаменеи.

Liana Petrosyan, The policy of M. Ahmadinejad aimed at system changes in IRI - The Islamic Revolution of Iran marked the beginning of a new type of political system, which still decisively overcomes internal and external problems. In fact, Iran is a theocratic republic in which the spiritual elite controls all branches of government and plays a key role in the decision-making process.

However, the events following the 2009 presidential elections showed that Iran is threatened by the systemic changes undertaken by the newly elected president. The article presents the policy of President M. Ahmadinejad aimed at systemic changes in Iran and his confrontation with the spiritual leader A. Khamenei.

ՉԻՆԱԿԱՆ «ՄԵԿ ԳՈՏԻ-ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԸՆԹԱՑՈՂ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՀՌԻՓՍԻՄԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր - «Մեկ գոտի-Մեկ ճանապարհ», Հարավային Կովկաս, հումանիտար համագործակցություն, առևտրատնտեսական հարաբերություններ, տրանսպորտային ենթակառուցվածքներ, չինական վարկեր և ներդրումներ, «փափուկ ուժ»

Հարավային Կովկասը դարեր շարունակ եղել է մեծ տերությունների հետաքրքրության կենտրոնում: Այս տարածաշրջանը մինչ օրս էլ գրավիչ է տարբեր պետությունների համար իրենց քաղաքական և տնտեսական նկրտումներն իրագործելու տեսանկյունից: Սույն հոդվածում կվերլուծվեն Հարավային Կովկասի պետությունների՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) «Չինաստանի Մեկ գոտի - մեկ ճանապարհ» (ՄԳՄՃ) նախաձեռնությանը անդամակցելու հեռանկարները, կքննարկվեն մի կողմից՝ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի, մյուս կողմից՝ Չինաստանի առևտրատնտեսական հարաբերությունները: Հոդվածում առաջադրված են հետազոտության հետևյալ խնդիրները՝

- Քննարկել հումանիտար համագործակցությունը Հարավային Կովկասի պետությունների և ՉԺՀ միջև:
- Դիտարկել Չինաստանի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական ռազմավարությունը Հարավային Կովկասում:
- Ուսումնասիրել Հարավային Կովկասի պետությունների և ՉԺՀ առևտրատնտեսական հարաբերությունները:
- Դիտարկել Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման հեռանկարները «Մեկ գոտի – մեկ ճանապարհ» նախաձեռնության՝ Չինաստան-Կենտրոնական Ասիա-Արևմտյան Ասիա տնտեսական միջանցքում:
- Բացահայտել, թե ինչպիսի փոխշահավետ առաջարկներ կարող է ներկայացնել Հայաստանի Հանրապետությունը չինական կողմին վերջինից չինական վարկեր և ներդրումներ ստանալու համար, որոնք էլ հնարավոր է ձեռք բերել ՄԳՄՃ նախաձեռնությունը ֆինանսավորող բանկերի հետ համագործակցելիս:

Հումանիտար համագործակցությունը Հարավային Կովկասի պետությունների և ՉԺՀ միջև

Յուրաքանչյուր հզոր պետության աշխարհաքաղաքական ռազմավարության անբաժանելի մասն է համարվում պետությունների միջև հումանիտար համագործակցությունը: Ցանկացած աշխարհաքաղաքական ռազմավարության արդյունավետության համար անհրաժեշտ է հաստատել և պահպանել միջպետական հարաբերություններ կրթության, գիտության, մշակույթի ոլորտում: Ուստի՝ հենց հումանիտար համագործակցությամբ է սկսվում ցանկացած հզոր պետության իրենց աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական ռազմավարության կյանքի կոչելու գործընթացը:

Հայաստանն ու Չինաստանը համարվում են հնագույն մշակույթի և քաղաքակրթության կրողներ, ուստի հումանիտար համագործակցության բացակայությունը տարօրինակ կլիներ այս պետությունների համար: Հայաստանի Հանրապետության և ՉԺՀ միջև հումանիտար համագործակցությունն հասկանալու համար հարկավոր է վերհիշել որոշ իրադարձություններ: 2017 թ. հատկանշական էր Հայստանի համար, քանի որ վերջինիս տարածքում սկսեց կառուցվել ՉԺՀ նոր դեսպանատունը, ընդ որում ԱՄՆ դեսպանատան հարևանությամբ, որն էլ իր հերթին քաղաքական ենթատեքստ է պարունակում: Հայաստանում Չինաստանի դեսպան Տիեն Էրլոնգի գնահատմամբ՝ Չինաստանն ավելի լավ ներկայացված կլինի ՀՀ-ում նոր կառուցվող դեսպանատան շնորհիվ, ինչն էլ կնպաստի հայ-չինական հարաբերությունների զարգացմանը:[1] Հումանիտար համագործակցության մեկ այլ կարևոր գործոն կարելի է համարել ԵՊԼՀ-ում 2009 թ.-ին բացված Կոնֆուցիուսի ինստիտուտի հիմնադրումը, որն առաջինն էր ողջ տարածաշրջանում:[2] Կենտրոնի գործունեությունը միտված է չինական մշակույթի և լեզվի տարածմանը: Տարիների ընթացքում Հայաստանից ուսանողների հոսքը դեպի Չինաստան և հակառակ ուղղությամբ ապացուցում են այս կրթական կառույցի նշանակությունը երկու պետությունների համար:

Հետագայում Կոնֆուցիուսի ինստիտուտներ բացվեցին նաև Ադրբեջանում և Վրաստանում: Բաքվի պետական համալսարանիի Կոնֆուցիուսի ինստիտուտը ադրբեջանա-չինական գիտակրթական կենտրոն է, որը ստեղծվել է արևելագիտության ֆակուլտետի շրջանակներում 2011 թվականի ապրիլին: Ինստիտուտի ստեղծման նախաձեռնողը չինական կողմն էր, որը ներկայացնում էին ՉԺՀ Կառավարությանն առընթեր չինարենի

[1] Новое здание посольства Китая отражает новое качество наших отношений - посол КНР https://rus.azatutyun.am/a/28667901.html

[2] ԵՐԵՎԱՆՈՒՄ ԲԱՑՎՈՒՄ Է ԿՈՆՖՈՒՑԻՈՒՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ https://a1plus.am/hy/article/27550

խթանման գրասենյակի ներկայացուցիչները:[1] Նմանատիպ հաստատություն բացվեց նաև Վրաստանում ՉԺՀ Կրթության և Գիտության նախարարության և Վրաստանում Չինաստանի դեսպանատան աջակցությամբ:[2] Հետագայում չինարենն արագ տարածվեց նաև Հարավային Կովկասի պետությունների մի շարք համալսարաններում, որն էլ խորացրեց համագործակցությունը գիտահետազոտական և փորձագիտական վերլուծության ոլորտում:

ՉԺՀ և Հարավկովկասյան պետությունների միջև առկա է նաև խորը մշակութային համագործակցություն: Չինաստանն ու Հայաստանը ստորագրել են մշակութային փոխգործակցության ծրագիր 2017-2020 թթ.-ի համար, որն ընդգրկում է համագործակցություն մշակութային ավանդույթների պահպանման գործում երաժշտության, պարի, գրականության և կինոյի պատմության բնագավառներում, ինչպես նաև համագործակցություն Մետաքսի ճանապարհի շրջանակներում և Մշակույթի օրերի անցկացման գործում:[3] Հայ-չինական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 21-ամյակի կապակցությամբ լույս է տեսել «Չինաստանն հայերի աչքերով» գրքը:[4] Նման գրքերի շնորհանդեսներ են տեղի ունենում նաև Վրաստանում և Ադրբեջանում:

ՉԺՀ-ի կողմից իրականացվող նման հումանիտար համագործակցությունը արտաքին քաղաքականության մեջ համարվում է «փափուկ ուժի» կիրառման գործիք: Աշխարհաքաղաքական ռազմավարության արդյունավետության համար կիրառվող «փափուկ ուժի» քաղաքականությունը Չինաստանին հնարավորություն է տալիս զարգացնելու սեփական դիրքերը Հարավային Կովկասի պես ռազմավարական նշանակություն ունեցող տարածքում: Ընդհանուր առմամբ Չինաստանը վարում է հավասարազոր հումանիտար քաղաքականություն Հարավային Կովկասի պետությունների նկատմամբ:

Հարավային Կովկասի պետությունների և ՉԺՀ միջև առևտրատնտեսական հարաբերությունները

ՀՀ և ՉԺՀ դիվանագիտական հարաբերություններն հաստատվել են 1992 թ. ապրիլի 6-ին: Այդ թվականից ի վեր ՀՀ և ՉԺՀ պետական այրերի միջև տեղի են ունեցել բազմաթիվ պաշտոնական հանդիպումներ, որոնց

[1] Институт Конфуция при Бакинском государственном университете http://ci.bsu.edu.az/ru/content/dobro_pojalovaty_v_institut_konfucia

[2] В Грузии открылся институт имени Конфуция http://russian.people.com.cn/31520/7213318. html


[3] Китай и Армения подписали 4-летнюю культурную программу http://russian.news.cn/2016-06/11/c_135427271.htm

[4] Книга «Китай глазами армян» презентована в Ереване в связи с 21-летием двусторонних дипотношений https://newsarmenia.am/news/society/society-20130701-42899266/

ընթացքում կնքվել են միջպետական մի շարք համաձայնագրեր կրթության, մշակույթի, առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության, գյուղատնտեսության ոլորտում[1]:

ՀՀ և ՉԺՀ ներկայիս առևտրատնտեսական կապերը վերլուծելու նպատակով ստորև բերված գրաֆիկում կներկայացվեն ՀՀ և ՉԺՀ ապրանքաշրջանառության ծավալները վերջին 6 տարվա կտրվածքով (2014-2019 թթ.): Գրաֆիկը կազմվել է ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի (ԱՎԿ) տվյալների հիման վրա:[2]

2015թ. ՀՀ-ից ՉԺՀ արտահանումը 2014 թ. համեմատ նվազել է 3,32%-ով, իսկ ներմուծումը դեպի ՀՀ՝ 24,45%-ով: Արտահանման նվազում է նկատվել նաև 2016թ.: 2015թ. համեմատ այն նվազել է 41,67%-ով, մինչդեռ ներմուծման ծավալներն ավելացել են 12,33%-ով: Հատկանշական է, որ. 2016թ. համեմատ 2017 թ և՛ արտահանումը, և՛ ներմուծումը ավելացել են համապատասխանաբար՝ 22,89 %-ով և 29,97 %-ով: Մինչդեռ, եթե համեմատենք 2018 և 2017թթ., ի հայտ կգան հետևյալ ցուցանիշները՝ արտահանման նվազում 9,54%-ով, ներմուծման աճ 38,97%-ով:



Ինչ վերաբերում է 2019 թ.-ին ցուցանիշներին, ապա նկատվում է արտահանման աճ՝ 80.66%-ով, և ներմուծման աճ՝ 13.14%-ով: Ընդհանուր առմամբ կարելի է արձանագրել, որ ՀՀ-ից ՉԺՀ արտահնումը նվազման

[1] ՀՀ Արտաքին Գործերի նախարարություն https://www.mfa.am/hy/bilateral-relations/cn

[2] ՀՀ վիճակագրական կոմիտե https://www.armstat.am/am/?nid=159&thid%5B%5D=156&years%5B%5D=2015&year%5B%5D=2015&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC

միտումներ ունի: Արտահանման ամենաբարձր ցուցանիշը եղել է 2014թ.: Մինչդեռ, ՉԺՀ-ից ներմուծման ծավալներն տարեցտարի ավելացել են, սակայն 2019 թ.-ի ցուցանիշներն հուսադրող են: Ի դեպ, Հայաստանը հիմնականում հանքանյութեր է արտահանում ՉԺՀ, մինչդեռ ՉԺՀ-ից ներմուծվող ապրանքատեսակներն բազմազան են՝ հագուստ, սարքավորումներ, շինանյութ, սննդամթերք և այլն:[1]

Ուշագրավ է նաև դիտարկել Հարավային Կովկասի մեկ այլ պետության՝ Վրաստանի առևտրատնտեսական հարաբերությունները ՉԺՀ հետ: Վրաստանի և ՉԺՀ միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992թ. հունիսի 9-ին: Ըստ Վրաստանի արտաքին գործերի նախարարության՝ վերջին տարիներին վրացական տնտեսությունում չինական ներդրումների զգալի աճ է գրանցվել, ինչպես նաև Վրաստանում հաջողությամբ գործում են չինական 25 ընկերություններ ճանապարհների և ենթակառուցվածքների կառուցման, շինարարության, էներգետիկայի, ինչպես նա բանկային ոլորտներում:[2] Իսկապես, Չինաստանը Վրաստանի խոշորագույն առևտրային գործընկերների շարքին կարելի է դասել: Մ. Զաբախիդզեն և Ռ. Բերադզեն ներկայացնում են 4 հիմնական առանձնահատկություններ, որոնք կարող են գրավիչ լինել ՄԳՄՃ նախաձեռնության համար՝

- բիզնեսի համար հարմար միջավայր՝ արագ զարգացող տնտեսություն, կոռուպցիայի ցածր մակարդակ, աճի համար բարենպաստ հարկային քաղաքականություն,
- լիբերալ միջսահմանային առևտուր՝ ազատ առևտրի համաձայնագիր Չինաստանի հետ և խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր ԵՄ-ի հետ՝ այլ համաձայնագրերի շարքում,
- ռազմավարական աշխարհագրական դիրք՝ Սև ծով, ցամաքային կապեր Թուրքիայի հետ,
- երիտասարդ, հմուտ աշխատուժ:[3]

Ստորև բերված գրաֆիկում ներկայացված են Վրաստանի և ՉԺՀ ապրանքաշրջանառության ծավալները 6 տարվա կտրվածքով (2014-2019 թթ.): Գրաֆիկը կազմվել է Վրաստանի Ազգային վիճակագրական գրասենյակի տվյալների հիման վրա:[4] 2014թ . համեմատ՝ 2015թ. գրանցվել է արտահանման աճ 39,17%-ով, սակայն ներմուծման ցուցանիշը նվազել է


[1] ՀՀ ԱԳՆ https://www.mfa.am/hy/bilateral-relati ons/cn

[2] Ministry of Foreign Affairs of Georgia http://www.mfa.gov.ge/MainNav/ForeignPolicy/Bilateral Relations.aspx

[3] **Zabakhidze M., Beradze R.,** Georgia as a Transit Hub and its Increasing Potential in the Implementation of the Belt and Road Initiative, Policy and Management Consulting Group, Tbilisi, 2017, pp 1-37

[4] National Statistics Office of Georgia https://www.geostat.ge/en

19,93%-ով: Նույն պատկերը կարելի է տեսնել նաև 2016թ.: Այս անգամ արդեն նախորդ տարվա համեմատ արտահանման ծավալներն աճել են 38,57%-ով, իսկ ներմուծման ծավալները նվազել են 6,77%-ով: Առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման առումով 2017թ. բարենպաստ էր ոչ միայն ՀՀ, այլ նաև Վրաստանի համար: Նախորդ տարվա համեմատ գրանցվել է արտահանման և ներմուծման աճ համապատասխանաբար՝ 15,7%-ով և 33,87%-ով: Եթե համեմատենք 2017 թ. հետ, 2018 թ. Վրաստանից դեպի ՉԺՀ արտահանման ծավալները մի փոքր ընկել են՝ 1,82%-ով, մինչդեռ ներմուծման ոլորտում աճն անփոփոխ է: Այն ավելացել է 13,77%-ով: Ինչ վերաբերում է 2019 թ.-ին՝ նկատվում է արտահանման աճ՝ 14.94%-ով, և ներմուծման աճ՝ 2.95%-ով: Ի տարբերություն ՀՀ՝ Վրաստանի արտահանման ծավալները դեպի ՉԺՀ ավելանում են, աճում են նաև դեպի Վրաստան ներմուծման տվյալները: Ի դեպ, արտահանման ամենաբարձր տվյալները գրանցվել են 2019թ:



Անհրեժեշտ է անդրադառնալ նաև Ադրբեջանի տնտեսական համագործակցությունը Չինաստանի հետ: Երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992 թ. ապրիլի 2-ին:[1] Բ. Լիանլեի գնահատմամբ՝ Չինաստանը և Ադրբեջանը ունեն զարգացման նմանատիպ ռազմավարություններ, քանի որ նախ՝ երկուսն էլ կարևորում են փոխկապվածությունը և արտաքին առևտրային քաղաքա-

[1] Ministry of Foreign Affairs of Azerbaijan http://www.mfa.gov.az/en

կանությունը, երկրորդ՝ տնտեսական զարգացումը երկու երկրների համար ռազմավարական առաջնահերթություն է, հետևաբար, երկկողմ համագործակցության հնարավորություններ են ստեղծվում:[1]

Չինական քաղաքականությունը նկարագրելով Աբրահամ Լինքոլնի հայտնի մեջբերման միջոցով՝ «Ես քայլում եմ դանդաղ, բայց ես երբեք չեմ քայլում հետընթաց»՝ Ա., Վալիեվը նշում է, որ Չինաստանի՝ ածխաջրածնային պաշարների նկատմամբ հետաքրքրությունը, ինչպես նաև Ադրբեջանի և Վրաստանի տարածքով տրանսպորտային ուղիների հնարավորությունը՝ ընդլայնելու սեփական առևտուրը (և ազդեցությունը), հանգեցրել են նրան, որ Չինաստանն իր հսկայական տնտեսական ռեսուրսներով հետևողականորեն ներթափանցել է տարածաշրջան, ընդ որում, Ադրբեջանի համար Չինաստանն այսօր նոր գերտերություն է, որը կարող է անհրաժեշտ միջոցներ ներդնել ենթակառուցվածքային նախագծերում և կարող է հակակշռել Ռուսաստանի աճող ազդեցությունը:[2]

Ստորև ներկայացված գրաֆիկում ներկայացված են 2014-2017թթ. Ադրբեջանի և ՉԺՀ ապրանքաշրջանառության ծավալները: Այն կազմվել է Ադրբեջանի ազգային վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:[3] Գրաֆիկից պարզ է դառնում, որ 2015թ. Ադրբեջանից դեպի ՉԺՀ արտահանումը 2014 թ. համեմատ նվազել է 16,7%-ով, նվազել է նաև ներմուծումը դեպի Ադրբեջան 26,56%-ով: 2015թ. հետո պատկերը կտրուկ փոխվում է՝ և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալները աճում են: 2016թ. արտահանումն ավելանում է 618,17%-ով, իսկ ներմուծումը՝ 37,48%-ով: 2017թ. գրանցվել են արտահանման և ներմուծման ամենաբարձր ցուցանիշները: Նախորդ տարվա համեմատ արտահանումն ավելացել է 16,17%-ով, իսկ ներմուծումը՝ 21,42%-ով:


Այս ամենից կարելի է ենթադրել, որ Հարավային Կովկասի պետություններից Վրաստանի և Ադրբեջանի՝ դեպի ՉԺՀ արտահանման ցուցանիշներն ավելի բարձր են, քան Հայաստանինը: Ուստի Հայաստանը պետք է խորացնի ՉԺՀ հետ տնտեսական հարաբերությունները, որպեսզի նախ և առաջ զարգացնի սեփական տնտեսությունը, ետ չմնա հարևան պետություններից և կարողանա կայուն դիրքեր հաստատել տարածաշրջանում: Ա. Մարկարովի և Վ. Դավթյանի գնահատմամբ՝ Հայաստանի համար հատկապես կարևոր է Չինաստանի հետ քաղաքական և տնտեսական երկխոսության զարգացումը, որը Հայաստանին հնարավորություն կտա

[1] **Lianlei B.,** Azerbaijan in the Silk Road Economic Belt:A Chinese Perspective, Caucasus International, Vol. 6 • No: 1 • Summer 2016, pp. 27-39

[2] **Valiyev A.,** Azerbaijan Through the Prism of BRI, China's mounting interests and influence in the region, PONARS Eurasia Policy Memo No. 621, 2019, pp. 1-5

[3] The State Statistical Committee of the Republic of Aerbaijan https://www.stat.gov.az/?lang=en

ներգրավվելու «Մեկ գոտի- Մեկ ճանապարհ» նախաձեռնությանը, ինչպես նաև Հայաստանը հնարավորություն կունենա զարգացնելու սեփական ռազմավարական ենթակառուցվածքները և ինտեգրվելու միջազգային աշխարհատնտեսական գործընթացներին:[1]



Հարավային Կովկասի պետությունների տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացումը ՄԱՏԳ ՉԿԱԱԱՏՄ շրջանակներում

Յուրաքանչյուր պետության հզորացման գրավականը տնտեսական և քաղաքական զարգացումն է: Այլ պետությունների հետ առևտրատնտեսական հարաբերությունների շարունակական զարգացումը հանգեցնում է տնտեսության վերելքի: Հարկավ, հենց տրանսպորտային ենթակառուցվածքների շնորհիվ են զարգանում պետությունների միջև առևտրատնտեսական հարաբերությունները, որոնք էլ իրենց հերթին նպաստում են պետության զարգացմանը: Ուստի՝ տնտեսության վերելքի, սեփական պետութան հզորացման և զարգացման համար, ինչպես նաև համաշխարհային քաղաքականության մեջ իր ազդեցությունը տարածելու և ամրապնդելու նպատակով ՉԺՀ առաջ քաշեց «Մեկ գոտի - Մեկ ճանապարհ» նախաձեռնության գաղափարը:

Ըստ Գ., Շախանովայի՝ «Մեկ գոտի - Մեկ ճանապարհ» նախաձեռնությունը շատ ավելի հաջողված է, քան ԱՄՆ, Ռուսաստանի և Ճապո-

[1] **Markarov A., Davtyan V.**, Post-Velvet Revolution Armenia's Foreign Policy Challenges, Demokratizatsiya: The Journal of Post-Soviet Democratization, Volume 26, Number 4, Fall 2018, pp. 531-546

նիայի քաղաքական ղեկավարության կողմից ձեռնարկված նմանատիպ նախաձեռնությունները, քանի որ առայժմ ոչ ամերիկյան «Նոր մետաքսի ճանապարհ»-ը, ոչ ռուսական՝ «Լիսաբոնից մինչև Վլադիվոստոկ»-ը, և ոչ էլ ճապոնական՝ «Ազատության և բարգավաճման կամար»-ը չեն կարողացել միավորել Պակիստանից մինչև Քենիա այնպիսի տպավորիչ թվով համախոհների, ինչպես դա արել է Չինաստանը: Դա ցույց է տալիս Չինաստանի անվերապահ հեղինակությունը և հավատարմությունը նրա արտաքին քաղաքականությանը[1]: Այս նախաձեռնությունը միտված է Չինաստանի տնտեսական և քաղաքական հզորացմանը ոչ միայն Կենտրոնական Ասիայում, այլ նաև ողջ Եվրասիայում:

«Մետաքսի ճանապարհ տնտեսական գոտու» և «21-րդ դարի մետաքսի ծովային ճանապարհի» համատեղ կառուցման տեսլականն ու գործողությունները» փաստաթղթում հստակ մատնանշվում է, որ Մեկ գոտի – մեկ ճանապարհ նախաձեռնությունը ձգտում է խթանել էներգետիկ համագործակցությունը ընդհանուր շահերի, պատասխանատվության բաց և ընդգրկուն համայնք միասնականորեն ձևավորելու նպատակով, ինչպես նաև բարելավելու տարածաշրջանի էներգետիկ անվտանգությունը, ինչն էլ իր հերթին կխթանի էներգիայի աճող պահանջարկը և նախաձեռնության մեջ ներգրավված երկրների տնտեսական զարգացման առաջընթացը:[2]

Ըստ Ջ. Մոսաշվիլիի՝ «Մեկ գոտի - մեկ ճանապարհ» նախաձեռնությունը հիմնված է մի քանի շարժառիթների վրա՝ կապակցություն, բաց համագործակցություն, նորարարություն, կայուն զարգացում, էներգետիկայի և սննդի անվտանգություն, ավելի հավասարակշռված տարածաշրջանային զարգացում և արդյունավետության բարձրացում[3]: Ուստի՝ Հարավային Կովկասի պետությունները ուշադրություն պետք է դարձնեն հենց այս շարժառիթների վրա: Ընդ որում, ըստ Ռ., Գիասիի և Ջ., Ջոուի՝ նախաձեռնության հավանական հաջողությունը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, որ այս նախագիծը դրան մասնակցող սուբյեկտների համար չի սահմանում որևէ առաջնահերթություն, սահմանափակում կամ նորմ, և այն իր մասնակիցներին տալիս է գործողության բա-

[1] **Шаханова Г.,** Китайская инициатива «Один пояс, один путь»: изменение архитектуры безопасности в Евразийском регионе, КАЗАХСКИЙ ЭКОНОМИЧЕСКИЙ ВЕСТНИК, N°2, 2017, ст. 24-35

[2] Belt and Road portal, Vision and Actions on Energy Cooperation in Jointly Building Silk Road Economic Belt and 21st – Century Maritime Silk Road https://eng.yidaiyilu.gov.cn/zchj/qwfb /13 754.htm

[3] **Mosashvili G.**, China's Belt and Road Initiative and Georgia as a Participating Economy, University of Nottingham, Ningbo, China, 2019 pp.1-16

վականին լայն ազատություն երկկողմ և բազմակողմ համագործակցության համար:[1]

Ժամանակակից աշխարհում, ահաբեկչության և տեխնոլոգիական աղետների աճող սպառնալիքների ֆոնին, կարևոր նշանակություն ունի փոխադարձաբար լրացնող տրանսպորտային ենթակառուցվածքների առկայությունը, որոնք պետք է առավելագույնի հասցնեն երթևեկության անխափան հոսքը, ուստի՝ տեխնոլոգիական աղետների, տրանսպորտային պատահարների, խողովակաշարերի և այլ աղետների ռիսկերը օրակարգում են դնում այնպիսի տրանսպորտային ենթակառուցվածքներ մշակելու անհրաժեշտությունը, որոնք արտակարգ իրավիճակներում փոխարինելի կլինեն[2]: Հայտնի է, որ «Մեկ գոտի - մեկ ճանապարհ» նախաձեռնությունը, նախ և առաջ, լոգիստիկ ուղղվածություն ունի: Ուստի՝ Հարավային Կովկասի պետությունները, զարգացնելով սեփական տրանսպորտային ենթակառուցվածքները, կարող են դառնալ նման ահռելի մասշտաբներ ունեցող նախաձեռնության մասնակից, ինչն էլ իր հերթին կնպաստի այս պետությունների տնտեսական և քաղաքական զարգացմանը: Հետևաբար՝ հարկավոր է դիտարկել Հարավային Կովկասի պետություններից յուրաքանչյուրի լոգիստիկ հնարավորությունները և զարգացման հեռանկարները: Տվյալ հոդվածի շրջանակներում կուսումնասիրվի ՛՛Մետաքսի Ճանապարհ՛՛ Տնտեսական Գոտու (ՄՃՏԳ) վեց հիմնական տնտեսական միջանցքներից միայն մեկը՝ Չինաստան-Կենտրոնական Ասիա-Արևմտյան Ասիա Տնտեսական Միջանցքը (ՉԿԱԱԱՏՄ), քանի որ այն առնչվում է Հարավային Կովկասի պետությունների հետ:

ՉԿԱԱԱՏՄ-ը սկիզբ է առնում չինական Սինծիանից, անցնում է Կենտրոնական Ասիայի 5 երկրներով՝ Ղազախստանով, Ղրղզստանով, Տաջիկստանով, Ուզբեկստանով, Թուրքմենստանով, ինչպես նաև Արևմտյան Ասիայի 17 երկրներով, այդ թվում՝ Իրանով, Սաուդյան Արաբիայով և Թուրքիայով՝ հասնելով մինչև Պարսից ծոց, Միջերկրական ծով և Արաբական թերակղզի[3]:

Հարավային Կովկասի պետություններից երկուսը՝Վրաստանը և Ադրբեջանը, ակտիվ գործունեություն են ծավալում ՉԿԱԱԱՏՄ-ում: Դրա ուղիներից մեկն անցնում է Սինծիանով, Ղրղզստանով, Տաջիկստանով, Ղազախստանով, Ուզբեկստանով, Թուրքմենստանով, շրջանցելով Ռու-

[1] **Ghiasy R., Zhou J.** The Silk Road Economic Belt. Considering Security Implications and EU-China Cooperation Prospects. Solna (Sweden): Stockholm International Peace Research Institute, 2017 , pp. 1-60

[2] **Папава В., Исмаилов Э.,** «Кавказский Тандем» и Инициатива «Один Пояс — Один Путь», Центральная Азия и Кавказ, Том 21, выпуск 2, 2018, сс. 7-18

[3] Пояс и путь, Бэкграундер: Экономические коридоры в рамках инициативы "Пояс и путь" http://russian.cri.cn/3060/2017/05/09/1s604192.htm

